ՆՈՐԱՑԻ ՍԱՐՈՒԽԱՆՑԱՆ

ՀԱՑԿԱԿԱՆ

ՀԱՐՑԸ

ՄԻՆՉԻՄՕՐՀՐԴԱՆԻՆ

ՀԱՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՄՏԱԲԱՐ

ԵՎ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԱՍՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՆՉՄՈՐՉՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

4068

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» ԵՐԵՎԱՆ — 1997

ԳՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)5
Ս 982

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Նվիրում եմ ծնողներիս հիշատակին

Սաուխթեյան Ն. Բ.

Ս 982 *Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ.* — Եր.: «Ոսկան Երևանցի», 1997, 272 էջ:

Գրքում լուսաբանվում է հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի քիչ ուսումնասիրված հիմնախնդիրը: Պատմագրության համար հիմնական և օժանդակ աղբյուրների և գրականության համալիր քննությամբ գնահատվում են Հայկական հարցի լուծման ուղիների վեթաբերյալ հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության ամենատարբեր ուղղությունների դիրքորոշումները, դրանց պատճառները:

Ս $\frac{0503020913}{847(01)}$ 97

ԳՄԴ 63.3(2Հ)5

© ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ., 1997

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ձեռնամուխ լինելով մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի ուսումնասիրմանը, մեր առջև մի շարք հարակից խնդիրներ ծառացան, որոնց շրջանցելը մեզ կդժվարացներ պարզ ու հստակ պատկերացնել այն համաձայնություններն ու տարակարծությունները, որոնք առկա էին հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների մերձեցումներում ու գաղափարական տարանջատումներում: Այդ խնդիրներից մեկը Օսմանյան կայսրության էությունն է և աշխարհատարածքում իմպերիալիստական շահեր հետամտող եվրոպական մեծ տերությունների նկատմամբ դիրքորոշումը: Եվ որովհետև ուսումնասիրությունը հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի արծարծման վերելքների ու վայրէջքների քննությունն է, բնույթով՝ բանավիճային, ուստի, մեր շարադրանքի ընթացքին հետևող ընթերցողի հարցասիրությունը բավարարելու նպատակով, անհրաժեշտ ենք գտնում ներածականում, գոնե համառոտ ուրվագծերով, տալ օսմանյան պետականության՝ այդ «հիվանդ մարդու» բնութագիրը, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական այն միջավայրը, որում դատապարտված էր ապրելու նաև արևմտահայությունը:

Մինչխորհրդային հայ հասարակական մտքի ու պատմագրության որոշ ներկայացուցիչներ, չունենալով պատմագիտական հստակ հայեցակետ և քաղաքական հաստատուն կողմնորոշում, ժամանակի հասարակական-քաղաքական միջավայրի համալիր բնույթը ճանաչելու, ժամանակի հասարակական բարդություններով պայմանավորված դժվարին հարցերին պատասխանելու կարողություն, հաճախ նաև իշխող պետությունների գաղափարական և ուժային պարտադրումների ներքո շեղվել են անկողմնակալ կամ օբյեկտիվ մեթոդաբանությունից:

Ուսումնասիրության մեջ ցույց ենք տվել, որ նման պարագաներում հայ հասարակական մտքի ամենատարբեր ներկայացուցիչների բազում դեպքերում անհատականներ ինքնաբերաբար հեռացել են պատմականությունից, գիտականությունից և ձեռք են բերել գաղափարական նախապաշարմամբ պայմանավորված դոգմատիկ շեշտադրություն:

Ջանացել ենք փաստերի համադրմամբ և հակադրմամբ, իրարամերժ տեսակետների քննությամբ ցույց տալ, որ հայ ժողովրդի նոր պատմության ոչ մի հիմնահարց թերևս այնքան չի խճճված հակասական, մակերեսային և չըմբռնված տեսակետների արտահայտությամբ և առատությամբ, որքան 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի տեսությունն ու պատմությունը: Բանն այն է, որ տակավին չէր հաղթահարվել կամ ճշգրտվել Հայկական հարցի գնահատման ու լուծման ուղիների որոնման գործում կողմնորոշումների ճիշտ կամ սխալ որակումների վերջնական կոորդինատները: Եվ դա բնական է: Սուլթանական և ցարական վարչակարգերի պայմաններում գործող հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և պատմագիտական միտքը չէր կարող գերազանցել իր հնարավորությունները: Այդուհանդերձ, թուրքական և ռուսական պետականության և հասարակական զարգացումների մասին իր հարցադրումներով հայ հասարակական միտքը հասավ ավելի արմատական եզրակացությունների, քան այն կարող էր թույլ տալ նրա պահպանողականությունը և չափավոր լիբերալիզմը: Այստեղից էլ ոչ պատահական այն իրողությունը, որ մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության որոշ ներկայացուցիչներ թուրքական բռնատիրության պատմական տեղի և էության գնահատման հարցերում, շատ աննշան շեղումներով, կանգնած են եղել եվրոպական և ռուսական առաջադեմ մտավորականության մակարդակի վրա:

Ամենից առաջ հիմնավորվել է այն իրողությունը, որ վաչկատուն թուրք ցեղերը իրենց զավթած երկրներին, որոնք որոշակիորեն զարգացած ավատատիրության շրջան էին ապրում, երկու անգամ վերադարձրին սկզբնական, ցածր տնտեսավարման կացությանը: 11-րդ դարում այդ բանն արեցին սելջուկները՝ բյուզանդական ավատատիրությունը վերադարձնելով ռազմաավատական հողատիրության համակարգին, և 16-րդ դարում՝ օսմանցիները, որոնք վերականգնեցին այդ համակարգը սելջուկյան զարգացած ավատատիրության փոխարեն: Ռուս գիտնական Պ. Ա. Չիխաչևը տակավին 1850-ական թվականներին շատ դիպուկ նկատել է, որ Փոքր Ասիայի զավթումը թուրքերի կողմից ահավոր անկում բերեց այդ երկրամասին և նրա բնիկ ժողովուրդներին: Նկարագրելով հայերի և մյուս ժողովուրդների ստրկական վիճակը, նա գրել է, որ «Փոքր Ասիան դա մի երկիր է, որ ժողովուրդների գիտության, արվեստի համար մեկ եղել է բնօրրան, մեկ էլ՝ գերեզմանոց»[1]: Օտարերկրացիների վկայությամբ, «Թուրքական տիրապետությունը Հայաստանում ճիշտ կլիներ բնորոշել որպես կազմա-

[1] **П. А. Чихачев**, Письма о Турции, М., 1960, стр. 6.

կերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»[2]: Օսմանյան Թուրքիայում չկար ոչ մի օրինականություն: Գործող միակ օրենսդրությունը շարիաթն էր, որի հիմքում դրված էին Ղուրանի դոգմաները, որից ելնելով էլ օսմանյան բռնակալները կայսրության հրով ու սրով նվաճված ժողովուրդներին բաժանում էին մուսուլման հավատացյալների և ոչ մուսուլման անհավատների (գյավուրների), ընդ որում՝ գյավուրներին պետք է ոչ միայն անիծել, այլև գանակոծել և սպանել: Ավելին, Մուհամեդը ավանդում էր, որ բոլոր «անհավատ գյավուրները պետք է խորովվեն կրակի վրա»[3]: Դա մուսուլմանի սրբազան պարտքն էր և, ըստ Ղուրանի, որքան նա եռանդով կատարեր այն, այնքան արագությամբ և հեշտությամբ տեղ կգրավեր դրախտում: Առաջնորդվելով վերոհիշյալ մարդակերական գաղափարախոսությամբ, թուրքական բռնակալները հենց սկզբից վարում էին բնիկ ոչ մահմեդական ժողովուրդներին բնաջնջելու քաղաքականություն:

Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների համար չկար անձի ու գույքի տարրական ապահովություն, իրողություն, որ չի վրիպել Թուրքիայում պաշտոնավարած օտարերկրացիների ուշադրությունից: Այսպես, Էրզրումում անգլիական հյուպատոս Կլիֆորդ Լլոյդը 19-րդ դարի երկրորդ կեսի Թուրքիայի մասին գրում էր, որ «Սուլթանի հայ հպատակները տառացիորեն անպաշտպան են, ինչպես գայլերով շրջապատված ոչխարի հոտ»[4]: Դարեր շարունակ մահմեդական և ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ գործադրվող հարկային խտրական քաղաքականությունը իր ուժը պահպանում էր նաև 19-րդ դարի երկրորդ կեսին: Այդ խտրականությանը տրվում էր հատուկ նշանակություն և շարիաթի օրենքներում դրանք ընդգծվում էին որպես սկզբունքային դրույթներ:

1639 թվականին Կասրի-Շիրինի պայմանագրից հետո, Արևմտյան Հայաստանը վարչական նոր բաժանման է ենթարկվում: Նրա տարածքում կազմակերպվում են նախ՝ Էրզրումի (Կարին), Կարսի, Վանի և Դիարբեքիրի, իսկ ապա նաև Բիթլիսի, Բայազետի և Խարբերդի փաշայությունները կամ վիլայեթները: Թուրքիայում ամենամեծ վարչական միավորը վիլայեթն էր (փաշայություն-նահանգը), որի բաժանման հիմքում ընկած էին ոչ թե աշխարհագրական, տնտեսական կամ ազգային հատկանիշները, այլ քաղաքական նկատառումները: Այդ պատճառով էլ վիլայեթների մեծ մասը թե՛

[2] «Братская помощь пострадавшим в Турции армянам», под. ред. Г. Джанашяна (Джанишев), М., 1897, стр. 13.
[3] Турецкий сборник, СПб., 1909, стр. 91.
[4] «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 133.

իրենց տարածքով և թե՛ բնակչության քանակով չափազանց տարբերվել են միմյանցից: Վիլայեթները բաժանվել են սանջակների (գավառ), որոնց գլուխ կանգնում էին փաշաների կողմից նշանակված գայմագամները (գավառապետ): Սանջակները իրենց հերթին բաժանվում էին կազաների (շրջան), իսկ կազաները՝ նահիեների (վիճակ), կառավարիչ ունենալով մյուդիրներին: Վիլայեթի սահմաններում կուսակալ փաշայի ձեռքում էր կենտրոնացված վարչական և ռազմական իշխանությունը: Փաշաներն իրենց տրամադրության տակ ունեին անհրաժեշտ քանակությամբ զինված ուժեր՝ տեղում ծագած խռովությունները ճնշելու համար: Թուրքիայում, որպես կանոն, բոլոր երևելի պաշտոնյաներին նշանակում էր սուլթանը, որը բնավ հաշվի չէր առնում նրանց կառավարման փորձը կամ ընդունակությունները: Վիլայեթների կառավարիչներ էին նշանակվում նրանք, ովքեր այդ տեղի համար ավելի շատ գումար էին վճարում սուլթանին և նրա առջև իրենց մասին բարեխոսողներին: «Եվ այդ պաշտոնյան, — գրում էր Լեոն, — մի անգամ կատարելով իր հավատարիմ հպատակության պարտքը, չէր կարող ապահով լինել, թե երկար կպաշտոնավարեր: Ամեն տարի բայրամի տոնին նա պարտավոր էր վերանորոգել իր լիազորությունը և եթե շատ էր սակարկություն անում, նրա պաշտոնը անցնում էր մեկ ուրիշին, որն ավելի առատաձեռն էր հանդիսանում»[5]:

Պաշտոնի համար տրվող այդ գումարները փաշաները պարտքով էին վերցնում վաշխառուներից և պաշտոնատեղ էին մեկնում պարտքերի մեջ թաղված՝ անվստահ իրենց ապագայի նկատմամբ: Թե ինչպիսի հաճախականությամբ էին իրար հաջորդում փաշաները, երևում է Գարեգին Սըրվանձտյանի բերած Վանի փաշաների ցուցակից, որը ցույց է տալիս, թե ոչ միայն ամեն տարի փոխվել են փաշաները, այլ նույնիսկ եղել են անպիսիները, որոնք հազիվ մի քանի ամիս են պաշտոնավարել[6]:

Փաշաներն իրենց պարտքերը վճարում էին, հարստություն կուտակում և իրենց դիրքին համեմատ ցոփ կյանք վարում: Սուլթանական կառավարությունը ոչ միայն չէր արգելում փաշաների և այլ պաշտոնյաների թալանն ու կեղեքումները, այլ հովանավորում և խրախուսում էր դրանք: Սուլթաններն անգամ պատժում էին գավառական այն պաշտոնյաներին, որոնք փորձում էին շեղվել պետական անհրաժեշտություն դարձած, ապականված վարչական համակարգի ընդհանուր պարտադիր ուղղությունից: Այսպես կատարվեց Երուսաղեմի փաշաներից մեկի հետ, որը փորձել էր մի փոքր մեղմ ու հարգանքով վերաբերվել քրիստոնյաների նկատմամբ: Չնայած իր

[5] Լեո, Հայոց պատմություն, հատոր 3, Երևան, 1946, էջ 55:
[6] Տե՛ս Գ. Սրվանձտյան, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 349—354:

բազմամյա ծառայության և 75 տարեկան պատկառելի հասակին, հիշյալ փաշան Կ. Պոլիս կանչվեց և գլխատվեց[7]:

Անօրինականությունը հատկապես քրիստոնյաների նկատմամբ գործադրվում էր անողոքաբար: «Էրզրումում, — գրում էր Լ. Դիլլոնը, — որտեղ կա 8000 տուն մահմեդական, նրանք վճարում են 395 հազար պիաստր (ղուրուշ), մինչդեռ քրիստոնյաները, որոնց տնտեսությունների թիվը կազմում է 2000, մուծում են 430 հազար պիաստր»[8]: Գործելով սուլթանի անունից և հանուն շարիաթի, վաշխառուները, տեղական իշխանությունների ներկայացուցիչները, ավազակաբար և ինքնակամ գոփում, թալանում և քայքայում էին աշխատավոր հայի տնտեսությունը:

Մեծ ու փոքր պաշտոնյաները, որոնք Դ. Վարուժանի արտահայտությամբ «երկյուղից ձուլված բոնակալներ» էին, իրենց ծառայությունը կատարում էին, սակայն ամիսներ, երբեմն տարիներ չստանալով աշխատավարձը, օգտագործում էին պաշտոնական դիրքը ոչ միայն կենսական կարիքները բավարարելու, այլև հարստանալու համար:

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների սոցիալական կեղեքման ամբողջ չարիքը գալիս էր հարկերի գանձման համակարգից, քանի որ բոլոր կարգի հարկահավաքների պաշտոնները վաճառվում էին ամենուրեք: Ամեն տարի Արևմտյան Հայաստանի վիլայեթների կենտրոններում կանգնում էին մարդիկ, որոնք ցանկություն և հնարավորություն ունեին գնելու «վաճառքում» հայտարարված հարկահավաքի (մյուլթեզիմի) պաշտոնը: Գնված պաշտոնի տերը բազմապատիկ այն քամում էր հարկատուներից:

Երբ խոսք էր լինում քրիստոնյա բնակչության, այդ թվում նաև հայերի իրավազրկության մասին, ապա դա չպետք է հասկանալ լոկ այն իմաստով, թե տերության աչքում մի ժողովուրդ արտոնյալ էր, իսկ մյուսը՝ ոչ: Թուրքական պետության օրինակով դա նշանակում էր իշխանության խտրական վերաբերմունքը դեպի քրիստոնյա և մահմեդական հպատակները: Իրողություն էր, որ դարերի ընթացքում ստեղծվել և 19-րդ դարի երկրորդ կեսին անգամ պահպանվում էր այն յուրահատուկ հասարակական հոգեբանությունը, ըստ որի մահմեդականի աչքում ուղղահավատի և գյավուրի հարաբերությունն այլ բան չէր, քան ստրկատիրոջ և ստրուկի հարաբերություն: Այդ ստրկական հարաբերությունն իր ցայտուն արտահայտությունն էր գտել նաև այսպես կոչված օթևանի հարկի մեջ:

Շարիաթի օրենքների համաձայն ամեն մի բարձրաստիճան պաշտոն-

[7] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատոր 3, Երևան, 1969, էջ 57:
[8] «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 339.

յա կամ մահմեդական ճանապարհորդ իրավունք ուներ իր ուղևորության ընթացքում հանգստանալու կամ սնվելու համար կանգ առնել քրիստոնյաների բնակարաններում, որոնք, ըստ պահանջի, պարտավոր էին երեք օր պահել «հյուրին», կերակրել նրան ու նրա ուղեկիցներին, խնամել նրանց ձիերին: Թուրքական կարգերին հատուկ և ուղեկից այս «պարտականությունը» արևմտահայության համար դարձել էր իսկական չարիք: «Հյուր» էին գալիս ոչ միայն պաշտոնական անձինք, այլև ճանապարհորդելու կամ գվարճանալու դուրս եկած ցեղապետեր, շեյխեր, բեկեր, զինվորական և ոստիկանական աստիճանավորներ: Սակավ չէին դեպքերը, երբ այս կամ այն աստիճանավորը գյուղ էր գալիս մեծ խմբով, օրերով ու շաբաթներով ապրում այդտեղ, ուր սնվելուց զատ նրանք թույլ էին տալիս կամայականություններ, բռնաբարում կանանց ու աղջիկներին, գողանում կամ «փեշքեշ» տանում ընտանիքի թանկարժեք իրերը:

Սուլթան Աբդուլ Համիդի բռնապետության ժամանակաշրջանում շարունակում էր հարատևել թուրքական կարգերին բնորոշ օրինազանցություններից ևս մեկը՝ դրամ կորզելու նպատակով ունևոր մարդկանց ձերբակալմամբ պրակտիկան: Նման պարագաներում, որպես փրկագին, պահանջվում էր խոշոր դրամագլուխ, առանց որի ձերբակալվածի հարազատները չէին կարող ազատել իրենց բարեկամին: Շորթելու այս ձևը կարող էր մեծահարուստին դարձնել աղքատ, իսկ նրան թալանող թուրք ավազակին՝ հարստացնել:

Երվանդ Օտյանը իր հուշերում պատմում է կամայականության մի զոհի՝ Սեբաստիայի գյուղերից մեկի նախկին մեծահարուստի մասին, որը «օր մը ձերբակալվեր և տարիներով բանտ մնալե ետքը, կրցեր էր ազատիլ՝ իր ամբողջ հարստությունը մաս առ մաս կերցնելով պաշտոնյաներուն: Գյուղը՝ իր տունը վերադառնալով՝ թափուր գտել էր զայն»[9]: Ամբողջ հարստությունը և հարազատներին կորցնելուց հետո նա հեռանում է գյուղից և Կ. Պոլսում դառնում բեռնակիր: Ավելի ուշ, հայ փախստականների ճամբարներում, որոնք ստեղծվել էին Թուրքիային հարևան երկրներում 1895—1896 թվականների կոտորածներից հետո, նա քահանայի պարտականություններ էր կատարում, աղոթքներում աստծուց թողություն խնդրում նաև իր գործած մեղքերի համար: Աբդուլհամիդյան դարի թուրքական կարգե՛ր...

Օսմանյան բանտը սարսափելի էր, բայց մանավանդ սոսկալի էր այն անմեղ «գյավուրների» համար, որոնց թալանելու նպատակով ենթարկում

[9] **Երվանդ Օտյան**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 254:

էին տանջանքների, ծաղր ու ծանակի, մինչև դահիճները չէին ստանում իրենց սպասելիքը կամ մինչև տանջահարը փչում էր հոգին:

Տանջանքները, ծեծը հաճախ կազմակերպվում էին քրեական հանցագործների օգնությամբ... Այդ նույն նպատակի համար օգտագործվում էին չարչարանքի գործիքներ, որոնց մեջ տխուր հռչակ էր վայելում հանրահայտ ֆալախկան: Ըստ ականատեսների պատմածների, մեղապարտի մերկ ոտքերը դրվում էին հատուկ սարքված երկու պայտերի արանքում, սեղմվում էին, բարձրացվում վերև և սկսում էին թաց ճիպոտներով, կամ նույնիսկ մահակներով հարվածներ հասցնել զոհի ոտքերի կրունկներին ու թաթերին, մինչև ուշագնաց լինելը: Ապա արյունաթաթախ ոտքերն իջեցնում էին աղաջրի մեջ և տանջանքը շարունակվում էր:

«Երբ շատ ուշ, վերջին ժամանակներս, — գրում էր Րաֆֆին, — կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիքների նկարագրությունը և նրանց տեսակները, զարմացա, թե ինչպես է պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զորավոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մեջ, բոլորովին ի նկատի չի առել ֆալախկան...»[10]:

Ժամանակաշրջանի հայ և օտար գրականության մեջ չեն արձանագրվել դեպքեր, երբ կայսրության որևէ հարուստ քրիստոնյա հպատակ դուրս գար բանտից՝ պահպանելով իր բարի անունը և հարստությունը: Դա հնարավոր էր միայն երկու դեպքում. կամ ընդունել մահմեդականությունը, կամ դառնալ իշխանությունների գործակալը՝ մատուցելով նրանց հատուկ ծառայություններ:

Թուրքիան ամենաբարբարոսաբար ազգային խտրականության քաղաքականություն էր վարում իր այլադավան հայ հպատակների նկատմամբ: «Հայը թուրքաց Հայաստանում, — գրում էր Գր. Արծրունին, — մարդ համարվում չէ: Նա մարդկային հոգի չէ, նա մի տեսակ առարկա է: Նրան կարելի է և՛ կողոպտել, և՛ անպատվել, և՛ սպանել, և՛ այդ բոլորը ոչ միայն անպատիժ է անցնում, բայց մինչև անգամ հային կողոպտողը, անարգողը, հայի կնոջ ու աղջկան բռնաբարողը... պաշտոնյաների աչքում մի տեսակ գովելի գործ է կատարում»[11]: Դրա համար էլ «Գավառաց հայերը, — Արծրունուն լրացնում է Հ. Պարոնյանը, — միայն տուրք վճարելու դատապարտված են»[12]:

Րաֆֆին արևմտահայության համար մեծագույն չարիք էր համարում այն, որ նրա հայրենիքին «տիրում էր մի ազգ, որի աջ ձեռքը յուր սուրն էր, որի ոտքերը յուր նժույգն էր, որի տունը յուր թեթև չադրը, որի հայ-

[10] **Րաֆֆի**, Երկեր, հտ. 4, Երևան, 1956, էջ 254:
[11] **Գր. Արծրունի**, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 34:
[12] **Հ. Պարոնյան**, ԵԼժ, հ. 2, Երևան, 1962, էջ 39:

բենիքը ամեն տեղ, որի հունձը — թշվառ մարդկությունը, որի օրենքը և իրավունքը յուր կամքը, որի կյանքի նպատակը փշրել, խորտակել և ոչընչացնել, որի շարժող ուղին յուր երկաթե սիրտը, վայրենի կատաղությունը և գազանական հանդգնությունը»[13]:

Ծանր հարկերից, կրոնական հալածանքներից ու ֆիզիկական խոշտանգումներից զատ, արևմտահայի համար մեծագույն չարիք էր թուրք փաշաների և քուրդ ցեղապետերի (աշիրեթապետեր) միջև մղվող միջավատատիրական կռիվները, որոնք ավերում և ամայացնում էին Արևմըտյան Հայաստանը:

«Թուրքերին հարստահարում էին փադիշահն ու նրա կուսակալները, — գրել է Ի. Գոլոբորոդկոն, — բայց թուրքերի անձը, սեփականությունը և կյանքը անձեռնմխելի էին բոլոր կողմնակի ոտնձգություններից... Իսկ հայերին կարող էին ճնշել ու կողոպտել բոլոր նրանք, ովքեր դրա համար բավականին ուժ ունեին»[14]:

Քրդերն ու չերքեզները կարող էին հայերի հետ վարվել այնպես, ինչպես իրենք ցանկանում էին և դրա համար որևէ պատասխանատվության ենթակա չէին:

Մինչև 19-րդ դարի 30-ական թվականները Արևմտյան Հայաստանում իշխանությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էր քուրդ փաշաների ու աղաների ձեռքում, որոնք կենտրոնական կառավարության նկատմամբ երկու հիմնական պարտականություն ունեին՝ հարկ վճարել և պատերազմի դեպքում իրենց զինված ուժերը տրամադրել սուլթանական բանակին: Այսպես, Տարոնի տերն ու տնօրենը Ալեդին քրդական ավատատիրական տունն էր, որը կիսանկախ քաղաքականություն էր վարում: Քրդական այս ավատատունը առանձին դեպքերում հաջող կռիվներ էր մղում նույնիսկ Էրզրումի թուրքական փաշայության դեմ:

Վիճակն այդպես էր ոչ միայն Տարոնում, այլև մյուս գավառներում ու շրջաններում: Ունենալով զինված ուժեր, քուրդ աշիրեթապետերը ամենուրեք ինքնուրույնություն և կենտրոնախույզ տրամադրություններ էին դրսևորում Ուրֆայում, Դիարբեքիրում, Մարդինում, Մոսուլում և այլուր: Միշտ չէ, որ օսմանյան կառավարությանը հաջողվում էր դրանց զենքի ուժով հնազանդեցնել և հաճախ գործի էր դնում խորամանկությունը, կաշառքը, նրանց միմյանց դեմ գրգռելը: Բարձր Դուռը յուրաքանչյուր նման դեպքում տեղական իշխանություններից պահանջում էր քրդերի դեմ գործել ոչ թե զենքով, այլ խաղաղ միջոցներով՝ նրանց չտրամադրելով կենտրոնի դեմ: Իսկ կենտրոնի համար հայն անհավատ ռայա էր, նա պարտավոր էր հլու կատարել թուրքի հավատակից եղբոր՝ քրդի բոլոր քմահաճույքները: Աշիրեթապետերից յուրաքանչյուրն ուներ իր գյուղերն ու նույնիսկ շրջանները, ուր նրանք միահեծան տիրակալներ էին: Նրանցից շատերը միաժամանակ կատարում էին աշխարհիկ և հոգևոր առաջնորդի դեր:

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին քրդական ցեղապետերը ձեռք բերեցին ընդարձակ հողատարածություններ: Աբդուլ Համիդը թույլատրեց նաև Արևմտյան Հայաստան վերադառնալ այն ցեղապետերին կամ նրանց ժառանգներին, որոնք արտաքսվել էին նախկին սուլթանների կողմից:

Արևմտահայ գյուղացին քուրդ ավատատիրոջը էր հանձնում իր եկամըտի առյուծի բաժինը և իր կյանքը մաշում մի կտոր չոր հացի համար[15]:

Արևմտահայության գլխին մի պատուհաս էլ ավելացավ, երբ 1850-ական թվականների վերջերին և 60-ականների սկզբներին, Շամիլի ապըստամբության պարտությունից հետո, օսմանյան Թուրքիան խրախուսեց հարյուր հազարավոր չերքեզների* ներգաղթը՝ նպատակ ունենալով ստվարացնել մահմեդական տարրը հատկապես հայաբնակ վիլայեթներում: Գաղթականների սոցիալ-տնտեսական վիճակով թուրքական կառավարությունը երբեք չէր զբաղվում, ընդհակառակը, նա շատ խիստ մտահոգված էր գաղթականների ետդարձը ձախողելու և պարտության ցասումից գազազած այդ ամբոխին զինելու մասին:

Կենսամիջոցներից իսպառ զրկված և ոտից գլուխ զինված մոլեռանդ այդ խուժան զանգվածին կառավարությունը քշում էր հայկական վիլայեթները՝ հատկապես հայաբնակ գյուղերին կից տեղավորելու համար: Դրանով փաստորեն հայ գյուղացիության ուսերին էր ընկնում բազմահազար զինված չերքեզներին կերակրելու պարտականությունը: «Ոչ մի բան չի կարող արդարացնել այն, — կարդում ենք անգլիական հյուպատոսական զեկուցագրերից մեկում, — ինչ որ ձեռնարկեց թուրքական կառավարությունը, լցնելով զինված մարդկանց մի ամբողջ ամբոխ այդ երկիրը, որի ամբողջ բնակչությունը նույնիսկ սովոր չէր զենք կրել»[16]:

Ռուսաստանին սահմանամերձ վիլայեթների հայ բնակչության վիճակն առավել քան դժոխային էր: Տրապիզոնի վիլայեթի հայ և հույն բնակչությունը լազական գաղթականների կողոպուտի հետևանքով այնպիսի վիճա-

[13] «Մշակ», 1875, № 19:

[14] **И. И. Голобородко,** Старая и новая Турция, М., 1908, стр. 41.

[15] **Հ. Ինճիկյան,** Օսմանյան կայսրության անկումը, Ե., 1984, էջ 102—103:

* Փաստաթղթերում այդ անվան տակ նկատի է առնված Թուրքիա գաղթած բոլոր մահմեդական հյուսիսկովկասյան ցեղերը՝ չեչենները, լազերը, չերքեզները, աջարացիները և մյուսները:

[16] «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 60.

կի էր հասել, որ միջոցներ էր որոնում զանգվածաբար Ռուսաստան արտագաղթելու համար: Հենց դա էլ թուրքական կառավարության գերագույն նպատակներից մեկն էր: Նա ձգտում էր, որ հայկական վիլայեթներում կամ հայաշատ մյուս շրջաններում հօգուտ մահմեդական տարրի հայերի տեսակարար կշիռը պակասի այնքան, որ ապագայում էթնիկական մեծամասնության պատճառաբանությամբ տարածքային հարց չառաջադրվի:

Եվրոպական հյուպատոսները և հայ ժամանակակիցները միաբերան հաստատում են, որ բացի զենքից ոչինչ չունեցող չերքեզները մի իսկական պատուհաս էին հայ գյուղացիության համար: Հայկական բնակավայրերը հեղեղած չերքեզների առաջնորդներից ոմանց թուրք պաշտոնյաները նշանակում էին վարչական և ոստիկանական ղեկավարներ, որոնք անպատիժ կողոպտում էին, տերերին քշում իրենց սեփական հողերից, հափշտակում էին բերքը, մինչդեռ հողի տերերը պետք է հողային հարկ վճարեին կառավարությանը և այն հողերի համար, որ իրենք արդեն իսկ օգտագործել չէին կարող: «Ես չգիտեմ, — գրել է Ռոլեն Ժեկմենը, — կարելի՞ է արդյոք մի որևէ այլ այնպիսի երկիր տեսնել, որի կառավարությունը այդպես ձրգտել է իր սեփական պրովինցիաները լցնել վայրի հորդաներով և ինքը նրանց առաջ այսպիսի երկընտրանք դներ՝ կամ ապրիր թալանով ու կողոպուտով կամ աղքատությունից ոչնչացիր... Թուրքիայի իշխանությունների վարքը ստիպում է մտածել, որ նրանց մեջ միտք է հղացել քայքայել ու ոչնչացնել քրիստոնյա բնակչությունը, չտալով նորեկներին գոյության այլ միջոց, բացի թալանից»[17]:

Նույն բանը շատ ավելի խոշոր չափերով սուլթանական կառավարությունը կատարում էր քուրդ աշիրեթապետերի միջոցով: Անգլիական «Կապույտ գրքում» զետեղված հյուպատոսական զեկուցագրերից բերելով հայկական վիլայեթների բնակչության անօրինակ կեղեքումների վերաբերյալ բազում փաստեր, Ռոլեն Ժեկմենը եզրակացնում էր. «Միթե՞ կարելի է սրանից հետո զարմանալ, որ Թուրքահայաստանը, որը բնության կողմից օժտված է ամենահարուստ երկրներից մեկը լինել, դարձել է ամենադժբախտ և աղքատ երկիրը... Բնակչության թափառական տարրը մեծանում է ի հաշիվ նստակյաց ժողովուրդների»[18]:

Տարերային աղետները, պետական ու կալվածատիրական դաժան կեղեքումը, բարբարոսական ասպատակությունները տրորում էին ժողովրդին, գրկում նրան հայրենի երկրի վրա ապրելու հնարավորությունից: Անտանելի կացությունը ստիպում էր մարդկանց թողնել հայրենի եզերքը և դիմել

[17] Նույն տեղում, էջ 67—68:
[18] Նույն տեղում, էջ 89:

օտար հորիզոններ, ապրուստի ու գոյության միջոցներ հայթայթելու հեռավոր երկրներում: Ճակատագրի քմահաճույքով դարեր շարունակ պանդխտության դառնությունը ճաշակած արևմտահայությունը ստիպված էր նորից որոնել օտար ճանապարհներ, հնչեցնել տարագրի կարոտի ու տրտմության ծանոթ մեղեդիները:

Արևմտահայության արտագաղթը բնակչության սովորական տեղահանություն չէր, այլ կատարյալ աղետ, ավեր ու բնաջնջում: Արտագաղթի հետևանքով քայքայվում էին երկրի արտադրողական ուժերը, կաշկանդվում էր հասարակական կյանքի առաջընթացը, թուլանում էր ժողովրդի դիմադրական ճակատը և ավելի դժվարանում նրա ազատագրության գործը: Թուրք կառավարողների հայաջինջ քաղաքականության հետևանքով հատկապես 19-րդ դարի վերջին քառորդում արևմտահայերի թիվը կտրուկ կերպով նվազում էր:

Ա. Համբարյանը ցնցող տվյալներ է հրատարակել այն բարբարոսական ոճիրների մասին, որ կատարում էին թուրք սատրապները Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում: Ըստ նրա տվյալների, արևմտահայերի թիվը 1876 թվականի երեք միլիոնից 20-րդ դարի սկզբին իջավ երկու և կես միլիոնի[19]: Արտագաղթում էին Ռուսաստան, եվրոպական երկրներ, Ամերիկա և նույնիսկ Աֆրիկա: Արտագաղթողների մեծ մասը 16—35 տարեկան երիտասարդություն էր՝ երկրի հիմնական արտադրող և երկիր շենացնող ուժը: Արտագաղթը և պանդխտությունը դառնում են իսկական ազգային ողբերգություն: Ժամանակի հայ մամուլը խորին տագնապով ահազանգում էր այդ ազգային դժբախտության տխուր հետևանքների մասին: Հայ նորադարյան պատմության մեջ ազգային ողբասացության մի ինքնատիպ երևույթ էր Մելքոն Կյուրճյանի «Պանդուխտի կյանքեն» գիրքը, ուր այնքան մոայլ է գծագրվում տարագիրների կյանքը և տագնապահար ու դառնակսկիծ է հնչում հեղինակի ձայնը. «Աղտոտ կյանքը, զոր ունին այսօր բաղնիքներու և սրճարաններու մեջ վարված կյանքը է: Սուրբ, սիրուն, տակավին ի ծաղկի մատաղ տղաքներ կուգան կը մտնեն այդ սպանդանոցներու մեջ, չոր հացով փորիկ մը կշտացնելու հարկին տակ ճնշված, անբարոյական տուտրո ապրանք կըլլան. կյանքի, արյունի գին է, որ այնու հետև դժոխալին ոճրագործներու քսակը կը պարարտացնե և... ի՞նչ հույս ազգին... Առնըվազն այսօր 100.000 հոգի իրենց տներեն դուրս նետված են. և գիտե՞ք թե որոնք են, գործող, վարող, ցանող ու հնձող ձեռքեր, համեմատաբար առույգն ու կորովին: Տարին ամեն գեղջեր անելե ետքը, գեթ 50—60.000 անծին

[19] Տե՛ս Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 44:

գավակի կորուստ կա. ասոր վրա ավելացուր օտարության մեջ շարունակված չարաչար զոհերն ալ, հովեն զարնված, ձողերու տակ ջարդված... Դարեր այսպես շարունակված են, այսօր ալ կը շարունակվի այդ աղետքը հիվանդի մը թոքերը կրծող որդերու պես: Պանդխտությունն եթե այսպես շարունակվի, մեր գավառներն անմարդի կընե այսօր կամ վաղը, այս համոզումն ունեցեք, հավուր ճշմարտություն է»[20]:

Այսքանից հետո պարզ պետք է լինի Օսմանյան կայսրությունում արևմտահայ գյուղացիության ունեզրկման և ուրբանիզացիայի գործընթացը: Հատկապես ծովափնյա քաղաքներում հայ մշակների մեծ կուտակումներ բացառապես հայկական վիլայեթներից եկածներ էին: Կ. Պոլսի և Տրապիզոնի, ծովափնյա այլ քաղաքների նավահանգիստներում աշխատող հայ մշակների թիվը տասնյակ հազարների էր հասնում: Մեծ երգիծաբան Հ. Պարոնյանը իր «Մեծապատիվ մուրացկաններում» փայլուն պատկերել է այդ մարդկանց, երբ նրանք իրար ձեռքից խլում են Աբիսողոմ աղայի իրերը՝ ծաղկի փողոց թիվ 2 փոխադրելու համար: Այդ զավեշտական փոքրիկ պատկերում արտահայտություն է գտել մայր հողից «կամավոր» վտարված արևմտահայ պանդուխտ գյուղացու մեծ ողբերգությունը:

Պակաս սրտակեղեք չէ պանդուխտի կյանքի մեկ այլ քաջատեղյակի՝ Շերենցի նկարագրությունը: «Ով որ մշեցու հային թշվառ վիճակը կուզե տեսնել, — գրել է նա, — թող երթա ոչ թե Մուշ, այլ հոս, Պոլիս. Գասըմ փաշայի խան անվանյալ որջերը և տեսնել մշեցի ընտանիք՝ այր, կին, տղա, գրեթե մերկ, հոգնաբեկ, անխոս, անկարասի, հարաժամ իր խորին աշխատության և անոթության, օդի խստության դեմ: Ով որ հայուն թշվառ վիճակը կուզե տեսնել՝ թող երթա Վանանդ, Ախուրյան գետի ափանց մոտ, տեսնի մշեցին դառնադեմ, տղու ձեռքե մը բռնած, հալած կին մը՝ գրկի տղեկով մի հստկով, գյուղե գյուղ թափառական, հարմար առիթ մը դիտելով, ուր կարենա զինք գետին ձգել»[21]:

Երկրի տնտեսական կյանքի անկմանը և ժողովրդի ազգային ծանր կացության ուղեկից էր նրա մտավոր անկումը: Մի երկիր, ուր քրիստոնյայի գլխին սուրն էր շողում, ուր այլադավանը ապահով չէր վաղվա համար և ամենքը տարված էին իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու գերագույն հոգսով, բնական է, որ հոգևոր կյանքն էլ ամլության դատապարտվեր: Թուրքիայում հայ ժողովուրդը զրկված էր մշակութային իր հարուստ ժառանգությունը պահպանելու և զարգացնելու տարրական հնարավորություններից: Ճարտարապետական կոթողների կիսաքանդ ու ավեր-

[20] **Մ. Կյուրճյան**, Ամբողջական երկեր, Փարիզ, 1931, էջ 120—121:

[21] «Արևելյան մամուլ», 1876, № 3, էջ 23: Տե՛ս նաև Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 1, Փարիզ, 1934, էջ 66:

ված մնացորդների վրա թագավորող ստրկության խուլ լռությունը լցնում էր ճանապարհորդների հոգին տխուր խորհրդածություններով: Թուրք կառավարողները ծծում էին իրենց հայ հպատակների բոլոր կենսական հյութերը, պղծում, ավերում ու ոչնչացնում էին իրենց համար ատելի հայ ժողովրդի մշակութային արժեքները, նրանց դարավոր հուշարձանները: Հայ ժողովրդի մշակութային ոգորումն ընթանում էր ծանր ու մեկուսացված պայմաններում:

Եթե թուրքական կայսրության հպատակ մի շարք ժողովուրդներ արդեն ազատագրվել և կենսակերպի եվրոպական ուղիներ էին մտնում, ապա արևմտահայ ժողովուրդը ծիգեր էր կատարում իր գոյության իրավունքը դուրս կորզելու բարբարոսության կապանքներից:

Եթե արևմտահայությունը կարողանար իր սեփական ուժերով ազատագրվեր թուրքական բռնատիրությունից և ստեղծեր իր ինքնակառավարման պետական համակարգը, անշուշտ, դա կլիներ արևմտահայության ազգային ազատագրության հարցի լուծման իդեալական միջոցը: Սակայն պատմական իրադրությունը դասավորվել էր այնպես, որ նա չէր կարող իր սեփական ուժերով հասնել հաղթանակի:

Իսկ ո՞րն էր այն ուժը, որ կարողանար իրական օգնության ձեռք մեկնել արևմտահայությանը:

Մինչև ռուսական կողմնորոշման երևան գալը հայ ժողովրդի մոտ իշխում էր այն մտայնությունը, թե հայերն իրենց ստրկական կացությունից դուրս կգան կաթոլիկ Եվրոպայի միջոցով: Ամբողջ միջնադարյան Հայաստանի ազատագրական գաղափարախոսության պատմությունը մինչև 18-րդ դարի սկիզբը կրում էր պատրանքաշատ այդ մտայնության կնիքը: Նոր հայերի ռուսական կողմնորոշումը գործնական ու բանուկ ուղիների վրա դրվեց հենց այդ հարյուրամյակի նախաշեմին՝ որոշակի արտահայտություն է գտել նաև մինչխորհրդային հայ պատմագրության էջերում: «Հայերը Ռուսաստանի հետ հաղորդակցություններ ունեին դեռ ԺԸ դարից առաջ, բայց այդ հարաբերությունները միմիայն առևտրական էին: Ամենից առաջ Պետրոս Մեծը ուշադրություն դարձրեց հայերի վրա. նա հասկացավ, որ հայոց ազգի ձեռքով կարելի է ռուսաց իշխանությունը Անդրկովկասում հաստատել»[22]: Հայ ազատագրական շարժման գործիչներն այն համոզմունքն ունեին արդեն, որ միայն Ռուսաստանն է այն իրական ուժը, որի օգնությամբ տնտեսապես և քաղաքականապես բզկտված հայ ժողովուրդը կարող է թոթափել Արևելքի մահմեդական բռնապետությունների լուծը:

[22] **Ալ. Երիցյան**, Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», 1877—1878, № 2, էջ 390:

Հարկավ, ավատատիրական-ճորտատիրական հարաբերություններ էին իշխում նաև Ռուսաստանում, բայց ի տարբերություն Թուրքիայի և Պարսկաստանի, այստեղ ավատատիրության ընդերքում զարգանում էին նոր արտադրողական ուժեր, որոնք նախապայման պիտի դառնային նոր, առաջավոր արտադրահարաբերությունների առաջացման ու զարգացման համար: Արդեն այդ պահին Ռուսաստանն իր մշակույթի, բարեկրթության զարգացման մակարդակներով անհամեմատ բարձր էր Արևելքի մահմեդական աշխարհից: Նա պատռել էր միջնադարյան սահմանափակության վարագույրը և անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում ռուսական ազգային մշակույթի և գիտության զարգացման համար: Ռուսական պետությունն ապրում էր իր ամրակայման և զարգացման այն շրջանը, երբ գնալով ավելի էր հզորանում կայսրությունը՝ իր հաստատ ու կայուն օրենքներով: Իր ռազմական հզորությամբ ևս նա ձեռք էր բերել միջազգային լայն ճանաչում:

Ռուսական զենքի աջակցության հետ կապելով հայ ժողովրդի ազատագրության գործը, հայ ազատագրական շարժման գործիչները ելնում էին նաև Հայաստանի՝ Ռուսաստանին մոտիկ լինելու իրողությունից: Նրանք գտնում էին, որ այդ հանգամանքն ավելի դյուրին պիտի դարձներ երկու քրիստոնյա ժողովուրդների տնտեսական, մշակութային և ռազմական բազմակողմանի շփումների զարգացումը:

Ահա սրանք էին այն պատճառները, որի հետևանքով արևելյան բռնատիրության դեմ իր ազատագրության համար պայքարող հայ ժողովրդի գործիչները հանձին Ռուսաստանի տեսան այն իրական ուժը, որի ռազմական գործուն աջակցությամբ ժողովուրդը պիտի թոթափեր արևելյան բռնատիրությունների դարավոր լուծը:

Սակայն ավելի քան մեկ հարյուրամյակ Ռուսաստանի համար ստեղծված միջազգային անբարենպաստ հանգամանքների շնորհիվ, նա չկարողացավ իրականացնել դեպի հարավ առաջխաղացման իր նկրտումները, հետևաբար և անկատար էին մնում հայ գործիչների փայփայած ակնկալությունները:

19-րդ դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական չորս պատերազմները նույնպես լիովին չկատարեցին հայ ժողովրդի բաղձանքները: Եթե ռուս-պարսկական վերջին պատերազմի արդյունքներն ամփոփող Թուրքմենչայի 1828 թվականի փետրվարի 10-ի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին և արևելահայ ժողովրդի համար ստեղծվեցին ապրելու ու զարգանալու անհամեմատ

նպաստավոր պայմաններ, ապա 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը չտվեց ցանկալի արդյունքը:

Ադրիանապոլսի 1829 թ. սեպտեմբերի 2-ի պայմանագրով, արևմտյան տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ, որոնց ձեռնտու չէր Ռուսաստանի ուժեղացումն Արևելքում, ի վնաս հայ ժողովրդի ազգային շահերի, Թուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Կարսի և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները, որոնք պատերազմի ընթացքում գրավվել էին ռուսական բանակի Կովկասյան կորպուսի կողմից: Այսպիսով, տակավին Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը ցույց տվեց, որ արևմտահայության հարցը սոսկ հայ-թուրքական, նույնիսկ հայ-ռուս-թուրքական հարաբերությունների հարց չէր: Նա սերտորեն առնչվում էր ռուս-թուրք և արևմտյան տերությունների հարաբերություններին, Մերձավոր Արևելքում նրանց գաղութատիրական, նվաճողական ծրագրերին: Ուստի այդ ժամանակներից ի վեր, հանուն իրենց շահերի, մեծ տերությունները պաշտպանել են Թուրքիային ընդդեմ Ռուսաստանի և Արևմտյան Հայաստանի ճակատագիրը դրել արյունոտ զոհասեղանին:

Ընդհանրապես Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհատարածքում եվրոպական մեծ տերությունների շահադիտական քաղաքականության ակունքները բավական խորն էին: Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների և Ռուսաստանի հարաբերությունները, թուրքական բռնատիրության դեմ հատկապես քրիստոնյա հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի օգտագործումով՝ այդ կայսրության հաշվին ռազմավարական և տնտեսական առավելությունների հասնելու համար, նրանց մրցապայքարը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է Արևելյան հարց անունով: Այդ տերմինի օգտագործումը առաջին անգամ հանդիպում ենք Սրբազան դաշինքի 1822 թվականի Վերոնայի կոնգրեսում օսմանյան տիրապետության դեմ հույն ժողովրդի ազգային-ազատագրական շարժման բռնկման, Բալկաններում ստեղծված իրավիճակը քննելու ժամանակ, երբ եվրոպական դիվանագիտությունը քրիստոնյաներին փրկելու կարգախոսով կառչեց այդ հարցից, որպես մի միջոցի, փլուզում թևակոխած Օսմանյան կայսրությունում արտոնյալ դիրքեր նվաճելու, նրա տրոհումից օգուտ շահելու համար: Արևելյան հարցի դիվանագիտական պատմության առաջին շրջանը ընդգրկում է մինչև 1853—1856 թթ. Արևելյան (Ղրիմի) պատերազմի սկիզբը կամ ավարտը: Այս ժամանակաշրջանում թուրքական ժառանգությանը տիրանալու մրցապայքարում գործուն մասնակցություն ունեին Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան: 1831—1833, այնուհետև 1839—1840 թվականներին Եգիպտոսի կառա-

վարիչ Մուհամեդ Ալիի հակաթուրքական ապստամբական շարժումների ժամանակ, երբ վերջինս սպառնում էր գրավել Կ. Պոլիսը և վերջ դնել սուլթանի իշխանությանը, ասպարեզ ելան մեծ տերությունները: Ռուսական նավերը Բոսֆոր մտան՝ փրկելու սուլթանի գահը, 14 հազար ռուսական զինվորներ ափ իջան Ունքյար-Իսքելեսիում և փակեցին եգիպտական բանակի ճանապարհը դեպի Կ. Պոլիս: Ռուս-թուրքական մերձեցումից անհանգստացած Անգլիան և Ֆրանսիան ընդառաջեցին Եգիպտոսի և Թուրքիայի հաշտեցմանը: Թուրքիայից ռուսական ուժերի դուրս բերման նախօրյակին կնքվեց Ունքյար-Իսքելեսիի պայմանագիրը, համաձայն որի Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում Թուրքիային ցուցաբերել ռազմական օգնություն: Պետերբուրգը նաև կապիտուլյացիոն արտոնություններ էր ստանում: Պայմանագրի գաղտնի հոդվածի համաձայն Թուրքիան պարտավորվում էր պատերազմի դեպքում Ռուսաստանի պահանջով փակել Դարդանելի նեղուցը բոլոր օտարերկրյա նավերի համար: Սա Արևելյան հարցում Ռուսաստանի հաջողության բարձրակետն էր: Վերոհիշյալ պայմանագիրն առաջ բերեց արևմտաեվրոպական տերությունների հետ Ռուսաստանի հարաբերությունների սրման: 1840—1841 թվականներին Անգլիան Լոնդոնում գումարված տերությունների խորհրդաժողովում ընդունված կոնվենցիաներում ի չիք դարձրեց Ռուսաստանի կարճատև վերընթացը: Ռուսաստանը համաձայնեց չեղոքացնել պայմանագիրը և վրկվեց միակողմանի արտոնություններից: Այստեղ է, որ անգլիական դիվանագիտությունը մեջտեղ բերեց Օսմանյան կայսրության ամբողջականությունը հարգելու խնդիրը՝ status quo-ն, որը պահպանելու պատրվակով տասնամյակներ շարունակ դառնալու էր դիվանագիտական գործառնություններում ամենաշատ կրկնվող արտահայտությունը՝ իր մեջ մարմնավորելով ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարն արգելակողի դերը: Բնութագրական է գերմանացի միջազգայնագետ գիտնական Ֆր. Էնգելսի այն դիպուկ խոսքը, թե ստատուս քվոյի քաղաքականությունը սուլթանական իշխանության կողմից Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների ճնշման հավերժացումն է[23]:

Այդպես եղավ նաև Ղրիմի պատերազմի արդյունքների դիվանագիտական ամփոփագրով՝ 1856 թ. մարտի 18-ի Փարիզի տրակտատով, որի համաձայն Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Արևմտյան Հայաստանում գրաված բոլոր տարածքները (այդ թվում և Կարսը): Ղրիմի պատերազմը և Փարիզի հաշտության պայմանագիրը փոխեցին միջազգային իրադրությունը Եվրոպայում: Սրբազան դաշինքը փաստորեն դադարեց

[23] Տե՛ս **К. Маркс и Ф. Энгельс**, Сочинения (изд. 2-ое), М., 1961, стр. 31.

գոյություն ունենալուց, Ռուսաստանի դիրքերը թուլացան, առավել սրվեց Արևելյան հարցը: Չնայած 1870—1871 թթ. միջազգային իրադրության բարենպաստ պայմաններում Ռուսաստանը վերականգնեց իր իրավունքները Սև ծովում, բայց, միևնույն է, Թուրքիայում թելադրողները եվրոպական տերություններն էին:

Ղրիմի պատերազմը Օսմանյան կայսրությունից պահանջեց հսկայական ֆինանսական միջոցներ, որ նա չէր կարող ձեռք բերել երկրի ներսում: Գյուղացիությունից միանվագ երկու տարվա հարկերի գանձումը մի պալիատիվ (կիսամիջոց) էր, որը ոչ մի չափով չէր կարող շտկել Թուրքիայի ֆինանսները: Միակ ելքը արտաքին փոխառություններն էին: Թուրքիայի դաշնակից Ֆրանսիան և Անգլիան ամենայն պատրաստակամությամբ նրան օժանդակել էին արտաքին փոխառություն ստանալու, որով, մի կողմից, նպաստել էին Ռուսաստանին համատեղ ուժերով պարտության մատնելու, մյուս կողմից՝ շատ նպաստավոր կերպով ապահովում էին իրենց երկրների կապիտալների շահավետ շրջանառությունը:

Ընդամենը երկու տասնամյակում (1854—1874 թթ.) Թուրքիան կընքում է 4.297 միլիոն ֆրանկի 13 փոխառություն, ընդ որում, երբ հաշվառքային տոկոսն այն ժամանակ Եվրոպայում կազմում էր 3,88—4,77 տոկոս, Թուրքիան իր դաշնակից պարտքատերերին վճարում էր 7—13 տոկոս: Որքան մեծանում էր կայսրության պարտքը, այնքան Թուրքիան ստրկական կախվածության մեջ էր ընկնում Արևմուտքից: Փոխառությունների տոկոսների գումարը տարեցտարի մեծանում էր այնքան, որ պետական բյուջեի մուտքային մասի չորս հինգերորդը գնում էր այդ պարտավորությունները ծածկելուն:

19-րդ դարի կեսերից ֆրանսիական կապիտալի հետ ուժեղ մրցակցության մեջ մտած անգլիական կապիտալը շատ ավելի գիշատիչ ծրագրեր ուներ: Բոլոր այն երկրները, ուր մտնում են անգլիական կապիտալները, պետք է դառնան Մեծ Բրիտանիայի համար որպես միայն հումքի կցորդներ՝ այսպես էր ձևակերպել իր երկրի գաղութատիրական ծրագիրը ժամանակի անգլիական բուրժուական տնտեսագետ Ջ. Քերրին «Քաղաքական-տնտեսական նամակներ ԱՄՆ-ի պրեզիդենտին» իր գրքում[24]:

Եվրոպական, հատկապես անգլիական կապիտալի ներխուժման հարվածների տակ Թուրքիայի տեղական արդյունագործությունը և առևտուրը թևակոխում է անկման մի նոր շրջան: Տերությունների հաստատած վաղեմի կապիտուլյացիաներին զուգընթաց, կապիտալի ներխուժումը պատճառ է դառնում երկրի նյութական դեգրադացիային և գաղութային ստըր-

[24] Տե՛ս **Г. Керри**, Политико-экономические письма к президенту Американских Соединенных Штатов, М., 1860, стр. 184.

կացմանը: Ֆինանսական կախվածության հետ աճում էր նաև Թուրքիայի քաղաքական կախումը արտաքին պարտատերերից: Կայսրությունը քրոնիկորեն «հիվանդ մարդու» կացության դատապարտող կապիտուլյացիաների և փոխառությունների համակարգը հավերժացնում է երկրի քաղաքական անդամալուծությունն ու ավատատիրական անիշխանությունը: Գյուղացրության ճորտական վիճակը, փաշայական ռեժիմը, զանգվածների հարբուսահարման ու ճնշման տարեցտարի բազմացող փաստերն անել վիճակ էին ստեղծում երկրի տնտեսական զարգացման առաջ, ընդարմացնում նրա դիմադրությունը օտար կապիտալի և օտար դիվանագիտության հանդեպ: Օտարերկրյա վաճառականներն ավելի մեծ արտոնություններ էին վայելում երկրում, քան իրենք՝ թուրքերը, իսկ թուրքահպատակ քրիստոնյաները եվրոպացիներին հավասար մաքսային արտոնություններ վայելելու հատուկ տուրք էին վճարում գանձարանին՝ կազմելով «բերաթլի» անունը կրող առևտրականների հատուկ խավը:

Վերարտադրության խնդիրը չէր հուզում Օսմանյան կայսրության կառավարողներին և ձեռնարկված բոլոր բարեփոխումները վերաբերում էին վարչական մարմինների իրավասություններին: Սոցիալ-տնտեսական հասարակական կարգերի վրա նրանք լուրջ ազդեցություն չունեցան: Գաղտնիք չէր, որ Թանզիմաթի բոլոր ակտերը հանդիսանում էին երկրի ներքին հասունացած պահանջների և ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերի հետևանքը: Սակայն գործադրված բոլոր ջանքերի արդյունքում մինչև 19-րդ դարի վերջը վարչական կառավարակառույցը հիմնականում մնաց նույն մակարդակի վրա, տեղերում օրենքի ուժ ունեցող հին սովորույթներն ու կարգը հնարավոր չեղավ վերակառուցել, որովհետև ցանկություններին չհետևեցին լուրջ և արմատական փոփոխությունները:

Օսմանյան կայսրությունում հակասությունների խորացման չափազանց ցայտուն օրինակ է ազգային հարցի ծայրահեղ սրումը և ազգային շարժումների աճը երկրում: Քաղաքական այս երևույթը մեծապես բարդանում էր սոցիալ-տնտեսական զարգացման հենքի վրա: Օսմանյան իրականության հիշյալ յուրահատկությունը բացատրվում է նրանով, որ քաղաքակրթության առաջընթացի կրողը հանդիսանում էին ոչ թե թուրքերը, այլ այլազգիները: Գլխավորապես քրիստոնյա ժողովուրդներն էին ոգի ներարկում տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը, որը թուրք վերնախավը դիտում էր որպես այդ ժողովուրդների դիրքերի ամրապնդում ի հաշիվ Օսմանյան կայսրության թուլացման: Օգտագործելով քաղաքական կյանքում և ռազմական բնագավառում իրենց մենաշնորհը, թուրքերը ձգտում էին խեղդել հպատակ ժողովուրդների կողմից ինքնուրույնության ձգտելու ամեն մի փորձ՝ թե՛ քաղաքականության և թե՛ տնտեսության մարզերում: Թուրք վերնախավն անում էր ամեն ինչ, որպեսզի ձուլի, թուրք ու մահմեդական դարձնի հպատակ բոլոր այլադավան ժողովուրդներին: Թուրք նշանավոր բարեփոխիչներից մեկը, երբեմնի մեծ վեզիր և արտաքին գործերի նախարար Ֆուադ փաշան 1869 թվականին սուլթան Աբդուլ Ազիզին՝ Աբդուլ Համիդի հորը, գրած իր քաղաքական կտակում խորհուրդ էր տալիս արտաքին քաղաքականության մարզում՝ հարևաններից ետ չմնալու և կայսրության տրոհման զարհուրելի աղետի իրական վտանգը կանխելու համար մերձենալ Եվրոպային և մեծ տերությունների օգնության վրա հենվելով չեզոքացնել Ռուսաստանին, ներքին քաղաքականության մարզում՝ «... մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն մի նպատակի միայն՝ մեր ցեղերի համաձուլումը: Առանց այս համաձուլման մեր կայսրության միությունը ինձ անկարելի է թվում»: Ֆուադ փաշան մեծապետական օսմանիզմի դիրքերից գնահատում է առանձին հպատակ ժողովուրդների պատմական դերը և տալիս նրանց նկատմամբ կիրառվելիք քաղաքականության իր տեսակետները: «Մասնավորապես հայերը հակումն են ցույց տալիս դեպի ոտնձգություն, — կարդում ենք կտակում, — և խելացիություն է նրանց եռանդը չափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, որոնք պարկեշտորեն ընդունում են մեր կայսրության միավոր սկզբունքը»[25]:

Ֆուադ փաշայի կտակը կայսրության փլուզման համար վտանգ էր տեսնում հույներից, բուլղարներից, հայերից և անգամ մուսուլման արաբներից: Բացառություն էին կազմում հրեաները: Ինչո՞ւ: Բանն այն է, որ և 1870-ական թվականներին, և հետագա տասնամյակներին հրեական բուրժուազիան աշխատում էր չմասնակցել Օսմանյան կայսրության քաղաքական անցուդարձին և ջանում էր զբաղվել միայն տնտեսական գործունեությամբ: Ռուսաստանի սիոնիստների քաղաքական բերան «Ռասսվետ» շաբաթաթերթը 1908 թ. հրեաների վերոհիշյալ վարքագծի անհրաժեշտությունը մեկնաբանում էր այսպես. «Մյուս բոլոր ազգությունները, բացի թուրքերից ու հրեաներից, երազում են ոչ թե Թուրքիան վերափոխելու և վերածնելու, այլ այն տրոհելու մասին»[26]:

Թուրք վերնախավի և հրեական բուրժուազիայի շահերի միասնության վերաբերյալ ավելի որոշակի կարծիք էր հայտնում սիոնիստական շարժման պարագլուխներից մեկը՝ Վլ. Ժաբոտինսկին: Նա գտնում էր, որ սիոնիստների ազգային քաղաքականությունը «պետք է ունենա պարզ ար-

[25] Ֆուադ փաշայի քաղաքական կտակը, «Արոր», 1910, № 6—7, էջ 178—185:
[26] «Рассвет», СПб, 1908, № 6, стр. 10.

տահայտված թուրքամետ բնույթ: Նրա ղեկավարող սկզբունքը պետք է լինի կայսրությունում թուրք տարրի քաղաքական գերակշռությունը պահպանելը և վերջինիս ու հրեության միջև բարի փոխհարաբերությունների ամրապնդումը»[27]: Դիվանագիտական մի շարք փաստաթղթեր ևս հաստատում են հրեական բուրժուազիայի այդ ձգտման մասին՝ հնարավորին չափ խուսափել կայսրության վեճերին խառնվել և չխաղալ որևէ քաղաքական աղմկարար դեր: «Հրեաները, — կարդում ենք փաստաթղթերից մեկում, — բոլորի հետ ապրում են որպես բարեկամներ և զբաղվում են մրցակցությամբ ու արհեստներով»[28]: Նման հավաստիացումներին ուղղակի հավատ ընծայելը համարելով ավելորդ դյուրահավատություն, Հ. Ինճիկյանը իր «Օսմանյան կայսրության անկումը» գրքում գրում էր. «Ուրիշ ժողովուրդների հաշվին իրենց դասակարգային և ազգային շահերի պաշտպանության... գիծը չափազանց բնորոշ է սիոնիստական շարժմանը... իսկ անցյալ դարի վերջին շարժման ղեկավարները օգտագործում էին ամեն միջոց, փորձելով իրականացնել իրենց երկու հիմնական նպատակները՝ ձեռք բերել Պաղեստինը և հունական ու հայկական բուրժուազիային ասպարեզից դուրս բերելու դեպքում, կայսրությունում հրեական կապիտալի համար ապահովել տիրապետող դիրքեր»[29]:

Սիոնիզմի պարագլուխները սկսած 1890-ական թվականներից չափազանց լայն դիվանագիտական, քաղաքական և գործնական պայքար էին ծավալել Պաղեստինում ազգային օջախ ստեղծելու համար: Նրանք օգտագործեցին նույնիսկ 1890-ական թվականների հայկական կոտորածները և կատարված բարբարոսությունների հետևանքով թուրքերի համար Եվրոպայում ստեղծված անբարենպաստ հասարակական կարծիքը՝ Աբդուլ Համիդի և նրա կառավարության վրա ճնշում գործադրելու համար: Համաշխարհային սիոնիստական կազմակերպության հիմնադիր Թեոդոր Հերցլը իր առաջադիր նպատակին հասնելու համար աշխատում էր արժանանալ Աբդուլ Համիդի ընդունելությանը: 1896 թ. այդ նպատակով նա ժամանում է Կ. Պոլիս: Սուլթանի գործակալի միջոցով Թ. Հերցլը առաջարկում է Պաղեստինի համար Թուրքիային վճարել 20 միլիոն ֆունտ, որից երկու միլիոնը տրվելու էր անմիջապես, որպես ավանս, իսկ 18 միլիոնը ավելի ուշ պարտքերի վարչության վերահսկիչ հանձնաժողովից ձերբազատելու համար: Չնայած գործարքը չկայացավ, բայց սիոնիզմի պարագլուխը երիտթուրքական հեղաշրջումից հետո վերսկսեց բանակցությունները: Սիոնիստները երիտթուրքերին խոստացան օգնել կայսրությունում հունական և հայկական բուրժուազիայի դիրքերը խարխլելու գործում և հրեական բուրժուազիայի գործունեությունը ենթարկելու «վերածնված Թուրքիայի շահերին»[30]:

Սիոնիստները գոհ էին բանակցությունների ընթացքից, այլապես տակավին երիտթուրքերի հեղաշրջումից առաջ տեղի ունեցած սիոնիստների 8-րդ կոնգրեսում նախագահող Դավիդ Վոլֆսոնը չէր հայտարարի. «Մենք համառորեն ցույց ենք տվել թուրքական կառավարությանը մեր ձգտումների լոյալությունը և խաղաղ ու վերին աստիճանի բարեկիրթ բնույթը մեր ձեռնարկների, և մենք հիմք ունենք ասելու, որ Բարձր Դուռը ի վերջո ինքը կհանգի մեր շարժման ճիշտ գնահատման: Չէ՞ որ մեր միակ իրականանալիք ձգտումն է ցույց տալ Թուրքիային տնտեսական օգնություն և նպաստել նրա մշակութային վերելքին»[31]: Օսմանյան կայսրության վերնախավի շահերից բխող Ֆուադ փաշայի քաղաքական կտակը և վերածվելիք Թուրքիային նպաստող սիոնիստական ծրագիրը ինչպես անցյալ-պատմական, այնպես էլ արդիական-գործնական հնչեղություն ունեն:

Օսմանյան կայսրության մեջ, հույներից հետո, երկրորդ տեղը գրաված իր դիրքով հայ բուրժուազիան չցանկացավ որոշիչ դեր խաղալ ազգային-ազատագրական շարժման գործում, հանգամանք, որ հայտնի չափով ներգործություն ունեցավ շարժման ողբերգական ելքի վրա: Արևմտահայ բուրժուազիան արևելահայերից էլ երկչոտ էր: Եվ այդ երկչոտությունը չէր կարող չանդրադառնալ նաև 1860 թ. մուծված Ազգային սահմանադրության վրա: Սահմանադրության կազմողների ֆրանսիական կրթություն ստացած լինելու հանգամանքից, գրում է Ա. Ալպոյաճյանը, արվել է այն եզրակացությունը, թե հայ եկեղեցու և ազգի համար մշակված այդ կանոնադրությունը ընդօրինակված է Լուի-Ֆիլիպի սահմանադրությունից: Այդ կարծիքը ճիշտ չէ, քանի որ «Մեր սահմանադրության մեջ, — շարունակում է Ալպոյաճյանը, — միայն քվեարկության ընդհանուր սկզբունքը քաղված է եվրոպական սահմանադրություններե, իսկ մնացած բոլոր տրամադրությունները քաղված են պատրիարքական իրավասությունը սահմանող ֆերմաններու տրամադրություններեն, երկար ժամանակներու մեջ ևիրագործված սովորություններեն և ավանդություններեն և 1856 թ. փետրվարի 6-ի ըսլահաթ հրովարտակով պատրիարքներու կանոնագրին նկատմամբ որոշված քանի մը հիմնական կանոնադրություններեն: Սահմանադրության հեղինակները մինչև 1860 թ. ձեռք բերած իրավունքներու վրա հիմնված, օրենք մը գրի առած են: Եվ որովհետև ժողովուրդը իրավունքներ ձեռք բերած էր տարիներու մաքառումով և շարունակական պահանջ-

[27] «Рассвет», СПб, 1910, № 7, стр. 12.
[28] АВПР, Новый Турецкий стол, д. 7601, 1910, л. 12.
[29] Հ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Ե., 1984, էջ 250:

[30] Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 34:
[31] «Рассвет», 1907, № 31, стр. 33.

կոտություններով, հետևաբար պետք էր նկատել Սահմանադրությունը իբր բարեշրջումը հայոց պատրիարքարանի անգիր օրենքներուն, այսինքն՝ ավանդական սովորություններուն»[32]:

Սահմանադրության հայ բանիմաց պաշտպանները ժամանակին այդպես էլ հասկանում էին հռչակված օրենքի էությունը: Ուշագրավ է, որ երբ 1863 թ. սուլթանական կառավարությունը հասկացնել էր տալիս հայերին, թե «սահմանադրական» համակարգն անհամատեղելի է Թուրքիայում իշխող ինքնակալության հետ, Ներսես Վարժապետյանը վախվորածի կեցվածքով մեկնաբանում էր. «Մենք զսահմանադրություն Միացյալ Նահանգաց կամ Գաղղիո հեղափոխականաց ոչ խնդրեցաք. այլ մի կանոնագիր ազգային ներքին կառավարության, զոր կայսերական կառավարություն ի վաղուց անտի հրովարտակմբ և Խաթթի հիմայինոք շնորհյալ է»[33]:

Այս մեկնաբանությունների և դիտողությունների մեջ Աշ. Հովհաննիսյանը որոշ ճշմարտություն տեսնում էր, որովհետև, ըստ նրա, չի կարելի ազգային սահմանադրությունը դիտել սոսկ որպես սուլթանի բարի կամքով հաստատված ներքին կանոնադրություն: Ինքնաբերաբար չէ, որ թուրքական կառավարությունը հաստատեց այդ կանոնադրությունը: Վերջին հաշվով սահմանադրության միջոցով մեծապես երևան էր գալիս իշխող այն ազդեցությունը, որ ձեռք էր բերել թուրքահայ ազգային գործերը տնօրինելու համար անգլո-ֆրանսիական կապիտալի հետ լծորդված թուրքահայ կոմպրադորական բուրժուազիան: Սահմանադրության հայ հեղինակները (Սերվիչեն, Գր. Օտյան) հանդիսանում էին հենց կոմպրադորական այդ բուրժուազիայի «լուսավորյալ» գաղափարախոսները: Պոլսահայ այսպես կոչված սահմանադրական բուրժուազիան ջանում էր ազգային-եկեղեցական գործերի ղեկավարությունը խլել կղերա-ամիրայական վերնախավի ձեռքից: Գերակայության ձգտելու այդ փորձին, սակայն, շուտով հաջորդեց հակասահմանադրական հետադիմությունը: Զանգվածների ւաճող ահահնջների ներքո բուրժուազիան ծովում է կղերա-ամիրայական վերնախավի կողմը և անցնում ժողովրդի դեմ հակագրոհի: 1861 թ. մայիսից դադարեց գործելուց մեկ տարի առաջ խանդավառությամբ ընդունված Սահմանադրությունը և պոլսահայ բուրժուազիայի ղեկավարությունը՝ դաշնակցած կառավարության հետ, ձեռնամուխ է լինում նրա վերանայմանը: Այդ գործարքի արդյունքը եղավ 1863 թ. «թլպատված» Սահմանադրությունը, որը փաստորեն օրինականացնում էր կղերաբուրժուական խմբակցության իշխանությունը, օրինականացնում ազգի պարանոցին պոլսահայ «սահ-

[32] **Ա. Ալպոյաճյան**, Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, տե՛ս 1910 թ. «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1909, էջ 190:

[33] Մատենադարան, ձեռ. № 4177:

մանադրական» խմբիշխանության անուրը[34]: Եվ դա բնական էր, որովհետև պոլսահայ ամիրաների դասը կապված էր ավատատիրական Թուրքիայի հետ, նրա միլիոնների հարստությունը դիզվել էր կապալահարկերի, պետական մատակարարումների, բարձր պաշտոնատերերի վարկավորման և նման այլ միջոցներով: Ֆինանսավորելով ռազմական և վարչական հիմնարկներին, ամիրաները տարածում էին իրենց ազդեցությունը պետական ապարատի վրա: Նրանց միջավայրից ելնում էին մարդիկ, որոնք դիրք ու ազդեցություն էին ձեռք բերում սուլթանների պալատում: Նրանց ձեռքում էին կենտրոնացված ռազմական կապալների և պետական շինարարության գործը: Նրանց պետքերին էր ծառայում Անատոլիայի և Ռումելիայի բանկային ընկերությունը, որի միջոցով հարստահարության աղբյուր էին դարձնում երկրի գյուղացիության հարկումը: Սերտաճած թուրք իշխող վերնախավի հետ, հայ ամիրայական դասի ներկայացուցիչները հանդես էին գալիս որպես եկեղեցական ու մշակութային հիմնարկների ու ձեռնարկների մեկենասներ: Նրանց գործիք էին դառնում հաճախ Կ. Պոլսի հայ պատրիարքներն ու սրանց ենթակա եկեղեցաթեմերի առաջնորդները: Կրոնական սնահավատքի ու միջնադարյան դպրության քուրմերի ձեռքով նրանք տարածում էին իրենց շոշափուկները ծխական համայնքների, դպրոցների, մամուլի և գրականության վրա: Իբրև ազգի «բարերարներ»՝ նրանք միահեծան տնօրինում էին եկեղեցիների կառուցման, հիվանդանոցների և անկելանոցների հիմնադրման, գերեզմանատների բարեզարդման, դպրոցների բազմացման և ֆինանսավորման, գրքերի հրատարակության գործերը: Պոլսահայ հին ամիրաների կողքին 19-րդ դարի կեսերից երևելի դիրքեր էին բռնել և դրության տեր դարձել Եվրոպայի հետ կապված բանկիր-կապիտալիստները, որոնք մինչ այդ զբաղված էին համեմների ներմուծմամբ գործով: Պոլսահայ մանուֆակտուրիստների այդ նոր սերունդը գալիս էր փոխարինելու սառած ամիրաներին: Յուրացնելով առևտրի Եվրոպական ձևերը, հայ Շոռելուկ այդ կապիտալիստները ներդնում էին «քաղաքակիրթ» դարին համապատասխան շահաստացության եղանակներ՝ հաղածելով վաշխային առևտրի իր դարն ապրած մեթոդները[35]:

Չթաքցնելով պահպանողական և հակադեմոկրատական իր նախասիրությունները, պոլսահայ կոմպրադորական բուրժուազիայի անգլոֆիլ պատմագիր Հ. Մրմրյանը նկարագրում է, թե ինչպես ֆրանսիական «աստանդիկ բարքերն ու կարգերը» ընդօրինակող բուրժուազիայի զավակները,

[34] Տե՛ս **Աշ. Հովհաննիսյան**, Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք առաջին, Ե., 1955, էջ 346—347:

[35] **Հ. Մրմրյան**, Թուրքահայ հին վաճառականությունն ու վաճառականք, Կ. Պոլիս, 1908, էջ 19:

որոնք, մինչ այդ, «շալակած իրենց Վոլդերն ու Տիդրոն և նմանները, ի վաճառ կհանեին ամեն նորաձևություն, ս՛մ՛ն փոփոխություն, ամեն զևզեկություն հանուն կրթության հառաջադիմության և իմաստասիրության», 1850—1880-ական թվականներին գիջում էին իրենց տեղը և դիրքը անգլիական «գգոն ու լուրջ» ոգուն: «Հին ամիրայության բիրտ ու անիմաստ և անտանելի հրամանահանության հետ, — շարունակում է անգլոֆիլ հեղինակը, — հաջողելու էր և հաջողեցավ սահմանափակել իմաստակ նորասերներու ֆրանսիկ, և ըսենք, պոռնիկ ալ ծայրահեղությունները, որ և ոչ մեկ էական բանով հաշտ էին հայ բարքերու և կենցաղներու հետ»[36]: Հիրավի, մինչև 19-րդ դարի 60-ական թվականների վերջերը պոլսահայ «եվրոպականացվող» բուրժուազիան կապված էր գերազանցապես ֆրանսիական կապիտալի հետ: Հենց դրանով պիտի բացատրել ֆրանսիական ազդեցությունը պոլսահայ բուրժուազիայի «ալաֆրանկա» կենցաղի ու տարազի, լեզվի ու գրականության, մամուլի ու թատրոնի և լուսավորական բովանդակ կյանքի վրա: Այս կացությանը վերջ է դրվում ֆրանս-պրուսական պատերազմից հետո, երբ ֆրանսիական ազդեցությունը տեղի է տալիս անգլիականին, որի հետ հետզհետե մրցության պիտի ելնեին Թուրքիայում գերմանականը և ռուսականը:

Արևմտահայ գավառն ուներ, անշուշտ, իր թույլ բուրժուազիան, թույլ, որովհետև չուներ արտաքին խոշոր կապեր և ներդրման մեծ միջոցներ, հետևաբար՝ չուներ նաև ներքին կամ արտաքին քաղաքական պաշտպանություն: Գավառահայ բուրժուազիան տուժում էր ոչ այնքան եվրոպական կապիտալի անմիջական ներգործությունից, որքան այն ավերիչ ազդեցության հետևանքով, որ ուենում էր եվրոպական կապիտալը Թուրքիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության վրա: Անկարող շոշափելի տեղ բռնելու բանկային կամ մանուֆակտուրային կապիտալի շրջանառության բնագավառում, գավառահայ բուրժուազիան իր գոյությունը պայմանավորում էր բացառապես տեղական արտադրության, և, առաջին հերթին, գյուղական արտադրության վաճառահանման հետ: Եվ քանի որ արտասահմանյան հսկողության տակ օտար վարկերի դիմաց վճարելիք տոկոսները, մյուս շահութների հետ մեկտեղ, վերջին հաշվով դուրս էին քաշվում տեղական մանր արտադրողների և ամենից առաջ գավառի գյուղացիության գրպաններից, ուստի կամա թե ակամա գավառահայ բուրժուազիան հայտնվում էր տնտեսական և քաղաքական փակուղու մեջ: Անգամ «թլպատված» Ազգային սահմանադրությունը չէր ընդառաջում գավառահայ բուրժուազիայի զորացմանը, նրա հեղինակները սնուցանում էին

[36] Նույն տեղում, էջ 140:

«Սահմանադրական ազգի» պատրանք՝ սահմանադրության անունից դիմադրելով փաստապես գավառում ծայր առնող ազգային-քաղաքական պահանջներին: Պատահական չէ, որ պոլսահայ բուրժուազիայի հեղինակություն Սերվիչենը, որը 1861 թ. ղեկավարում էր Սահմանադրության վերաքննիչ հանձնաժողովի աշխատանքը, շատ որոշակի պատկերացում ուներ «ազգի» և «տերության» միջև անցնելիք սահմանադրական բնագծերի մասին: «Մենք պաշտոն ունեինք ոչ միայն ի նախնյաց մեզի սվանդած կրոնքըն պաշտպանել, — պարզաբանում է նա, — այլև... պիտի աշխատենք համաձայնեցնել տալու նախ դարույն ոգուն և ընթացքին հետ, համաձայնեցնել մեր գործը ազգային ոգու կերպարանացումը՝ **մեր բարեխնամ տերության հանդեպ ունեցած ազգային պարտավորություններուս հետ**՝ օտար միջամտություններ չընդունելով»[37]: Եսասիրական «խոհեմության» և ինքնապահովագրման մի ուղեգիծ էր սա, որ գալիս էր անցյալից և ուղեկցեց հայ քաղաքական մտքին շատ երկար... Օտար միջամտությանը դիմագրավող «բարեխնամ տերության» հանդեպ հայերի ունենալիք ազգային պարտավորության մասին Սերվիչենի հիշեցումն չպետք է մոլորության մեջ ձգի մեզ՝ «օտար միջամտության» վերաբերյալ պոլսահայ լիբերալների բռնած դիրքի նկատմամբ: Այդ պահին Թուրքիայում փաստորեն իշխող անգլո-ֆրանսիական կապիտալի հայ ձայնատարներն էին հենց, որ պայքարելով ռուսական միջամտության դեմ, հրապարակ էին գալիս Օսմանյան կայսրության «անձեռնմխելիության» կարգախոսներով: Պոլսահայ լիբերալները, ելնելով իրենց արևմտյան կողմնորոշումից, դիմադրում էին միայն այն ամենին, ինչ կարող էր խթանել ռուսահայերի ազդեցությանը կամ առիթ ծառայել ռուսական միջամտությանը[38]: Նույն դիրքորոշումն ուներ նաև պոլսահայ լիբերալ բուրժուազիայի շահերի մեկ այլ նշանավոր արտահայտիչ՝ Գր. Օտյանը, որը հրազվող գավառահայության տրամադրություններն արտահայտող Մ. Խրիմյանի հայրենասիրական բռնկումները մեղմելու համար՝ տակավին 1856 թվականին նրան տալիս էր «սուտ հույսերով» չտարվելու իր հետևյալ խորհուրդները. «Մի սուտ հույսերով պատրեր քեզ, մի, զավակ դու սիրասուն հայրենյաց, նոր Փյունիկ՝ նոր մոխիրներու միջէն դուրս ելած... Հոս հոյակապ պալատներ (մարդկային ունայնության նորանոր հիշատակարաններ) վարպետ ձեռքերու տակ կրարձանան ավասիկ. թող այդ մոխիրները, դարձիր հոս եկուր, որ բեհեզ ու ծիրանի տեսնեն քո աչուիդ»[39]: Ինչպիսի հայրական հոգատարություն...

[37] Մեջբերումը կատարված է **Աշ. Հովհաննիսյան**, Նալբանդյանը և նրա ժամանակը. Գիրք առաջին, Ե., 1955, էջ 363—364:
[38] Նույն տեղում, էջ 364:
[39] Գյուտ քահանա Աղանյան, Դիվան հայոց պատմության, հ. ԺԹ, Թիֆլիս, 1915, էջ 53:

Սերվիչենը և Գր. Օտյանը «խավարյալ» ամիրաների «լուսավորյալ» ժառանգներն էին: Նրանք պատկանում էին պոլսահայ էֆենդիների այն սերընդին, որը գավառահայ զանգվածների հայտնաբերած պահանջների և տրամադրությունների նկատմամբ ընթացավ դիվանագիտական «խոհեմության» ուղիով: Նրանք մեծարում էին եկեղեցու հանգույցներով կաշկանդված Ազգային Սահմանադրությունը և միաժամանակ երկնչում նրա շուրջը բորբոքված ժողովրդական հուզումից: 1870-ական թվականների վերջերից, երբ օրակարգում Արևմտյան Հայաստանում Հայկական հարցի լուծման նպատակով ապստամբական շարժումներ կազմակերպելու խնդիրն էր դրվում, Մ. Խրիմյանի կուսակից Հակոբ Նշկյանին Գր. Օտյանը մատուցում էր ազգային քաղաքական իր պրագմատիկ փիլիսոփայությունը, որը փաստորեն սուլթանամետ և արևմտամետ պոլսահայ գերհարուստ վերնախավի փիլիսոփայությունն էր: «Երկաթուղիներու հաստատությունը ինքնին պիտի բավական ըլլար հայոց վիճակի բարվոքման և հարկ չպիտի մնար հեղափոխական կամ իմ ըմբռնումովս ապստամբական շարժումի: Ինչ որ ալ ըլլա սակայն՝ մեր ներկա վիճակին մեջ հեղափոխական որևէ շարժում աղետաբեր պիտի ըլլա... Ազգ մը արյուն թափելու համար նախ պետք է արյուն ունենա և ապա այն թափելու քաջությունն ու անվեհերությունը... Ատկե զատ, պետք է աչքի առջև ունենալ նաև մեր հանգամանքները ու մեր հակառակորդին թիվը, աշխարհագրական դիրքը, շրջապատող ազգերը և տերությունները, անոնց տրամադրությունները... Մեր կըռվանը պիտի ըլլա եվրոպական տերություններու, եթե ոչ ամենուն, գեթ մեկ մասին անկեղծ համակրությունն ու պաշտպանությունը... Ուստի հիմնական, լուրջ և հարատև աշխատությամբ պետք է պատրաստվինք առանց աղմուկի, առանց շեփորի, մինչև այն աստիճան, որ քիչ շատ աչքի զարնող արդյունք մը ձեռք բերելու ապահով ըլլանք»[40]:

Գր. Օտյանի և Սերվիչենի երազած ազգային «ոգու» անկախությունը պետք է լիներ տիրահաճ և աղերսագրային, քաղաքական իմաստ չպիտի պարունակեր նյութական իր պահանջներում: Այս զույգ ազգային «ջոջերի» և սրանց համախոհների (Տատյան, Պալյան, Ռուսինյան, Երամյան, Աղաթոն, Փափազյան և ուրիշներ) ջանքերով էր, որ Ն. Վարժապետյանի ժամանակ թելադրվում էր պատրիարքարանին պաշտոնական Թուրքիայի «հայասիրական կուրսը»:

Ահա Օսմանյան կայսրությունում և նրա շուրջը տիրող կացության, պոլսահայ բուրժուական սերուցքի ազգային-քաղաքական կողմնորոշման նմանակերպ մտածողության առկայությամբ էլ պիտի որոշվեր՝ եվրոպա-

[40] «Մուրճ», 1907, № 7, էջ 63—64:

կան մեծ տերությունների քննարկումներում Հայկական հարց անվանակոչված Արևմտյան Հայաստանի ու նրա բնիկ ժողովրդի ազատության քաղաքական գոյավիճակի ճակատագիրը: Մինչխորհրդային հայ հասարակական և պատմագիտական միտքը հարցն այդպես էլ ընկալել է: Այն է՝ Հայկական հարցը թուրքական բռնատիրությունից արևմտահայության ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման համար մղված պայքարի անվանակոչումն է դիվանագիտության պատմության մեջ: Այսպիսի բովանդակությամբ Հայկական հարցը ասպարեզ է իջել և Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս դարձել 19-րդ դարի 70-ական թվականներից, ռուս-թուրքական պատերազմից հետո: Հայկական հարցը Արևելյան հարցին առնչվում էր Օսմանյան կայսրության հետ Ռուսաստանի փոխհարաբերությունների միջոցով, որոնք 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբներին գըտնըվում էին միջազգային քաղաքականության կիզակետում: Ինչպես 19-րդ դարի ռուս-թուրքական բոլոր պատերազմները, այնպես էլ 1877—1878 թթ. պատերազմը, հայ ժողովուրդը դիմավորեց գործուն խանդավառությամբ: Ռուսական զենքի հաղթանակի հետ մեծ հույսեր կապելով, արևելահայերը Թիֆլիսում, Բաքվում, Ելիզավետապոլում և Երևանի նահանգի մի շարք վայրերում հրավիրում էին ժողովներ, Ռուսաստանի հայաբնակ շատ շրջաններում կազմակերպում ցույցեր, ժողովրդին կոչ անելով կամավորներ տալ ռուսական բանակին՝ թուրքական բռնատիրության տակ հեծող արևմտահայությանն ազատագրելու համար: Տակավին պատերազմն սկսվելուց մի քանի ամիս առաջ Անդրկովկասի տարբեր վայրերում կամավորական ութ զորամիավորները պատերազմի առաջին իսկ փուլում մտան մարտական գործողությունների մեջ: Կամավորական խմբերի ստեղծումը շարունակվեց նաև պատերազմի ընթացքում: Հարձակվող ռուսական բանակին տրամադրվեց ավելի քան 40 հազար զինվոր: Ստեղծված կամավորական ջոկատների զգալի մասը զինվում էր սեփական միջոցներով: Արևելյան Հայաստանի գավառներում կամավորական շարժումն այնպիսի լայն ծավալ էր ստացել և ռուսական բանակին օգնելու, աշխարհազորային ջոկատներում ընդգրկվել ցանկացողների թիվն այնքան շատ էր, որ տեղական իշխանությունները ստիպված էին դադարեցնել կամավորների հավաքագրումը:

Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողություններին մասնակցեցին յոթ հայ գեներալ և ավելի քան 500 սպա: Հազարավոր հայ կամավորներ զոհվեցին Կարսի, Էրզրումի, Բայազետի և այլ քաղաքների ու բնակավայրերի պաշարման ու գրոհների ժամանակ:

Պատերազմին եռանդուն մասնակցություն էր ցույց տալիս նաև կամավորական ջոկատներում չընդգրկված ազգաբնակչությունը, որպես տե-

դական աշխարհազորայիններ զենք ստանալով ու միշտ պատրաստ՝ մարտընչելու թշնամու դեմ: Երևանի նահանգապետը, Կովկասյան կորպուսի հրամանատարության կարգադրությամբ սահմանամերձ շրջանների հայերին էր բաժանել յոթ հազար հրացան[41]: Իշխանությունների կողմից մեծ քանակությամբ զենք էր բաժանվել նաև Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի ու Վրաստանի սահմանամերձ մյուս գավառների հայ բնակիչներին: Ռուսական զորքերի կողմից ազատագրված շրջանների հայերը մեծ պատրաստակամությամբ դառնում էին ուղեկիցներ, թարգմանիչներ, ինչպես նաև համալրում շտապ կազմակերպվող տեղական աշխարհազորային ջոկատները: Կազմակերպվում էին նաև ռուսական զորքերին պարեհով օգնելու, ռուս վիրավոր զինվորներին խնամելու գործը:

Հայկական կամավորական ջոկատները, ռուս զինվորների հետ ուսուսի կռվող հայ ռազմիկները, հայազգի զորավարներ՝ Մ. Լոռիս-Մելիքովը, Հ. Լազարևը, Ա. Տեր-Ղուկասովը, Բ. Շելկովնիկովը, Յա. Ալխազովը, սպաներ Քիշմիշևը, Աթաբեկյանը, Կարապետյանը, Թարխանյանը, Ավետյանը, տակավին Ղրիմի պատերազմի ժամանակ աչքի ընկած հարյուրապետ Գաբրիել Գեղամյանն ու շտաբս-կապիտան, հետախույզ Դանիել Հարությունյանը և շատ ուրիշներ անձնազոհ պայքարի փառավոր էջեր գրեցին հուսադրող պատերազմի տարեգրության մեջ: Հայերը ռուսական զորքերին դիմավորում էին որպես ազատարարների[42], քանզի արևմտահայության ճնշող մեծամասնության, հատկապես գավառահայության հայացքը հառած էր Ռուսաստանին: Ուշագրավ է, որ պատերազմի օրերին քաջ զեյթունցիները գեներալ Լազարևին, իսկ Կարապետ արքեպիսկոպոսի օրերից մոլեռանդ ռուսամետ կարնեցիք՝ Լոռիս-Մելիքովին էին հայտնել թուրքական կառավարության դեմ ապստամբելու իրենց պատրաստակամության մասին: Պատերազմի ժամանակ և պատերազմից անմիջապես հետո բազում հավաքական դիմումներ ուղարկվեցին ցարական արքունիք՝ խնդրելով իրենց ազատել թուրքական լծից: Կ. Պոլսի ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից Էջմիածին ուղարկված ծրագրի մեջ խնդրվում էր կաթողիկոսին՝ ցարին աղերսելու միջոցով «... Մեծ հայքը կրկին տաճկաց չվերադարձնել, այլ յուր կայսերական իշխանության մեկ մասն համարել, միացնելով Արարատյան նահանգի հետ...»: Հնարավորության սահմաններում նրանք փափագում էին ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ ծայրահեղ դեպքում՝ խնդրում բարենորոգումները կատարել ռուսական զորքերի ներկայության պայմաններում[43]:

1877 թ. նոյեմբերին հրատարակվեց սուլթան Աբդուլ Համիդի հրամանը (իրադեն), որով զենքի էին կոչում 17—45 տարեկան բոլոր քրիստոնյաներին: Բայց Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը ճնշող մեծամասնությամբ մերժեց այն: Ինչպես 1876 թ. Ազգային ժողովի կողմից սուլթանական կառավարությանը ներկայացրած գավառական հարստահարությունների մասին տեղեկագրերի, այնպես էլ 1877 թ. զինվորագրությունը մերժելու առիթով, թուրքական մամուլն ու պետական քարոզչությունն սկսեցին հայերին մեղադրել «բարեխնամ» պետության նկատմամբ «ապստամբ», ապա նաև «դավաճան» լինելու մեջ: Իսկ Կ. Պոլսի Մեծ Բրիտանիայի դեսպան, ռուսատյաց ու հայատյաց Լայըրդը համոզում էր հայերին ընդունել զինվորագրությունը և կռվել Ռուսաստանի դեմ:

Ռուս-թուրքական պատերազմը վերջացավ սուլթանական Թուրքիայի պարտությամբ և ռուսական բանակների հաղթական երթն ավարտվեց՝ Դանուբյան ռազմաճակատում ռուսական զորքերին կանգնեցնելով Կ. Պոլսի դարպասների առջև, իսկ Կովկասյանում՝ Էրզրումի գրավմամբ: 1878 թ. հունվարի 19-ին կնքվեց Ադրիանապոլսի զինադադարը, իսկ մեկ ամիս անց ռուսական դիվանագետները, Շիպկայի, Պլևնայի ու Կարսի հերոսների սվինների ուժով, Սան-Ստեֆանոյում, հաղթողի իրավունքով, իրենց պայմանները թելադրեցին Թուրքիային:

Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում ռուսական պատվիրակությունը գլխավորում էր Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան գեներալ Ս. Իգնատևը (մյուս պատվիրակը դեսպանության խորհրդական Ալ. Նելիդովն էր), իսկ թուրքական պատվիրակության կազմում արտաքին գործերի նախարար Սավֆետ փաշայի և Բեռլինի թուրքական դեսպան Սաադուլլա բեյի հետ միասին, որպես պատվիրակության քարտուղար և խորհրդական մասնակցում էր հայազգի Սարգիս բեյ Համամջյանը:

Ադրիանապոլսի զինադադարից հետո, մեկ ամսվա ընթացքում, ռուսական դիվանագիտությունը, հանձին Իգնատևի, եռանդով նախապատրաստում էր հաշտության բանակցությունները:

Կոնֆերանսին պատրաստվում էր և սուլթանական Թուրքիան, որին անսահման օգնում էր և Ռուսաստանի դեմ տրամադրում Անգլիան: Տակավին 1877 թ. վերջերին անգլիական մամուլն արդեն ահազանգում էր, որ գրավելով Հայաստանը Ռուսաստանը փակում է Մեծ Բրիտանիայի առև-

[41] Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 40, թ. 56:
[42] Տե՛ս **С. Кишмишев**, Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884, стр. 12—13.
[43] Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 24, թ. 10, 13:

տրական ճանապարհները: Ռուսաստանի առջև բացվում են բոլոր ուղիները դեպի հարավ, դեպի նեղուցները[44]:

Տակավին պատերազմի սկզբներին Անգլիայի պրեմիեր-մինիստր լորդ Բիքոնսֆիլդը (Դիզրայելի) ահաբեկում էր Լոնդոնի ռուսական դեսպան Պ. Շուվալովին, որ ինքը անգլիական էքսպեդիցիոն (ռազմարշավային) բանակը կարող է հասցնել 300 հազար մարդու[45]: Իսկ պատերազմից անմիջապես հետո նա սպառնում էր ռուսական բանակների Կ. Պոլիս մտնելու դեպքում անգլիական զորքերը առափնել Թուրքիայի մայրաքաղաքում: Եվ իրոք, որպես նախաքայլ, փետրվարի 15-ին բրիտանական նավատորմը խարիսխ ձգեց Իշխանաց կղզիների առջև՝ ուղիղ Կ. Պոլսի դիմաց: 1878 թ. հունվարի 14-ին անգլիական կաբինետը Պետերբուրգի իր դեսպանի՝ Ավգուստ Լոֆտուսի միջոցով, հայտնում էր ռուսական վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Գորչակովին, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք պայմանագիրը, եթե հակասի Փարիզի և Լոնդոնի 1856 և 1871 թվականների համաձայնագրերին, անպայմանորեն կվերանայվի հիշյալ պայմանագրերն ստորագրած երկրների կոնգրեսում:

Ռուսաստանի տարած հաղթանակների վավերացմանը խափանելուն էին ուղղված նաև եվրոպական մյուս տերությունների ջանքերը: Եվ եթե զինադադարի համաձայնագիրը կնքելուց առաջ ռուսները ցանկանում էին ձգձգել այն, Ավստրո-Հունգարիայի համերաշխելու հաշվով, ապա համաձայնագիրը կնքելուց հետո Իգնատևին հղած հեռագրերում, Գորչակովը մատնանշում էր Ռուսաստանի համար քաղաքական իրադրության աննըպաստ հեղաբեկումը և պայմանագրի ստորագրման արագացման խիստ անհրաժեշտությունը: Եվ Իգնատևն արագացրեց հաշտության պայմանագրի կնքումը: Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա գտնվող Սան-Ստեֆանո ծովային ավանի այն ամառանոցում, որը պատկանում էր հայ մեծահարուստ Առաքել Տատյանին և որտեղ իջևանել էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) ստորագրվեց պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: 29 կետից բաղկացած Սան-Ստեֆանոյի պայմանագիրը նշանավորվեց որպես Բալկանյան քրիստոնյաների ազատագրման մանիֆեստ: Անկախ էին հռչակվում Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան: Բուլղարիան դառնում էր ինքնավար իշխանություն և միայն որոշ հարկ պետք է վճարեր Թուրքիային: Նա ընդգրկելու էր Դանուբից ու Սև ծովից մինչև Էգեյան ծովն ընկած հսկա մի տարածություն, ուր ռուսական զորքերը մնալու էին երկու տարի: Ինքնավարություն էին ստանում նաև Բոսնիան և Հերցեգովինան: Բոսֆորն ու Դարդանելը դառնում էին բաց նեղուցներ չեզոք պետությունների առևտրական նավերի երթևեկության համար: Ռուսաստանն ստանում էր 310 միլիոն ռուբլու ռազմատուգանք և տեր դառնում 1856 թ. կորցրած Բեսարաբիայի (բացի Դանուբի գետաբերանում գտնվող կղզիներից), Արևմտյան Հայաստանի 35,650 քառ. կմ տարածությամբ խոշոր մի հատվածի՝ Կարսին, Արդահանին, Բայազետին և մինչև Սողանլու (Մեծրաց լեռներ) ընկած տարածքին, ինչպես նաև կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Բաթումին:

Ադրիանապոլսի զինադադարի համաձայնագրում արևմտահայերին չանդրադառնալու իրողությունը ցնցեց պատերազմի հետ մեծ հույսեր կապած ժամանակի հայ գործիչներին ու հասարակական խմբավորումներին և նրանց գործունեությունը նպատակամղեց հասնելու Թուրքիայի հայ ազգաբնակչության տնտեսական և իրավական վիճակի բարելավմանը, ինքնավարություն կամ քաղաքական այլ խնամակալություն ընդունելուն:

Հայ հասարակական գործիչ և նշանավոր գրող Արփ. Արփիարյանը (Հայկակ) Կ. Պոլսից «Մշակին» տեղեկացնում էր, որ ռուսների Սան-Ստեֆանո մտնելուց հետո մայրաքաղաքի հայկական թերթերը «սկսած են շատ ազատ գրել, մինչև անգամ կհամարձակին Թուրքական Հայաստանի ինքնավարություն պահանջել»[46]: Այդ ոգևորությունը դրսևորվեց նաև Ալեքսանդր Բ-րդին և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին հասցեագրված 1878 թ. փետրվարի 13-ի նամակ-խնդրագրերում: Նույն օրը Ն. Վարժապետյանը նամակ հղեց Գևորգ Ե կաթողիկոսին, ուր նշվում էր ցարին և նախարարին ուղարկված դիմումների մասին և խնդրում, որպեսզի նա ևս միջնորդի ցարի առջև՝ արևմտահայության դատը պաշտպանելու[47]:

Արևմտահայ ժողովրդի այդ ցանկությունը և Արևմտյան Հայաստանի զգալի մասը ռուսական զորքերի կողմից գրավված լինելու փաստը, որպես դրա գործնական երաշխիք, չէր կարող վրիպել թուրքական կառավարության և հատկապես Անգլիայի ուշադրությունից: Սկսվեց Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու, իսկ իրականում Ռուսաստանի կողմից գրավված շրջանները ետ վերցնելու անգլո-թուրքական ծարպիկ խաղը: Սուլթանական կառավարությունը Կ. Պոլսի անգլիական դեսպան Լայըրդին խորհուրդ էր տալիս, որ վերջինս համոզի Ներսես պատրիարքին

[44] Տե՛ս «Голос», 24/12—1877 թ., տե՛ս նաև Խորեն Գաբիկյան, Հայկական հարցը, Պեյրութ, 1962, էջ 70:

[45] Տե՛ս **П. А. Шувалов**, О Берлинском конгрессе 1878 г. («Красный архив», 1933, № 4, (59), стр. 47).

[46] «Մշակ», 1878, № 64:

[47] Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 24, թ. 1:

ինքնավարություն պահանջել Արևմտյան Հայաստանի համար առանց որևէ երկրորդ պայմանի, նպատակ ունենալով կանխել Ռուսաստանի կողմից գրաված տարածքների կորուստը[48]:

Պատրիարքին արևմտահայության ճակատագրի համար եռանդուն գործունեության էր մղում նաև Մ. Խրիմյանի գլխավորությամբ տակավին 1877 թ. նոյեմբերին հրաժարականի սպառնալիքով նրան այցելած բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությունը, որը պահանջում էր ամենագործնական միջամտություն առաջիկա դժվարին բանակցություններում: Պատրիարքը, որը շատ ավելի հակված էր զգուշավոր քաղաքականության դեպի Թուրքիան և գտնում էր, որ արևմտահայության հարցի լուծումը եվրոպական տերությունների սժանդակության հետ կապելը հուսալի հեռանկարներ չի կարող ունենալ, ի վերջո տեղի է տալիս եռանդուն գործունեության կողմնակիցներին: Նախ՝ Ազգային ժողովում նա անց է կացնում ինքնավարության մասին որոշումը և, երկրորդ՝ հայերի դիվանագիտական առաքելությունը նախօրոք ստանձնած Ռուսթուգլյանին փոխարինելու են գալիս թուրքական կառավարության հրամանով, վիրավորներ տեղափոխելու անվան տակ Ադրիանապոլսում գտնվող թուրքական պետական պաշտոնյաներ Ստ. Ասլանյանը և Հովհ. Նուրյանը: Սրանք էլ Թուրքիայի գերիշխանության ներքո ինքնավարություն խնդրելու ծրագիրը, իբր գաղտնի, հանձնում են դեսպան Իգնատևին:

Թուրքական կառավարության գիտությամբ փետրվարին Սան-Ստեֆանո է մեկնում նաև պատրիարքը և տեսակցում ռուսական բանակի գլխավոր հրամանատարի հետ: Ստ. Ասլանյանը, որն այդ շրջանում Ազգային ժողովի ատենապետն էր, 1887 թ. Ստ. Փափազյանին գրած մի նամակում անդրադառնալով Սան-Ստեֆանոյում Արևմտահայաստանի խնդրի արծարծմանը, գրում էր, որ այն չէր կարող չծագել, քանի որ «Տերությունն ալ մասնակցեցավ ազգայիններու ջանքերուն»[49]: Մասնակցեց, որպեսզի տապալի այն:

Անգլիական նավատորմի Կ. Պոլսի մոտ երևալը և թուրքերի ստացած հավաստիացումը, որ Ռուսաստանն ստիպված կլինի դատարկել ասիական Թուրքիայում գրաված տարածքները, թուրքական կառավարությանը համարձակություն տվեց հրահանգելու Սան-Ստեֆանոյի իր պատվիրակներին, արևմտահայության խնդրի լուծմանը համաձայնել ավելի նեղ սահմաններում: Եվ քանի որ Ռուսաստանի համար այնքան էլ ձեռնտու չէր Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը, թեև Իգնատևը պայմանագրի

[48] Տե՛ս **Ռ. Հովհաննիսյան,** Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, էջ 125—127:
[49] «Անահիտ», 1907, № 6—9, էջ 143:

նախնական տեքստում այն մտցրել էր, արևմտահայության հարցը՝ 16-րդ հոդվածի ներքո, ձևակերպվեց որպես «բարելավումների և բարենորոգումների» խոստում միայն: Ահա այն՝ «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերություններում վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[50]:

Ո՛չ սուլթանական Թուրքիան, ո՛չ արևմտաեվրոպական մեծ տերությունները և ո՛չ էլ Ռուսաստանը արևմտահայ ժողովրդին ինքնավարություն տալու որևէ ցանկություն չունեին: Մեծ տերությունների կողմից տարբեր առիթներով առաջ քաշված կամ պաշտպանված Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը քաղաքական այս կամ այն նպատակ հետամտող խաղ է եղել միայն: Իսկ ի՞նչ տվեց 16-րդ հոդվածը հայերին: Արևմտյան Հայաստանի հարցը առաջին անգամ դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, իսկ թուրքական կառավարությունը հրապարակայնորեն ճանաչեց Հայաստանի և հայ ժողովրդի գոյությունն ասիական Թուրքիայում: Բացի այդ հոդվածից, կայսրության մյուս ժողովուրդների հետ միասին, հայերին էին վերաբերում պայմանագրի 25-րդ հոդվածի այն մասը, ուր նշված էր, որ ռուսական զորքը ասիական Թուրքիայից պետք է դուրս բերվի վեց ամսվա ընթացքում՝ վերջնական հաշտությունը կնքելու օրվանից սկսած, և 27-րդ հոդվածը, ըստ որի Թուրքիայի կառավարությունը պարտավորվում էր չպատժել այն բնակիչներին, որոնք կասկածվում էին պատերազմի ժամանակ ռուսական զենքի հաղթանակին այս կամ այն ձևով նպաստելու գործում: Թուրքական իշխանությունները արգելք չպիտի հանդիսանային նաև ռուսական զորքերի հետ հեռանալ ցանկացող օսմանյան հպատակներին:

Այսպիսով, Սան-Ստեֆանոն չլուծեց արևմտահայության հարցը: Նրա 16-րդ հոդվածի միակ օգուտը համայն հայության համար այն էր, որ Թուրքիան պաշտոնապես ճանաչում էր Օսմանյան կայսրության սահմաններում «Հայաստան» երկրի գոյությունը, Ռուսաստանը հանդես էր գալիս արևմտահայության պաշտոնական հովանավորը և Արևմտյան Հայաստանի մի զգալի հատվածի միակցումը Ռուսաստանին հնարավորություն էր տա-

[50] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972, էջ 92:
[51] Նույն տեղում, էջ 96—97:

լիս այդ տարածքի հայությանը փրկվելու ֆիզիկական ոչնչացման անխուսափելի վտանգից: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, ինչպես նաև ողջ պայմանագիրը, չնայած իր չափավոր հայանպաստ տարողությանը, հայ հասարակական հոսանքների և քաղաքական նշանավոր գործիչների կողմից ընդունվեց հավանությամբ: Սակայն հոդվածում ամրագրված այդ նվազագույնն իսկ իրագործման բախտին չարժանացավ: Թուրքիայի ժառանգությունը վիճարկող տերությունները չհանդուրժեցին Ռուսաստանի միակողմանի հաջողությունը: Ռուսաստանի հաղթանակը դրժգոհություն առաջացրեց հատկապես Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարող շրջաններում, որոնց դիվանագիտությունը մեծ ջանքեր գործադրեց՝ պահանջելով հրավիրել միջազգային կոնգրես և վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ամբողջապես: 1878 թ. հունիսի 1-ից հուլիսի 1-ը հրավիրված Բեռլինի կոնգրեսում, Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման հետևանքով, արևմտաեվրոպական դիվանագիտությանը, Անգլիայի գլխավորությամբ, հաջողվեց Ռուսաստանին զրկել Հայկական հարցում նրա ունեցած մենաշնորհից: Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինի կոնգրեսում 61-րդ հոդվածի փոխակերպված հետևյալ տեսքըն ստացավ. «Բարձրագույն Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ շրջաններում իրագործել տեղական կարիքներից ելնող բարվոքումներ և բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Այդ նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին Բ. Դուռը պարբերաբար պետք է հաղորդի տերություններին, որոնք կհետևեն դրանց իրագործմանը»[52]: Այս ձևակերպումը, ուր անգամ չէր նշվում, թե այն չկիրառելու դեպքում եվրոպական տերությունները ինչ միջոցների կդիմեն Թուրքիայի նկատմամբ, ընդունվեց և պայմանագրի մեջ մտավ՝ հայկական բարենորոգումներ անվան տակ: Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուսական զորքերի առկայության պայմաններում բարենորոգումներ ստանալու երաշխիքը փոխարինվում էր այս անորոշ բանաձևով: Հայերի մարդկային տարրական իրավունքները պաշտպանելու համար ինչպես Սան-Ստեֆանոյի պայմանագրում, այնպես էլ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածում արձանագրվում էր, որ Բարձր Դուռը պարտավորվում է ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Նմանօրինակ տարրական պարտավորությունը, որն իր նմանը չուներ միջազգային հարաբերությունների պատմության մեջ, միայն ծայրաստիճան բարոյալքված պետության նկատմամբ կարող էր միջազգային

[52] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972, էջ 128:

արձանագրության նյութ ծառայել: Բայց հանուն շահի, «քաղաքակիրթ» Եվրոպան պաշտպանում էր բարոյալքված Օսմանյան կայսրությանը:

Այսպիսով, պատերազմում հաղթանակած Ռուսաստանը չկարողացավ ամրապնդել իր հաղթանակի պտուղները: Նրա բեռլինյան պարտությունը հարդարվել էր Անգլիայի ջանքերով ստեղծված հակառուսական եվրոպական խմբավորման միասնական ճակատի կողմից: Թուրքիայի ստատուս քվոն պաշտպանելու հոգսով շահագրգռված էր նաև Գերմանիան, որը, իր կանցլեր Բիսմարկի արտահայտությամբ, քվեարկեց մեծամասնության հետ և «Ռուսաստանը մնաց փոքրամասնության մեջ»[53]:

Պատերազմին ամենևին չմասնակցած Անգլիան շնորհիվ իր դիվանագիտական հաջողության, ոչ միայն տիրացավ Կիպրոսին, այլև Արևմտյան Հայաստանը դարձրեց իր կնքած «պատվավոր հաշտության» սեղանի զոհը[54]:

Եվրոպական բոլոր մեծ տերություններից լքված ու խաբված հայ պատվիրակները, Բեռլինից մեկնելուց առաջ, կոնգրեսին ներկայացրած իրենց վերջին բողոքագրում հայտարարում էին, թե հայ ժողովուրդը երբեք չի դադարի իր ձայնը բարձրացնել, մինչև որ Եվրոպան կատարի նրա պահանջների արդար դատաստանը, պատրանքաշատ մի մտայնություն, որ, տարաբախտաբար, գոյատևեց շատ երկար...

Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար 16-րդ և 61-րդ հոդվածներով սկիզբ առավ Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը, ինչպես նաև հայ հասարակական-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու, արևմտահայության ինքնավարությունը կամ անկախությունը ձեռք բերելու մտայնությունն ու գործելակերպը, որը շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտը և աշխարհամարտից հետո:

Հայկական հարցի ստեղծման և հայ ազատագրական պայքարի վերելքի շրջանում (19-րդ դարի վերջին քառորդ) ավելի խստացան սուլթանական կառավարության ճնշումներն ու հալածանքները: Սկսվեցին հայերի զանգվածային կոտորածներ, որոնց միայն 1894—1896 թթ. զոհ գնաց ավելի քան 300 հազար հայ: Սուլթան Համիդ 2-րդը փորձում էր Հայկական հարցը լուծել հրով ու սրով: Եվրոպական իմպերիալիստների համար Հայկական հարցը լոկ միջոց էր միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին և ճնշում գործադրելու նրա վրա՝ նոր զիջումներ և շահույթներ կորզելու համար: Սակայն հայկական ջարդերը մեծ արձագանք

[53] **О. Бисмарк,** Мысли и воспоминания, т. 2, М., 1940, стр. 217.
[54] Տե՛ս **Ллойд Джордж,** Правда о Мирных договорах, т. 2, М., 1957, стр. 390.

գտան Եվրոպայում: Հասարակական կարծիքի ճնշման տակ 1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպանները մշակեցին և թուրքական կառավարությանը ներկայացրին Արևմտյան Հայաստանի՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի նահանգներում (վիլայեթներում) բարեՆորոգումներ անցկացնելու նոր ծրագիր: Սուլթանական կառավարությունը երկար ձգձգումներից հետո ընդունեց այսպես կոչված Մայիսյան բարեՆորոգումների ծրագիրը, բայց այս անգամ ևս, օգտվելով մեծ տերությունների միջև եղած հակասություններից, չիրագործեց: Դեռ ավելին, կատաղի հարձակում սկսեց հայերի դեմ՝ կազմակերպելով նոր զանգվածային կոտորածներ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Հայկական հարցը թևակոխեց իր չլուծման յուրահատուկ նոր փուլը: Հայ հասարակական-քաղաքական որոշ ուժեր Հայկական հարցի լուծումը կապեցին թուրքական պետության բարեՆորոգման հետ, իսկ որոշ շրջաններ էլ շարունակեցին դիվանագիտության օգնությամբ այն լուծելու նախկին ընթացքը: Իսկ սոցիալ-դեմոկրատ հայ բոլշևիկները Հայկական հարցի լուծումը հնարավոր համարեցին ցարի և սուլթանի դեմ աշխատավոր զանգվածների ինտերնացիոնալ, ավելի քան անհրաժեշտ, համատեղ պայքարի մեջ:

1912—1914 թթ. Օսմանյան կայսրության թուլացման, նրա բռնատիրության տակ ճնշված, հատկապես բալկանյան ժողովուրդների, հակաթուրքական ազատագրական շարժումների վերելքի պայմաններում, նորից վերաբացվեց Հայկական հարցը: Այս անգամ ևս շնորհիվ Ռուսաստանի նախաձեռնող դերի, որն ուզում էր ամրապնդել Արևմտյան Հայաստանում, խնդիրը հարուցվեց և դիվանագիտական քննարկման առարկա դարձավ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում բարեՆորոգումներ կենսագործելու, մեկ միասնական նահանգապետություն ստեղծելու, հայերից խլված հողերը տերերին վերադարձնելու հարցը: ԲարեՆորոգումների ռուսական նոր նախագծի հաջող իրականացումը կբարելավեր արևմտահայերի կացությունը, կուժեղացներ Ռուսաստանի դիրքերը Արևմտյան Հայաստանում: Բայց այս անգամ էլ արևմտաեվրոպական երկրները, մասնավորապես Գերմանիան, խափանեցին խնդրի արմատական լուծման ռուսական կառուցողական առաջարկությունները: Երկար վիճաբանություններից և միջպետական ախոյանությունից հետո ծնվեց համաձայնողական մի նախագիծ, որով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու հատվածների, որտեղ, Եվրոպայից նշանակված ընդհանուր տեսուչների ղեկավարությամբ, պետք է իրագործվեին բարեՆորոգումները:

Սակայն այս ծրագիրը ևս չիրականացավ Առաջին աշխարհամարտի բռնկման հետևանքով: Ճարպկորեն օգտվելով պատերազմական կացությունից՝ դաշնակցած հակառուսական խմբավորման գլխավորող Գերմանիայի հետ, երիտթուրքական պարագլուխները ձեռնամուխ եղան Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու թուրքական ծրագրի իրագործմանը: Մեծ եղեռնին զոհ գնաց շուրջ երկու միլիոն արևմտահայ, ստեղծվեց հայկական սփյուռքը:

Պատերազմին ժամանակ կայզերական Գերմանիան ըստ ամենայնի օժանդակեց և աջակցեց երիտթուրքերի ոճրագործությանը, իսկ Անտանտի տերությունները գաղտնի ծրագրեր էին մշակում (Սայքս-Պիկոյի 1916 թ. համաձայնագիրը) Մերձավոր Արևելքը և Արևմտյան Հայաստանը միմյանց միջև բաժանելու շուրջը:

Հայկական հարցի լուծման ուղղությամբ ոչինչ չարեց նաև Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը: Ուսումնասիրելով մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի քննության պատմությունը, եկել ենք այն եզրակացության, որ նրա ներկայացուցիչներից շատերը, իր ամբողջության մեջ, չեն կարողացել լուսաբանել այն, և միաժամանակ ցույց տվել, որ ոմանք արել են շատ արժեքավոր եզրահանգումներ և ընդհանրացումներ, որոնք այսօր էլ պահպանում են իրենց անուրանալի արժեքը: Ներկա ուսումնասիրությունը մինչխորհրդային հայ պատմահասարակական մտքի մեջ Հայկական հարցի քննությունն է սկսած 19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը: Այն բաղկացած է ընդարձակ ներածականից և երեք գլխից:

Ներածությունում ցույց է տրվում սուլթանական Թուրքիայում արևմտահայության ծանր վիճակը, ներքին և արտաքին հանգամանքների միակցմամբ ստեղծված պատմական այն միջավայրը, որում հնարավոր դարձավ Հայկական հարցի ծագումը:

Առաջին գլխում՝ «Հայկական հարցը և 19-րդ դարի 70—80-ական թվականների հայ հասարակական միտքը», քննարկվում և լուսաբանվում է ժամանակի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսների և գործիչների այն մտայնությունը, որ ի հայտ եկավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, պատերազմի ընթացքում և հաջորդող տարիներին: Ցույց է տրվում ռուսական զենքի օգնությամբ թուրքական տիրապետությունից ազատվելու ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հատվածի ազգային-քաղաքական հեռանկարների մասին նրա

մտածող զավակների խանդավառությունը՝ մի կողմից, Բեռլինի կոնգրեսից հետո Թուրքիայի ստատուս քվոն պահպանելու և Հայկական հարցը սեփական շահերին ծառայեցնելու իմպերիալիստական տերություններից նրանց հիասթափությունը՝ մյուս կողմից: Պատմագիտական արդիական արժեք ունեցող 1870—80-ական թվականների հայ գրողների և հասարակական գործիչների ստեղծարար գաղափարներն ակնբախ են դարձնում, որ նրանք քննական ու քննադատական սթափ հայացքով էին դիտարկում Ռուսաստանի օգնությամբ սուլթանական լուծը թոթափելու դրական և արևմտահայության վրա ռուսական ազդեցությունը խարխլելու կամ իսպառ դուրս վանելու արևմտյան տերությունների քաղաքականության բացասական հետևանքները:

Երկրորդ՝ «Հայկական հարցում կուսակցությունների դիրքորոշման և գործելակերպի գնահատականների շուրջը» գլխում անդրադառնում ենք Հայկական հարցի լուծման ուղիների մասին կուսակցությունների ծրագրային դրույթներին և նշանավոր գործիչների գնահատականներին:

Բացահայտում ենք այդ կուսակցությունների գաղափարաբանության և գործելակերպի մեջ, հայ ազատագրական մտքի բոլոր փուլերին ուղեկից, արտաքին կողմնորոշումների, սեփական ուժերին ապավինելու համակիրների և հակակիրների հակամարտը:

Վերոհիշյալ բացերից ու արատներից զերծ չէր նաև մինչխորհրդային հայ պատմագիտական միտքը: Դրա համար էլ վերջին՝ «Հայկական հարցը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ» գլխում ցույց ենք տվել նաև հարցի լուսաբանման ուղղությամբ հայ պատմագիտական մտքի ճիշտ և հեռանկարային կողմնորոշումները, և հայ բուրժուական պատմագրության ինչպես պահպանողական, այնպես էլ լիբերալ ուղղությունների՝ ծայրահեղ դիրքերից մերձենալու միտումները: Ցույց ենք տվել, որ դրանցում կան հեղինակներ, որոնց աշխատություններն ուղղակի Հայկական հարցի վերաբերյալ միջազգային տարբեր մոտեցումների անկողմնակալ քննության և խարդավանքների մերկացման անդրադարձն են պատմագրության մեջ: Աշխատել ենք հին և նոր նյութերի, մինչխորհրդային ու խորհրդային գրականության բաղդատմամբ Հայկական հարցի աճուրդը ներկայացնել որպես թուրք-արևմտաեվրոպական շահախնդրությունների համագործակցությամբ հայ ժողովրդի դեմ նախապատրաստված դիվանագիտական գործարք:

Մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ գրականություն են ծառայել պատմաբանների աշխատությունները, ժամանակի քաղաքական հրապարակախոսությունը և մասամբ էլ՝ պատմագեղարվեստական գրականությունը:

Օգտագործված գրականության մի զգալի մասը զերծ չէ ակնհայտ թերություններից՝ կամայական մեկնաբանություններից ու սխալ տեսակետներից: Այդ իսկ պատճառով, անցյալի գրականության մեջ տեղ գտած սխալ և միակողմանի տեսակետների լուսաբանությունն առարկայական ու հիմնավոր դարձնելու համար դիմել ենք արխիվային նյութերի ու քաղաքական ամենատարբեր հոսանքների պատկանող մամուլի օգնությանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ 70—80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ

1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի պայմանագրի որոշումները հայ ժողովուրդն ընդունեց մեծ խանդավառությամբ: Նշանավոր այդ իրողությունները նոր հովեր մղեցին ընթացիկ կյանքի մեջ և խորհրդածությունների ու մտորումների առարկա դարձան ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի ամենատարբեր ներկայացուցիչների համար: Մի պահ թվում էր, թե թուրքական բռնատիրության ճիրաններում խոշտանգվող Արևմտյան Հայաստանին փոխարինելու էր գալիս ազատ, իրական Հայաստանը: Վերջապես իրականանում էր այն, ինչի համար հայ ազատագրական միտքը երազել էր երկար ժամանակ:

Ժամանակի հայ հասարակական գործիչները տակավին չէին նըշմարում թուրքական կառավարողների ապագա ծրագրերն ու Օսմանյան կայսրությունում տնտեսական և քաղաքական ռազմավարական շահեր հետամտող եվրոպական տերությունների խարդավանքների և իրենց ակնկալությունների անանց անդունդը: Կ. Պոլսի ղեկավար հայ շրջանները հույս ու հավատի մեջ էին այն աստիճան, որ Բեռլինի կոնգրես էին ուղարկում ազգային պատվիրակություն ոչ միայն պաշտպանելու Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, այլև ավելի նպաստավոր պայմանների իրագործում պահանջելու արևմտահայության համար: Պատրիարքարանի կազմած ծրագիր-խնդրագրում նախատեսվում էր ինքնավարության տրամադրում Արևմտյան Հայաստանին, մի բան, որ չէր արձանագրվել Սան-Ստեֆանոյի պայմանագրում: Պատվիրակությունը եղավ Հռոմում, Փարիզում, Լոնդոնում (Մկրտիչ Խրիմյան, Մինաս Չերազ), Պետերբուրգում (Խորեն Նարպեյ), հանդիպումներ ունեցավ այդ երկրների պետական և դիվանագիտական նշանավոր գործիչների հետ: Պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել Բեռլինի կոնգրեսին. մեծ դժվարությամբ միայն հաջողվեց կոնգրեսի մասնակիցներին հանձնել

Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին նախագիծն ու պետություններին ուղղված հուշագիրը, որոնք, ինչպես և սպասվում էր, մատնվեցին անուշադրության: Բեռլինի դաշնագրով Հայկական հարցը Օսմանյան կայսրության ներքին հարցից փաստորեն վերածվեց միջազգային հարցի՝ դառնալով իմպերիալիստական գիշատիչների շահադիտական քաղաքականության ու միջազգային դիվանագիտության չարաշահման առարկա, որը ճակատագրական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար:

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը Կ. Պոլսում և Անդրկովկասի հայաշատ կենտրոններում (Թիֆլիսում և այլուր) իրարամերժ գնահատականներ ստանալով հանդերձ, հայ հասարակական-քաղաքական մտքի բոլոր հոսանքների համար մի տեսակ խթան հանդիսացավ վերագնահատելու սեփական ուժերը, նպատակներն ու հետագա գործելակերպը: «Թուրքիան թուրքերի համար» նոր օսմանների կարգախոսը, Բեռլինի կոնգրեսից հետո սուլթան Աբդուլ Համիդի ծայրահեղ մեկնարկն ու ընթացքը հետզհետե հայկական հասարակական շրջաններին մղում էին ազգային համախմբման գաղափարի մշակմանն ու գործադրման ուղիների որոնմանը:

Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում թուրքական լծից ազատագրվելու ցանկությամբ էր տոգորված ամբողջ արևմտահայությունը: Բայց «պատերազմի ելքը, — դիպուկ նկատել է հայ իրականության լավագիտակ Յու. Վեսելովսկին, — չարդարացրեց այն սպասումները, որ դրվում էին նրա վրա: Թուրքահայաստանի մեծ մասն առաջվա պես մնաց թուրքերի իշխանության ներքո. մի պահ շատ մոտ թվացող ազատագրությունը ճնշումից, կամ ծայրահեղ դեպքում, որոշակի ինքնավարություն և բարենորոգումներ ստանալը այդպես էլ դուրս չեկան երազանքների ու պլանների ոլորտից... Հայրենասիրական ոգևորության պայթունին հետևեցին հիասթափությունը, վհատության և անբավարարվածության զգացումը հայկական հասարակության մեջ և մտավորականության շրջանում»[1]:

19-րդ դարի 70—80-ական թվականներին հայ կղերաազգային հոսանքը Հայկական հարցի լուծումը գերազանցապես տեսնում էր Բեռլինի կոնգրես ներկայացված Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի ծրագրի իրագործման շրջանակներում, որը հանգում էր օսմանյան գահի հովանու ներքո ինքնավար Տաճկահայաստան ստեղծելուն, որի կառա-

[1] **Ю. Веселовский**, Трагедия Турецкой Армении, М., 1917, стр. 16.

վարման համար թուրքական կառավարությունը պիտի նշանակեր գեներալ-նահանգապետ՝ հաստատված մեծ տերություններուն կողմից։

Սուլթանի գիտությամբ կազմված և նրա թողտվությամբ նախ Սան-Ստեֆանո և ապա Բեռլին ուղարկված այդ ծրագիրը, Գր. Ջոհրապի արտահայտությամբ՝ «տեսակ մը պատնեշ-պետություն» էր, որ ռուսների առաջխաղացումը կանխելու համար 1877 թվականի նոյեմբերին սուլթանն առաջարկեց հայ բարձրաստիճան հոգևորականներին, որպեսզի նրանք «հայ բնակչության նահանգներուն համար քաղաքական ինքնավարություն մը պահանջեն օսմանյան գերիշխանության տակ»[2]։

Հայտնի է, սակայն, որ այդ խոստումը թուրքի խոստում էլ մնաց։ Հենց որ բրիտանական նավերը մտան Կ. Պոլսի ջրերը և սուլթանի երկյուղն անցավ, նա առանց հապաղելու հրաժարվեց Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու գաղափարից։ Հիասթափված մեծ տերությունների դիվանագիտական խարկանքներից և սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությունից, Մ. Խրիմյանն անցավ Հայկական հարցը զենքի ուժով լուծելու, զինված պայքարի քարոզչության։ Հետագա իրադարձությունները, սակայն, փոխեցին նրա համոզմունքները։ Մեծ հայրենասերը հետ կանգնեց «երկաթե շերեփի» կամ զենքի քարոզչությունից և նորից բռնեց թղթե խնդրագրերի, գանգատների ու դիմումների անհուսալի ուղին։ Հետագայում, էջմիածնի կաթողիկոսական աթոռին բազմելուց հետո, ծերունի հայրապետը սկսեց դատապարտել հայերի բոլոր կարգի ըմբոստության կոչող ծրագրերը, անգամ մասնակի ելույթների մեջ՝ առիթ տեսնելով նոր կոտորածների։ Ամենուրեք և ամենքին հորդորելով խաղաղ, շինարարական ստեղծագործ աշխատանքի, նա ընդմիշտ գոցված համարեց Հայկական հարցի լուծման ապստամբական ճանապարհը՝ միակ հուսալի լծակը տեսնելով մեծ տերությունների միջամտության մեջ[3]։

Ամենայն հայոց կաթողիկոսների ուղեգծից շեղ չէր նաև Կ. Պոլսի պատրիարքների քաղաքական ընթացքը։ Ն. Վարժապետյանին 1885 թվականին փոխարինած ծայրահեղ պահպանողական Հարություն պատրիարքը, օրինակ, քարոզում էր, որ «Եվրոպայի քաղաքականության այս խառնակ վիճակին մեջ լավ կլինի հաշտ երթալ տաճկաց հետ, որպեսզի Թուրքահայաստանի հայք ենթակա չլինեն նորանոր տառապանց և հալածանաց»։

[2] Գր. Ջոհրապ, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Պեյրութ, 1976, էջ 7։

[3] Տե՛ս Ա. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 10։

Գրեթե նույն տեսակետին էին հետագա բոլոր պատրիարքները, նույնիսկ պահպանողականության այնպիսի խոհեմ ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Մատթեոս Իզմիրլյանը և Մաղաքիա Օրմանյանը[4]։

Հայկական հարցի լուծման որոնումներում կղերապահպանողական մամուլը չուներ ուրույն դիմագիծ։ Նա էպիգոն էր, տարածում և լավագույն դեպքում մեկնաբանում էր այն, ինչ քարոզում էր բարձրակարգ հոգևորականությունը։ Այս տեսակետից տիրահաճության աննախանձելի դերում էին Ամենայն հայոց կաթողիկոսության պաշտոնական ամսագիր «Արարատը», Կ. Պոլսի պատրիարքության «Մասիս» և «Արևելք» թերթերը։ Սրանք պաշտպանում էին այն կարծիքը, որ արևմտահայ ազատագրական ելույթները վնասակար են և կործանարար, իսկ Բեռլինի կոնգրեսի որոշումները՝ «ունայն խոսքեր կամ պատիր ցույցեր չեն կրնար ըլլալ, հետևաբար իրավունք ունենք հուսալու, թե Հայաստանի ներկա դժնդակ վիճակը վերջ գտնելու անհրաժեշտ հարկին մեջ է, և անդորրության քաղցրազվարթ արշալույսը ծագելու մոտ է մեր բազմաչարչար հայրենյաց հորիզոնին վրա»[5]։ Բնորոշ է, որ 1885 թվականին, յոթամյա հեռավորությունից, հին այս երգին, առանց նոր մոտիվների, ձայնակցում էր «Արևելքը», գրելով, որ ինքը «պիտի նպաստե տերության և ազգին միջև լավագույն հասկացողության և կատարելագույն վստահության մը գոյացման, հաստատ բռնելով միշտ այն սկզբունքը, թե տերության և ազգին շահերն անքակտելի կերպով կապակցյալ են»[6]։

Կ. Պոլսի կղերաամիրայական վերնախավի ծայրահեղ հետադիմական տրամադրությունների մարմնացումն էր մոլի կղերամիտ Հովհաննես Տերոյենցը (Զամուռճյան), որը բոլոր կարգի առաջադիմական ուժերի դեմ իր կռվում քարոզում էր հավատարմություն սուլթանական կառավարությանը և վճռականորեն մերժում ազգային-ազատագրական պայքարը՝ ինչ ձևով էլ այն դրսևորվեր։

Ազատագրական պայքարի ճանապարհով Հայկական հարցի լուծման նկատմամբ խիստ բացասական դիրքորոշում ունեին արևմտահայ վերնախավի այն ներկայացուցիչները, որոնք մեծ տերությունների միջամտությամբ Օսմանյան կայսրության սահմաններում ազգային ինքնավարության ստեղծմանն էին հետամուտ։ Մեծ տերությունների դիվանագիտական ձեռնարկների հետ լծորդելով իրենց ծրագրերի իրագործումը, սրանք ևս քարոզում էին ամեն կարգի ապստամբական շարժումներից ու քաղաքական պայքարից հեռու մնալու կարգախոսը։

[4] Նույն տեղում, էջ 16—22։

[5] «Մասիս», 1878, հուլիսի 11, № 2148։

[6] «Արևելք», 1885, հունվարի 14, № 301։

Բեռլինի կոնգրեսի ընթացքում և կոնգրեսին հաջորդած առաջին շաբաթներին բալկանյան ժողովուրդների օրինակը ոգևորում և նոր եռանդ էր ներարկում այսպես կոչված պոլսահայ սահմանադրականներին՝ Գր. Օտյանին, Ռուսինյանին, Սերվիչենին, Աղաթոնին և մյուսներին։ Սրանցից ոմանք ավելի ընդհուպ էին պատկերացնում եվրոպական դիվանագիտության աջակցությամբ ձեռք բերելու բաղձալի ինքնավարությունը։ Ուշագրավ է Գր. Օտյանի 1880 թ. գրած «Տետրակի» հետևյալ տողերը. «Թուրք կառավարությունը երդում ըրած է ջնջել հայերը և եթե այս բանս ի գլուխ չէ ելած, թերևս Ռուսիո շնորհիվ, որուն վերջին հաղթություններ՝ այդ բնաջնջման գործիք եղող քրդերուն հոգվույն մեջ թողացած են փրկարար երկյուղ մը, որ զայնս եթե ոչ ավելի բարեխիղճ դնէ ավելի շրջահայաց կընե։ Առ այժմ՝ մաս առ մաս հառաջ կտանին այս ոչնչացման գործը թուրք իշխանությանց աչքին առջև։ Թուրք կառավարությունը պատասխանատո՞ւ է Հայաստանի մեջ տիրող վիճակին։ Ոչ ոք կտարակուսի այս մասին...»[7]։ Այս հավատով էր Գր. Օտյանը գործուն մասնակցություն ունեցել հայ պատվիրակության կողմից Բեռլին ներկայացրած նախագծի ստեղծմանն ու խմբագրմանը։ Այդ պահին Գր. Օտյանն ու նրա համախոհները հակված էին կարծելու, թե Թուրքիան շահ չունի, որ հայերը «գոհ ըլլան վերջապես իրենց վիճակեն, որովհետև չկրնար կարծել, որ այսօրվա պես հալածված ու ընչազրկված ըլլալով, հավատարիմ կմնան իրեն»։ Եվ ահա այս ամենը հաշվի առնելով Թուրքիային պաշտպանող «Եվրոպան իրոք կփագի արգելել ռուսական իշխանության ծավալումն ի Փոքր Ասիա, պարտավոր է իրավունք տալ հայոց արդար բաղձանքներուն, որովհետև եթե այդ դոհունակությունը զլացվի իրենց, Ռուսիո գիրկը պիտի նետվին»[8]։

Գր. Օտյանը պնդում էր, որ «Եթե Սերբիո և Ռումինիո շատ տարիներ ի վեր վայելած չըլլային մասնավոր ինքնավարություն մը՝ պատրաստված ըլլա՞ին Եվրոպայի ձեռքեն ընդունելու իրենց անկախությունն, և տերություններ իսկ պիտի կրնա՞ին բուլղարներուն շնորհել իրենց ինքնօրինությունը։ Ըստ այսմ, ո՞վ կրնա ըսել, թե նույն կացություն չպիտի ներկայանա Ասիո»[9]։

Մինչդեռ Կ. Պոլսի ամիրաների, սառաֆների և պատրիարքարանի թուրքոֆիլ դաշինքը իր տիրահաճ «հայրենասիրությամբ» կանգնած էր արևմտահայության ճակատագրի լուծման խաղաղ ուղու վրա, զավառների իրական կացությանը լավատեղյակ իսկական հայրենասերներին տեսանելի էին, որ ո՛չ Ազգային սահմանադրությունը, ո՛չ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը ի վիճակի չէին ապահովելու հայի պատիվը, անձն ու գույքը, որ դրանք իրենց էությամբ կոչված էին «խաղաղ» տնտեսական կյանքի և քաղաքական «ազատության» երաշխիքները տալու սուլթանական իշխանությունների կողմից սանձազերծվող հակահայկական գործողությունների պայմաններում։

19-րդ դարի 70—80-ական թվականներին հայ ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքները Հայկական հարցի լուծման իրենց որոնումներում, բնականաբար, ավանդույթի փոխկանոնով, չէին կարող շրջանցել նախորդ տասնամյակների՝ արևմտահայության ապագայի վերաբերյալ իրենց ունեցած գաղափարական ժառանգությունը։ Ազգային պահպանողական հոսանքը ներկայացնում էր բարձրացող բուրժուազիայի աջ թևը, իսկ ազգային լիբերալիզմը՝ ձախ։ Հիմնականում սրանով էին նրանք տարբերվում միմյանցից։ Արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքն արտահայտում էր առևտրաարդյունաբերական բուրժուազիայի շահերը, կողմնակից էր ազգային կյանքի մասնակի բարեշրջումների, համակրում էր ազգային-ազատագրական շարժումները, բայց ազգի փրկությունը տեսնում էր ոչ թե ապստամբվող ժողովրդից, այլ սրան օգնություն խոստացող եվրոպական դիվանագիտությունից։ Կովկասահայ ազգային պահպանողական հոսանքն ընդառաջում էր Թուրքիայի ամբողջականությունն ու հավասարակշռությունը պաշտպանող արևմտաեվրոպական դիվանագիտությանը և դիմադարձ կատարում արևմտահայ ազատագրական շարժումից։ Այս հոսանքի ներկայացուցիչները թեկուզ շարունակում էին դիմադիր դիրքերում մնալ ցարական Ռուսաստանի նկատմամբ, բայց, միևնույն է, ընդհանուր քաղաքական իրենց դիրքորոշումով հանգում էին եզրակացությունների, որոնցով մերձենում էին 1850—1860-ական թվականների նույն հոսանքի մարդկանց պաշտպանած համակերպողական հարցադրումներին։ Պատահական չէ, որ անդրադառնալով պահպանողականության քաղաքական խոսափող «Մեղու Հայաստանի» թերթի 25-ամյա հոբելյանին, Պետրոս Սիմոնյանը գրում էր, որ այդ թերթին մեծարում էր ռուսահայ «խելքի, սրտի և փողի արիստոկրատիան»[10]։

Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը, որը ծնունդ էր առել 19-րդ դարի կեսերին և իր գոյությունը պահպանել համարյա մինչև ռուսական առաջին հեղափոխության նախօրյակը, միշտ էլ

[7] «Հայաստան», Լոնդոն, 1891, № 15։
[8] Նույն տեղում։
[9] Նույն տեղում։
[10] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք երկրորդ, Ե., 1956, էջ 57—58։

գտնվել է ռուսահայ հասարակական կյանքի գրեթե բոլոր նշանակալից իրադարձությունների հորձանուտում։ Հոսանքի հիմնական պարբերականները («Կռունկ հայոց աշխարհին» (1860—1863), «Մեղու Հայաստանի» (1863—1886), «Փորձ» (1876—1881), «Արձագանք» (1882—1898), «Նոր դար» (1884—1906)) դարձել էին 19-րդ դարի երկրորդ կեսի հայկական կյանքի անդրադարձները, իրենց էջերում արտացոլում-արձանագրում էին ժամանակաշրջանի տարեգրությունը[11]։ Այդ հոսանքը իր պարբերականներով ոչ միայն բարենպաստել է արևելահայ կյանքի առաջընթացին, այլև համակողմանի քննարկել է արևմտահայության կենսական խնդիրները։

Դեպի Արևմտյան Հայաստանն ազգային-պահպանողականների ունեցած մեծ ուշադրությունը, այլև 1860-ական թվականների լրագրային բանավեճերը Աշ. Հովհաննիսյանին հիմք էին տալիս նկատելու, թե «մասնավորապես վտանգված համարելով ազգի և եկեղեցու գոյությունը Ռուսաստանում, նրանք ընդդիմակայում էին ցարիզմին և նրա քաղաքականությանը, որոնելով ազգային անցյալի և ներկայի հաստատունը Ռուսաստանից դուրս՝ Թուրքիայում»[12]։

1860-ական թվականների արևելահայ մտավորականությունը հիրավի համոզված էր, թե արևմտահայերի վիճակը Թուրքիայում աստիճանաբար բարելավվում է, իսկ արևմտահայ գործիչներն այդ տարիներին ոգևորված լինելով Ազգային սահմանադրությամբ և կրթական ու մշակութային կյանքում սկսված որոշ աշխուժությամբ, իրենց մամուլի էջերում չափազանցնում էին այդ թվացյալ առաջադիմությունը և այն ցուցադրաբար հակադրում արևելահայության վիճակին։ Հրապարակախոս Մ. Մամուրյանը «Արևելյան մամուլի» էջերում անգամ 1872 թվականին փորձում էր համոզել, թե իբր արևմտահայերը մյուս հատվածների հայության համեմատությամբ «առաջադիմության և վերաշինության» կարապետ կարող էին համարվել։ Մամուրյանը, հարկավ, ընդունում էր, որ արևելահայերի համեմատությամբ արևմտահայերը տառապում էին «դառնաղետ պատուհասներից», բայց այդ երկրորդական համարելով, շարունակում էր պնդել, թե Արևելյան Հայաստանում հայերի ազգային-բարոյական կյանքը ցարական միապետության ազգային քաղաքականության հետևանքով խաթարված է[13]։

Ռուս-թուրքական պատերազմը վճռորոշ շրջադարձ կատարեց ազ-

[11] Տե՛ս Մ. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Ե., 1976, էջ 17։
[12] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 33։
[13] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1872, № 1, էջ 14։

գային պահպանողականների աշխարհայացքում։ Խանդավառված սլավոնական ժողովուրդների մոտալուտ ազատության գաղափարով, ազգային-պահպանողականները հնարավոր են գտնում ռուսական զենքի օգնությամբ հուսալու նաև արևմտահայերի քաղաքական ազատության ձեռքբերումը։ Հարցի լավագույն լուծումը նրանք համարում էին Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավարության ստեղծումը, իսկ եթե այդ չհաջողվեց, ապա նրանք պատրաստ էին հաշտվել և Սահմանադրության գաղափարի հետ։ Պատերազմի ընթացքը և սլավոնական ժողովուրդների ազատագրման ստույգ հեռանկարն այն երաշխիքն էին տալիս, թե վատթարագույն դեպքում, օսմանյան սահմանադրության ներքո, Հայաստանի անկախության պահանջի ազդեցությամբ և մեծ տերությունների հովանավորությամբ, հայերը պետք է առաջադիմեն, և այն էլ ոչ թե «օսմանյան պետության զանազան անկյուններում, այլ Հայաստանում, որը որ այսուհետև հավատացած ենք, էլ լոկ պատմական և աշխարհագրական տերմին չպետք է լինի, այլ վարչական մի մարմին, ինչպես Բուլղարիան, Լիբանանը և այլն»[14]։

Կ. Եղյանը Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը համարում էր կարևոր նվաճում։ «Մեղու Հայաստանի»-ի տեսաբանները ևս բավարարված էին Սան-Ստեֆանոյի և Բեռլինի արդյունքներով, հավատում էին մեծ տերություններին. «Մի՞թե կարելի է մտքով անգամ անցնել, որ հզոր մեծ տերություններ կարող են խաբել ճշմարտ և անզոր մի ազգի, որ կարոտ է պաշտպանության։ Եվ ինչո՞ւ պետք է խաբեն, ուստի՞ է երկյուղը...»[15]։

Թերթը հայերին հորդորում է այլևս չվախենալ քրդերից և չերքեզներից, քանի որ «Բեռլինի դաշնագրությունը Տաճկահայաստանի ապահովությունը Եվրոպայի հովանավորության ներքո է դնում և քանի որ Ռուսաստանի երկչոտ արծիվը նորա սահմանի վրայից սրատես աչքով դիտելու է այնտեղ կատարվող ամեն մի աննշան դեպք և անկարգություն, բողոքելու և առաջն առնելու համար»[16]։

Չնայած «Մեղու Հայաստանի»-ի և «Փորձ» պարբերականները պատկանում էին միևնույն հոսանքին, բայց Հայկական հարցի լուծման ներբերանդներում տեսակետները շեղվում էին։ Այսպես, եթե 1879 թ. իր «Հայը և Հայաստանը օտարների աչքում» հրապարակային դասախոսության մեջ «Փորձ»-ի խմբագիրը Պ. Սիմոնյանի նման ամենադրական ձևով էր արտահայտվում Եվրոպայի և մասնավորապես Անգլիայի հա-

[14] ՀՀ ՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Եվանգելյանի 1877 թ. դեկտեմբերի 18-ի նամակից։
[15] «Մեղու Հայաստանի», 1878, № 26։
[16] Նույն տեղում։

յանպատճառ քաղաքականության օգտին, ապա երկու տարի անց նա խիստ կասկածի էր ենթարկում այդ քաղաքականությունը և քննադատում «արևելյան քրիստոնյաների արդարացի պահանջների առաջ խուլ մնալու» Բիրոնոֆիլդի «երկմիտ» դիվանագիտության ընթացքը։ Աբգար Հովհաննիսյանը դժգոհ էր Բեռլինի կոնգրեսի արդյունքներից, այն դեպքում, երբ նույն հոսանքի նրա գաղափարակից «Մեղու Հայաստանիի» խմբագիրը շլացած էր 61-րդ հոդվածով։ Բեռլինի կոնգրեսից հետո «Փորձը» ազգին կոչում էր ինքնաճանաչության, քանզի սրբյան ժողովուրդը լավ պատկերացնի իր ստրկական վիճակը, այնքան հետևողական կլինի պայքարի մեջ և այնքան հավանական կդառնա Ռուսաստանի և Եվրոպայի օժանդակությունը։ «Փորձի» հրապարակախոսությունը 1880-ական թվականներին ուղղված էր Արևմտյան Հայաստանի համար ամեն գնով ինքնավարություն ձեռք բերելու նպատակին։

«Փորձ» ամսագիրը և «Արձագանք» թերթը հիմնականում մնացին ազգային-պահպանողականների դավանած հիմնական սկզբունքների պաշտպանության դիրքերում։ «Փորձը» լուսաբանել է Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը՝ տպագրելով Գ. Սրվանձտյանի և Ստ. Պալասանդյանի խորունկ ու ծրագրային հոդվածները, բազում նյութեր՝ Կիլիկիայի հայ բնակչության վիճակի մասին և այլն։ Ամսագիրը սուր քննադատության է ենթարկել Հայկական հարցի խոշընդոտմանը նպատակամղված եվրոպական տերությունների և Թուրքիայի համատեղ գործողությունների համալիրը, հոդվածներ է տպագրել Բեռլինի կոնգրեսի, դրան հաջորդած հայկական կոտորածների մասին։ «Փորձի» և նրա ավանդույթների շարունակող «Արձագանքի» էջերից երբեք չեն իջել Արևմտյան Հայաստանի ծանր վիճակն արտացոլող Թուրքերի հայահալած քաղաքականության, բռնությունների, արտագաղթի, «համիդիե» գնդերի վայրագությունների մասին պատմող նյութերը։

«Արձագանքը» մանրամասն լուսաբանել է 1894—1896 թվականների, մասնավորապես Սասունի, Ալաշկերտի, Բաղեշի, Կարինի, Վանի, Տրապիզոնի, Կ. Պոլսի կոտորածները։ Թերթը շարունակ անդրադարձել է մեծ տերությունների քաղաքականությանը, տերություններ, որոնք ոչինչ չեն արել այսպես կոչված «մայիսյան բարենորոգումները» իրագործելու համար։ Պատահական չէ, որ 1880 թ. «Փորձի» և 1895 թ. «Արձագանքի» մուտքը Թուրքիա արգելվում է։

Արևմտահայ առաջադեմ մտավորականները, գավառահայ բուրժուազիան և բնակչության մյուս խավերը, որոնք ամենատարբեր ձևերով տուժում էին թուրքական բռնություններից, կողմնորոշվում էին դեպի

պայքար և դեպի Ռուսաստան[17]։ Այդ գործընթացին մեծ չափով նպաստում և աջակցում էր արևելահայ լիբերալ-բուրժուական հոսանքն իր պարագլուխ Գր. Արծրունու գլխավորությամբ։

Արևելահայ բուրժուազիայի դասակարգային շահերն արտահայտելուց զատ՝ Գր. Արծրունին արևելահայերի կյանքում Ռուսաստանի խաղացած դերին մոտենում էր շատ իրատեսորեն։ «Հերքել չի կարելի,— գրում էր նա, — որ մեր ազգը մի քանի ժամանակից սկսած հասարակապես զարգանում է, մանավանդ Ռուսա-Հայաստանի և Վրաստանի մեջ, որտեղ ռուսական տարրը եվրոպական կրթության միջնորդ է դարձել»[18]։

Հայ ժողովրդի ապագան շաղկապելով Ռուսաստանի հետ, Արծրունին Թուրքիայի հետամնաց ավատատիրական վարչակարգը դիտում էր իբրև արգելակող հանգամանք Արևմտյան Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացման համար։ Եվ Արծրունին չէր սխալվում։ Անդրկովկասը ռուսական բուրժուազիայի համար ապրանքների արտահանման շուկա չէր միայն, այլ ռուս հասարակական-քաղաքական մտքի արձագանքողը։ Հրապարակախոսական իր հոդվածներում Արծրունին ուսուցչի համբերատարությամբ համոզում էր արևմտահայերին, որ կովկասահայերի տնտեսական և հասարակական կյանքը շատ ավելի լավ է, քան սուլթանական վարչակարգի պայմաններում՝ արևմտահայերինը։

Գր. Արծրունին խստորեն սահմանադատում էր Կ. Պոլսի հայությունը գավառի հայությունից։ Եթե Կ. Պոլսի 300 հազարանոց հայ համայնքը որոշ արտոնություններ է վայելում, ուր տեղական աստիճանավորների չարաշահումները համեմատաբար սակավ ու մեղմ են, ապա գավառի հայության մարդկային իրավունքները ոտնակոխ են արված, հայերը ճնշված են, հալածված, և եթե այսպես շարունակվի, ապա Արևմտյան Հայաստանում հայերը կանհետանան, ինչպես անգլիական գաղութարարների պատճառով անհետացել են հնդկահայերը։ Գր. Արծրունու նպատակն էր արևմտահայերին կապել արևելահայերի հետ, քանզել երկու հատվածները տարանջատող միջնորմը և, որ գլխավորն է, հիմնովին փոխել արևմտահայերի վերաբերմունքը դեպի Ռուսաստանը։ Լոկ դրանով պետք է բացատրել այն պայքարը, որ «Մշակը» սկսեց Ազգային սահմանադրության դեմ։ Արծրունին ջանում էր ցույց տալ, որ Արևելյան (Ղրիմի) պատերազմից հետո օսմանյան կառավարությունը Կ. Պոլսի հայ կրոնական համայնքի ներքին գործերում որոշ դիջումներ

[17] Տե՛ս Սարուխան. Ազգային խնդիրն ու սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 145։

[18] Գր. Արծրունու աշխատություններ, հատոր առաջին, Թիֆլիս, 1901, էջ 86—87։

անելով՝ փորձում է մեղմել նրանց ռուսական կողմնորոշումը։ Նա ծաղրում էր Ազգային սահմանադրությունը իբրև մի մտացածին բան, որպես «օդային մի ամրոց», որ արևմտահայերին ոչինչ չի տվել «բացի առանձին ոգևորությունից»[19]։ Արևմտահայ ժողովրդի ազատագրման Գր. Արծրունու քարոզչությանը հուժկու թափ հաղորդեց Բալկանյան սլավոնների շարժումը, որը եվրոպական տերությունները դարձյալ փորձեցին օգտագործել իրենց նվաճողական ծրագրերի համար։ «Արևմտյան Եվրոպան, — գրում էր Արծրունին, — միայն իր շահերի համար է միջամտում Թուրքիայի ներքին գործերին և նորից փորձում է խաղ խաղալ ճնշված ժողովուրդների գլխին, ինչպես այդ եղել է նախկին ժամանակներում»[20]։ Եվրոպական իմպերիալիստական տերություններից առանձնացնելով Ռուսաստանին, Գր. Արծրունին այն համոզմունքն ուներ, որ միայն Ռուսաստանն է, որ ոչ միայն խոսքով, այլև գործով օգնում է Թուրքիայում ճնշված ու հարստահարված ժողովուրդներին։ Իսկ եթե Եվրոպայում համակրություն կա դեպի այդ ժողովուրդները, ապա դա մասնավոր երևույթ է միայն և բնավ չի արտահայտում պետությունների վերաբերմունքը դեպի ճնշվածները»[21]։

Գր. Արծրունին համաձայն չէր պահպանողականների հետ, որոնք արևմտահայությանը համբերություն էին քարոզում և գտնում, որ հայերը սլավոնների նման չպետք է դիմեն զինված ապստամբության։ «Շատերը մեզ հավատացնում են, — գրել է Արծրունին, — որ այդ (ապստամբությունը — Ն. Ս.) ցնորք է, լավ է համբերեն քանդվող տան բնակիչները, տունն ինքն իրեն նորից կպահպանվի, ծուռած պատերը կուղղվեն և ժամանակով նորից կկայունանա շինությունը։ Ասում են, հայը ազատ շունչ կքաշի Թուրքիայում, երբ տերությունը կլուսավորվի. մինչև երբ սպասել դրան, երբ նրանք հերքում են լուսավորությունը, երբ հայ տարրը կորչում, ոչնչանում կամ գաղթում է Թուրքիայից։ Երևի այդ կլինի այն ժամանակ, երբ ոչ մի հայ չի մնա Թուրքիայում»[22]։

Արծրունին հրեշավոր էր համարում մտածողության այն կերպը, որ Թուրքիան դիտելով «բարեխնամ» պետություն, հնարավոր էր համարում այդ պետության մեջ հիմնել թուրք-հայկական պետություն, ինչպես Ավստրո-Հունգարիան Եվրոպայում[23]։

Կրքոտ հրապարակախոսի սուր իր գրչով Գր. Արծրունին մերկացնում էր Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի շրջաբերականը, ուր արևմտահայերին կոչ էր արվում հավատարիմ մնալ սուլթանական գահին։ «Մենք խոսքեր չենք գտնում, — գրում էր Արծրունին, — մեր զարմանքը, մեր զայրացումը, մեր զզվանքը արտահայտելու համար, տեսնելով որքան ստոր է ընկել բարոյապես մեր հոգևորականությունը և որ նրա երարխիական կազմակերպության այդքան բարձր աստիճանների վրա բույն է դրել կաթոլիկ կղերականության Թշվառ ոգին»[24]։

1876 թ. գրած «Արևելյան հարց» (ռուսերեն) գրքում Գր. Արծրունին համոզում էր, որ «Արևելյան խնդիրը սլավյանության և ուղղափառության խնդիր չէ միայն, նա մինչև անգամ միմիայն քրիստոնեության խնդիր չէ, այլ ավելի նա՝ քաղաքակրթության խնդիր է, քաղաքակրթական ցեղերի՝ բարբարոսության դեմ պայքարի խնդիր է — ասիական և սեմիտական ցեղերի պատերազմի խնդիրը թուրանական ցեղերի դեմ»[25]։

Արևելյան հարցի արմատական լուծումը Արծրունին կախվածության մեջ է դնում այն բանից, թե որքանով եվրոպան այն կհամարի իր սեփական գործը։ Հրապարակախոսը ընդարձակում էր Արևելյան հարցի տարածքը և այդ կերպ միջազգային դիվանագիտությանը հուշում, որ միայն սլավոնների ազատությամբ կամ թուրքերին եվրոպայից վտարելով բնավ չի վերջանում դարերից եկող կնճիռը։

«Թող եվրոպան լուծե Արևելյան հարցը, — գրում էր նա, — այժմ ևեթ, և լուծե արմատական կերպով, թե չէ, չպետք է լինի մեծ մարդարե՝ գուշակելու համար, որ մոտիկ ապագայում նրան հարկավոր կլինի լուծել այդ հարցը նորից»[26]։ Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Գր. Արծրունին միացել կամ ձայնակցում էր ռուսական լիբերալ-բուրժուական մամուլի՝ Թուրքիային անմիջապես պատերազմ հայտարարելու վերաբերյալ կառավարությանն ուղղված կոչերին։ Արևմտահայերին ապստամբության կոչող Արծրունու հրավերները՝ «Մինչև ե՞րբ», «Մի՞թե այժմ էլ հայերի հերթը չէ» առաջնորդողներից հետո, պատրիարքարանի շուրջ համախմբված կղերապահպանողական հոսանքը Յուրթուչյանի և նրա «Մասիս» պարբերականի գլխավորությամբ իսկույն համախմբվեցին Արծրունու դեմ պայքարում։ Արծրունու ելույթները գնահատվեցին որպես «հրեշավոր պահանջ», «հիմարության վերջին ծայրը»։

---

19 «Մշակ», 1876, № 45։
20 «Մշակ», 1876, № 44։
21 «Մշակ», 1877, № 59։
22 «Մշակ», 1876, № 25։
23 «Մշակ», 1876, № 27։

24 Մեջբերումը՝ ըստ Մ. Ներսիսյանի, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.», Երևան, 1955, էջ 240։
25 «Մշակ», 1877, № 56։ «Восточный вопрос» գրքի հայերեն թարգմանությունը տպագրվել է նշված համարում։
26 Նույն տեղում։

«Թուրքիայի հանցանքը» առաջնորդողում Գր. Արծրունին հարկադրված պարզում էր իր դիրքը նաև Եվրոպայի նկատմամբ, չէ՞ որ պալատահայ հասարակական շրջաններում թուրքաֆիլ որոշ երևելիներ Եվրոպան դերադասում էին «ռուսական ներխուժումից»։ «Արևմտյան Եվրոպան, — պատասխանում էր Արծրունին, — սկսած խաչակիր պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին արևելյան ազգերը։ Հայերը եղել են նրանց ծառաները, նրանց ստրուկները։ Եվ այժմ, երբ որ հայերը կարոտ են Եվրոպայի օգնության, ոչ մի եվրոպական պետություն չի օգնի նրան։ Միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել — այդ Ռուսաստանն է»[27]։ Իսկ մեկ այլ՝ «Հայաստանի ինքնավարությունը» առաջնորդողում Գր. Արծրունին համակարդում էր այն պահանջները, որ պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո արևմտահայությունը պետք է ներկայացներ սուլթանի կառավարությանը՝ նահանգական ինքնավարություն ստանալու։ Նախ՝ «քրիստոնյա նահանգապետ, սեփական քաղաքային և գյուղական վարչություններ, կյանքերի ու անձնավորության ապահովություն, կալվածքների ազատում քուրդ և թուրք բեգերի ավատական իշխանությունից, սեփական կամ խառն դատարաններ...», երկրորդ՝ «Ազգային ժողովի տեղափոխում Էրզրում կամ Վան...», երրորդ՝ «սեփական տեղական պահապան զորք ունենալու իրավունք»[28]։

Հայկական հարցի լուծման միակ ճանապարհը տեսնելով զինված պայքարի մեջ, Գր. Արծրունին դրան նպաստող առաջատար գործոն էր համարում Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողությունը։ Պատահական չէ, որ երբ պայթեց ռուս-թուրքական պատերազմը, նա առանց երկար հապաղելու գրեց. «Յանկանք մեր զորքերին հաջողություն, որից կախված է Արևելքի ազատությունը, նրա բնակիչների խաղաղ, ապահով դրությունը և երկար ժամանակ ճնշման տակ մնացած քրիստոնյա ազգերի բարոյական, տնտեսական և մտավոր վերանորոգությունը»[29]։

Ի՞նչ պետք է դառնա Արևմտյան Հայաստանը հարցին, Արծրունին պատասխանում էր՝ քանի որ ոչ միայն ասիական քրիստոնյաները, այլև Հայաստանի մահմեդական ազգաբնակչությունն էլ է «զզված թուրքաց տիրապետությունից, ուստի շատ ավելի լավ կլինի, եթե այն միանա Ռուսաստանին, բայց եթե վիճակն այլ կերպ կարգավորվի և Թուրքիայի հայերի ցանկությունը չիրագործվի», այն ժամանակ՝ «որքան և անպատրաստ, անընդունակ լիներ Հայաստանը ինքնուրույն կյանքին, ինքնավարությունը, այնուամենայնիվ, լավ է, թող ինքնավարություն ստանա, քան թե նորից վերադարձած լինի թուրքաց բարբարոս, ճնշող, ոչնչացնող տիրապետությանը»[30]։ Արծրունին այս դեպքում էլ հայերի միակ հույսը Ռուսաստանի վրա էր դնում, քանզի Ռուսաստանի համար «ավելի լավ է որպես հարևան ունենալ մի փոքրիկ անկախ Հայաստան, Ռուսաստանին միշտ հավատարիմ և երախտագետ Հայաստան, քան թե Անգլիայի պես նենգավոր, եսական, հարստահարող և միշտ թշնամի հարևան»[31]։ Ի դեպ, Գր. Արծրունին սպանիչ քննադատության է ենթարկել Անգլիայի նվաճողական քաղաքականությունը, որը տևականորեն հովանավորում էր Կարահիսարի ավազակային պետության բարբարոս իրավահաջորդին՝ ընդդեմ ազատության ձգտող ժողովուրդների վրա նրա տիրապետությունը հավերժացնելու։ Անգլիան ձգտում է Փոքր Ասիան իր գաղութը դարձնել և եթե դա նրան հաջողվի, ապա նա ընդմիշտ կտիրանա Հայաստանի հարստություններին»[32]։

Արծրունին կեղծ էր համարում նաև Ֆրանսիայի «համակրությունը» դեպի հայերը, Նապոլեոն 3-րդի «հայասիրությունը» որակում էր որպես դիվանագիտական միջանցիկ պատեհապաշտություն։ Ի դեպ, Հայկական հարցի դիվանագիտական պատմության վերաբերյալ Գր. Արծրունու խորհրդածությունները շատ ավելի խորքային էին, քան սովորական քաղաքական կողմնորոշման մակերեսային կարգախոսները։ Պատերազմի ավարտից հետո անգամ, նա բաֆֆիական այն համոզմունքն ուներ, որ միայն ժողովրդական, ազգային ապստամբությունը կարող է լուծել արևմտահայության ազատության խնդիրը։ «Եթե Թուրքիայի հայերը, — գրել է նա, — ապստամբվեին բոսնիացիների, հերցեգովինացիների և բուլղարների պես, պատերազմի վերջանալուց հետո թուրքաց տերությունը կտար նրանց իրավունքները, կշնորհեր նրանց նույն արտոնությունները, կազատեր նրանց մի քանի տարվա հարկ վճարելուց, ինչպես որ վարվում է սլավոն ազգերի հետ։ Ուրեմն ոչինչ չշահվեցան, որ չապստամբվեցան»[33]։ Մտքերի թարմությամբ չափազանց ուշագրավ էր 1879 թվականի գարնանը «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» Գր. Արծրունու Թիֆլիսում կարդացած դասախոսությունը, ուր նա ջարգացնում էր իր իսկ կողմից նախկինում բազմիցս հայտնած այն գաղափարը, թե ազգային-ազատագրական շարժումը խաղաղ ճա-

[27] «Մշակ», 1876, № 44։
[28] «Մշակ», 1878, № 37։
[29] «Մշակ», 1877, № 26։
[30] «Մշակ», 1877, № 33։
[31] «Մշակ», 1877, № 35։
[32] Տե՛ս «Մշակ», 1878, № 141։
[33] «Մշակ, 1878, № 51։

նպաստով հաջողության հասնելու երկընտրանք չունի։ Արևմտահայերն ուղում են ապացուցել, ասում էր Արծրունին, թե «կարելի է հասնել ազատության քաղաքակրթական խաղաղ ճանապարհով, առանց ապստամբվելու, առանց զենք բարձրացնելու»[34]։ Բայց կհաջողվի՞, հարցնում էր հրապարակախոսը, աշխարհի հզորներին հասկանալի դարձնել այս սկզբունքը։ Զեյթունը հիմա արյուն է թափում Թուրքերի դեմ իր մարդկային իրավունքները պաշտպանելու համար, քանզի այլ ելք չկա, չկա, որովհետև «ժամանակակից լուսավորված աշխարհը», զենքը, արյունը «միակ դրական միջոց է համարում մի ազգի համար իր գոյությունը վկայելու...»[35]։

Արծրունի քաղաքագետը կողմնակից էր ինքնապաշտպանության պատերազմների և դա փաստարկում էր արևմտահայերի անցյալ գոյամարտերի բովանդակության մեկնաբանությամբ։ «Եթե հայը Թուրքիայում զինվում է միայն նրա համար, — ասում էր նա, — որ բռնավորության դեմ պաշտպանողական դիրք բռնի միայն, և ոչ թե նաև նվաճողական, եթե Թուրքիայի հայը մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնելով, մյուս ձեռքով հրացան կբռնի, այդ դուցե կլինի միակ միջոց թուրքաց տերապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյությունը»[36]։

Գր.Արծրունին առաջարկում էր արևմտահայերի ազգային կրթության գործը կազմակերպել ժամանակին հին Սպարտայում ընդունված համակարգով, ըստ որի ամեն ինչ ստորադրվում էր «ռազմատենչ սերունդ» պատրաստելուն, որը հնարավորություն կտար դուրս գալու ինքնապաշտպանական պատերազմի՝ արդեն խիզախության սովոր և ազատագրված թուլական բնավորությունից։ Բայց 1881—1882 թվականներին Ռուսաստանում հեղափոխ ուժերի աշխուժացումը և ռուս-թուրքական լարված հարաբերությունների տեղատվությունը, կառավարության արտաքին քաղաքականության մեջ կատարված բեկումը արդելակներ դարձան Հայկական հարցի վերարծարծումների համար։ Հասարակական հոսանքների առաջնորդները դարձան առավել շրջահայաց, չափավոր և զգուշավոր։ Ճիշտ է, դիվանագիտական հեռատեսության հարցերը վիճարկվում էին տակավին «Մշակի» ու «Մեղու Հայաստանի»ն էջերում, բայց գործնական խնդիրներում նրանք հարկադրված էին ժամանակավորապես հրաժարվել Հայկական հարցի քննարկումից։ Արծրունին համարյա դադարել էր գրել Հայկական հարցի մասին և ապարդյուն էր համարում

[34] Գ. Արծրունի, Թուրքաց հայերի ներկայական դրությունը, Թիֆլիս, 1904, էջ 36։
[35] Նույն տեղում, էջ 37։
[36] Նույն տեղում, էջ 37—38։

ազատագրական շարժումների ծավալումը Արևմտյան Հայաստանում, քանի որ առանց Ռուսաստանի գործուն արտաքին հայանպաստ քաղաքականության առկայության ավելորդ են ապստամբական ելույթներ ունենալը, խմաստուն մի պատգամ, որին, տարաբախտաբար, հետագայում հասու չեղան Արաքսն անցնող, նույնիսկ խոհեմ դիտված շատ գործիչներ։

Խնդիրը շատ ավելի բարդ էր, քան արտաքուստ թվում էր։ Հայտնի է, որ ազգերի պատմության մեջ լինում են կարճատև և տեսական պահեր, երբ համազգայինի հավակնող գաղափարները պաշարում են երևելի մտավորական անհատների էությունը, բայց գաղափարական ոգին տակավին չի տիրապետում ամենքին և ոչ էլ դասային նեղ շահախնդրություններն են ստորադրվում դրանց։ Այս երևույթից զերծ չմնաց հայ հասարակական կյանքի համազգային խմորումների ժամանակաշրջանը, երբ տակավին էնտուզիազմն ու ռոմանտիկան չհաղթահարած գործիչներն անմնացորդ են ապրում լուծում պահանջվող հարցերով և տարվում պայքարի պաթոսով, համակվում դեպի ազատություն մղող ծրագրերի վեհությամբ՝ շրջանցելով ընձեռված հնարավորությունները։ Ազատության զրոյ պարզած ամեն մի ժողովրդի քաղաքական ներքին և արտաքին դիրքորոշումների լինելիության գործընթացը, որպես օրինաչափություն, պատմական օբյեկտիվ պայմանների արտահայտություն է, որի ցանկալի ընթացքն ապահովում են ժամանակի բնկալումով ծընված և կացության հրամայականով գործող ազգային անհատականությունները։

Հայ ազատագրական և հասարակական մտքի պատմության մեջ այդպիսի անհատականություններից էր Րաֆֆին (1835—1888), որը 19-րդ դարի հատկապես 70—80-ական թվականներին իր վրա բևեռեց ժամանակաշրջանի հայ հասարակայնության ուշադրությունը, գարձավ նրա առաջադեմ մտավորականության խորհրդատուն, համահայկական ազգային մաքառման ու գոյապայքարի գաղափարախոսը։

Հայ ազգային-ազատագրական շարժումների և Հայկական հարցի առաջ բերած խնդիրների անշեղ պատասխանների որոնմանն ու լուծմանը իր ողջ կյանքը նվիրեց մեծ պատմավիպասանը։ Բազում իր հոդվածներում, «Ճանապարհորդություն Բիֆլիսից մինչև Ագուլիս» ուղեգրության մեջ, «Ջալալեդդին» վիպակում, վերլուծելով ազատագրական շարժման իրական հանգամանքները և միանգամայն անիմաստ ու անհեռանկար համարելով Հայկական հարցի լուծման եվրոպական դիվանագիտության ուղին, Րաֆֆին առաջադրում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարը՝ արևմտահայ ժողովրդի գլխավոր խնդիրը

համարելով այդ գաղափարի «անգնահատ և անբնդհատ նախապատրաստությունը»։ Այդ ծրագրի գեղարվեստական արտահայտությունը հանդիսացան մասնավորապես «Խենթը» (1881) և «Կայծեր» (1883—1887) վեպերը։

Հայկական հարցի լուծման բաֆֆիական ծրագիրը բխում էր հասարակական կյանքի զարգացման մասին նրա այն ընդհանուր ըմբռնումից, թե բռնատիրության ենթակա ազգը միայն բռնության շղթաները ջարդելով կարող է գտնել իր ազատությունը, քանզի «...ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել դիտեն։ Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի փրկություն»[37]։

Պատասխանելով հետագիմ ազգային-պահպանողականներին, որոնք սիրահաճ և ստրկամիտ քարոզչությամբ էին զբաղված և երկնչում էին ապստամբական ելույթներից, Բաֆֆին հեգնում էր՝ «անշարժության այդ վարպետները, ես համոզված եմ, կցանկանային, որ ամբողջ մարդկությունը մումիաներ լիներին և երբեք չփոխվեին...»[38]։

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը համարելով անպետք դեղատոմս ապաքինում պահանջող հայոց դարավոր վերքերի համար, Բաֆֆին այն կարծիքն էր հայտնում, որ արևմտահայերը «նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այդ պատճառով չհասան իրենց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանր են տեսնում։ Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում...

Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անբնդհատ կերպով կբովագործվեր. դա կոչվում է նախապատրաստություն։ Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անբնդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կարմ ու պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անդամ կզարկե ազատության ժամը։ Իսկ այդ օրը կկրկնվի, և շատ անդամ կկրկնվի... գուցե շատ հեռու չէ մեզանից...»[39]։

Փաստորեն Բաֆֆին առաջադրում էր նախապատրաստական մի ծրագիր և Արևմտյան Հայաստանի տարածքները հանձնում հեղափոխական քարոզիչների ուխտագնացությանը, որոնք ժողովրդին ուսուցանում են ազգային մաքառման դիտությունը, սերմանում գաղափարական այն կայծերը, որից ապագայում պիտի բռնկվեին ազգային-ազատագրական հեղափոխության բոցերը։ «Կայծերը» Բաֆֆու գաղափարական կտակն էր հայ երիտասարդությանը, որի վրա նահատակվելու երդում տվեց հայ ֆիդային-հայդուկը։ Տասնամյակներ շարունակ «Խենթի» և «Կայծերի» հերոսները (Վարդան, Ասլան, Կարո և ուրիշներ) ընտանեկան հավատքների, ընկերական հանդիպումների խոսակցության առարկան էին, և ինչպես վկայում են ժամանակակիցները, այդ վեպերի ընթերցումների անմիջական ազդեցությամբ կազմվում էին հայդուկային կամավորական խմբեր և մեկնում «Երկիր»՝ դինվորագրվելու արևմտահայության դիմադրական շարժումներին։ Դիպուկ է նկատել Ս. Սարինյանը, թե դյուրին չէ սահման գծել Բաֆֆու անձնական կենսագրության և գրական-հրապարակախոսական գործունեության միջև, քանի որ գրական գործը եղավ նրա անձնական կյանքի ժամանակագրությունը։ Հայացքը դեպի հեռուն, անհանգիստ ու որոնող, նա իր վրա վերցրեց դարաշրջանի գաղափարական բանավեճը։ Նա դարաշրջանի ռոմանտիկական ուտոպիաներից հյուսեց ազգերի համերաշխ դոյությամբ ներդաշնակված ապագա մարդկության իդեալը, և այդ հորիզոններում ուրվագծեց վերածնված Հայաստանի դեղեցիկ հեռապատկերը՝ իր հրապանքների «Ավետյաց երկիրը»[40]։ Ասպարեզ գալով ճիշտ ժամանակին և առաջ անցնելով իր ժամանակից, Բաֆֆին որոշ իմաստով մնաց անհասկանալի թե՛ իր գրականությամբ, թե՛ իր գաղափարներով, և անհասկանալի մնաց ոչ այնքան ժողովրդի համար, որ ուներ նրա պաշտամունքը, որքան ազգի ղեկը հավակնող քաղաքական հոսանքների համար, որ հաճախ պարզունակ ամբոխավարության և արկածախնդրության գործելակերպով խեղաթյուրում էին մեծ գրողի գաղափարական համակարգի ազգային ու համամարդկային բովանդակությունը։

Առաջ քաշելով ըմբոստության նախապատրաստության իր տեսությունը, Բաֆֆին հիմնավորում էր այդ տեսությունը՝ ամեն պահ չէ, որ հարմար է ապստամբության համար. հարկավոր է խստորեն հաշվի առնել ստեղծված կացությունը, ուժերի քանակական և որակական հարաբերակցությունը։ Նա այդպիսի հարմար պահ էր համարում վերջին ռուս-թուրքական պատերազմը, երբ բալկանյան ալավոնները ռուսական արշավող զորքի աջակցությամբ ջարդում էին օսմանյան շղթաները։ Բաֆֆին դավ էր ապրում, որ արևմտահայերը պատերազմը նախապատրաստված չդիմավորեցին։ Մեծ գրողը կարծում էր, որ եթե երկրի կենսունակ ուժերը նախապատրաստված լինեին և երկրում ապստամբական գործողու-

[37] «Մշակ», 1872, № 22։
[38] «Մշակ», 1879, № 125։
[39] «Մշակ», 1879, № 126։ Տե՛ս նաև Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 304։
[40] Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Գիրք երկրորդ, Երևան, 1989, էջ 16—17։

բյուններ սկսեին, ապա արևմտահայությունը ռուսների օգնությամբ անպայման կիրթափեր թուրքական լուծը։

Արևմտյան Հայաստանի ազատագրման, Հայկական հարցի լուծման գործում մեծ հույսեր կապելով Ռուսաստանի հետ, Րաֆֆին մի պահ (Բեռլինի կոնգրեսի ժամանակ) «օգնության» որոշ բաժին էր ակնկալում եվրոպական տերություններից։ Սակայն, նույնիսկ նման կարգի մոլորության պահերին, ճիշտ կերպով նկատել է Մ. Ներսիսյանը, Րաֆֆին «Ընդհանուր առմամբ ըմբռնում էր նրանց քաղաքականության խարդախ էությունը։ Ականավոր վիպասանը եվրոպական «լուսավոր» կոչված ազգերին համարում էր մեծամեծ վամպիրներ, որոնք խորամանկ քաղաքականությամբ ծծում են «յուրանց զոհերի արյունը և կողոպտում նրանց...»[41]։

Րաֆֆին մերկացնում էր թուրքական քաղաքականության խարդավանքները, անպիջում հետևողականությամբ բացահայտում պատրանքաշատ այն մտայնությունը, որ փրկության շավիղներ էր որոնում Թուրքիայում։ «Այդ ցնորք է, — գրում էր նա, — Թուրքը այսօր աննիրիթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա... Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է մեզ հետ վարվել Թուրքը։ Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված։ Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»[42]։

Րաֆֆին չէր հանդուրժում Թուրքիայի «բարբարոսությունները ծածկող և նրա երևակայական առաջադիմությունը հռչակող անձնական հաշիվներով կուրացած այն պատմագրողներին և հրապարակախոսներին (Ստ. Պերճ-Պողոս Փափազյանց, Մարկոս Ազաբեկյան և ուրիշներ), որքեր ջանում էին, թե «այժմ Տաճկաստանը բավական բարեկարգված է և քրիստոնյա հպատակների դրությունը այժմ համեմատաբար շատ լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում»[43]։

Նրա Բեռլինի կոնգրեսից առաջ, կոնգրեսի ժամանակ և նրանից անմիջապես հետո հայ դիվանագետների պարզամտությունը և փարձի պակասը նրանց հաճախ էր դնում քաղաքական նվաստացման հարափոփոխ իրավիճակներում, ապա Րաֆֆին շարունակում էր ստեղծված կացության խորագիտությամբ հավատ չընծայել եվրոպական դիվանագիտությանը և ապավինելով Ռուսաստանի ազատագրական առաքելությանը, միաժամանակ առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը սրով, արյան գնով, զենքի ուժով ձեռք բերելու համարձակ ծրագիրը։ Նա դատապարտում էր բոլոր նրանց, ովքեր կյանկանչին Անդրկովկասն անջատված տեսնել Ռուսաստանից, միաժամանակ քննադատում էր հայ գործիչներին ներկայացված «հայկական սեպարատիզմի» մեղադրանքը, գտնելով, որ կառավարությանը մոլորության մեջ ձգողները եղել են մի քանի բախտախնդիր պաշտոնյաներ, որոնք իրենց իշխանությանը հավերժություն տալու համար սկսել են երևակայական ցնորքներ ստեղծել, թե իբր Անդրկովկասում գոյություն ունի մի «Մանուկ Հայաստան», որը կապեր ունի Տաճկաստանի հայոց գաղտնի կազմակերպությունների հետ, և որոնք բոլորը միասին ջանում են ընդհանուր ապստամբություն առաջ բերել Հայաստանում։ «Կայծերի» հեղինակները համեմատվեցին նարոդովոլականներ Ժելյաբովի և Կիբալչիչի հետ, իսկ Ն. Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոսուհի Վերա Պավլովնայի երազի կրկնօրինակ հռչակվեց Րաֆֆու վեպի հերոս Վարդանի երազը[44]։

«Տաճկաստանի մեր հայ եղբայրները կարող են օգնության, — բացատրում էր Րաֆֆին ղեկավարներին, — կարող են, որովհետև անկիրթ են, կարող են, որովհետև աղքատ են, — անկիրթությունը և աղքատությունը երկուսն էլ մեծ արգելք են լինում ժողովրդի առաջադիմության։ Ամեն հայի պարտքն է օգնել նրանց, իսկ մեծ պարտավորությունը հասնում է Ռուսաստանի հայերին»[45]։ Րաֆֆու այս տողերը այն գաղափարախոսության, մտածելակերպի, գործողության ծրագրի դրսևորումն էր, որին խարսխվեց 1880—1890-ական թվականներին հայ ազգային-ազատագրական պայքարը, երբ Թուրքական լուծը թոթափելու հիմքում դրվում էր Ռուսաստանի, ռուս պետականության, ռուս ժողովրդի օգնությամբ փրկվելու գործոնը։ Դրա համար էլ Համբարձում Առաքելյանին 1883 թ. գրած նամակում Րաֆֆին ծիծաղելի էր համարում Հայաստանում հակառուսական ապստամբության նախապատրաստությունների վերաբերյալ լուրերը։ «Միայն վերջին ժամանակներում, — գրում էր մինչև հոգու խորքը վիրավորված Րաֆֆին, — կառավարությունը սկսեց կասկածանքով վերաբերվել դեպի հայ գործիչների ամենահամեստ ցանկությունները, որոնք բովանդակում էին նրանում միայն, որ Բեռլինի

41 Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 241։
42 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 13—14։
43 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 225։

44 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու գաղափարական ներհակության պատճառները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 22—30։
45 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 487։

դաշնագրի 61-րդ հոդվածը իրագործվի և տաճկահայերի թշվառ դրությունը փոքրիշատե բարվոքվի»։ Ըստ Բաֆֆու հավանաբար «...կառավարությունը ցանկացել է մի կողմից տեղեկանալ, թե մինչև ո՞ր սահմանն է հասնում հայ երիտասարդության «չափազանց» եռանդը, մյուս կողմից, կամեցել է փոքր-ինչ շողոքորթել Թուրքիային, իբր թե խեղդում է ամեն մի վնասակար ձգտում Հայկական հարցի առիթով, այն հարցի, որ ինքն ստեղծեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով»[46]։

Բաֆֆին տեսնում էր ցարական քաղաքականության փոփոխությունը Հայկական հարցում, բայց ադ փոփոխության մեկնարկին նա տակավին չէր ընդվզում։ Սակայն երկար ժամանակ չտևեց հապաղումը։ Տեսնում էր, որ ռուսական մամուլում Թուրքիայի դեմ բացահայտ ելույթները դառնում էին անհնարին, հետաղիմությունը ստիպում էր ենթարկվել իր քաղաքական պահանջներին։ Ծվ 1880-ական թվականների կեսերից, երբ առավել քան ակներև դարձավ ցարիզմի բացասական դիրքորոշումը դեպի արևմտահայ ազատագրական շարժումը և Արևելյան Հայաստանում բացահայտ եղավ նրա հալածական քաղաքականությունը դեպի հայ ժողովրդի գաղութական-եկեղեցական ինքնավարությունն իսկ, պաշտոնական Ռուսաստանի նկատմամբ Բաֆֆուն կրկին մղեցին 1850-ական թվականների հայ հեղափոխական դեմոկրատ գործիչների քննադատական խորհրդածություններ ոլորտը։ Այս անդամ Ղարաբաղի հայկական մելիքությունների վերացումն էր ցավ պատճառում հայրենասեր գրողին։ Բաֆֆին դժգոհ էր այն բանից, որ չիրականացան ոչ միայն Ղարաբաղի մելիքների ազգային-քաղաքական բազձանքները, այլև որ հայերի արտակարգ զոհողությունները ռուսական զենքի հաջողության գործում, որևէ արտոնյալ վիճակ չստեղծեցին նրանց համար։ Այնուամենայնիվ, Բաֆֆին չէր բացառում Արևելյան Հայաստանի ազատագրման դրական հեռանկարները։ Բաֆֆին գոհ էր, որ ռուսական տիրապետությունը դոցեց հայերի ֆիզիկական բնաջնջման՝ դարերից եկող մշտական երկյուղը և տնտեսական ու մշակութային նշանակալից վերելք ապահովեց նրանց համար։

Դա բնորոշ էր ոչ միայն Բաֆֆուն։

Ռուսական տիրապետության և Ռուսաստանի Արևելյան քաղաքականության դրական կողմն արձանագրող 19-րդ դարի 70—80-ական թվականների հայ բոլոր առաջադեմ հեղինակներն էլ անտես չէին առնում անձի ու գույքի ապահովությունը, մեծարում էին լուսավորությունն ու քաղաքակրթությունը, քարոզում և գոյության իրավունքի կուռն պարզում այն, ինչ հնարավոր էր ցարիզմի տիրապետության պայմաններում։

[46] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 575։

Արևմտահայ նշանավոր հրապարակախոս և արձակագիր Արփիար Արփիարյանը (1851—1908) իր «Բաֆֆին և հայ վիպասանությունը» հոդվածաշարում մեծ համակրանքով էր խոսում Ռուսաստանի խաղացած դրական դերի մասին և նշավակում ցարիզմի խավարամոլ քաղաքականության շրջափուլային դրսևորումները։ «Ռուսիո հայոց մեջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատվանդանի վրա, և ժողովուրդը կարտասանե նոցա անուններն ակնածությամբ և համակրանոք։ Ռուս ժողովուրդը մեծապես նպաստած է, — գրել է Արփ. Արփիարյանը,— այս զգացմանց և գաղափարաց տարածմանն ի Հայս։ Հրապարակախոս, վիպասան, պատմաբան, գրականության ամեն ճյուղերուն պատկանող տնձնավորություններ վայելում են ամեն ատեն ռուս ազգին սերը, և իրենց ազդեցությունը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրա։ Ռուս ազգը մին է ի նոցանէ, որը ինչքան ալ քերության ենթակա լինին, բայց և այնպես հայրենյաց սերը իրենց առաքինության գլխավորն է»[47]։

Սա ժողովրդական Ռուսաստանն է, որին արևմտահայ գրողը հակադրում է Հակոտնյան՝ ցարականը։ «Ռուսական կառավարությունը,— իր տեսակետն ամբողջացնում էր գրողը, — որ Ասիո մեջ քաղաքակրթության տարածման ամենազոր միջոցը կհռչակե ինքզինք... Հանդարտ ու հավատարիմ ժողովուրդն կը սարսափի՞ որ նորա մամուլը այսքան չարաշար կը կաշկանդե։ Սակայն չհուսահատինք քաղաքակրթության հաղթանակեն։ Մտաց արտահայտություններն ատեն մը ուրիշ կարմիր դույնով կը ներկին. այժմ արյան տեղ հաջորդած կարմիր թանաքն ալ անհետ կը լինի։ Բայց մինչև որ անհետ լինի, իցե թե Ռուսիա կառավարությունը փոխանակ խավարամիտ Կատքովներու, ունկն դներ մարդկության ճշմարիտ բարեկամներու ձայնին, որը միանգամայն ազգաց բարեկամներն են»[48]։

Արփ. Արփիարյանի համար Արևելյան Հայաստանում հայկական հարց չկար, քանզի այն օրից, ինչ Ռուսաստանը տիրեց Արարատյան նահանգին, գրում էր նա, հայերի համար «նոր թվական մը բացվեցավ։ Բարեկարգող վարչություն մը հաջորդելով նախորդ դրության, հայերը այլևս հանդիստ պիտի ապրեին։ Նոր կյանքը բարեհաջող սկզբնավորությամբ կը բարդավաճեր։ Նյութականին ապահովությունը հայոց ամեն ղյուրություն կը հայթայթեր մտավորականին զարգացմանը համար»[49]։

Հայ հասարակական հոսանքները սկսեցին որոշագրել իրենց քաղաքական դիրքորոշումները։ Ինքնակալության գրոհի պայմաններում վե-

[47] «Մասիս», 1884, № 3737, էջ 215։
[48] «Մասիս», 1884, № 3736, էջ 196։
[49] Արփ. Արփիարյան, Երկեր, Երևան, 1987, էջ 407։

րահաս ճղնաժամը քննության առաջ է դնում այն գաղափարներն ու ծրագրերը, որ վաղուց ի վեր քարոզում էին հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր գործիչները: Լիբերալները, այդ թվում և Գր. Արծրունին, ստիպված համակերպվեցին ցարիզմի քաղաքական նոր ընթացքին: Իշնում է «Մշակի» խմբագրի խրոխտ խոսքը: Հայ լիբերալիզմը սկսեց լռության մատնել, մերժել կամ փոփոխել Մ. Նալբանդյանի քարոզած ազգային հեղափոխության գաղափարախոսությունը: Այլ դիրք գրավեց Բաֆֆին: Նա չթաքցրեց ցարիզմի հակահայկական քաղաքականության նկատմամբ իր բացասական վերաբերմունքը: Սակայն Բաֆֆու հոգսերի հոգսը, մտորումների գլխավոր առարկան Հայկական հարցն էր: Քաղաքական նոր, անբարենպաստ պայմաններում, նա քննադատում էր բոլոր նրանց, ովքեր հանդես էին գալիս սուլթանիզմի դեմ պայքարը գաղարեցնելու օգտին, քարոզում էին խաղաղություն, հավատարիմ հպատակություն և սուլթանին սիրաշահելու գործելաձև: Անդամ նոր պայմաններում Բաֆֆին ազատագրական պայքարից հրաժարվելու մտերիմ թշնամի էր: Որպես ազատագրական պայքարի մարտավարություն, նա առաջարկում էր շարժման հիմքում դնել ուժերի համախմբման, ներքին ու միջազգային պայմանների հաշվառման և տեսական նախապատրաստության ծրագիրը: Ըստ Բաֆֆու արևմտահայությունը վերջին պատերազմը նախապատրաստված չդիմավորեց: Պատմական անցյալի կորցրած օղակը լավատեսությամբ նա գրանելու տրամադրությամբ նա այն կարծիքն էր հայտնում, որ եթե արևմտահայության կենսունակ ուժերը նախապատրաստված լինեին և երկրի ներսում ապստամբական գործողություններ սկսեին, ինչպես կատարեցին սլավոնները, արևմտահայությունը Ռուսաստանի օգնությամբ կկոթափեր օսմանյան լուծը:

Հայերը ի վիճակի չեղան օգտվելու ընձեռված պահից: Սխալներից պետք է դասեր առնել, վերլուծել կատարվածը, քննադատաբար գնահատել և վերագնահատել անհաջողության պատճառները՝ Հայկական հարցի լուծման համար ճանապարհ հարթելու համար:

19-րդ դարի 70—80-ական թթ. հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսը ոչ միայն ազատության համար պայքարի գաղափարը դարբնեց ժողովրդի գիտակցության մեջ, այլև գործնականում նախապատրաստեց օսմանյան հանրապետի դեմ գրոհող հերոսական մի սերունդ, որ իր կյանքի գերխնդիրը պիտի տեսներ ժողովրդի ազատության և ռոմանտիկ հայրենիքը իրական հայրենիք դարձնելու մեջ:

Հայկական հարցի լուծման համար պայքարի բաֆֆիական ոգին կյանքի կոչեց վրիժառու հայդուկներին, որոնք սեփական հայրենիքում

հայրենազուրկ հայի կյանքն ու կայքը պորտաբույծ տիրոզներից փրկելու անօրինակ սխրանքներ պիտի գործեին: Հայդուկային հայ ֆիդայական շարժումը սկզբնապես դրսևորվեց որպես հարստահարիչների և նրանց հովանավոր պաշտոնյաների դեմ ուղղված ինքնապաշտպանական պարտիզանական պայքար, իսկ հետո, բնականաբար, դարձավ օսմանյան լուծը թոթափելու ձգտող հայ ազատամարտի տարերային և հախուռն պայքարի հենքը:

Տարաբախտաբար, հետագայում աստիճանաբար տիրապետող դարձավ հասարակական այն համոզմունքը, որ հայդուկային շարժումը ազգային-ազատագրական պայքարի գլխավոր ձևն է, մինչդեռ այն պետք է լիներ հատվածական, օժանդակող ձևը:

Հայկական հարցի լուծման խնդրում ուրույն դիրքորոշում ուներ ազգային-ազատագրական պայքարի մարտաշունչ երգերի հեղինակն ու հրապարակախոսը՝ Ռաֆայել Պատկանյանը (1830—1892):

Հաճախ տարուբերվելով հասարակական հոսանքների գաղափարական ճանապարհների խաչմերուկներում, նա իր աշխարհայացքով չտեղավորվեց այդ հոսանքների շրջանակներում: Ռ. Պատկանյանը դիտակցեց «Հյուսիսափայլի» դերը ազգային լուսավորության գործում, բայց մի հայտնի չափով մերժեց նրա խմբագրի ակադեմիզմն ու մարի հանդուգն դեգերումները, գիտակցեց Գր. Արծրունու «Մշակի» սթափեցնող ուղղությունը, բայց և նշավակեց նրա ու համախոհների «կուսակցական» սուբյեկտիվիզմը, համակրանքի խոսքեր ուղղեց «Մեղու Հայաստանի» և «Նոր դարի» խմբագրություններին, բայց և սաստեց ծայրահեղ ավանդապաշտությամբ օծված նրանց նեղմտությունը, վերջապես կողմնորոշվեց դեպի Աբգ. Հովհաննիսյանի «Արձագանքի» միջակա ուղղությունը, սակայն շուտով զգաց հիասթափության դառնությունը: Նյութապաշտ աշխարհը բեկվում էր ռոմանտիկ բանաստեղծի գաղափարների ոլորտում և միաժամանակ լուրջ ճեղքվածքներ առաջ բերում նրա հայացքների համակարգում:

Դեպի արևմտահայ շարժումը նրա շրջադարձը տեղի ունեցավ ազգային պահպանողականության դիրքերից: Դժգոհություն հայտնելով ցարիզմի ազգային քաղաքականությունից, Ռ. Պատկանյանը գործուն դիմադրություն չէր ցուցաբերում այդ քաղաքականության դեմ և հավատացնում էր նրա բյուրոկրատիային, որ «հայերը երբեք տերության գործի մեջ խառնված չեն»[50], բայց և «քաղաքականապես ռուս» չեն:

Կողմնորոշվելով դեպի Հայկական հարցը և վառ հույսեր կապելով հարցի լուծման հնարավոր ելքը բալկանյան ժողովուրդների գործադրած

[50] ՀՀ Գրականության թանգարան, Ռ. Պատկանյանի արխիվ, թղթ. 270, թ. 132ա:

մեթոդների հետ, Պատկանյանը, սակայն, չէր գերագնահատում այն հայացքը, թե Ռուսաստանն է հենց եվրոպական այն տերությունը, որի միջամտությունն անպայման ազատություն կբերի արևմտահայությանը։ Նրան ազգային-պահպանողական իր հայրը՝ Գաբրիել Պատկանյանը, Հայաստանի բարօրությունը լծորդում էր արևելահայերի և արևմտահայերի տնտեսական ու մշակութային կապերի ամրապնդման շավիղներում և միաժամանակ Հայաստանի նորոգման երաշխիք համարում նրա կապը Ռուսաստանի և նրա լուսավորության հետ, ապա Ռ. Պատկանյան որդին ելնում էր նույն այդ հեռանկարից՝ զինված ապստամբության կոչեր անում ազգին՝ չբացառելով նաև եվրոպական միջամտությունը։ Չնայած Ռ. Պատկանյանի ազատագրական գաղափարները կաշկանդված էին ազգային-պահպանողական գաղափարներով, բայց, այնուամենայնիվ, նա յուրովի ընդառաջում էր ռուսահայ դեմոկրատիայի ընդերքում հասունացող ազգային-քաղաքական համախմբման պահանջներին և իր մտավոր տրամադրությունների ընդհանուր հայտարարով արձագանքում Արևմուտքում և Ռուսաստանում ծավալվող քաղաքական շարժումներին։ Ուստի պատահական չէ, որ նրա գործունեությունը և գրականությունը հայտնի չափով անհանգստություն էին պատճառում հայ և ռուս համախոհ հետադիմականներին։ Ապստամբության միջոցով հայրենիքի արևմտահայ հատվածը թուրքական բռնատիրությունից ազատելն էր Ռ. Պատկանյանի քարոզչության հիմնական լեյտմոտիվը։ Նրա այդ քարոզչությունը նոր թափ ստացավ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ նա ռոմանտիկ երևակայությամբ կարծում էր, թե պատերազմը կործանելու էր սուլթանական ամբողջատիրությունը և ազատագրելու նրա ցանցում շրջափակված ժողովուրդներին։ Ուրեմն չպետք է հապաղել, հարկավոր է զենք վերցնել և նվաճել բաղձալի ազատությունը։ Դրան էր կոչում պատերազմի առաջին օրերին գրած «Վանեցի մոր երգը» բանաստեղծությունը, ուր՝

Ջար սուլթանի ոսկի թախտը ջարդվեցավ, վայր ընկավ,
Թախտի տակեն հազար ազգաց ազատություն ծագեցավ,
Ով որ շուտով ոտքի ելլե, ազատություն կգտնե,
Սիրուն որդի՛ս միթե մենակ չար լծի տակ պիտի մտնե[51]։

Պատերազմին հաջորդած տարիները հիասթափություն առաջ բերեցին հայ հասարակական մտքի շատ ներկայացուցիչների մեջ, Բեռլինի կոնգրեսի արդյունքները խարխլեցին արևմտահայության ազատագրության վարդագույն հույսերը։ «Հուսախաբության և հիասթափության

[51] Ռ. Պատկանյան, *երկեր, Երևան, 1990, էջ 89։*

այդ տարիներին Պատկանյանը շարունակեց ազատագրական գաղափարների քարոզչությունը և հանդես եկավ նրանց դեմ, ովքեր այլևս չէին հավատում հայ ժողովրդի ազատագրության գործին և վհատությամբ հետ էին կանգնում քաղաքական պայքարից[52]։

Սակայն, Բաֆֆու նման, Ռ. Պատկանյանն էլ մի պահ հավատ տածեց եվրոպական դիվանագիտությանը, կարծելով, որ վերջինս կօգնի Հայկական հարցի լուծմանը։ Այդ պատրանքով էր թելադրված նրա դիմումը «հայասերի» համբավ ստացած Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Ու. Գլադստոնին։ Բարեբախտաբար մոլորությունը երկար չտևեց։ Բանաստեղծ հրապարակախոսը շուտով եկավ այն համոզման, որ ավելորդ է շահամոլ Եվրոպայի հետ հույսեր կապելը և իր բողոքն ու ցասումը «քաղաքակիրթ» տերությունների նվաճողական քաղաքականության նկատմամբ արտահայտեց ոչ միայն «բողոքի» հոդվածներում, այլև հրապարակախոսական լիրիկայի այնպիսի պոեթիկումներում, ինչպիսիք են «Վեհաժողովը» և «Բողոք առ Եվրոպան»։ Հատկապես վերջին բանաստեղծությունը եվրոպական տերությունների քաղաքականության մերկացման ուղղությամբ հայ քաղաքական պոեզիայի լավագույն նմուշներից է։ Ահա այդ բանաստեղծության առաջին ու վերջին բառատողերը.

Ձեռքերս կապած, ոտքերիս շղթա,
Կասե Եվրոպան. «Հե՞ր չելաք ոտքի,
Ձեզ ազատություն, ձեզ օրենք չկա,
Տարե՛ք, կըրեցեք դուք կյանք ըստրուկի։

.....

Ինչերուս էր պետք առաքինի վարք,
Է՞ր չեղանք Հայքս սրիկա, մարդասպան,
Անշուշտ կը դասեր մեզի ազգի կարգ
Արյունածարավ գոված Եվրոպան[53]։

Ռ. Պատկանյանը ցուցաբերում էր կովկասահայ բուրժուազիայի ազգային-պահպանողական գաղափարախոսության ընդդիմությունը ռուս և եվրոպական դեմոկրատիային, երբ անդրադառնալով 1863 թվականի լեհական ապստամբությանը, գրում էր, թե Լեհաստանում կատարվող անցքերի նկատմամբ հայերը պիտի ի հայտ բերեն իրենց հավատարմությունն ու երախտագիտությունը Ռուսաստանին, որ «ապահով ապաստան» է եղել նրանց համար։ «Ռուսաստանի մեջ հայոց վիճակը,—

[52] *Տե՛ս Մ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 232։*
[53] Ռ. Պատկանյան, *երկեր, Երևան, 1990, էջ 90—91։*

պրել է Պատկանյանը, — եղել է բազմապատիկ առավելությամբ լավ, քան Լեհաստանի հայոց վիճակը երբեմն, և այժմ ևս լավ է, քան Պարսկաստանի, Հնդկաստանի, Ավստրիայի և այլոց դրությունը, և մեծ հանցանք կլինի մեզ ուրանալ այն...»[54]։ Բնավ չպետք է այս ամենից հետևցնել, թե Ռ. Պատկանյանը «երգվյալ» ցարապաշտ էր կամ անվերապահորեն ընդունում էր Պասկևիչի լեհական դաժանությունները կամ ցարիզմի հայկական քաղաքականությունը։ Ո՛չ ամենևին։ Նույնիսկ 1877—1878 թթ., առարկելով արևելահայ լիբերալներին, որոնք Ռուսաստանի առաջխաղացման հետ կապում էին մեծագույն հույսեր, Պատկանյանը գրեց «Ղարիբ մշեցին» բանաստեղծությունը, ուր ասում էր.

Այսքան շատ տանջանքին ինչպես դիմանանք,
Մինչև ե՞րբ ձեր դիմաց անօգ պիտ'մնանք,
Մեր ազգը տեր չունի Սլավոնի նման։

Թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրությունից հետո, նույն այդ միտքը Ռ. Պատկանյանը դնում էր նաև Մասիսի և Կազբեկի երկխոսությունում.

Գիտեմ, տեսել եմ, ասաց Ղազբեկ
Բալքանի բազդը շնորհ է Վալդային,
Այդ շնորհից մասնիկ չի հասնիլ երբեք
Ոչ իմ զավակաց և ոչ քու Հային։

Ավելին, 1880-ական թվականներին տեղ գտած հետադիմության տարիներին ցարիզմի ոչ հայանպաստ քաղաքականությունից չունենալով դրական որևէ ակնկալություն, բանաստեղծը տրամադրվեց հավատալու Թուրքիայի ապագային և իր լիրիկական հերոսին հորդորում էր Ռուսաստանից փոխադրվել տակավին չազատագրված Վան.

Ջեռքդ ինձ տուր իմ նազելի,
Թողնենք այս նոր Խուժաստան
Հայոց ազդիս, գաղթենք դեպի
Վանը։ — մեր բուն Հայաստան...
Կյանքի կեսը ստրուկ եղանք,
Գեթ կեսն լինենք մենք ազատ,
Ազատությունն կտա մարդուս
Լոկ յուր հողը հարազատ[55]։

[54] «Մասիս», 1863, № 1։
[55] Մեջբերումներն ըստ՝ Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 112—113։

Ինքնին պարզ է, որ Ռ. Պատկանյանը փախչում էր ոչ թե Ռուսաստանից, այլ, վերջինիս անընդունելի դարձած, նրա նոր տիրակալ Ալեքսանդր 3-րդի քաղաքականությունից։ Այս առումով, կարծում ենք, չափազանց խիստ է հնչում Աշ. Հովհաննիսյանի այն բանաձևումը, թե Պատկանյանի «դժբախտությունն այն էր, որ դիմադարձ լինելով ցարական Ռուսաստանից, նա անդիտացավ ռևոլյուցիոն Ռուսաստանը։ Դրանով էլ հենց հատկանշված է նրա քաղաքական հորիզոնի սահմանափակությունը»[56]։

Մեծ գիտնականն անտեսում էր այն իրողությունը, որ ինչքան էլ Ռ. Պատկանյանը խոցոցներ ցարիզմի հայահալած քաղաքականության դույները, միևնույն է, նրա համար Ռուսաստանում գոյություն չուներ Հայկական հարց, որովհետև այստեղ չէին վտանգված «յուր ազգայիններին» անձն ու ինչքը, այստեղ, ազգային ազատագրության ռազմավարական ծրագրով, բանաստեղծի և հրապարակախոսի համար «հայրենիքի փրկության» խնդիր չկար, իսկ ազգային-պահպանողական նրա հայացքների համակարգը, բնական է, սկզբունքորեն պետք է մերժեր հեղափոխական Ռուսաստանի գաղափարը։

Հայ գործիչների համար տվյալ ժամանակաշրջանում առաջնայինը, գլխավորը հայրենիքի ազատության, ազգային համախմբման խնդիրն էր։ Պատահական չէ, որ 1880-ական թվականների կեսերից Արևմտյան Հայաստանում ակնբախ դարձած թուրքական վանդալիզմի նոր վայրագությունները առիթ դարձան և ստիպեցին Պատկանյանին ստեղծելու «Ձոհեր», «Տաճկահայերի օրհասը», «Երդում» և այլ անմահ բանաստեղծությունները, որոնցում հեղինակը համայն հայությանը կոչ էր անում միասնաբար զորավիգ լինել օսմանյան վարչակազմի ճիրաններից Արևմտյան Հայաստանի ազատագրության գործին։

Ժողովրդի և նրա գրականության պատմության մեջ լինում են շրջաններ, երբ ազգային հրատապ խնդիրների թելադրանքով պատմական հիշողությունը տիրապես ներխուժելով արդիականություն՝ դառնում է սերունդների ինքնագիտակցության կարևորագույն լծակներից մեկը։ Մեր գրականության համար այդպիսի շրջան էր 19-րդ դարի 70—80-ական թվականները։ Հայ ժողովրդի գոյապայքարի առաջադրած պահանջների թելադրանքով և այդ պահանջների կենսագործմանն իր կյանքն ու ստեղծագործությունը նվիրեց Հովսեփ Շիշմանյան-Մերենցը (1822—1888)։ Բաֆֆու պատկերավոր արտահայտությամբ՝ մեր նոր շրջանի գրականության մեջ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային զորու-

[56] Նույն տեղում, էջ 114։

թյան առաջին ժայթքումն էր, մի ժայթքում, որ ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի ընթացքում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կախարդական արտացոլումն էր։ Եվ ահա կես դար անց, ռուս-թուրքական պատերազմով հայ ժողովրդին համակած հայրենասիրության պոռթկումը կյանքի կոչեցին նաև Մերենցի պատմավիպասանությունը և հրապարակախոսությունը։

Ժամանակակիցների վկայությամբ, փխրուն բնավորության տեր, ազգային կյանքի նպաստավոր և աննպաստ իրողություններին մանկական խանդավառությամբ և անմիջականությամբ արձագանքող Մերենցը 19-րդ դարի 60-ական թվականներին ազատագրական պայքարի հետևողական կողմնակիցներից էր։ Նրա երիտասարդությունը համընկավ արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային արժեքների գնահատման և զարթոնքի իրագարձություններին, հասարակական կյանքում ձևավորվող հակոտնյա՝ առաջադիմական և հետադիմական դիրքորոշումների և խմբակցությունների պայքարի ժամանակաշրջանին։ Անհագ ընթերցանությամբ և հարցասիրությամբ ձեռք բերած իր գիտելիքներով, երիտասարդական խանդավառությամբ Մերենցը ներգրավվում է առաջադեմ երիտասարդության ծավալած հասարակական գործունեության մեջ։ Նա անդամակցվում և գործուն մասնակցություն է ունենում 1846 թ. Պեշիկթաշլյանի գլխավորությամբ հիմնադրված Համազգյաց ընկերության աշխատանքներին։ 1848 թ. բժշկություն ուսանելու նպատակով Մերենցը մեկնում է Փարիզ, սովորում Սորբոնի համալսարանի բժշկական բաժնում։ Մերենցի՝ Ֆրանսիա ժամանելու օրերին 1848 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունն արդեն հաղթանակել էր, և նա ականատես է լինում այն խանդավառությանը, որ իշխում էր Փարիզում։ Բայց փետրվարին հաջորդում են հունիսյան իրադարձությունները, երբ Փարիզի բանվորությունն ապստամբվում և հանդես է գալիս իր ուրույն պահանջներով։ Ընդունելով Փետրվարյան հեղափոխությունը՝ Մերենցը չըմբռնեց ու չհասկացավ հունիսյան դեպքերի պատմական էությունը։ Նրան թվում էր, որ եթե չլիներին աշխատավորության ելույթները, ֆրանսիական բուրժուազիան չէր դաշնակցի միապետության ու Վատիկանի հետ, և երկրում չէր հաստատվի բացահայտ հետադիմական իշխանություն։ Տվյալ հարցում Մերենցը, ըստ էության, հետևում էր Ֆրանսիացի ժամանակակից պատմաբաններ Օ. Թիերիին, Ֆ. Գիզոյին և ժ. Միշլեին, որոնք չըմբռնելով հունիսյան իրադարձությունների պատմական օրինաչափությունը, այն

համարեցին պատմական անբացատրելի թյուրիմացություն և մոլորություն։

Փարիզում գտնվելու ժամանակ Մերենցն ականատես է լինում ծայրահեղ հետադիմական ուժերի և Վատիկանի անսթող դաշնությանը։ Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա բախվում է կաթոլիկ հայերի հովվապետ Անտոն Հասունյանի հետ։ Մերենցը դավանափոխության դեմ պայքարում էր ազգային ուծացման վտանգի գիտակցումով, աչքի առաջ ունենալով նաև Լեհաստանի հայության կորուստը։ Հասունյանի դեմ պայքարել են շատերը, բայց այդ պայքարի ճանաչված ղեկավարը, Հ. Պարոնյանի արտահայտությամբ, «հակահասունյաններու հրամանատարը» Մերենցն էր։ Նա ոչ միայն ազատագրական պայքարի հետևողական կողմնակից էր, այլև անմիջական կապեր էր ունեցել 1862 թ. Զեյթունի ապստամբների հետ։ Ցավոք, հետագայում նա նահանջ է կատարում պայքարի զինված ձևերից և ժողովրդի ազատության հեռանկարը տեսնում վերևից եկող բարենորոգումների մեջ։ Այս իրողությունն է հաստատում 1876 թվականի հոկտեմբերին Գր. Արծրունու և Րաֆֆու հետ ունեցած նրա սուր բանավեճը, ուր նա այն համոզմունքն էր հայտնում, թե ինքը «վերեն» և ոչ թե «վարեն» եկած հեղափոխության կողմնակից է, որովհետև «վարեն» եկող հեղափոխականները մեծ արյունահեղություններ են պահանջում։ «Մենք կուզենք, — ասում էր Մերենցը,— որ ամեն մի հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն։ Վարեն եկած հեղափոխությունը (եթե որ հաջողին ալ) անչափ աղետք՝ անչափ թշվառություն ունին և այնչափ արյուններու առիթ կը լինին, և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողութենեն վեր է այդ մասին շռայլ լինել. և ընդհակառակ, վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք այն արյանց գիներով չեն լիներ... Ռուսիո ինքնակալությունն երեսուն միլիոն մարդու ազատություն տավավ գրեթե առանց արյուն թափելու հրովարտակով մը միայն, հրովարտակ՝ որու բոլոր անցյալ և ապագա Ալեքսանդր անունը կրողներուն էն մեծը պիտի լինի նորա ստորագրողը հանդերձյալ ողջամիտ դարերու մեջ»[57]։ Այստեղ Մերենցի հարցադրումները բխում էին հասարակության աստիճանական առաջընթացի մասին նրա ունեցած հիմնական դավանանքից։ 1878 թվականին, ստեղծված կացությունը հաշվի առնելով, հայ գործիչներից շատերը պահանջում էին իրենց տալ «Հայաստան ոչ թագապահ, ոչ անկախ, ոչ ինքնուրույն, այլ Հայաստան մասն օսմանյան տերության՝ հարկատու ճիշտ ուրիշ զավառաց պես.. ազատ ի հարստահարութենց,

[57] «Արեւելյան մամուլ», 1876, հոկտեմբեր, էջ 349—350։

ավագակաց, մանավանդ ի կուսակալաց և բարի օրինակ լավ կառավարության նույն տերության գրացի զավառաց»[58]։ Ջափավոր, ազգային-պահպանողական Մերենցն այդ պահին թյուր այն կարծիքն ուներ, թե «այս պետք է փափաղեր նույն ինքը Բ. Դուռը, բայց գժբախտություն մըն է, որ կենտրոնացման հիվանդությունը, պաշտոնյա տիրաց ապականությունը... և կրոնամոլություն օրենք դարձած են ի Տաճկաստան»[59]։ 1878 թ. դեկտեմբերին գրած «Ժամանակիս ոգին և հայ ապագան» իր հոդվածում Մերենցը թեկուզ շարունակում է հույսը դնել հասարակության և մարդու բնական առաջադիմության և բարեշրջության վրա, որի համաձայն իբրև թե ժամանակի տիրապետող ոգին «արդարությունն» է, այնուամենայնիվ, սուր քննադատության է ենթարկում Բեռլինի կոնգրեսում Անգլիայի դիրքորոշումը։ «Անգլիա բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է,— գրել է Մերենցը,— ամեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունին 1878 հունիսի 4-են վերջը։ Այո՜, այն օրվանե, որ Անգլիա Կիպրոսը օսմանյան տերութենեն առնելով յուր սեփականություն ընելով, փոխարեն նրա Ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարհը գինքը պատասխանատու կճանաչե թե լավ, թե վատ գործունեությանց»[60]։

Ավելորդ է ասել, որ Մերենցը նկատի ուներ 1878 թվականին Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն օսմանյան կայսրությունից զավթելով Կիպրոսը, ծովերի «թագուհին» պարտավորվում էր ապահովել նրա ասիական տարածքների անձեռնմխելիությունը, Թուրքիայի ամբողջականությունը։ Հիրավի, Բեռլինի կոնգրեսն ընթացավ այնպիսի թատերախաղով, որ Մերենցին իրավունք վերապահեցին առավել խիստ արտահայտվելու՝ «Անգլիա օսմանյան պետության կամ յուր անձնական շահերուն միայն բարեկամն է»[61]։

Մերենցը խորությամբ գիտակցում էր, որ Արևմուտքից Արևմտյան Հայաստանի ազատություն ստանալն առնվազն պատրանք է։ Բեռլինի կոնգրեսից մեկ տարի էլ չէր անցել, երբ Մերենցը տագնապով զգաց ազգային բնաջնջման այն մոտալուտ և ահավոր վտանգը, որ օսմանյան կերպարանք ստացած դոմոկլյան սրի նման կախվում էր արևմտահայության գլխին։ Մերենցը գիտեր, որ ձգտելով ամեն կերպ կանխել թուրքական պետության հետագա քայքայումը, թուրքական վերնախավը սկսել էր ծրագրեր մշակել արևմտահայության բնաջնջման համար։

[58] «Փորձ», Թիֆլիս, 1879, № 1, էջ 207։
[59] Նույն տեղում։
[60] Նույն տեղում, էջ 208։
[61] Նույն տեղում։

«Օսմանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք» իր պատմաքննական հոդվածում Մերենցը մեջբերումներ էր կատարում սուլթան Աբդուլ Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշայի հեղինակած ծրագրից*, ուր պանթուրքիզմի գաղափարներով ու կարգախոսներով զեկավարվող «նոր օսմանները» անօգուտ ու սխալ էին համարում կայսրության եվրոպական մասում ապրող քրիստոնյա ժողովուրդներին ժամանակին տրված արտոնությունները և կանխագծում ասիական քրիստոնյաների (հայերի) ոչնչացումը։

«Եթե Եվրոպիո մասին մեջ մեր ծոցը օձ անուցինք, պետք չէ որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ,— մտորել է Քյամիլ փաշան։ — Խելոքությունը չնչել վերացնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ և գործիք լինել։ Ուրեմն, — եզրակացնում էր Քյամիլ փաշան, — այդ հայ ազգը վերացնելու, աճեցնելու և աճեցնելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք — քուրդ, չերքեզ, կուսակալ, զատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհրատարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան»[62]։

Թուրքական մարտնչող ազգայնականության նոր զարգացումները և արևմտահայ հատվածի համար նախապատրաստվող ողբերգության մոտեցող տագնապները շատ անմիջական ներգործություն ունեցան Մերենցի գաղափարական շրջադարձային, արմատական վերակառուցման վրա։ Արևմուտքի զիվանագիտական խաբկանքներից ու խարդավանքներից հոգնած և հիասթափված Մերենցը հանդեց այն համոզման, որ ազատությունն անհնարին է առանց ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման, ընդդեմ թշնամու նրա ներքին ուժերի ու ջանքերի համախմբման։ Եթե առաջ, մասնավորապես իր հրապարակախոսության մեջ, նա ինչ որ հույսեր էր կապում «վերեն» շնորհվող ազատության հնարավորությունների նկատմամբ, ապա ուշ շրջանի գեղարվեստական ստեղծագործություններում ցույց տվեց, որ ազատությունը երբեք չի շնորհվում, որ ժողովուրդն այն նվաճում է զինված պայքարով միայն։ Անսպասելի չէր, որ իր վեպերի («Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունի») համար որպես հենք Մերենցը վերց-

* Քյամիլ փաշայի հայակործան այս ծրագիրը արևելահայ մամուլում առաջին անգամ հրապարակել է Մերենցը («Փորձ», 1879, № 7—8)։
[62] «Փորձ», 1879, № 7—8, էջ 204—205։

րից պատմության այն շրջանները, երբ օտար գավթիչների դեմ ոտքի կանգնած հայ ժողովուրդը հանուն ազգային ինքնավարության դրսևորում է իր ամենավսեմ հատկություններ՝ ազատասիրությունն ու հայրենասիրությունը։ Ռազգրություն պատմավեպերի տվյալ ելակետը անմիջականորեն արտացոլում էր օսմանյան ինքնակալության պայմաններում ապրող արևմտահայության դրությունը։ Մերենցի առաջադիր նպատակն էր ժամանակակիցներին հասկացնել, որ աննկանելի իրավիճակներ չկան, որ ազգը, անցյալի սերունդների փորձից ելնելով, չպետք է հաշտվի բռնակալության հետ, որ անհրաժեշտ ուժ ու կորովի գերլարմամբ միշտ կարելի է թոթափել բռնատիրության լուծը։ Վերոհիշյալ բանաձևման առումով խորհրդանշական է, որ ելնելով Կիլիկյան Հայաստանի պատմության և արդիականության նկատմամբ տևական հետաքրքրությունից, Մերենցը, որպես վիպասան, առաջնակ պարզեց «Թորոս Լևոնին»։ Միանգամայն իրավացի էր Ստ. Պալասանյանը, որ Մերենցի վեպին նվիրած իր գրախոսականում գրում էր, թե «Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնի» նման յուր ժամանակին գրված և հրապարակված լինի»[63]։ Ջմռռանանք, որ 1878—1881 թվականներին հրապարակվեցին նաև մյուս վեպերը։ Ուշագրավ է նաև խստապահանջ Հակոբ Պարոնյանի՝ Մերենցին տված գնահատականը՝ «Թե՛ հրապարակի, թե՛ լսարաններու և թե՛ վեպերու մեջ Շիշմանյան էֆենդին աշխատած է և կաշխատի երիտասարդներու սրտին մեջ հայրենասիրություն արծարծել. ուստի յուր խոսքերն միշտ սիրով մտիկ ըլլալու արժանի են»[64]։

Հայկական հարցի լուծման ճանապարհին Մերենցի վերջնական կարծիքը հանգում էր նրան, որ նախքան զենքի դիմելը անհրաժեշտ է զինել արևմտահայ անզեն բնակչությանը, նրան ընդունակ դարձնել գեթ ինքնապաշտպանության։ Համբարձում Երամյանը իր «Հուշարձանի» Ա հատորում գրում է, որ Մերենցի տեսակետին էին նաև Կարինի փոխհյուպատոս Կ. Կամսարականը և Մ. Խրիմյանը, որոնք գտնում էին, որ նոր պայմաններում «մենք ուժ չունենք օսմանյան տերությանը հարթելու»[65]։

Ազգային-ազատագրական և հասարակական շարժումների ճակատագրական փուլերում պայքարի հորձանուտ մտած գործիչների առաջին ընկալումներն ու ինքնագիտակցության առաջին քայլափոխերն ակամա հաճախ ամուր նստվածք են թողնում նրանց գործողությունների և մտա-

63 «Փորձ», 1879, № 2, էջ 135—136։
64 Հ. Պարոնյան, Երկեր, Երևան, 1979, էջ 63։
65 Տե՛ս Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, Ա հատոր, Ալեքսանդրիա, 1929, էջ 23։

վոր արարումների վրա։ Օրինաչափ է նաև, որ երբեմն հենց դրանց իմաստավորմանն են նվիրում նրանք հասուն տարիների իրենց ստեղծագործությունները։ Այդպիսին է սերունդներին ներկայանում Սմբատ Շահազիզը (1840—1907), մտավոր այն սերնդի ներկայացուցիչներից մեկը, որ սկզբնապես հեռու լինելով հեղափոխական դեմոկրատներից, սակայն հասունացման ուշ շրջանում ոչ միայն արձագանքեց «Հյուսիսափայլի» խմբագրի ու թերթի ուղղությունից ստացած գաղափարական ներշնչումներին, այլև «Լևոնի վիշտը» պոեմում մեծարեց այդ ուղղության հիմնադիր Մ. Նալբանդյանի անունը։ Բազում իր ստեղծագործություններում Շահազիզը սգում էր ազգության ներկան և երազում նրա վերածնությունը։ Հայ ժողովրդի ազգային համախմբման և Հայկական հարցի լուծման համար մղվելիք պայքարը հայ ժողովուրդը պիտի վարի՝ արձագանքելով ճնշված ազգերի այն կռիվներին, որ արծարծվում էր Արևմուտքում։ Արևմտահայ ժողովրդի ազատագրության խնդրով մտահոգ բանաստեղծը ոգեշունչ տողեր էր նվիրում իտալական ապստամբության ու գարիբալդյան զենքի հաղթանակին և ընդգծում բռնակալության դեմ ոտքի ելած ժողովրդական զանգվածների վճռորոշ դերը։ Ռուս ճորտերի հուզումների, լեհերի և իտալացիների ապստամբությունների, Ջեյթունի խիզախ ընդվզման և այլևայլ անցքերի հաշվառմամբ էր ծնվել ճնշված ժողովուրդներին, առաջին հերթին հայ ժողովրդին, ուղղված բանաստեղծի կոչը.

Ուրե՛մն թրեր, ուրե՛մն սրեր,
Թո՛ղ հանդիսանան այստեղ դատավոր
Թո՛ղ թափվեն անպարտ արյան հեղեղներ,
Դա անմա՛հ գործի է ավետավոր։

Բայց, ո՛վ Ասիա, ի՞նչ է քո համար
Այս ազատության կենդանի քարոզ,
Մեռած եք ազգեր, և ձեզ բռնաբար
Հարստահարում է թշնամին գոռոզ։

Մի վե՛ր կաց, կանգնի՛ր, աշխարհ Հայաստան,
Մի թա՛փ տուր ուժով, թո՛ղ ճեղքվեն կապանք
Ահա քեզ արյուն իմ նվիրական,
Թո՛ղ ցողեն դաշտերդ փրկության հոսանք[66]։

66 Ս. Շահազիզ, Երկեր, Երևան, 1980, էջ 180—182։

1880-ական թվականների սկզբներին, հասարակական փոթորկուն արամադրությունների հարուցած հետադիմության աննշան տեղատվության և ուժգին գրոհի միջև ընկած ժամանակաշրջանում, Ս. Շահազիզը, Ռ. Պատկանյանի նման, տեղի ավեց այն մտայնությանը, թե Հայկական հարցի լուծումը պիտի գլուխ գա եվրոպական տերությունների ձեռնասունությամբ։ Այս առումով բնորոշ են նրա «Հրապարակախոսի ձայնի»[67] էջերը։ Սակայն եվրոպական տերությունների աչքի առջև 1890-ական թվականների հայկական կոտորածներից հետո, Ս. Շահազիզը միանգամից սթափվում է։ Ծերունի 60-ականը վերադարձ է կատարում երիտասարդական տարիներին փայփայած իր այն դավանանքին, որ «Մանուկ Հայաստանի» ազատության ուղին արյունով ներկված Դողգոթայի շավիղն է միայն[68]։

Երբ 1890-ական թվականներին տեղի ունեցան արևմտահայության կոտորածները, Ֆրանսիան ոչ միայն չբողոքեց այդ կոտորածների դեմ, այլ իր «չեզոք» պահվածքով փաստորեն պաշտպան կանգնեց արյունարբու Աբդուլ Համիդին։ Այդ առիթով Ս. Շահազիզը Ֆրանսիայի և ընդհանրապես եվրոպական խարդախ դիվանագիտության մասին գրել է. «Հայության շունչը սպառում է յուր ալնիվ ու դյուցազնական կրծքի մեջ և Եվրոպան խաղ է անում մի անարդ և բարբարոսական կոմեդիա. տասնևիններորդ դարի էջերը կմնան սևացած պատմության մեջ և կարձանագրեն խայտառակ դիպլոմատիայի հնարագիտությունները։ Եվրոպայի մարդասիրությունը, Եվրոպայի պրոգրեսը ոչ այլ ինչ է, քան թե մի ամբողջ շարք վայրենի կրքերի և անառակության։ Քանի այդ ցիվիլիզացիայի երեսին, որը ներկայանում է մի կատարյալ մտավորական սիֆիլիզացիա։ Տես ինչ դիրք է բռնել այն ճղճղան Ֆրանսիան, որը մեզ ուսուցանում էր եղբայրություն և հավասարություն, այժմ ինքը ստրուկ և ծառա պապանձվել է լեզվով, որ մի ժպիտ անգամ չհանե այն անմիտ զոհերի համար, որոնք պաշտպան են հանդիսանում նրա դավանած սկզբունքների համար։ Գրիչս հրաժարվում է շարունակել այն անտանելի պատմությունը։ Բայց այնուամենայնիվ ավելի պիտի հուսալ, քան թե վհատվել»[69]։ Ս. Շահազիզի այս տողերը, հիրավի, գրված էին նալբանդյանական դիրքերից, ուր առկայծում էին եվրոպական գաղութարարների դեմ զոնե գաղափարական պայքարի անհրաժեշտության վերաբերյալ հայ 60-ականների ճշմարտացիտում հարցադրումների անշեղ կամ չբեկված անդրադարձը։

[67] Ս. Շահազիզյան, Հրապարակախոսի ձայն, Մոսկվա, 1881, էջ 323—325, 327—334։
[68] Տե՛ս Ե. Շահազիզ, Սմբատ Շահազիզի կենսագրությունը, Երևան, 1944, էջ 27։
[69] Նույն տեղում, էջ 94։

Ընդհանրապես 1870—1880-ական թվականների հայ դեմոկրատական մտավորականությանը հուզող հիմնախնդիրները բացահայտվում էին ժողովրդի համարյա բոլոր աշխատող հասարակախավերում խաչաձևվող կողմնորոշումների պատկերը։ Ռուս-թուրքական պատերազմի արդյունքներից հիասթափված զանգվածներին լավատեսական և ինքնավստահության ոգի ներարկելուն էր հետամուտ Արփ. Արփիարյանը, երբ թղթակցություններից մեկում գրում էր. «Ձեյթուն իրեն ինքնավարություն ունեցավ, ամուր լեռներ, քանի մը հրացան և քիչ մը արյուն շատ ավելի արդյունավետ եղան, քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարության միջամտություններ... Հուսանք թե Ձեյթունցիք իրենց փրկությամբը Հայաստանի փրկությունը և ինքնավարությունը կդյուրացնեն»[70]։ Հիշենք Սվաճյան-Թագվորյան խմբակցության գործիչներին, Պեշիկթաշլյանին, որոնք Արևմտյան Հայաստանի ազատագրության գործը չէին կապում եվրոպական տերությունների միջամտության հետ։ Սրանց բոլորի համոզմունքն այն էր, որ տերությունների միջամտությունը կարող էր միայն նոր կեղեքումների, ճնշումների ու ջարդերի ասպարեզ դարձնել երկիրը[71]։ Շրջադարձ կատարելով դեպի հեղափոխական Ռուսաստանը, վերջինիս հետ մեկտեղ հակադրվելով ցարիզմին՝ նրանք չէին կամենում ոչ մի պայմանով գործիք դառնալ Ռուսաստանի դեմ պայքարող եվրոպական դիվանագիտության ձեռքում[72]։

Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման, Հայկական հարցում եվրոպական տերությունների քաղաքականության նկատմամբ հայ գործիչների բռնած դիրքը սուր ծաղրի է ենթարկել Հակոբ Պարոնյանը (1843—1891)։ Նա մերժել է Ն. Վարժապետյանի անհաջող փորձերը՝ սիրալիր ընդունելությունների միջոցով հաշտեցնելու միմյանց չհանդուրժող «աջակողմյան» և «ձախակողմյան» երեսփոխաններին։ Պարոնյանը բացառիկ կրքոտությամբ հանդես եկավ պատրիարքի՝ «օսմանյան հայրենիքը» պաշտպանող 1876 թվականի շրջաբերականի դեմ, ցույց տվեց, որ արևմտահայության շահերի և «օսմանցիության» քարոզների միջև ոչ մի ընդհանրություն չկա և որ պատրիարքն անտեսում էր «այն եղեռնագործությունները, որոնցով հայոց ստացվածքն, կրոնքն, կյանքն ու պատիվը բռնաբարված են և կբռնաբարվին»։ Երզիծաբան հրապարակախոսը մեծ կարևորություն տվեց այսպես կոչված «կովկասյան խնդրույն» կեղծիքի՝ Ռուսաստանի դեմ արե-

[70] «Մշակ», 1879, № 209։
[71] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք առաջին, Երևան, 1955, էջ 567։
[72] Նույն տեղում, էջ 569։

վկայության կարծեցյալ ապստամբության մասին մամուլում տարածված ստահոդ լուրերի բացահայտմանը, ցույց տվեց, որ այդ գործում պատրիարքարանը աննեղելիորեն հապաղել է։ Պատրիարքի դեմ Հ. Պարոնյանի գրած հակաթուրքական այդ հոդվածի համար «Թատրոն» երգիծաթերթը երկու ամսով փակվեց։ Հետագայում պատրիարքի հակաթուրքական դիրքորոշումը և արևմտահայության ինքնավարության խընդրում Ռուսաստանի դերի սթափ գնահատումը պատրիարքի կողմից՝ Պարոնյանին մղեցին պաշտպանելու Ն. Վարժապետյանի քաղաքական կողմնորոշման ընթացքը։ Դրանով է բացատրվում նաև Ն. Վարժապետյանի երգիծական դիմանկարի համակրական բնույթը «Ազգային ջոջերում»[73]։

Իր խմբագրած «Թատրոնում» Պարոնյանը դասական խորության հասցրեց քաղաքական սատիրայի ժանրը, որի հնարավորությունները խմբագրի գրչի տակ առավել տպավորիչ դրսևորվեցին Թուրքիայի և եվրոպական տերությունների դիվանագիտական փոխհարաբերությունների՝ Հայկական հարցի հետ առնչվող իրավիճակների մերկացնող բնութագրումների մեջ։ Արևելքի ժողովուրդների բախտը իր քաղաքական նպատակներին ծառայեցնող եվրոպական տերություններից Հ. Պարոնյանն առանձնապես առանձնացնում էր և սուր ծաղրի ենթարկում Անգլիային, որն իր դաղութատիրական ձեռնարկները կատարում էր քրիստոնյաներին «փրկելու», նրանց «լուսավորելու» կեղծ ձառերով։

Հայ հետադիմական մամուլի կողմից տարածում գտած այն կարծիքին, որ եթե հատկապես Անգլիայում հասարակական կարծիք ստեղծվի հայ ժողովրդի մասին, ապա նա թուրքական կառավարությանը կհարկադրի բարելավելու հայերի վիճակը, Հ. Պարոնյանը դարձյալ պարոնյանական հեգնանքով պատասխանում էր. «Անգլո հասարակական կարծիքը իմ հովանոցիս կը նմանի. հովը քիչ մը սաստիկ փչելուն պես մյուս կողմը կդառնա կոր, որ դիեն որ շահ տեսնա, ան կողմը կը դառնա»[74]։ Ասել է թե՝ Անգլիայի դիվանագիտական շրջանակներում ստեղծված հասարակական կարծիքը առաջին հերթին արտահայտում է բրիտանական կառավարող վերնախավի շահը, որը կարող է ամեն օր ներգործել հասարակական կարծիքի վրա և այն փոխել ցանկացած ուղղությամբ։ Ժողովուրդներին լուսավորելու կամ «փրկելու» եվրոպական տերությունների քաղաքականությունը մերկացնող Մ. Նալբանդյանի

[73] Տե՛ս Ա. Խառատյան, Հակոբ Պարոնյանի պարբերականները, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2, էջ 89—90։
[74] «Թատրոն», 4 դեկտեմբերի, 1876։

«Կեցցե կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում» տողերն օգտագործելով, երգիծաբանը գրել է.

Երբ ամերիկյան մեծ դեսպանն ու կին
Մեր պալրոցներուն այցելու եկին,
Ըսե անոր պես, թե ապրի կատուն,
Որ իր փորին համար մուկ է բռնում։

Կարելի է անվարան պնդել, որ հայ նոր գրականության ու հրապարակագրության մեջ ոչ ոք այնքան սուր երգիծանքի չի ենթարկել եվրոպական «լուսավորյալ» տերությունների կեղծ ժողովրդասիրությունն ու հումանիզմը, որքան Հ. Պարոնյանը։ Այս առումով նրա թողած ժառանգությունը նաև ունի պատմաքաղաքական անանց արժեք։

Հ. Պարոնյանը արևմտահայ այն սակավաթիվ մտածողներից էր, որ ի սկզբանե մերժողական դիրք գրավեց օսմանյան 1876 թ. միջհատյան սահմանադրության գործունեության նկատմամբ։ Ըստ Պարոնյանի, այդ սահմանադրությունը դիվանագիտական մի տրյուկ էր, որով թուրքերը հետամուտ էին խաբելու ենթակա ժողովուրդներին և եվրոպական դիվանագիտությանը՝ հավերժացնելու ռազմավատատիրական բռնատիրությունը բարենորոգչական զգեստով։ Նա բացահայտում էր սուլթանական քարոզչության այն կեղծապատիր լուրերը, թե իբր Թուրքիան, սահմանադրություն ընդունելով, իր առաջադիմությամբ գերադանցել է Ռուսաստանին։ «Հեռագրի մը խոսքին նայելով, — ծաղրում էր Պարոնյանը, — Մոսկվայի մեջ ժողովուրդը խլրտիլ սկսած է։ Ադինանդին թուղթեր փակցուցած են, խնդրելով, որ իրենց ալ օսմանյան սահմանադրության նման սահմանադրություն մը տրվի... Ինչ կըսեք, մեր վիճակը սկսավ նախանձելի ըլլալ, հե՛ հե՛, Ռուսիան պարապ տեղը մեր վիճակը բարվոքելու կաշխատի»[75]։ Պարոնյանը հայտաբերում էր թուրքական լիբերալ շարժման և պահպանողականության կայացրած համաձայնության գաղափարական անանկությունը, սահմանադրության մեջ տեսնում օսմանյան վերնախավի և «Նոր օսմանների» քաղաքական խոհանոցում հունցված կեղծիքը։ Իրականում բարենորոգումների համար ո՛չ թուրքական կառավարությունը, ո՛չ էլ տերությունները չունեին ցանկություն ու քաղաքական որևէ մարտավարություն։ Նա դատափետում էր բարենորոգումների նախապես կառուցված փակուղին՝ իշխանությունների ձեռնարկած միջոցառումների՝ չնչինությունը, կեղծիքի և բռնությունների պահպանվող և ծավալվող միջավայրը։

[75] «Թատրոն», 25 դեկտեմբերի, 1876։

Հայկական հարցի ձախողումը Բեռլինի կոնգրեսում Պարոնյանը մի հայանի չափով բացատրում էր ազգային անմիաբանությամբ, իրարամերժ պատկերացումների և գործողությունների բարդույթով։ Հայկական հարցի միջազգայնացումը նա դիտում էր որպես հայ ժողովրդին ազգային ինքնությունից զրկելու և դրան ընդդիմանալու դրսևորում։ Հետագայում նա կարուկ ժխտում էր Հայկական հարցի ծագման ու միջազգայնացման պատահականության վերաբերյալ անհիմն տեսակետները, որպիսին, օրինակ, պաշտպանում էր «Մանզումեի էֆքյարի» («Կարծիքների շարք» թերթ, որ հրատարակվել է Կ. Պոլսում 1866—1917 թթ., մինչև 1896 թ. հայատառ թուրքերեն, այնուհետև՝ հայերեն) խմբագիր Կ. Փանոսյանը։ «Թող «Մանզումե» այդպես հավատա, — գրում էր Պարոնյանը, — թե Հայկական խնդիրն ինքն իրմե մտավ եվրոպական լրագիրներու և Անգղիո խորհրդարանին մեջ։ Իսկ եթե իրմե զատ ուրիշ հավատացող մը գտնե՝ թող բարեհաճի զայն ցույց տալ մեզ»[78]։

Պարոնյանը Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրմանը հավատում էր և այն տեսնում կայսրության փլուզման մեջ։ Իսկ քանի չի եկել այդ բաղձալի օրը՝ հայ ժողովուրդը պետք է կարողանա ընդդիմանալ բռնություններին և ապավինել ինքնապաշտպանության միջոցներին։

Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ տարբեր առիթներով իրենց վերաբերմունքն են հայտնել Գարեգին Սրվանձտյանցը (1840—1892) և Մատթեոս Մամուրյանը (1830—1991)։ Գ. Սրվանձտյանցը միշտ էլ թերահավատորեն և քննադատորեն է վերաբերվել եվրոպական տերությունների կողմից Հայկական հարցի լուծման ուղղությամբ արված հայտարարություններին ու տրված խոստումներին։ Նա մերժում էր արևմտաեվրոպական կողմնորոշման պաշտպանության գաղափարը, որովհետև «Հայաստանի մեջ է բուն Հայկական խնդիրը և մենք Պերլինի մեջ կորոնենք զայն»[77]։ Ազգի հավաքական միասնության և միասնաբար գործելու մեջ է հաղթանակի գրավականը, իսկ եթե մենք թույլ տանք, որ «մի այլ ցեղ եվրոպական ազգերի հաջողի մուտ գտնել, ոտն ածել այն տեղերը, ոչ ևս կյանք կմնա մեզ որպես ժողովրդյան մը։ Եվ ո՞ւր պիտի ապրինք, ամենայն ինչ կորած է հայնժամ մեզ համար, և մենք կորած ամեն բանի համար»[78]։ Ո՞րն է ելքը։ Այն, որ ազգովին գիտակցենք, որ «Այդ կեղծ բարերարները ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ և մսագործներ, որ զմեզ... պատրաստ ոչխարներու և պարարակ կովերու տեղ դնելով, մեր փարախեն կուզեին խրտնեցնել, հեռացնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել»[79]։

Ոչ մի հույս չտածելով եվրոպական տերությունների և Ռուսաստանի առաքելության նկատմամբ, Հայկական հարցի լուծումը նա կապում էր միայն ու միայն ժողովրդի համախմբման և ինքնապահպանության հետ[80]։

Հայ ժողովրդի ազգային-քաղաքական պայքարի խնդիրների, Հայկական հարցի վերաբերյալ Մ. Մամուրյանի տեսակետները իրենց խտացված արտահայտությունն են գտել «Հայկական նամականի», «Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը» հրապարակախոսական հոդվածներում, «Սև լեռին մարդը» վեպում, ուր հետևելով Մ. Նալբանդյանին, նա հայ ժողովրդի ազատագրությունը կապում էր ռուսական հեղափոխության հեռանկարների հետ։ Մ. Մամուրյանը մերժում էր կովկասահայ լիբերալների ընդգծված ցարապաշտությունը և պաշտպանության տակ առնում ցարիզմի կովկասյան քաղաքականության՝ ազգային-պահպանողականների քննադատական ուղեգիծը։ Սակայն հաղթահարելով երկու հոսանքների սահմանափակությունն ու նեղմտությունը, նա ցարիզմի ծավալապաշտական քաղաքականությունը չէր շփոթում Արևելքի ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի կատարած առաջադիմական դերի հետ։ Ցարիզմի և ռուս ժողովրդի շահերն անհարիր են և դրանք Մամուրյանի մոտ տարանջատ են։

«Ռուսիա նոր մ'է, — գրում էր նա, — որմէ պիտի ծնի Որմիզդ և Արհմն։ Բայց Ռուսիա բուն կառավարությունը չէ, կառավարություն մը պատահական կամ ժամանակի ու ժողովրդյան հանգամանաց արդյունք է, որ ժողովրդյան հառաջադիմության ու ժամանակի հետ կայլափոխի»։ Մամուրյանը գտնում էր, որ ռուսական ցարիզմը հավերժ կանգուն չի մնա և նրա անխուսափելի կործանումից հետո ուրիշ փոխհարաբերություններ կստեղծվեն ժողովրդաշատ և այլալեզու Ռուսաստանում։

Լուսանշմար գալիքի հեռաստաններում Մամուրյանն ուրվագծում էր Նոր Ռուսիան, ուր «Այլազգին ու այլասեռ ժողովուրդները ինքնօրինությամբ պիտի վարեն, կառավարեն իրենց հատուկ շահերն տարբեր օրինաց և սովորության ներքև»[81]։

[76] «Արձագանք», 1883, № 37, էջ 525։
[77] Գ. Սրվանձտյանց, Բոլոր աղբար, հ. 1, կ. Պոլիս, 1879, էջ 270։
[78] Նույն տեղում, հ. 2, էջ ժԳ։
[79] Գ. Վ. Սրվանձտյանց, Բոլոր աղբար, հ. 2, կ. Պոլիս, 1879, էջ ժէ։
[80] Տե՛ս Է. Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979, էջ 139։
[81] Մ. Մամուրյան, Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 165։

Ինչպես նշեցինք, ազգային-քաղաքական հարցի լուծման մի ընթացք էր դա, որ շոշափման եզրեր չուներ ոչ ազգային-պահպանողականների և ոչ էլ լիբերալների մտայնության հետ։ Այլ ավելի շատ նման էր ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ պայքարող Մ. Նալբանդյանի ուղեգծին, որը ելնելով ռուս և հայ դեմոկրատիային համախմբելու հեռանկարներից՝ գալիք Ռուսաստանի հետ էր առնչում ոչ միայն արևելահայերի, այլև Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը։ «Պոլսահայ լուսավորչական համայնքը» դեկուցագրում Մ. Նալբանդյանը, ելակետ ընդունելով ամբողջ հայ դեմոկրատիային համախմբելու և նրա պայքարը ռուսական հեղափոխական դեմոկրատական շարժման հետ միացնելու խնդրից, Կ. Պոլսի ռուսական դեսպանի ուշադրությունն էր հրավիրում հայ և օտար տարրերի այն վտանգավոր քարոզչության վրա, որի նպատակն էր Թուրքիայում ապրող հայերին հեռու պահել Ռուսաստանի ազդեցությունից և անջրպետ ստեղծել հայ ժողովրդի երկու հատվածների միջև[82]։

Նալբանդյանական դիրքերից Մամուրյանը բացասաբար էր բնութագրում Արևմուտքի նենգաբարո գործելակերպը։ Եթե Բեռլինի կոնգրեսի շրջանում և նրանից հետո գրած հրապարակախոսական հոդվածներում Մ. Մամուրյանը հույսեր էր տածում մեծ տերությունների աջակցությամբ հայերի օգտին ստանալ գեթ նվազագույն բարենորոգումներ, ապա 1879 թվականին, ամեն խոստումներից և հուսադրումներից հիասթափված, նա ժխտում էր բոլոր «հայանպաստ» ուժերի դերը և իր լավատեսական հույսերն ամփոփում արևմտահայության ապստամբական ներուժի հնարավորությունների մեջ։ «Սպասել, — գրել է նա 1879 թվականին, — որ արտաքին փրկիչները դան և հայ ժողովրդյան սև պատանքը փակեն՝ հիմարություն է։ Հեք և ստրուկ ժողովրդյան մ'առաջին և միակ ազատարարն ինքն է»[83]։ Մամուրյանը մատնանշում էր այն երևույթը, որ հաճախ նույնիսկ Թուրքիան՝ եվրոպական լուսավորության մեծ երթից ուշացած այդ տկարամիտ «աշակերտը», ապաստան է դառնում եվրոպական քաղաքակրթության հալածված առաքյալների համար, մինչդեռ եվրոպան՝ քաղաքակրթության կենտրոնը, հովանավորում էր լուսավորության բանադրիչներին։

Եվրոպայի պատմությունը խայտված է հավատաքննության խարույկներում, նրա էջերը՝ ներկված միլիոնավոր անմեղների արյունով։ Եվրոպական մեծ տերությունները քաղաքակրթության բեմի վրա միմոսական դեր են խաղում հաճախ և ժողովուրդներին խնդացնելով հոշոտում...[84]։ Այնուամենայնիվ, ստրկության խորխորատից դուրս գալու ելք պետք է գտնել. Մ. Մամուրյանը չէր ընկրկում այդ ճանապարհը հարթելու համար։ Բայց եթե «հաղթությունը դժվարին է արդի նախապաշարմանց ապառաժին դէմ և մոլորության տղմին մեջ, պետք է մեռնիլ։ Մեռնիլ՝ չէ թե կռնակ վերք առնելով, այլ ճակատե։ Ինչպես հավատան՝ այնպես սկզբունք մը նահատակվելով կվերածնի, և եթե ճշմարտությունն արյան գնով իրենց ընկերական և քաղաքական իրավունքները ձեռք ձգող հայտնի անգամ չլիներ, հայերը պետք էին քարոզել զայն անոնց, քանի որ իրենց հավատքին կենդանի նահատակներ են և դարե դար անոր շնչով կվերաժնին»[85]։

Այսպիսով, դյուրին է նկատել, որ 1880-ական թվականների հայ դեմոկրատական մտավորականության արմատական թևի կարծիքն այն էր, որ հարկավոր է չհրապուրվել եվրոպական դիվանագիտությամբ, քանզի նա առավել շատ մտահոգված է Թուրքիան իր օգտին շահագործելու դերագույն հոգսով։ Բաֆֆին այդ թևի դիրքերից էր հենց կշտամբում այն մոլորյալներին, ովքեր ուրախանում, մխիթարվում էին, որ «Եվրոպայի որևէ քաղաքում, մի ժողովի մեջ Հայկական հարց է բարձրացվել։ Տեսեք ասում են, մեզ վրա ուշադրություն են դարձնում, մեր բանը պրծած է... Թուրքիայի հայը այսուհետև ազատ է»[86]։ Հայ դեմոկրատիայի տեսակետը հանդում էր արևմտահայերի քաղաքական ազատագրության գաղափարին, որի ելևէջներում ուղենշվում էր այն ճանապարհը, որը տանում էր դեպի զինված պայքար թուրքական բռնատիրության դեմ, մեծ տերությունների շահադիտական միջամտությունների դեմ։ Հայ ազգային-ազատագրական շարժման դեմոկրատական թևի ներկայացուցիչներից շատերը ընդհանուր առմամբ դժգոհում էին նաև յարիզմի արևելյան քաղաքականությունից և յուրովի արձագանքում ռուս արմատականների և սլավոնոֆիլների քաղաքական հակումներին։ Նրանցից ոմանք շրջադարձ էին կատարում մերթ դեպի Ռուսաստանը և մերթ դեպի «քաղաքակիրթ» Արևմուտքը՝ նրանց արտաքին քաղաքականության մեջ որոնում արևմտահայության փրկության երաշխիքը։ Այս ճանապարհով գնացողների մեջ կային և՛ ազգային-պահպանողականներ, և՛ ազգային-լիբերալներ. պատահում էր, որ ազգային-պահպանո-

[82] Տե՛ս Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Մոսկվա, 1935, էջ 60։
[83] «Արևելյան մամուլ», 1879, № 6։

[84] Տե՛ս Վռույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, Զմյուռնիա, 1872, էջ 99։
[85] Նույն տեղում, էջ 80։
[86] «Մշակ», 1878, № 22։

ղականներն իրենց ազգային սահմանափակության նեղմտության մեջ շատ ավելի համազգային շահերի արտահայտիչ էին, քան լիբերալները։ 1860-ական թվականներին ազգային-պահպանողականները տակավին շարունակում էին կողմնորոշվել արևմտաեվրոպական դիվանագիտության օգտին և հակառակ էին Օսմանյան կայսրության դեմ ռուսական զենքի միջամտությանը։ Լիբերալները, ընդհակառակը, Ռուսաստանի արտաքին գործուն քաղաքականության համակիրներ էին և կողմնակից հարցի զինական վճռման։

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կովկասահայ լիբերալները դեմ չէին, որ արևմտահայությունը ներգրավվի ապստամբական կազմակերպությունների մեջ՝ դրանով իսկ ընդառաջ գնալով ռուսական զենքի ու դիվանագիտության հաջողությանը։

Քաղաքական կողմնորոշումների հեղհեղուկ այս ընթացքը հետագայում էլ համարյա փոփոխությունների չենթարկվեց։ Եվ որչափ ապրստամբական բնույթ ստանալուց հետո շարժման փաստական ղեկը գրտնըվում էր մանրբուրժուական տարրերի և կուսակցությունների ձեռքում, բնական է, որ նրա ղեկավար գաղափարախոսությունը դուրս չպիտի գար բուրժուական մտայնության շրջանակներից։ Կողմնորոշվելով դեպի եվրոպական տերությունների այս կամ այն խմբավորումը, հայ ազգային կուսակցությունները առաջադրում էին ժողովրդի ինքնապաշտպանական ելույթները հաճախ որպես պետությունների զինական կամ դիվանագիտական միջամտություն առթելու միջոց։

Ակնբախ էր միաժամանակ, որ Հայկական հարցի հետ կապված իրադարձությունները 1880-ական թվականներին կործանեցին այն բոլոր ռոմանտիկական ամրոցները, որոնք կառուցվել էին հայ գործիչների մի ստվար մասի պատրանքաշատ ծրագրերում։ Աստիճանաբար ուղի էր որոնում նաև զգաստ հայացքը կյանքի ու քաղաքական իրադարձությունների նկատմամբ։ Այնպիսի հիասթափություն, որ ապրեց մի ամբողջ ժողովուրդ մեծ տերությունների համաեվրոպական գործարքից հետո, չէր կարող չանդրադառնալ նրա հոգեբանության և ազգային-քաղաքական նկարագրի վրա։ Ամենուրեք սեղմված օղակներում (ազգային սահմանափակումներ, գրաքննության խստացում, դպրոցների փակում և այլն), հայ գրողները, հասարակական գործիչները, հայրենասեր եկեղեցականները փորձում էին ուշքի գալ ծանր հարվածից։ Մ. Խրիմյանի հայտնի «Տրտունջը» թղթե շերեփի մասին, զգաստացնում էր գալիքով ապրողներին և հուսալքում խուճապահարվածներին։

Այս պայմաններում, քաղաքական պատրանքների խորտակումից ծնունդ առած սկեպտիցիզմը գեղարվեստական գրականության և նույնիսկ հրապարակախոսության մեջ ռեալիստական ուղղության խթանման գործոնի վերածվեց։

Ազգային-ազատագրական շարժման հետագա գործելակերպի որոշումը 1890-ական թվականներին դառնում է հայ ազգային կուսակցությունների առաջնային խնդիրը։

Հայկական հարցը մտնում էր իր ողբերգական պատմության նոր շրջափուլը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

19-րդ դարի վերջին քառորդի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարաբանության և գործելակերպի վրա զգալի էր ռուսական նարոդնիկության ազդեցությունը: Սակայն իրողություն էր նաև, որ առանձնահատուկ հայկական իրականության պայմանների թելադրանքով այն ենթարկվել է որոշակի կերպարանափոխման:

Եթե ռուսական նարոդնիկությունը, մտավորական նարոդնիկները խնդիր ունեին իրենց «պարտքը» կատարել ժողովրդի հանդեպ, ուժերը նվիրել ցարական միահեծանության ճնշումից ռուս ժողովրդի սոցիալական ազատության գործին, ապա 1880-ական թվականների կեսերից հայ իրականության մեջ նարոդնիկական գաղափարների քարոզչությունը երիտասարդության առաջ խնդիր էր հարուցում կրթվել, գիտելիքներ ձեռք բերել, օգնել, «երկիր» (Արևմտյան Հայաստան) գնալ, մրտնել ժողովրդի մեջ, նրան լուսավորել և պայքարի նախապատրաստել ընդդեմ սուլթանական Թուրքիայի բարբարոսական իրականության, հանուն ազգային ազատագրության:

Անձնազոհ անհատներին էր վերապահվում հերոսական օրինակով վարակել և իրենց հետևից տանել խավարի ու բռնության ճիրաններում գալարվող արևմտահայությանը:

Ռուսաստանի զույգ մայրաքաղաքների համալսարանական շրջաններում, Անդրկովկասի կրթական օջախներում հանդես էին եկել հայ երիտասարդներ, որոնց վրա խիստ մեծ էր ռուս հեղափոխականների համարձակության և անձնազոհության վարակիչ օրինակը: Քննարկվել սկսվեցին քարոզչության, գաղտնի կենտրոններ ստեղծելու, ահաբեկչական գործողությունները նպատակասլաց հունով տանելու և բազում այլ խնդիրներ: Հայ սոցիալ-դեմոկրատական շարժման գործիչ Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ) հետագայում պատմել էր, որ 1880-ական թվականներին Թիֆլիսի ուսանողական-աշակերտական խմբակներում հասարակական-քաղաքական հրատապ խնդիրների արծարծման ընթացքում շատ էր խոսվում «հայոց ռեֆորմների», Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի, Հայկական հարցի լուծման ուղիների մասին: Արևմտահայ գաղթականների մուտքը Թիֆլիս, զրույցները թուրքական բռնարարքների, կոտորածների մասին, Րաֆֆու հայրենասիրական վեպերը, Արծրունու «Մշակի» մարտակոչերը ստեղծել էին «երիտասարդ սերնդի շրջաններում մի տեսակ... թունդ ազգասիրական մթնոլորտ»[1]: Նույն հեղինակը վկայում է, որ շատերի մտահոգության առարկան էր դարձել Հայկական խնդիրը «և տաճկահայերի արևով էին երդվում ամենքը», որ առանձին անհատներ սկսել էին սահմանն անցնել և երկիր գնալ, որի հետ կապված էին «այնքան հույսեր և երազներ»[2]:

1881 թ. Մոսկվայում ստեղծված «Հայրենասերների միություն» խմբակը 1883 թ. հրապարակեց արևմտահայերի մասին մի կոչ, որը տարածվեց Անդրկովկասում: «Միությունը» հանդես էր գալիս ազգերի հավասարության և համերաշխության քարոզով, հայտարարում էր, որ իրեն խորթ են և թշնամի ինչպես քուրդ շեյխը, այնպես էլ թուրք և հայ հարստահարողները[3]: Խմբակն իր կոչերում պատերազմ էր հայտարարում թուրքական կառավարությանը, որն իր վարած քաղաքականությամբ կաշկանդում է ազգերի, այդ թվում և արևմտահայության կանոնավոր զարգացմանը: Մ. Ներսիսյանը տակավին 1940 թ. գրում էր, թե 1882—1883 թթ. Թիֆլիսում կազմակերպված հայկական նորոդնիկական խմբակը (Գ. Միրզոյան, Ք. Միքայելյան, Խ. Մալումյան, Գ. Ղարաջյան և ուրիշներ) իր վրա կրում էր հայ ազգային ազատագրական շարժման բավական ուժեղ ազդեցությունը, որ Հայկական հարցը խմբակին զբաղեցնող կարևոր խնդիրներից մեկն էր[4]:

Այդ նույն ժամանակ ժնևից Կ. Պոլիս այցելած Ռուբեն Խանազատյանը (հետագայում հնչակյան գործիչ) հայ երիտասարդության միջավայրում քարոզում էր, որ հույս չպետք է դնել եվրոպական դիվանագիտության միջոցով բարենորոգումների հնարավորության վրա, որ առանց արյուն թափելու, առանց զինված պայքարի և ապստամբության անհնարին է ազատվել օսմանյան բռնատիրությունից:

1885 թ. հայկական դպրոցները փակելու առթիվ Թիֆլիսում Ք. Միքայելյանի գրած «Հայ եղբայրներ և հայ քույրեր» կոչն արդեն ահաբեկչության գործելաձևն էր առաջարկում վրիժառության համար. «Եթե այսօր մենք, հայերս, անկարող ենք դիմադրել խաբեբա բռնակալներին, գոնե

[1] Տե՛ս Գ. Ղարաջյան (Արկոմեդ), Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, էջ 10—11:

[2] Նույն տեղում, էջ 11:

[3] Տե՛ս Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940, էջ 22:

[4] Նույն տեղում, էջ 66:

մենք կարող ենք մահի վճիռ կարդալ այդ բռնակալների ձեռքի տակ դործող այն ստոր սողուններին, որոնք մեր լեզուն և նորա հետ նաև մեր ազգությունը մահու են դատապարտել... Մեր լեզուները հանում են արմատից և մենք փոխանակ բռունցքը ցույց տալու, մեր վզերն էլ դնում ենք դահճի կացնի տակ»[5]։ Գ. Ղարաջյանը միաժամանակ վկայում էր, որ իրենց խմբի անդամ Քր. Միքայելյանը, որ «առաջ մտքով ռուսական նարոդնիկության էր հարած», 1886 թվականից սկսում է բացահայտորեն հակվել դեպի «ազգասիրական հոսանքը, հափշտակվում... հայկական հարցի դիպլոմատիկական ճանապարհով լուծման հնարավորություններով»[6]։

Աստիճանաբար հայկական գաղտնի խմբակներում հաղթանակում է այն տեսակետը, թե «Ռուսաստանում հեղափոխական շարժումը պետք է թողնել բացառապես ռուսներին, իսկ հայերն իրենց ջանքերի համար հենակետ պիտի ընտրեն Հայաստանի թուրքական բաժինը»[7]։

«1885—86 թվականներին ես արդեն նկատել էի, — Անանունին լրացնում է Արկոմեդը, — որ Քրիստափորի (Միքայելյան) տրամադրությունը և մտածողությունն սկսում էր պաշարել հայկական հարցը իր պատմական դիպլոմատիկական ուղղությամբ։ 1889-ին այդ հարցը դարձել էր նրա «Բովանդակ հոգսը», նրա idea fix-ը, նրա հավատամքն ու իդեալը. Քրիստափոր Միքայելյանը դժգոհ էր հայ մտավորականությունից, Արծրունու «Մշակից», «հայ ազգի բոլոր դասակարգերից», որոնք «ինչպես նա ասում էր, գծուծ շահադիտական հաշիվների ետևից են ընկնում, չհետաքրքրվելով և չտեսնելով ազգի փրկության միակ մեծ հարցը»։ Քր. Միքայելյանը, Ղարաջյանի վկայությամբ, 1889 թ. արդեն բացահայտորեն հանդես էր գալիս ազգային համախմբման կարգախոսով և հանուն «ազգային մեծ դատի» պաշտպանության դիրքերից, պահանջում էր «ամենամեծ ուշադրությունը և ջանքերն ուղղել Հայկական հարցի լուծման նպաստելու գործին», որի մեջ էր տեսնում ժողովրդի գոյությունը, նրա ապագան։ Նա հետին բնագիծ էր մղում սոցիալական հարցերը, հայտարարում թե «բանվորություն չկա մեզանում եվրոպական մտքով և այլն»[8]։

Հայկական ապստամբությունն սկսվեց դիտվել որպես գլխավոր ազդակ Հայկական հարցում եվրոպական կառավարությունների և հասարակական կարծիքի միջամտությունը շահելու համար։ Տարբեր ժողովուրդների, երկրների ազատագրության, ինքնուրույնություն նվաճելու փորձը եվրոպայի տարբեր կենտրոններում ուսանող հայ երիտասարդներին մղում էին որոշակի եզրահանգման՝ գլխավոր խնդիրը կազմակերպորեն համախմբվելն է։ Այդ նպատակին էր հետամուտ 1885 թ. Փարիզին մերձակա Մոնպելյե քաղաքում հիմնադրված հայ ուսանողական «Ակումբը», որի անդամներն երդվում էին անձնազոհությամբ նվիրվել «մարդկային իրավունքներից զրկված Տաճկաստանի հայ ժողովրդի ազատության գաղափարին»։ 1886 թ. ակումբը վերանվանվեց «Հայ հեղափոխական ժողովրդի իրավունքի կուսակցություն»[9]։ Մեզ տեղեկություններ չեն հասել. ունե՞ր այդ կազմակերպությունը ծրագիր, կանոնադրություն, քանի անդամ ուներ իր շարքերում։ Գիտենք միայն և գլխավորն այդ է, որ արդեն 1885 թ. գործնական քայլեր էին արվում արևմտահայության ազատագրության նպատակին ծառայող կուսակցություն հիմնելու ուղղությամբ։

Պետություններին դիմումներ հղելու, մամուլի էջերում Հայկական հարցը քննարկելու նախաձեռնությամբ Մարսելում 1885 թ. հանդես եկավ Թուրքիայից վտարված Մկրտիչ Փորթուգալյանի նախաձեռնությամբ կազմակերպված հանձնախումբը, որի հրավիրած ընդհանուր ժողովը որոշում է հանուն Հայկական հարցի դիմել հանգանակության՝ կենտրոն ունենալով բրիտանական գաղթօջախները։ Մարսելյան հանձնախմբի որոշմանն արձագանքում է լոնդոնաբնակ Կարապետ Հակոբյանը, որի նախաձեռնությամբ էլ նույն թվականի դեկտեմբերին կազմվում է «Հայրենասիրաց ընկերություն Հայոց ի Եվրոպա» հանձնաժողովը՝ նպատակ պարզելով «շարունակ հուզել Հայկական խնդիրը Եվրոպիո առաջնակարգ լրագրաց միջոցով», տալով ճիշտ տեղեկություններ Հայաստանի վիճակի մասին, հիշատակագրեր մատուցել Բեռլինի դաշնադիրը ստորագրած տերություններին[10]։ Նշենք, որ արևմտաեվրոպական մայրաքաղաքներում այդ ժամանակ գծագրվում էր Հայկական հարցի լուծման երկու ուղղություն, մեկը հարում էր այն տեսակետին, թե հնարավոր է հասնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության առանց արյուն թափելու՝ մեծ տերությունների դիվանագիտական միջամտության ճանապարհով, մյուսը՝ օսմանյան կայսրությունը զենքի ուժով տապալելու և արևմտահայությանն ազատագրելու տեսակետը։ Առաջին տեսակետի կողմնակիցներ էին հիմնականում հայ առևտրականները, վաճառական-

[5] Գ. Ղարաջյան (Արկոմեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 54։
[6] Նույն տեղում, էջ 40—41։
[7] Գ. Անանուն, Մոտիկ անցյալից, Վարդան Գոլոշյան և իր շրջանը։ Աշ. Հովհաննիսյանի «Երկու խոսքով», «Նորք», 4-րդ գիրք, Երևան, 1924, էջ 335։
[8] Գ. Ղարաջյան (Արկոմեդ), Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, էջ 37—38։

[9] «Արմենիա», Մարսել, 1886, № 6։
[10] Մուշեղ արքեպիսկոպոս, Մանչեստրի հայ գաղութը, Բոստոն, 1911, էջ 126։

նները, Եվրոպայում ուսանող նրանց որդիները և այլևայլ հետևորդներ, երկրորդ դիրքորոշմանը տուրք էին տալիս դլխավորապես ռուսահայ երիտասարդությունը, բալկանյան երկրների հայաշատ համայնքների ներկայացուցիչները։ Առաջին ուղղության ձայնափող հանդիսացավ «Հայաստան» թերթը (Լոնդոն), իսկ երկրորդինը՝ «Արմենիան» (Մարսել)։

«Արմենիա» թերթի առաջին համարը լույս տեսավ 1885 թ. օգոստոսի 1-ին։ Նրա խմբագիր Մ. Փորթուգալյանն առաջիններից էր, ովքեր ձգտում էին արևմտահայությանը հանել թմրությունից ու անտարբերությունից, նրան մղել ինքնապաշտպանության։ Նա առաջինը եղավ «մոռած հայության մեջ ինքնավստահություն ներշնչելու»[11]։ Փորթուգալյանի մտահղացումների և գաղափարների ազդեցության տակ Վանում կազմակերպվել էր «Հայոց հայրենակցական միությունը», գաղտնի մի կազմակերպություն, որն սկիզբ դրեց «Արմենական» կուսակցության գործունեությանը։ Միության ծրագրում տրված էին հաջողության հասնելու ուղիներն ու միջոցները։ Կետերից մեկում նշվում էր, օրինակ, որ յուրաքանչյուր հայրենասեր իր արյունն ու ունեցվածքը պետք է նվիրի Հայաստանի ազատության սուրբ գործին։ «Արմենական» կուսակցության ծրագրում ասվում էր, որ կազմակերպության նպատակն է «հեղափոխությամբ հայ ժողովրդի համար իրավունք ձեռք բերել ինքն իրեն ազատորեն կառավարելու» համար։ Սակայն գործնականում արմենականները դեմ էին բռնի միջոցներին և թուրքական պետականությունից վարչական բարենորոգումներ ստանալու ճանապարհով փորձում էին ապահովել արևմտահայ ժողովրդի ունեցվածքի, պատվի իրավունքը։ Ըստ էության արմենականների գործողության շառավիղը սահմանափակվեց Վան-Վասպուրականի շրջանով։ Նրանց մարտավարությունը զգուշավոր էր և հիմնականում պարփակվում էր կրթամշակութային, բարեղչության շրջանակներում։ Արմենականները փորձում էին հայկական-ազգայինը և թուրքական-համապետականը հաշտեցնել միմյանց հետ, հային հանդես էին քաղաքականապես թուրք, մշակույթով՝ հայ, ժխտում էին արտաքին՝ ռուսական կամ անգլիական դիրքորոշումը և հային պահում էին թուրքական պետության մեջ և վերջինից սպասում նրա վիճակի բարելավումը։ Պատահական չէ, որ «Արմենիայի» հրատարակության առաջին ամիսներին Փորթուգալյանն իրեն և իր գործը չէր հակադրում Թուրքիային։ Սակայն աստիճանաբար փոխվում է նրա դիրքորոշումը։ Թուրք կառավարությունը «բնավ չուզեր խոսք հասկնալ, նա բնավ միտում չունի բարեկարգություն մտցնելու իր ասիական երկրների մեջ և համոզ-

[11] Տե՛ս Պ. Ի. Թոռոսյան, Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալյանը, Նյու-Յորք, 1919, էջ 10։

վելով հանդերձ, թե այդ բարեկարգությունները իրեն ալ օգտակար կլինեն, նա կխորշի այդ ամենն զի մտածե թերևս, թե ինք անընդունակ է այնչափ օգուտ քաղելու, որչափ քրիստոնյա հպատակները, որոնք ավելի զարգացած են, քան թե իրենք»[12]։

Անդրադառնալով Հայկական հարցում եվրոպական տերությունների դիրքորոշմանը, Մ. Փորթուգալյանը գրում էր, թե իրենք հույս չունեն Անգլիայի կողմից հայկական դատի պաշտպանության մեջ, որովհետև մինչև այժմ բացի պլատոնական համակրությունից, ուրիշ բան չենք տեսել «Արմենիայի համար»։ Եվ, ընդհակառակը, եթե «հայկական խնդիրը իրեն մի հենակետ ունեցավ եվրոպական միջազգային մի դաշնագրի մեջ, այդ եղավ Ռուսիայի շնորհիվ։ Բեռլինի վեհաժողովին մեջ Անգլիայի ներկայացուցիչներն անդամալուծեցին մինչև անդամ Ռուսիայի մեզ արած այդ շնորհ, որ ավելի գործնական և ավելի արդյունավետ պիտի լիներ»[13]։

Մ. Փորթուգալյանը և նրա «Արմենիան» բացատրում էին ընթերցողներին, որ թուրքական կառավարությունը երբեք չէր ուզում արտոնել 61-րդ հոդվածի գործադրությունը, քանզի մտածում էր այսպես. եթե հայերն ազատություն ստանան կառավարելու իրենց երկիրը և արտոնություն՝ զենք կրելու, այդ դեպքում Թուրքիան կունենա մեկ այլ Բուլղարիա, որին դիմադրելու նույնիսկ համարձակությունը պիտի կորցնի։ Թուրքական կառավարիչների բառապաշարում «բարեկարգություն» բառը նշանակում էր մահ թուրքական պետականությանը։ «Արմենիան» հարց էր տալիս. «Արդ, ո՞վ է որ պիտի լուծե 61-րդ հոդվածը, ցորչափ Թուրքիա չկամեր իրացնել և Եվրոպա շատ փույթ չունի զայն գործադրել տալու։ Հայը-հայաստանցին և ոչ ուրիշը»[14], — եզրակացնում է նա։ Նա հույսը չէր կորցնում Ռուսաստանից, համոզված էր, որ Ռուսաստանը «ոչ միայն Հայաստանի պաշտպան կհանդիսանա, այլև մեզ հույս կներշնչի, թե այսուհետև պիտի ունենանք՝ մի զորավոր թիկունք, ամեն անգամ, որ պիտի զգամք մեր ձայնը բարձրացնելու մեր մարդկային և ազգային իրավունքների բռնաբարման դեմ»։ Մ. Փորթուգալյանը զարմանում էր, որ իր թերթի էջերում Ռուսաստանի հասցեին բացի լավից ուրիշ ոչինչ չէր տպագրվում, ցարական գրաքննությունն արգելք էր հարուցում նրա տարածմանը ռուսահայ բաժանորդների շրջանում։ Ռուսաստանի նկատմամբ իր լավատեսությունը Փորթուգալյանը շփոթում էր ցարական միապետականների ծրագրերի հետ, երբ ուղերձ-հեռագրեր էր ուղարկում

[12] «Արմենիա», Մարսել, 1886, № 41։
[13] Նույն տեղում, № 42։
[14] «Արմենիա», 1886, № 55։

Ռուսաստանի ներքին գործերի նախարարին՝ խնդրելով վերացնել թերթի առաքման արգելքները[15]։ Ընդգծելով, որ միշտ գոհ է եղել Ռուսաստանի հայկական քաղաքականությունից, նա կարծում էր, որ արգելքը պարզապես արդյունք է սխալմունքի, քանզի լինելով Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ավանդական պաշտպանը, նրանց պայքարի նկատմամբ մշտապես համակիր, Ռուսաստանը ինչի՞ պետք է արգելակեր ռուսամետ թերթի տարածմանը։

Քայլ առ քայլ «Արմենիայի» էջերում գծագրվում էր երկու՝ չափավոր և բռնի ճանապարհով նպատակին հասնելու ուղղությունները։ Եվրոպական տերությունների խարդախ քաղաքականության քննադատությունը երբեմն կատարվում էր քննական խոր վերլուծությունների միջոցով, գիտաքաղաքական և գիտապատմական հրապարակախոսության բարձր մակարդակով։ Թերթի էջերում սկսում է կաղապարվել այն տեսակետը, թե Եվրոպան միայն այն ժամանակ որևէ հայանպաստ գործողություն կձեռնարկի, երբ համոզված լինի, որ դրանից օգուտ ունի։ Մ. Փորթուգալյանը գրում էր, որ «61-րդ հոդվածը մեր քաղաքական կյանքի օրրանը եղավ, նա պիտի լինի և մեր քաղաքական կյանքի գերեզմանը, եթե շարունակենք մեր հույսը դնել օտարների վրա և չաշխատենք բուն իսկ մեր ազգի մեջ ուժեր գոյացնելու»[16]։ Փորթուգալյանը պահանջում էր հույսը դնել սեփական ուժի և զոհողությունների վրա, բայց նաև պատրաստ լինել օգուտ քաղելու «ամեն արտաքին դեպքերե», ամեն ջանք «ի գործ դնել ժողովրդի մեջ քաջալերելու, զորացնելու համար ազատության ոգին և երբ այդ ուժը այն աստիճանի հասած լինի, որ կարող կլինի բռնի միջոցներով պահանջել իր իրավունքը, այն ժամանակ կարող էր օգնել նաև Եվրոպան, որ իր շահերի համար ստիպված կլիներ ականջ տալ և ուշադրություն դարձնել հայերի պահանջներին»[17]։

Մ. Փորթուգալյանին ժամանակակիցներից շատերը չհասկացան։ Պատահական չէ, որ «Արմենիայից» բեկվեցին ոչ միայն անհապաղ հեղափոխության կողմնակիցները, այլև մեծի մասամբ դիվանագիտության միջոցով Հայկական հարցը լուծելու գաղափարի ջատագովները։

Մ. Փորթուգալյանը մշտապես վեճի մեջ էր ոչ միայն անմիջապես դինված ելույթների դիմելու կողմնակիցների հետ, այլև Լոնդոնում հրա-

[15] Տե՛ս Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի մարքսիստական փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 164—165։
[16] «Արմենիա», 1887, № 29։
[17] «Արմենիա», 1888, № 93։

տարակվող «Հայաստան» թերթի տնօրենների (Կարապետ Հակոբյան, Պրուսալի) հետ, որոնք հույս ունեին պայքարի խաղաղ միջոցներով և եվրոպական տերությունների գործուն միջամտությամբ հասնել Հայկական հարցի լուծմանը։ Նա հաճախ էր կրկնում, թե «օտարներին վրա հույս դնելու գաղափարներով կսնուցանենք հայ ազգին միտքը և այդպիսի երկրորդական, չասենք խաբեական հույսերով կթուլացնենք, կըսպանենք անոր մեջ ինքնօգնության և զոհողություններ անելու նորարծարծ ջանքերը։ Մինչև անգամ խելացի համարվածները մեր մեջ տակավին չեն հասկցած, թե օտարների օգնության դիմելե առաջ մի ներքին ուժ գոյացնելու ենք մեր մեջ»[18]։ Նա բացառապես եվրոպական դիվանագիտության հետ հույսեր կապելը համարում էր անլուրջ քաղաքական ընթացք, «անօգուտ ձեռնարկ», որը Արևմտյան Հայաստանի համար որևէ բարվոքում չէր բերելու։

Համոզված բացատրում էր, որ օգնություն չի կարելի սպասել այն Անգլիայից, որ ամեն միջոցով ջնջում է իռլանդացիների ազատությունը, Ֆրանսիայից, որ համագործակցում է Անգլիայի հետ ընդդեմ բալկանյան քրիստոնյաների, այն Գերմանիայից, որ ձգտում է գերմանացնել էլզաս-Լոթարինգիայի ֆրանսիացիներին, այն Ավստրիայից, որ «յուր հպատակ ազգաց ձայնը հաճախ խեղդել կուզենա»։

Փորթուգալյանը զարմանում էր նաև այն մարդկանց վրա, որոնք դրական արդյունք էին ակնկալում 61-րդ հոդվածն ստորագրած սուլթանական կառավարությունից, որ «ամեն ջանք ի գործ կդնե ամեն օր Հայաստանի վիճակն ավելի ևս անտանելի դարձնելու... մի՞թե... գայլը ձեռք ձգած ոչխարին վրա կխղճա»[19]։ Փորթուգալյանն օրինակ էր բերում Հունաստանը, Ռումինիան և Բուլղարիան, որոնք արյունով են գրել իրենց քաղաքական ազգային կյանքի իրավունքը։ Նա դեմ էր օգնությունը և պաշտպանությունը քրիստոնյա Եվրոպայից մուրալուն և եվրոպամետ հույսերն անվանում էր «պատիր» հույսեր, որին ժամանակին զոհ գնաց նաև Կիլիկյան անկախությունը։ «Պատմությունն անցյալի հայելին է և ներկայի ուղեցույցը» խիստ արդիական բանաձևմամբ նա հիշեցնում էր, որ Կիլիկիայի անկախությունն ստեղծվել էր «ժողովրդական ուժի» շնորհիվ, բայց Հեթում 2-ը երես թևքեց ժողովրդից և հույսը կապեց Եվրոպայի հետ, ինչը և կործանում բերեց երկրին[20]։ Պատմական անցյալի և իրօրյա փորձից Մ. Փորթուգալյանը գալիս է այն եզրակացության, որ ելքն ու փրկությունը սեփա-

[18] «Արմենիա», 1887, № 2։
[19] «Արմենիա», 1888, № 25։
[20] «Արմենիա», 1889, № 14։

կան պաշտպանությունը կազմակերպելու մեջ է, որ Բեռլինի կոնգրեսից հետո անցած ձիգ տարիների ընթացքում Հայկական հարցի քաղաքական լուծումը նախ և առաջ կախված է այն բանից, թե «ինչպես կպատրաստենք ժողովրդին բռնի ուժով ձեռք բերելու իր իրավունքները, մինչև որ մենք չքաջալերենք այդ նպատակին ծառայող կազմակերպությունն, մեր լացն ու կոծը և մեր լոկ խոսքերով բողոքները չեն կրնար վճռական արդյունք ունենալ. ոչ թշնամու գութը կրնան շարժել մեր վրա, ոչ ալ օտարի պաշտպանությունը։ Հերիք հուսանք, թե մենք կարող ենք մեր արտասուքների մեջ խեղդել մեր բռնավոր թշնամին։ Այդ արտասուքի ծովին մեջ նա կլողանա և կզովանա միայն»[21], — եզրակացնում էր Մ. Փորթուգալյանը։

Հայկական հարցի լուծման ուղիների որոնման վերաբերյալ իրենց որոշակի հայացքներն ունեին հայկական մյուս քաղաքական կուսակցությունները, հարկավ, առաջին հերթին նկատի ունենք 1887 թ. ժնևում Ավետիս Նազարբեկյանի գլխավորությամբ հայ ուսանող երիտասարդների խմբի հիմնած «Հնչակ» և 1890 թ. Թիֆլիսում Ք. Միքայելյանի, Ս. Զավարյանի և Ստ. Զորյանի (Ռոստոմ) կողմից հիմնադրված «Դրոշակ» թերթի շուրջը խմբված՝ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան (ՍԴՀԿ) և Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՀԴ) կուսակցությունները։

«Հնչակի» հիմնադիրներից Ավետիս Նազարբեկյանը (Լեռենց) և Մ. Շահազիզյանը (Կոռան) «Արմենիայի» էջերում արդեն պարզել էին Հայկական հարցի լուծման իրենց հավատո հանգանակը, այն է՝ Թուրքիայում հայերի ստրկական «դրությանը վերջ տալու միակ միջոցն է հեղափոխությունը և մենք պետք է այդ անենք»[22]։ Հենց նման կարուկ հարցադրումների պատճառով Մ. Փորթուգալյանի հետ ծագած վեճերը նրանց տարավ առանձին կազմակերպություն և լրագիր ստեղծելու ուղիով։ «Հնչակ» թերթը հենց սկզբից ժխտեց եվրոպական դիվանագիտության պոզիտիվ դերի հնարավորությունը, հակվեց համազգային հավաքական ուժի վրա հենվելու և պայքարելու տեսակետին։ «Հնչակի էջերում թուրքական իրականության ուսումնասիրությունն ու մեկնաբանությունը կատարվում էր գործիմացությամբ, քանի որ թերթը իր շուրջն էր համախմբել ժամանակի հայ ուսանող երիտասարդության լավագույն ուժերը։

Դա մի աննախընթաց նորություն էր, «Հնչակի» մասին գրում էր Լեոն։ Մինչդեռ «Հայաստան» թերթի շուրջը համախմբվել էին հայոց

[21] «Արմենիա», 1889, № 71։
[22] «Արմենիա», 1887, № 89։

խոշոր առևտրական բուրժուազիայի հանձնակատարները, ապա «Հնչակով» ասպարեզ էին իջնում մանր բուրժուազիայի հասարակական-քաղաքական հոսանքի ներկայացուցիչները։ Թերթն անլեզվալ էր, հակացարական և հակասուլթանական, եղբայրացած ռուսական վտարանդիական մամուլի հետ, հանդես էր գալիս հեղափոխության, սոցիալիզմի քարոզով։ Սրանով իսկ սա մի գնահատելի փաստ է, նույնիսկ ոչ հատուկ թուրքահայ հարցի տեսակետից, այլ առհասարակ հայ հասարակական մտքի տեսակետից»[23]։

Ուշագրավ է «Հնչակի» կազմակերպիչներից Ռ. Բերբերյանի հուշագրության հետևյալ բնութագրական տողերը. «Յոթ-ութ ռուսահայ և պարսկահայ մտավորականներ այլևս կորցնելով իրենց հույսը, որ «Արմենիայի» միջոցով կկարողանան ասպարեզ իջնել և հայ հասարակությանը նոր գործելակերպ առաջարկել Հայկական հարցի վերաբերյալ, վերջնականապես վճռում են հիմնել առանձին կուսակցություն, որը պետք է նվիրվեր արևմտահայության ազատագրման գործին, որդեգրելով ռուս նարոդնիկների և ֆրանսիական բլանկիստների գործելակերպը, այն է՝ ապստամբական-ահաբեկչական պատրաստություններ Թուրք կառավարության դեմ. այդ մասնակի ահաբեկչական միջոցները հրահրելով և ուժ տալով թուրքահայ ժողովրդի պահանջներին, խմբակի կարծիքով, մի կողմից հող պիտի պատրաստեին արևմտահայ գավառների բնդհանուր ապստամբության, իսկ մյուս կողմից՝ պիտի ստիպեին եվրոպական մեծ տերություններին միջամտել և պահանջել Թուրք կառավարությունից մի շարք վարչական, քաղաքական և տնտեսական բարենորոգումներ հայկական գավառներում»[24]։

«Հնչակը» քաղաքական բեմահարթակ բարձրացավ Արևմտյան Հայաստանի ազատագրությունն ապստամբական միջոցներով ձեռք բերելու կարգախոսով։ Նա չէր սահմանափակվում Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի բարենորոգումներով, այլ պահանջում էր Արևմտյան Հայաստանին իսկական ազատություն։ «Հնչակը» փառաբանում էր անմահ Արովյանի «Վերքը», որի հարուցած հասարակական հարցերը ամենակենսական հարցերն էին համայն հայության համար և մինչև այսօր էլ «չեն դադարում նույնը լինել և չեն էլ դադարել, մինչև որ հայության ինքնուրույնության գաղափարը, որ այն գրվածքի միտքն է, չիրագործվի հայոց երկրում»։ Թերթը շեշտում էր Ստ. Կազարյանի և Մ. Նալբանդյա-

[23] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 146—148։
[24] Ռ. Բեբերյան, Պատրանքների շրջանից, «Վէմ», Իա, Փարիզ, 1938, էջ 23—24։

նի հեղաբեկիչ դերը հայ հասարակական-քաղաքական կյանքում, ցույց տալիս, որ «նրանց գործի արժանի շարունակողը եղավ Բաֆֆին»[25]։ Բաֆֆու մահվան կապակցությամբ հրապարակումներում «Հնչակը» մեծ վիպասանի և հրապարակախոսի աշխատությունները համարում էր հայության համար նոր ճանապարհ դեպի առաջադիմություն, հայության թարմ ուժերի կանչողն ու ուղեցույցը, նրան դեպի լույս ու բարօրություն առաջնորդողը, արտահայտիչը հասարակական «այն ձգտումների, որոնք Մ. Նալբանդյանի քնարի լարերն են դողացրել, որոնք Գամառ-Քաթիպայի քարոզչական բանաստեղծություններն են արտադրել, որոնցով նրա բեղմնավոր տաղանդը դեռ չէր հագեցել»[26]։

Հնչակյանները արևմտահայության պայքարի հաջողությունը չէին կապում միայն դրսի միջամտության հետ, քանզի «եթե եվրոպական տերությունների միջամտությանը սպասենք և մեր ձեռքերը ծալենք, — ասված էր 1887 թ. 1-ին համարի խմբագրականում, — հայ ժողովուրդն առավել անտանելի թշվառությունների մեջ կխորասուզվի»։ «Հնչակը» անդադար Հայկական հարցի լուծմանը հասնելու միջոց էր հռչակում «հեղափոխությունը, այսինքն պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում, կռիվ մղելով Թուրք տերության դեմ, ժողովրդային ընդհանուր ապստամբության միջոցով»[27]։ Գործունեության միջոցներ էին համաքում քարոզչությունը, ժողովրդի մեջ տարվող համակողմանի բացատրական աշխատանքը և առավել կարևորը՝ ահաբեկչական գործողությունները և ապստամբային գնդերի կազմակերպումը։ Չէր անտեսվում նաև արտաքին ազդակի կամ գործոնի դերը։ Հատկապես նկատի էր առնվում այն, որ Թուրքիայի դեմ որևէ տերության կողմից մղվող պատերազմը պետք է համարել հարմար պահ մերձակա նպատակի իրագործման համար։ Տարաբախտաբար այս պայմանը կյանքում չիրագործվեց, այն անտեսվեց հենց 1890 թվականից (հիշենք 1890 թ. Կարինի և Կ. Պոլսի՝ Գում Գապուի հունիսի և հուլիսի ցույցերն ու ելույթները)։ «Հնչակը» քննադատում էր «Արմենիայի» և հատկապես «Հայաստանի» կողմնորոշումների շեշտադրված անհետևողականությունը, Փորթուգալյանի, Չերազի կոմպրոմիսային տոնը և այլն։ Անդրադառնալով 1888 թ. մարտին Լոնդոնի «Հայկական հայրենասիրաց ընկերության» Անգլիայի վարչապետ Սոլսբերիին հղած հիշատակագրին և նրա պատասխանին,

[25] Տե՛ս «Մշակ», 1888, № 6։
[26] Նույն տեղում։
[27] Հիսնամյակ — Սոց. դեմ. հնչակյան կուսակցություն, Փրովիդենս, ԱՄՆ, 1938, էջ 38։

«Հնչակը» ծաղրում էր քաղաքականորեն ամուլ նման գործելակերպը, քանզի եվրոպական այս կամ այն պետության շահն ինքն է թելադրում նրա անելիքը հայ ժողովրդի վերաբերմամբ, ուստի հիշատակագրեր կազմողներից պահանջում էր՝ «Մի լիզեք ուրիշի ձեռքերը, այլ ձեր հույսը դրեք միմիայն ձեզ վրա»[28]։ Թերթի 1888 թ. 11—12 միացյալ համարում հրատարակվեց կուսակցության ծրագիրը, որը բաղկացած էր երկու՝ «Մոտավոր նպատակ» և «Հեռավոր նպատակ» բաժիններից։ Ծրագիրը սոցիալիզմը համարում էր հեռավոր իդեալ, իսկ Հայկական հարցի լուծումը՝ մոտակա նպատակ։

«Հնչակը» ցավով էր քննադատում «Արմենիա» թերթի քաղաքական ուղեգիծը և նրա տնօրեն Մ. Փորթուգալյանին, «Հայոց հայրենասիրական միության» կանոնադրությունը, «Հայաստան» թերթի «երևելի ազգային դիվանագետներին»։ Մասնավորապես դիմելով վերջիններիս, թերթը գրում էր. «Մի՞թե տակավին կարծում եք, որ եվրոպական տերությունները մարդասիրական զարգացման շնորհիվ կփրկեն հային իր թշվառ դրությունից։ Լուրջ չեք, պարոններ։ Եվրոպական տերություններից ոչ մեկը չունի ձեր անմեղ պարզամտությունը... որ մոռանա իր շահերը... Դրա հաստատությունն է այն փաստը, որ 11 տարվա ընթացքում Եվրոպան աչք է գոցել Թուրքիայի խոստումների կատարման առջև և մերթընդմերթ թղթե հարցապնդում արել Թուրքիայից Հայաստանի դրության մասին՝ բացառապես իր զոհերի թելադրությամբ... Եվրոպան միայն իր շահերի և ոչ մարդասիրական զարգացման տեսակետից է նայում հայկական խնդրի վրա։ Մշո աղետալի անցքերի առթիվ անգլիական պառլամենտում հարցում արին Սոլսբերիից և ինչ եղավ նրա պատասխանը։ Անգլիական սառնությամբ նա ասաց, որ այդ հարցը զուր է բարձրացվում, որ Անգլիան այսօր ունի շատ ուրիշ գործեր, որ, վերջապես, չի հավատում այդ լուրերին, որ նրանք ստուգման կարոտ են և այլն»[29]։

Տարաբախտաբար, հետագայում «Հնչակի» ամբողջ գործունեությունը ծավալվեց հենց Եվրոպայի ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելու նշանաբանով։ «Հնչակի» գործելակերպում փոփոխություն արձանագրվեց ոչ միայն քաղաքական կողմնորոշման, այլև ընթացիկ մարտավարության ուղղությամբ։ Ռ. Բերբերյանն իր հուշերում պատմում է 1890 թ. ժնևում Ավ. Նազարբեկի հետ իր հանդիպման ժամանակ նրա ասած խոսքերը՝ «Հեղափոխությունը Թուրքիայում սկսված է։ Եթե

[28] «Հնչակ», 1888, № 4—5։
[29] «Հնչակ», 1889, № 3։

այս հաջողությամբ ընթանա, շուտով եվրոպական մեծ պետությունները սոիպված պիտի լինին Հայկական հարցով զբաղվելու լրջորեն, իհարկե, ոչ թե բարի զգացմունքներից դրդված դեպի մեզ, այլ իրենց կոշտ ու պրոզաիկ շահերի պատճառով...»[30]։ Մանրբուրժուական իր էությամբ «Հնչակը» այդպես էլ չկարողացավ մտածելակերպի ու գործելակերպի մշտակայուն քաղաքական տեսակետ ձևավորել։ Արևմտահայ երիտասարդությանն առաջնորդելու համար «երկիր» գնացին Գաբրիել Կաֆյանը (Շմավոն ծածկանունով), Բարսեղ Զաքարյանը, Մուրադը (Համբարձում Բոյաջյան) և ուրիշներ, որոնք լայն աշխատանք ծավալեցին։ Կատարվեցին առաջին ահաբեկումները։ Յյուրիխում 1889 թ. ապրիլին ձերբակալվեց՝ հատուկ հանձնարարականով այստեղ եկած Գ. Կաֆյանը, որը մեղադրվում էր ռումբեր պատրաստելու և Ռուսաստան առաքելու մեջ։ Չնայած մեղադրանքը չապացուցվեց, և նա ազատ արձակվեց, սակայն կատարված իրողությունը հսկայական տագնապ առաջացրեցին Բոսֆորի ափերին և անդորրը կորցրած սուլթան Աբդուլ Համիդը դիմեց ամենադաժան միջոցների։ Մի շարք հեղափոխականներ գնդակահարվեցին, կալանավորվեցին հարյուրավոր ըմբոստ գործիչներ։

Այսպիսով, հայ ազգային-ազատագրական պայքարի հնչակյան տեսությունը կտրված էր իրականությունից, չափազանց խորն էր հակասությունը խոսքի, վերամբարձ տոնի և ձեռնարկված գործողությունների միջև։ Իրողություն էր, որ սուլթանական կառավարությունը իր գործողություններով շատ առաջ էր անցել հայ ազատագրական մտքի հակաթուրքական նախապատրաստությունից։ Ազգային-ազատագրական միաձույլ ընդհանրական շարժում ստեղծել կարողանալու համար ոչ միայն գոյություն չուներ նյութական ամուր բազա, այլև արևմտահայ զանգվածի մոտ տակավին խոր մրափի մեջ էր համազգային ինքնապաշտպանության բնազդը[31]։

Հաջողության չհասնելով թուրքահպատակ մյուս ժողովուրդների հետ դաշինք ստեղծելու իրենց ջանքերի մեջ, արևմտահայության ազատագրության շահերից գործող կուսակցությունները ակամա խորացնում էին անհամաձայնության անդունդը։ Բացասական դեր կատարեց տարիներ մշակվող այն մտածելակերպը, որի համակարգն ընդգրկում էր կրոնական և ռասայական ընդհանրությունը եվրոպական և հայ ժողովրդի միջև, այդ ընդհանրությունը հակադրում թուրքերին և վերջիններիս ձեռքին գործիք դարձած քրդերին ընդդեմ հայերի։ Այս տեսակետի

[30] Ի. Բերբերյան, Պատրանքների շրջանից, «Վէմ», ԻԱ, Փարիզ, 1938, էջ 18—19։
[31] Տե՛ս Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 103—104։

արարողներն ու կազմակերպիչներն անտեսում էին տնտեսական և քաղաքական այն ազդակները, որ ժամանակ առ ժամանակ Եվրոպան դարձնում էին Հայկական հարցի պաշտպան։ Մոռացության էին տրվում այն խթանները, որ քրիստոնեական Գերմանիային դարձրել էին մահմեդական Թուրքիայի պաշտպան, թեև նրանց միջև չկային ոչ ազգային և ոչ էլ կրոնական, աշխարհագրական կամ պատմական ընդհանրություն։ Այս առումով ևս խոցելի էր հնչակյանների գործունեությունը։ Արևմտահայերի ազատագրության միակ ելքը համարելով ապստամբությունը, որը իրականացվելու էր՝ հաշվի առնելով այն իրավիճակը, որ հայերն ամենուրեք ապրում էին մեջընդմեջ, շրջապատված թուրք, քուրդ և այլ ժողովուրդներով, նրանք առաջարկում էին մյուս ժողովուրդների պայքարից անջատ և հայերի համար առանձին բարենորոգումներ պահանջող մի ծրագիր, որը գործնականում պատրանքային, իդեալիստական էր։ Իրեն սոցիալիստ կոչող Ռ. Խանազատյանը 1891 թ. ժնևից մեկնում է Երուսաղեմ, սուլթանի կողմից այնտեղ աքսորված Մ. Խրիմյանին Եվրոպա փոխադրելու և ապա Արևմտյան Հայաստանում նրան հեղափոխական շարժման գլուխ կանգնեցնելու նպատակով[32]։ Հետագայում, հնչակյան կուսակցությունից հեռանալուց հետո, Խանազատը իրենց այդ գործունեությունը համարեց «երիտասարդական մոլորություն»։ Ինքը՝ Խրիմյանը, այդ ծրագիրը համարեց արկածախնդրություն։

Երբ 1890 թ. հունիսին տեղի ունեցած էրզրումի հայերի և թուրքական զորքի ընդհարումը Եվրոպական դիվանագետներն անտարբերությամբ ընդունեցին, հնչակյանները Ռ. Խանազատին ուղարկել էին Կ. Պոլիս՝ ցույց կազմակերպելու հենց դեսպանների հայացքի առջև։ Դում-Դափուի ցույցը տեղի ունեցավ 1890 թ. հուլիսի 15-ին, բայց Խանազատը հեռացել էր Կ. Պոլսից նախքան այդ և այն սկսվել էր նրա բացակայությամբ։ Ցույցը սուլթանին նոր առիթ տվեց ուժեղացնելու հայկական հալածանքները և ջարդերը։ 1890-ական թվականների կոտորածները, ազգակործան աննախադեպ արտագաղթը խոր պառակտում առաջացրեց հնչակյան կուսակցության շարքերում։ 1896 թ. Լոնդոնում կայացած հնչակյանների ընդհանուր ժողովում արևմտահայ պատգամավորների մեծ մասը լքեց կուսակցության շարքերը։ Անցնելով լիբերալ «բարենորոգումների» կողմը, հնչակյան այդ պատգամավորներն անջատվեցին Ավ. Նազարբեկի գլխավորած «հին» հնչակյաններից՝ հանդես գալով որպես «վերակազմյալ» հնչակյանների կուսակցություն։ 1897 թ. Արփ. Արփիարյանի նախաձեռնությամբ «վերակազմյալները»

[32] Տե՛ս Ռ. Խանազատ, Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908, էջ 30։

սկսեցին հրատարակել «Մարտ» թերթը, իսկ 1898-ից Լոնդոնում՝ «Նոր կյանքը»։ Իրենց թերթերում նրանք արևմտահայության ազատագրության հարցը կապում էին միայն խնամքով նախապատրաստված համազգային հեղափոխության հետ, գտնելով, որ անհատական քաջագործությունները, սակավաթիվ խմբերի ձեռնարկները հեղափոխություն չեն և դրանք են մեծամեծ չարիքներ պատճառել ազգին[33]։

«Վերակազմյալ» հնչակյանները համազգային ուժերի համախմբման գաղափարի տակ նկատի ունեին միայն արևմտահայությանը, իսկ արևելահայերի միջամտությունը համարում էին վնասակար։

Եվրոպական տերությունների օգնությունը համարելով անհրաժեշտ արևմտահայության ազատագրության համար, «վերակազմյալ» հնչակյանները միաժամանակ կարևորում էին ազգային եռանդուն գործունեության դերը, առանց որի հայկական դատը «կորսված» պիտի համարել, չէ՞ որ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդները իրենք են ձեռնարկել իրենց ազատագրության գործը, իսկ եվրոպան աջակցության է հասել «միշտ վերջին պահուն»։

Վերակազմյալները հավատացած էին, որ եվրոպական տերությունները ի վերջո պետք է Թուրքիան մասնատեն կամ նրանում մտցնեն վարչական բարենորոգումներ, ուստի հայերին կմնա «բավական արթուն և խելացի գտնվիլ, որպեսզի ոչ միայն վատթար վարչության մը լուծեն ազատինք, այլև օտարազգի դրամատերերուն ստրուկներն ալ չը դառնանք»։ Չպետք է կրկնել անցյալի սխալները։ Կանգ առնելով Հայկական հարցի լուծման գործում Ռուսաստանի դերի վրա, Արիփ. Արփիարյանի խմբագրած «Նոր կյանք» ամսագիրը վերջինիս կողմից Արևմտյան Հայաստանի գրավման մեջ ոչ մի վատ բան չի տեսնում, արևմտահայերը կորուստ չեն ունենա։ Սակայն Թուրքիան շատ բան կկորցնի։ Եվ որպեսզի չկորցնի, պետք է վերափոխվի, պետք է ապակենտրոնացվի և բոլոր ժողովուրդներին տա ինքնավարություն[34]։

«Վերակազմյալ» հնչակյանները Թուրքիայից Արևմտյան Հայաստանի անջատման հարց չէին դնում նաև 1905—1907 թթ. հեղաբեկիչ տարիներին։ Անդրադառնալով Հայկական հարցի էությանը և նրա լուծման եղանակներին, 1907 թ. ապրիլից Բոստոնում լույս տեսնող «Վերակազմյալ» հնչակյանների «Ազգ» շաբաթաթերթը գրում էր, որ արտաքին միջամտություններից հրաժարվելը «Թուրքահայ ազատագրական շարժումին գերեզմանաքարը դնել կը նշանակե, ազգային ինքնատպություն մը պարզապես... Առանց արտաքին միջամտության բան մի չի կա՝ արևուն տակ, որ կարենա բարեփոխել հայերուն անտանելի վիճակը Թուրքիո մեջ...»[35]։

Իսկ ե՞րբ կլինի արտաքին միջամտությունը հարցին, թերթը պատասխանում էր՝ այն ժամանակ, երբ կլինի ազգային կուռ, մտածված և հետևողական ներքին և արտաքին քաղաքականություն, երբ «Կպայքի հզորապես կազմակերպված... ապստամբությունը»[36]։

Հնչակյանների հին՝ Նազարբեկի կողմից ղեկավարվող թևը «յուր գործունեության եղանակը համապատասխան... պահանջներին» ենթարկելու անհրաժեշտությունից ելնելով, 1897 թվականից հրաժարվում է «ամեն տեսակ մանր» ցույցերից ու բռնկումներից, մասնակի շարժումներից, ազգային փրկության գործի նկատմամբ «թեթևամիտ վերաբերմունքից» և կոչ է անում կանգնել «միայն մեկ ուղու վրա, առանց շեղումների, առանց ուժերի մասնակի սպառումների — ապստամբություն, որ պետք է կատարվի առավել կամ նվազ ընդարձակ ծավալով, ներքին և մանավանդ արտաքին քաղաքական դրության որոշ բարեհաջող ժամանակին»[37]։

Հին հնչակյանները շարունակում էին խիստ բննադատության ենթարկել իմպերիալիստական տերությունների երկերեսանի և շահամոլ քաղաքականությունը, այդ քաղաքականության ցինիզմը[38]։

Հնչակյան կուսակցությունը համագործակցության չգնաց երիտթուրքերի հետ։ Ավելի ճիշտ՝ սկզբում փորձեցին իթթիհադի մեջ տեսնել «տանջվող ժողովրդի ցավերի հարազատ թարգմանին», բայց մոտիկից ծանոթանալով երիտթուրքերի գաղափարախոսության պանթուրքական ուղղությանն ու բովանդակությանը, հնչակյանները հրաժարվեցին որևէ բանակցություններ վարել նրանց հետ։

«...Միայն ս. դ. հնչակյան կուսակցությունն էր, որ պահանջեց ինքնավար Հայաստան։ Մյուս կուսակցություններն այդ պահանջը ցնորական նկատեցին և մնացին բարենորոգումների կողմնակից, մանավանդ որ Հ. Հ. Դաշնակցությունը այդ միջոցին ձեռք տված էր իթթիհադին»[39]։

Բարենորոգումները համարելով խաբեություն, երիտթուրքերի նկատմամբ վստահություն չտածող հնչակյանների մեծ մասը գտնում էր, որ չպետք է ապակողմնորոշվել թուրքական հուսադրումներով և դրա-

[33] Տե՛ս «Մարտ», 1897, № 6։
[34] Տե՛ս «Նոր կյանք», 1898, № 4, էջ 50։
[35] «Ազգ», 1908, մայիսի 9։
[36] Նույն տեղում, հունիսի 6։
[37] «Հնչակ», 1897, № 10։
[38] Տե՛ս «Վերածնունդ», 1903, № 6։
[39] Էդ. Զոբուրյան, Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920, № 61։

նով հարված հասցնել ինքնապաշտպանության առաջնահերթ խնդրին։ Օրինակ, Փարամազը (Մատթեոս Սարգսյան) և նրա համախոհները տարիներ շարունակ Թուրքական հեղձուցիչ իրականության պայմաններում փորձեցին ազգությունների համագործակցության գաղափարն արմատավորել, բայց ապարդյուն... Սակայն համոզվելով իրենց գաղափարի իրագործման նկատմամբ օսմանյան քաղաքական ուժերի բռնած ազդայնական, շովինիստական դիրքի մեջ, կանխազգալով արևմտահայության գլխին կանգնած մոտալուտ վտանգը, նորից առաջնային համարեցին արևմտահայության ինքնապաշտպանությունը։ Չհավատալ իթթիհադին և հույս չդնել նրա վրա՝ այս էր հնչակյանների պահանջը, քանզի համոզված էին, որ երիտթուրքերը ոչ մի բարենորոգում չէին իրագործելու և ջանալու էին արևմտահայությանը բնաջնջել և իսլամական միատարր պետություն ստեղծել։ «Նկատելով, որ թուրք նացիոնալիստները (ազգայնականները), — ասված է Կ. Պոլսում 1909 թ. հունվիսին իր աշխատանքն սկսած հնչակյան կուսակցության 6-րդ ընդհանուր պատգամավորական ժողովում Թուրքական նացիոնալիզմի մասին ընդունված բանաձևում, — և այդ նացիոնալիզմի արտահայտիչ քաղաքական գործիչները (իմա՝ «Իթթիհադ վե թերագգ») գիտակցաբար ձգտում են ապազգայնացնել Թուրքիո ազգությունները և ձուլել զանոնք թուրք ազգության մեջ՝ օսմանցի ընդհանուր անվան տակ, ժողովը ժրտելով կժխտի ապազգայնացման այդ գաղափարը և կվճռե պայքարել այդ ուղղության դեմ, ընդունելով ազգերու անկաշկանդ ու ազատ զարգացման և ինքնորոշման իրավունքը»[40]։ Նույն ժողովում Փարամազը կոչ էր անում չհավատալ թուրքերի մեղրածոր խոսքերին։ Եվ ոչ միայն։ Հնչակյան գործիչը կարծում էր, որ «հազար նուբար փաշայից և Սազոնովից թանկ արժե լեռան ծայրին հրավառած մեկ խարույկը»[41]։

Հնչակյան գործիչներից շատերն Առաջին աշխարհամարտին նախորդած տարիներին քարոզչական և կազմակերպչական լայն աշխատանք էին տանում Արևմտյան Հայաստանի բոլոր շրջաններում, Կ. Պոլսում և Կիլիկիայում, հակադրվում էին երիտթուրքական քարոզչներին և ցույց տալիս, որ օսմանյան ազգություն չկա, որ կայսրության ազգերին իրար դեմ գրգռողն ու զինողը պանիսլամիզմն ու պանթուրքիզմը դրող պարզած սուլթանական վերնախավն ու երիտթուրքերն են։

Հայտնի է, որ «Հնչակի» ղեկավարությունը 1911 թ. մերձեցավ Սա-

[40] Հմայակ Աւամյանց, Վերածնունդի երկունքը, Պատմություն հնչակյան կուսակցության, հ. Ա, Կ. Պոլիս, 1918, էջ 42։

[41] Փարամազ (Մատթեոս Սարգսյան), Կյանքն ու գործունեությունը, Փրովիդենս, 1954, էջ 63։

պահէդդինի գլխավորած Իթթիւաֆ (Հյուրիեթ-վե իթթիւաֆ, ազատություն և համաձայնություն) ընդդիմադիր կուսակցության հետ՝ իթթիհադին հակադրվող այդ քաղաքական ուժից օգուտ ստանալու ակնկալությամբ։ Սապահ-Գյուլյանը «Պատասխանատուները» գրքում վկայում է, որ երիտթուրքերի հետ համագործակցության անհեռանկարայնության մասին իրենց հայտնել է նաև Սապահէդդինը։ «Եթե իթթիհադը ուժ ամիս կառավարության գլուխ մնա և պետական գործերը ինքը վարի, լավ համոզված եղեք, — ասել է Սապահէդդինը, — որ բաղկացուցիչ բոլոր ազգերի և մասնավորապես հայերի ապագան ջախջախված է, վերջացած է»[42]։ Սապահէդդինը խորհուրդ էր տվել մերձենալ ՀՀԴ-ի հետ, փոխըմբռնման հասնել կանխելու համար արևմտահայությանն սպառնացող վտանգը։ Կացությունից դուրս գալու ելքը իթթիհադի հակառակորդը տեսնում էր համատեղ ուժերով Աբդուլ Համիդին և երիտթուրքերին միասին կործանելու մեջ։ Հնչակյանները կապեր հաստատեցին ալբանացի գործիչների և երիտասարդ արաբների հետ։ Հնչակյանները վտանգավոր ուժ էին դառնում երիտթուրքերի քաղաքականության ճանապարհին։ Իթթիհադական լրտեսներն աստիճանաբար շրջափակում էին հնչակյանների գործողությունները։ Իթթիհադի կենտրոնը գաղտնի հրահանգներ էր իջեցնում իր մասնաճյուղերին՝ ծածուկ, առանց աղմուկ հանելու հսկել հայկական կազմակերպությունների գործունեությանը[43]։

1913 թվականին «Հնչակի» ղեկավարությունը Փարիզում տպագրեց և եվրոպական երկրների կառավարություններին ու ժողովուրդներին հղեց արևմտահայությանն օգնություն և պաշտպանություն հայցող մի կոչ։ Դա այն կոչն էր, որ երկու տարի անց, 1915 թվականին, դարձավ հընչակյան 20 գործիչների դեմ սարքված դատավարության ընթացքում երևան բերված «ամենալուրջ» մեղադրանքը։ Երիտթուրքերն այդ կոչը ընութագրեցին որպես դավաճանություն օսմանյան հայրենիքին, որից հետո ամբողջ երկրով մեկ հնչակյան գործիչները ձերբակալվեցին և կազմակերպությունները ցրվեցին։ «Ինքնօրեն Հայաստան» կազմելու փորձի մեջ ամբաստանված հնչակյան գործիչները կախաղան հանվեցին 1915 թ. հունիսին Կ. Պոլսի սուլթան Բայազեդի հրապարակում։

Անդրկովկասում ծվարած հնչակյանների մնացորդները լոյալ դիրք բռնեցին ցարիզմի ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամբ, իսկ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո իրենց հա-

[42] Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, Փրովիդենս, 1916, էջ 220։

[43] Մ. Սևոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948, էջ 222։

վատարմությունն ու աջակցությունը հայանեցին ժամանակավոր կառավարությանը։

Արդ տեսնենք, թե հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրների, Հայկական հարցի լուծման ուղիների շուրջ ինչ դիրքորոշում ուներ հայ կուսակցություններից ամենաժողովրդականը՝ ՀՀԴ-ն։

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ծրագրային սկզբունքները մշակվել են հիմնականում 1890—1894 թվականներին։ Կուսակցության գործունեության սկզբնական շրջանում առաջնահերթ նպատակ էր համարվում ապստամբության միջոցով «Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն», իսկ հետագայում ՀՀԴ-ն հրաժարվեց այդ պահանջից և սահմանափակվեց ապագա սահմանադրական Թուրքիայում Արևմտյան Հայաստանի ինքնավարության կամ բարենորոգումների պահանջով։ Չնայած կուսակցության քաղաքական բերան «Դրոշակ» իր առաջնորդողները բեռնավորում էր սոցիալական տերմինների բառապաշարով, սակայն այդ ևս չէր որակափոխում նրա էկլեկտիկ գործելակերպը։ ՀՀԴ-ն կայուն ծրագրային ուղեգիծ չուներ նաև Եվրոպայի աջակցության հարցում։ Նա մերթ պաշտպանում էր Ն. Վարժապետյանի ծրագիրը, մերթ էլ հանդես գալիս նրանց դեմ, ովքեր ուզում էին դիվանագիտությամբ ընթացք տալ Հայկական հարցին, մերթ հուսալի ելքը «ժողովրդական ապստամբությունն է», մերթ էլ «պարտիզանական կամ հայդուկային կռվի եղանակները», որովհետև այդ է սովորեցնում «բուլղարների, իտալացիների, հույների պատմական օրինակը...»[44]։

Սկզբում խիստ բացասական ընդունեցին, քննադատության ենթարկեցին տերությունների «Մայիսյան բարենորոգումների նախագիծը», բայց հետո եռանդուն պայքար էին տանում նրա կենսագործման համար։ 1896 թ. կուսակցությունը հայտարարում էր արդեն, որ առանց տերությունների գործուն միջամտության «Հայկական հարցը չի կարող որոշակի ելք ստանալ գործի բուն ասպարեզում՝ Տաճկահայաստանում»[45]։

1900 թվականին տպագրված «Ամբոխային տրամաբանություն» իր աշխատության մեջ ՀՀԴ-ի ղեկավարներից մեկը՝ Ք. Միքայելյանը, փորձեց պատասխանել մի շարք հարցերի։ Նախ՝ 1890-ական թվականներին հայ պահպանողական շրջաններում, հատկապես արևմտահայ հատվածի սուլթանամերձ միջավայրում, ամուր նստած էր և անարգել քարոզվում էր այն տեսակետը, թե իբր հայկական կոտորածների պատճառները պետք է որոնել հայ ազգային կուսակցությունների գործունեության և նրանց կազմակերպած հակաօսմանական ցույցերի մեջ։ Վերլուծելով Թուրքիայի կողմից քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ տարվող ազգային քաղաքականության վայրագ խարականության փաստերը և ամփոփելով այդ ուղղությամբ անգլիացիներ Մակ Կոլի, Բրայսի և Դիլլոնի, ամերիկացի Գրինի, ռուս Կոմարովսկու, գերմանացի Լեփսիուսի և բելգիացի Ռոլեն Ժեկմենի կարծիքները, Ք. Միքայելյանը հայկական կոտորածների պատճառներն ու նպատակները տեսնում էր. առաջին՝ հավասար և ազատ պայմաններում Թուրքերն անկարող են մրցել հայերի հետ, որոնք գերազանցում են իրենց աճով, մշակույթով և տնտեսական առաջադիմությամբ, երկրորդ՝ մտավոր-բարոյական վերածննդի հենքի վրա բարձրացած հայկական շարժումը և Հայկական հարցը տանում է դեպի Թուրքիայի ամբողջականության չլատում, երրորդ՝ հայկական նահանգները սահմանակից են Ռուսաստանին, ուրեմն բարենորոգումների ծրագրի իրականացումը կարող է առիթ տալ ռուսների միջամտության և հայկական նահանգների կորստյան և չորրորդ՝ եվրոպական դիվանագիտությունը իր հասամոլ ու ոճրագործ ընթացքով մեծ մարդասպանի համար հնարավորություն ապահովեց կոտորածների անկաշկանդ իրագործմանը։ Բնական է, եթե կային հայկական կոտորածների պատճառները, առիթները միշտ կգտնվին[46]։

Ք. Միքայելյանը Հայկական հարցի լուծման ելքը տեսնում էր ընդհանուր ապստամբության մեջ, բայց միաժամանակ նշում էր, որ այդ ապստամբությունը կառաջանա ցույցեր, արշավանքներ կազմակերպելով, խմբակային կռիվներ մղելով։ Նա մեծ նշանակություն էր տալիս հատկապես մայրաքաղաքում կազմակերպվելիք ցույցերին ու կռիվներին, քանի որ այստեղ նստած օտարերկրյա դեսպանները ականատես կլինեն իրողություններին, կիմանան պատճառները, կհաղորդեն իրենց կառավարություններին և սրանք էլ կոնկրետ միջամտություն կձեռնարկեն։ Այստեղից էլ Ք. Միքայելյանի և ՀՀԴ-ի մյուս ղեկավար գործիչների՝ Հայկական հարցի լուծման գործում եվրոպական մեծ տերությունների միջամտությունը կարևորելու զգեշավոր կռվանը։ Ք. Միքայելյանը գտնում էր, որ չպետք է ընկճվել անհաջողություններից, հարկավոր է վարել տևական համառ կռիվներ, ստեղծել հեղափոխական կացություն, «միշտ ունենալով աչքի առաջ երրորդ ազդակի միջամտությունը... եվրոպական ազդակի»։ Դաշնակցության ղեկավարությունը

[44] Տե՛ս Ա. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, էջ 214—215։
[45] Նույն տեղում, էջ 223։

[46] Տե՛ս Ք. Միքայելյան, Հեղափոխականի մտքերը, Երևան, 1990, էջ 24—39։

հասու չեղավ այն գիտակցության, որ Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ծագած հայկական կոիվները կամ ելույթները իրենց վրա հրավիրելով Եվրոպայի ուշադրությունը, ստիպելով նրան միջամտելու կայսրության ներքին գործերին, բնավ չեն լուծի Հայկական հարցը, քանի որ տերությունները նախ և առաջ կանգնած էին Թուրքիայի մեջքին և հանդես էին գալիս նրա ամբողջականության պահպանման դիրքերից։ Ծանր, բարդ և հակասական էր ժամանակաշրջանը։ Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը Արևմուտքի և Արևելքի շատ ազգերի պատմական երթից ուշացած հայ ժողովրդի ստրկական կացության ընդհանուր մակարդակից էր առնում հանուն ազատության պայքարի ռազմավարության ու մարտավարության իր ձևերն ու եղանակները։ Բնական է, որ ժամանակաշրջանը և եվրոպական կապիտալի հարվածներին ենթակա թուրքական միջավայրը տեսության ու գործելաձևի ավելի համարձակ լուծումներ չէին կարող առաջադրել հայ գործիչներին։

Հարկավ, կուսակցությունները մեղավոր չեն «որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորույն է, ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել, բայց կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրան ազատության ճանապարհով»[47]։

Այս խորհուրդն անանց պատմագիտական որակ է ստանում հատկապես, երբ քննական հայացքի տակ ենք առնում երիտթուրքերի հետ ՀՀԴ-ի հարաբերությունների ու համագործակցության հարցը։ Հենց անցյալի գործիչներից շատերն են ցավալի համարել այն իրողությունը, որ դանց առնելով արևմտահայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի վերաբերմունքի ճշտումը, դրա նկատմամբ հեռահար մարտավարության և ռազմավարության մշակումը, ՀՀԴ-ի ղեկավարությունը 20-րդ դարասկզբին իթթիհադի հետ իշխանությունը բաժանելու և իրավունքներ նվաճելու դիրքին էին հավակնում։ Ինչո՞ւ սուլթանական բռնատիրության դեմ երկարատև պայքարի ծառայությամբ հպարտ այդ կուսակցությունը անհիմն լավատեսությամբ իթթիհադի հետ համագործակցության ճանապարհը հարդարեց, գործարք կնքեց օսմանյան հասարակության ամենապորտաբույծ դասակարգերի ու խավերի շահերի արտահայտիչ, հակահայկական ծրագրերի հեղինակ Ահմեդ Ռիզայի գլխավորած կուսակցության հետ։ Պատմության արձանագրած վերջին ժամանակաշրջանի փաստերն այդ համագործակցության օգտին չէին խոսում։

[47] Ստ. Շահումյան, *Երկ*, հ. 3, Երևան, 1978, էջ 48։

Հայտնի էին արդեն, որ օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման մտահոգությամբ տարված առաջին թուրք սահմանադրականները ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումներին ամբողջ ուժով հակադրել էին օսմանյան համընդհանուր հայրենասիրության և միասնական հայրենիքի գաղափարը։ «Միասնական հայրենիք՝ միասնական ժողովրդով» Միդհատ փաշայի պարզած կարգախոսը ծրագրային դրույթ էր դարձել բոլոր թուրք ազգայնականների համար։ Դաղտնիք չէր նաև Քյամիլ փաշայի հայատյաց մտորումները, որ նա թղթին էր հանձնել 1879 թվականին և Մերենցի ջանքերով նույն թվականին՝ մեկնաբանություններով տպագրվել Բիֆլիսահայ մամուլում։ 1890-ական թվականների կեսերից Փարիզում հրատարակվող «Մեշվերեթ» և «Շուրա-ի ումմեթ» թերթերում տեսականորեն հիմնավորվում էր երիտթուրքերի քաղաքական նպատակները, որոնց թվում նաև քարոզվում էր՝ սաղմի մեջ խեղդել արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը և կանխել հայկական պետականության վերականգնման վտանգը։

Անտեսելով պանթուրքական ծրագիր որոճող վերոհիշյալ և ժամանակի մամուլի նմանակերպ այլևայլ հրապարակումները, երիտթուրքական հեղաշրջումից հետո ՀՀԴ-ի գաղափարախոս ու պաշտոնական պատմաբան Միքայել Վարանդյանը գրում էր, թե «1908 թվականը ոսկե տառերով կարձանագրվի համաշխարհային պատմության էջերում։ Նոր հորիզոններ բացվեցան Ազատության գաղափարի առջև, մարդկային նոր զանգվածներ վեր բարձրացան մրափի և անեության անդունդներից և գրկեցին համամարդկային քաղաքակրթության դրոշը։ ...«Իթթիհադը» չի բավականանում ֆրանսիական մեծ հեղափոխության երրորդության նշանաբանով. «Ազատություն», «Հավասարություն» և «Եղբայրություն» շարանին նա ավելացնում է «Արդարություն»»[48]։

ՀՀԴ-ն հանդես եկավ Իթթիհադի հետ անվերապահորեն համագործակցելու և որդեգրած ազգային-ազատագրական պայքարից հրաժարվելու կարգախոսով, հայտարարելով, որ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության անքակտելի բաղադրամասն է։ 1908 թ. սեպտեմբերի 1-ին այսպես կոչված «ՀՀԴ ներկայացուցիչներու խորհուրդը» մի փաստաթուղթ ներկայացրեց առաջիկայում գումարվելիք օսմանյան խորհրդարանին, ուր հայտարարվում էր, որ «Թուրքաց Հայաստանը կը

[48] Միխայել Վարանդյան, *Վերածնված հայրենիքը և մեր դերը*, Ժնև, 1910, էջ 91—94։

կազմի կայսրության անբաժան մասը...»[49]։ Դրանից առաջ, 1907 թ. մայիսին Վիեննայում տեղի ունեցած իր 4-րդ ընդհանուր ժողովում (համագումարում) ՀՀԴ-ն ի լուր աշխարհի հայտարարել էր, որ կուսակցությունը կայսրությունում երբեք չի ունեցել և չունի անջատողական ձգտումներ, որ նա մերժում է Արևմտյան Հայաստանի անկախության գաղափարը[50]։ Դաշնակցության ղեկավար գործիչները պնդում և համոզում էին, որ մենք բոլորս օսմանցիներ ենք և պետք է պայքարենք «հանուն հասարակաց հայրենիքի» ամբողջության պահպանման և ամրապնդման։ Այս է իրողությունը։ Սակայն իրողություն և ուշագրավ է այն, որ երբ երիտթուրքական «հեղափոխության» մեղրամիսի օրերին ՀՀԴ-ի գործիչներից շատերը, օրինակ էդ. Ակնունին (Խաչատուր Մալումյան), Ատոմը (Հարություն Շահրիկյան), Կոմսը (Վահան Փափազյան), Գարեգին Խաժակը (Գարեգին Զագալյան), Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան) և ուրիշներ, անվերապահորեն հավատ էին ընծայում թուրքական կեղծապատիր խոստումներին և խանդավառության մեջ հորդորում էին արևմտահայերին այլևս որևէ հիշատակություն չանել Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի մասին, դադարեցնել հակաթուրքական քարոզչությունը, թուրքերի հետ միասնաբար լծվել կայսրության առաջընթացի ապահովման գործին, այդ նույն ժամանակ քիչ չէին նաև երիտթուրքերի խոսքն ու գործը ռեալիստորեն գնահատող մտածողները։ Այսպես, օրինակ, Արշ. Զոպանյանը գրում է. «Այն օրը, որ դաշնակցության ուժերուն աջակցության շնորհիվ թուրքական արդի ռեժիմը տապալվի և սահմանադրություն մը հաստատվի, ժեռնթուրքերը ոչ մեկ ազգի գոյության պիտի ընդունին Տաճկաստանի մեջ, բացի օսմանյան ազգին և նույնիսկ հայ արյունով հաստատված այդ սահմանադրությունը պիտի իրր զենք գործածեն «Հայկական դատը» վերջնականապես սպանելու համար»[51]։

Դաշնակցության այս դիրքորոշումը Արշ. Զոպանյանը համարում էր ազգային մտածողության խաթարման վերջին դրվագ, քանզի ազատագրական պայքարից հրաժարվելով հայտարարում էր, թե «հայ տարրը օսմանյան կայսրության շրջանակներում կարող է իրոք բարգավաճել միայն այն պայմանով, որ նրա ազատությունը կցորդվի բոլոր շրջապատող ժողովուրդների, ամբողջ Թուրքիայի ազատության և նորմալ, բնականոն առաջադիմությանը»[52]։

[49] Նյութեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Ա հատոր, Բեյրութ (Թ. Ա.), էջ 176։
[50] Տե՛ս «Դրոշակ», 1907, № 5, էջ 73։
[51] «Անահիտ», 1908, № 1—4, էջ 46։
[52] «Դրոշակ», 1909, № 1, էջ 7։

Թուրքական իրականության սոցիալ-քաղաքական պայմաններն անտեսող այս վերամբարձ ոճը ՀՀԴ-ին ուղեկցեց ընդհուպ մինչև 1913 թվականը։ 1909 թ. Ադանայի կոտորածից անմիջապես հետո դաշնակցության և իթթիհադի միջև կայացած համագործակցության վերաբերյալ փաստաթուղթը տպագրվում է «Ազատամարտ» թերթում, ուր ընթերցողներից թաքցվել էր «ընդհանուր ձուլման և միաբան գործակցության մասին» կարևոր կետը, իսկ Միք. Վարանդյանը «Հորիզոնում» խոստովանում էր, թե «Մենք մեղանչել ենք»[53]։ ՀՀԴ-ի գործիչները շատ ուշ հասկացան բնական խելքի ու կայուն համոզմունքի տեր Անդրանիկի թևավոր խոսքերը. «Ոչ մէկ թուրքի չեմ կրնար հավատալ, եթէ անիկա երկնքէն իսկ իջած ըլլայ»[54]։ Անդրանիկը ոչ միայն խանդավառ չէր երիտթուրքերի հաղթանակով, այլև դրա մեջ զուշակում էր տխուր մի գալիք։ Նա ճիշտ էր կռահում իրադարձությունների հետագա ընթացքը։ Անդրանիկն ասում էր, որ ինքը չի հավատում երիտթուրքերի խոստացած ազատություններին, որ օսմանյան սահմանադրությունը մի խայծ է միամիտներին մոլորեցնելու և խաբելու համար։ Նա գտնում էր, որ կատարվածը հեղափոխություն չէ, այլ մի աչքակապություն, որ Օսմանյան կայսրության տկարության բոլոր պահերին կատարվել են նման բաղում խեղկատակություններ, որ դրանք փորձված միջոցներ են վանելու Եվրոպայի հերթական միջամտության վտանգը։ Պաշտպանելով իր համոզմունքները, Անդրանիկը հայ քաղաքական գործիչներին նախազգուշացնում էր երիտթուրքերի հետ մերձեցման վտանգավոր հետևանքները, խորհուրդ էր տալիս իրենց պահել հեռավորության վրա, չբացահայտել կուսակցության և այլ կարգի գաղտնիքները։ Նա կարճատեսություն էր համարում նաև կուսակցության Արևմտյան բյուրոն մայրաքաղաք տեղափոխելը[55]։

ՀՀԴ-ի անհեռատես քաղաքական ընթացքի հետևանքով, հետագայում գրել է Կ. Սասունին, «Թուրքահայաստանի և ամբողջ Թուրքիո մեջ հայությունը կկծկվեր ինքնապաշտպանության վարագույրին ետև, սպասողական և անգեն»[56]։ Սա շարքային դաշնակցականի խոստովանություն չէր, այլ կուսակցության տեսաբանի, որին դուրին չէ առարկել։

[53] Տե՛ս Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 28։
[54] Արսեն Մարմարեան, Ջոր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 187։
[55] Տե՛ս Հրաչիկ Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Երևան, 1996, էջ 318—319։
[56] Կ. Սասունի, Թուրքահայաստանը և աշխարհամարտի րնթացքին (1914—1918), Բեյրութ, էջ 30։

ՀՀԴ-ի ղեկավար գործիչներից մեկ ուրիշը՝ Կարո Փաստրմաճյանը հետագայում անդրադառնալով կուսակցության ղեկավարության այդ քայլին, ասել էր. «Օսմանյան սահմանադրության օրերուն, երբ մենք՝ հեղափոխականներս Կ. Պոլիս կը վազեինք իրարու ետևէ, Անդրանիկ մեզի ամենուս հետ կը վիճեր, կը խրատեր ու կը թելադրեր, որ Կ. Պոլիս չերթանք և կըսեր։ «Մեզի բոլորիս համար թուրքերը մեծ և խոշոր թակարդ մը լարած են և մեզ ամենքս ալ մեջը պիտի ձգեն», բայց մենք անտեսեցինք անոր խրատները և «հոռետես» մակդիրով որակեցինք զայն և գացինք Կ. Պոլիս և գավառները»[57]։ Կ. Սասունին նենգափոխում է իրողությունը, երբ ՀՀԴ-ի և իթթիհադի գործակցությունը խզված էր համարում 1911 թվականի աշնանը[58]։ Տարաբախտաբար այդպես չէ, քանզի դեռ երկար շարունակվեց այդ ոչնչով չպատճառաբանված գործարքն ու քաղաքական սիրախաղը։ Չնայած 1912 թ. արդեն պարզ էր, որ երիտթուրքական ղեկավարությունն ամենուրեք հակահայկական քաղաքականություն էր իրականացնում (հայ իթթիհադականներին չհրավիրել ժողովների, տեղական վարչությունների կազմում ընտրել բացառապես մահմեդականների), բայց դա չէր խանգարում, որ Իզմիրում տեղի ունեցած ժողովում էդ. Ակնունին թվարկեր երիտթուրքական վարչակարգի պարգևած բարեբախտությունները և «բոլոր տարրերի համերաշխության նորաբաց հորիզոնը, մկրտված թուրք-հայկական հեղափոխության դաշինքով, ոչ միայն սանձել Ելդզի Ներոնը, այլև կանգնեցրեց արտաքին միջամտության դավը — Եվրոպան հարկադրվեց կանգ առնել և հարգանքով գլուխ խոնարհել վերածնվող կայսրության բոլոր ազգերի անխառն հափշտակության առջև»[59]։

Դաշնակցությունը վաղուց պիտի սթափվեր։ Բայց զգոնությունը տևականորեն լքել էր նրան։ Լքել էր, որովհետև ղեկավարության մի մասը ինքնագոհ թուրքական պառլամենտում տեղեր ունենալու իրողությունից՝ քարշ էր տալիս անդեկ ու անհեռանկար իր գոյությունը, իսկ մյուս մասն էլ հանգամանքների բերումով ընթանում էր գավառի կարիքներին ու պահանջներին համապատասխան՝ մշտապես աչքի առաջ ունենալով ինքնապաշտպանության հոգսերը, համարձակություն չուներ և զուրկ էր հետևողականությունից և կազմակերպվածության պատշաճ մակարդակից։

[57] Գառնիկ Կարինեան, *Ազգային հերոս Զորավար Անդրանիկ և իր պատերազմները*, Փարիզ, 1953, էջ 169։

[58] Կ. Սասունի, *Պատմություն Տարոն աշխարհի*, Բեյրութ, 1957, էջ 767։

[59] «Աշխատանք», Իզմիր, 1912, հունիսի 16։

ՀՀԴ-ի ղեկավար գործիչներից ոչ ոք համարձակություն չունեցավ խոստովանելու, որ կուսակցությունը չուներ ազգային-քաղաքական հեռահար ռազմավարություն, նպատակ և նպատակին հասնելու ճկուն և համալիր մարտավարություն։ Իրողություն է, որ երիտթուրքերի վերընթացի և վայրընթացի բոլոր փուլերում էլ իր քաղաքական կողմնորոշումներում ՀՀԴ-ի գործունեությունը որոշակիորեն զուրկ էր հետևողականությունից և պատմաքաղաքական անցումային օրինաչափություններին համաստավորելու պատրաստակամ կարողությունից։

Երիտթուրքերի կեղծ հեղափոխական կարգախոսներով ոգևորված ՀՀԴ-ի ղեկավարությունը չհասկացավ, որ նրանց գլխավորած շարժումը, իբրև բողոք ավատատիրական ինքնակալական վարչակարգի դեմ, արդեն ավարտվել էր 1908 թ. հուլիսյան իրադարձություններով և դրանից հետո նրանք լսել անգամ չէին ուզում սուլթանի տապալման մասին, քանի որ սահմանադրական միապետության ստեղծումը իրենց լիուլի բավարարում էր։ 1908 թ. հետո նրանք ամեն կերպ սանձում էին ռադիկալիզմի բոլոր դրսևորումները։ Հիշենք ինչ էր ասում բժիշկ Նազըմը այդ օրերին. «Երբ բորբոքվեց հեղափոխությունը և հռչակվեց սահմանադրությունը, կոմիտեն հասկացավ, որ իր հեղափոխական դերը վերջացած է, և որ այսուհետև իր գործունեության մեջ պետք է հետևի էվոլյուցիոն և խաղաղ մեթոդին»[60]։

Սուլթանական կարգերի նպատակահարմարության կամ աննպատակահարմարության հարցն այլևս քննարկման առարկա չպետք է դառնա, քանի որ հեղափոխությունն արդեն լուծել է իր առջև դրած խնդիրը, ասում էր Ահմեդ Ռիզան, նվաճել սուլթանական իրադե սահմանադրության վերականգնման և պառլամենտի առաջիկա ընտրությունների վերաբերյալ, հետևաբար պետք է բավարարվել ձեռք բերածով, դեպքերի հետագա խորացումով կօգտվեն միայն օտարերկրյա տերությունները և ներքին անջատողական ուժերը, որոնք երազում են քայքայել կայսրությունը։

Երիտթուրքերը իրենց նախօրոք մշակած պանթուրքիզմի տեսությունը և գործունեությունը տանում էին ներդաշնակ և անշեղ հունով։ Դեռ հեղաշրջման մեղրամիսը չանցած նրանք հայտարարեցին, որ պատրաստ են անկաշկանդ համագործակցել ավատատիրական-ինքնակալական վարչության և արքունիքի հետ, այսինքն՝ վարել այնպիսի քաղաքականություն, որն ուղղված լինի միայն ու միայն թուրքական ազգային բուր-

[60] **А. Алимов,** Революция 1908 г. в Турции (в сборнике «Пробуждение Азии»), М., 1935, стр. 44.

ժուռգիայի դասակարգային շահերի պաշտպանությանը և թուրքական ազդի համախմբմանը[61]։

Լեոն բազում փաստերով ցույց է տալիս, թե ինչպես «եղբայրացման» առաջին իսկ օրերին երիտթուրքերի պարագլուխները ազգային շարժման կազմակերպություններից և կոմիտեներից պահանջեցին իրենց տրամադրության տակ եղած սպառազինությունները հանձնել հաղթանակած նոր իշխանություններին[62]։ Չհակադրվելով երիտթուրքերի պահանջներին, առաջինը զինաթափվեցին հայերը, իսկ ինչ վերաբերում է քրդերին, մակեդոնացիներին կամ ալբանացիներին, ապա սրանց մըտքով անգամ չէր անցնում, թե զենքից ընդհանրապես կարելի է օտարվել։

Օգտագործելով հայ գործիչների ոմանց քաղաքական միամտությունը, երիտթուրքերն այնքան «մերձեցան» նրանց, որ լիովին իմացան դաշնակցության ծրագրերն ու նպատակները, տեղեկացան նրա կառուցվածքին ու ղեկավար կենտրոններին, զենքի կուտակման վայրերին, նույնիսկ՝ արխիվներին, ձեռք բերեցին տեղական կազմակերպությունների ցուցակները, ճանաչեցին բոլոր ղեկավարներին։

Արևմտյան Հայաստանն ասպատակող քրդական հեծելազորային գնդերը ոչ միայն չէին զինաթափվում, այլ գաղտնի ու բացահայտ զենք ու զինամթերք էին ստանում իշխանություններից։ Պատժիչ այդ զորքի երիտթուրքական վերակառուցումն ավարտվեց նրանով, որ վեց տասնյակի հասնող այդ գնդերը, որոնցում հավաքագրված էր 30 հազար զինված բաշիբոզուկ, վերանվանվեցին «իթթիհադ» զորամիավորումների։ Հեղաշրջումից տագնապած և Պարսկաստան փախած քուրդ աղաներն ու բեգերը երիտթուրքերի հովանավորությամբ վերստին վերադարձան իրենց որջերը։

Զենքը իշխանություններին հանձնելու Թուրքիայի նոր տերերի կարգադրությունները թշնամանքով դիմավորեցին մասնավորապես մակեդոնացիները, որոնց չետնիկական ջոկատները, երիտթուրքերի համառ պահանջներին հակառակ, զենքը հանձնեցին ոչ թե թուրքական իշխանություններին, այլ մակեդոնական ազգային կոմիտներին։ Ազատատենչ մակեդոնացիների այս զգուշավորությունը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մի կողմից թելադրված էր անցյալի պատմական փորձով, մյուս կողմից՝ իրենց ղեկավարների քաղաքական հեռատեսությամբ ու պոլիտիկ հաշվենկատությամբ։ Ընդհանուր առմամբ, նման գործելաոճ ընտրած ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժման ղեկավարները համոզված էին, որ երիտթուրքերն անպայման կխախտեն կայսրության հպատակ ժողովուրդների համար իրավահավասարություն ստեղծելու մասին տված խոստումները։ Այս տեսակետից նրանց զինաթափելու պահանջն ամենախոս էր։ Դա բավական էր արդեն զգաստ ու խոհեմ ուժերին նշմարելու, որ խոսքով կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը հռչակած երիտթուրքերը հենց դրանով ցանկանում էին համոզել, որ Թուրքիայում այլևս ազգային հարց չկա, այն մեկընդմիշտ լուծել է հեղափոխությունը։ Իսկ իրականում երիտթուրքերի հեղաշրջումը չէր լուծել և չէր էլ կարող լուծել ազգային հարցը. նոր կառավարողների կիսատ-պռատ խոստումները մնում էին սին խոստումներ, կայսրության ողջ տարածքը ծվատվում էր ազգային հակասություններից։ Ստեղծվել էր խոսքի ու գործի հակասության մի կացություն, երբ օսմանիզմի գաղափարախոսությունից ու գործունեությունից բխող Թուրքիայի նոր տերերի քաղաքականությունը չէր կարող գոհացնել իսկական ազատություն երազող քրիստոնյա և ոչ թուրք ժողովուրդների ակնկալությունները։ Երիտթուրքերը հայ քաղաքական գործիչների բարեկամներ էին ներկայանում արտաքնապես, նրանց համոզում պաշտպանել համաթուրքական բարենորոգումների ծրագիրը, հրաժարվել Հայկական հարցի լուծման օտարերկրյա միջամտության գաղափարից, իսկ ներքո՞ւստ...

Երբ վրա հասավ Բալկաններում թուրքական վերջին ամրոցների կործանման պահը, երբ Ռուսաստանի ու եվրոպական տերությունների միջամտությամբ արևմտահայության կացության բարելավման, բարենորոգումների իրականացման հարցը նորից դիվանագիտական սեղանին դրվեց, թուրքական նոր կառավարողների հակահայկական ազգայնականությունը կրկին հասավ իր գագաթնակետին։ Որքան իթթիհադը դառնում էր միահեծան կառավարող և ամրապնդում իր դիրքերը, այնքան իր հետ համագործակցող և իր «կողքին կանգնած» դաշնակցությանը մղում էր հետնախորշ և անտեսում կամ արհամարհում նրա պահանջները։ Օր-օրի նահանջելով թուրքական պառլամենտին 1908 թ. սեպտեմբերին ներկայացրած իր պահանջներից, ՀՀԴ-ն ի վերջո փարվում է խղճուկ Ազգային սահմանադրությանը։ 1911 թ. օգոստոս-սեպտեմբերին հրավիրված դաշնակցության համագումարը որոշում է ձգտել օրենքի միջոցով «ընդլայնել Թուրքիո հայոց Ազգային սահմանադրությամբ ճանաչված ինքնավարությունը»[63]։

Այսպես, ուրեմն, դաշնակցությունը բավարարվում էր շուրջ կես

[61] Տե՛ս Հր. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 134—135։

[62] Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 55—61։

[63] Տե՛ս «Դրոշակ», 1911, № 7—12, էջ 84։

դար առաջ ընդունված Ազգային սահմանադրության մեջ սուլթանի բարեհաճությամբ ամրագրված հայոց իրավունքների ընդլայնման շրջանակներով, «եղբայր» երիտթուրքերի հարվածներից նահանջելով՝ սահմանափակվում էր սոսկ մասնակի միջոցառումներով, աբդուլհամիդյան բռնատիրության տարիներին իրենց հողերից զրկված գյուղացիներին ուղարկում էր արդարություն գտնելու կեղեքիչների և բռնավորների շահերի պաշտպան երիտթուրքական դատարաններում:

Երիտթուրքերը դաշնակցական գործիչներին դուրս էին մղում հասարակական կյանքի ոլորտներից, կրճատում էին հայ պաշտոնյաների և թուրքական պառլամենտի պատգամավորների թվաքանակը, լքում էին երեկվա իրենց «հեղափոխական» համախոհներին և մերձենում քուրդ աղաներին: Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևը նկատի ունենալով այդ երևույթը, 1911 թ. օգոստոսին Կ. Պոլսի իր դեսպանին գրում էր, որ այժմ երիտթուրքերի և դաշնակցականների փոխհարաբերությունները «բոլորովին փոխվել են, կյանքը մտել է իր սովորական նորմալ հունի մեջ, կրկին հարություն են առել հին հաշիվները և հատուկ սրությամբ զգացվում է ատելություն գյավուրների հանդեպ»[64]:

Ռ. Տեր-Մինասյանը անդրադառնալով դաշնակցության երիտթուրքական ժամանակաշրջանի գործելակերպին, ստիպված խոստովանում էր, որ կուսակցությունը խոսքով աշխատավորության շահերի պաշտպանն էր, իսկ գործով դարձել էր երիտթուրքերի քաղաքականության ամենահավատարիմ կողմնակիցը: Տեսականորեն առաջադրելով Թուրքիայի վարչական և քաղաքական ապակենտրոնացում, իրական կյանքում «մենք ձուլված էինք իթթիհադի հետ... հակառակ էինք... այլազգիներու, մակեդոնացիներու և արաբ ժողովուրդներու ձգտումներին...

Մեր ոգին և մեր մարմինը բաժանված էին»[65]: Իսկ հանուն ինչի՞: Չէ՞ որ թուրք-հայկական հարաբերություններում ոչինչ չէր փոխվել: Եվ սեփական մարմնից պոկված դաշնակցական «ոգին» ինչքան էլ ձգտում էր ստորաքարշության և նվաստացման բոլոր միջոցների օգտագործմամբ ջերմացնել այդ հարաբերությունները, միևնույն է, նորից այլազգիների նկատմամբ թուրքի ատելության կենտրոնում հայն էր:

1910 թ. հոկտեմբերին Սալոնիկում տեղի ունեցավ «Իթթիհադ վե թերաղգ» կուսակցության հերթական համագումարը, որը քննարկելով կայսրության ազգային հարցը (այդ թվում նաև Հայկական հարցը),

[64] Տե՛ս Ա. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, էջ 342—343:

[65] Ռուբեն Տեր-Մինասյան, Հայ հեղափոխականի մի հիշատակները, Լոս-Անճելես-Կալիֆորնիա, 1952, հ. 2, էջ 42:

պաշտոնապես ընդունեց հայերին բնաջնջելու մասին որոշում: Հայկական հարցի քննարկման ժամանակ բժիշկ Նազըմը տեսականորեն «հիմնավորեց» հայերի ոչնչացման անխուսափելիությունը: «Այս պահին մեզ համար կարևորը գաղափարի ոչ թե տեսական վերլուծումներն ու հիմնավորումներն են, այլ նրա իրականացման գործնական միջոցների ճշտումը, — ասում էր նա և շարունակում, — ...Հավատում եմ, որ բոլորդ համաձայն կլինեք, եթե հայտարարեմ, որ այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական ճարցի արմատական լուծումն է: Իբրև քրիստոնյա ժողովուրդ, մեր կայսրության մեջ մեզ իբրև հպատակ ապրում են միայն հայերը: Պատմության բնական ընթացքն անխուսափելի պիտի դարձնի նրանց անջատումը կայսրությունից, ինչպես բալկանյան ժողովուրդներինը: Մենք հաշտվեցինք, թեև ակամա, այս վերջիններիս անջատման հետ: Մեր կայսրության ամբողջականության պահպանման մասին շռայլված խոստումներին հակառակ եվրոպան մեզ պարտադրեց, որ լքենք ամբողջ Բակլանները: ...Հայերի անջատման ընթացքի մեջ ենք գտնվում այս պահին: Տեսնենք, թե ինչպես ներկայացան դեսպանախորհրդի առջև և բարենորոգումների առաջարկի տակ կես-ինքնավարության պահանջ դրեցին, հակառակ մեր թելադրանքներին և պնդումներին, որպեսզի հրաժարվեն եվրոպացիներից և մենք առանձին կարգադրենք իրենց խնդիրը՝ իբրև կայսրության ներքին խնդիր... Մի պահ երևակայեցեք արևելյան նահանգների վրա մի հայ պետության կազմությունը: Նման պետությունը բուռանական ծրագրի առաջարը կլիներ: Ոչ միայն պարտավոր պիտի լինենք ամբողջապես հրաժարվել Թուրք ցեղի միացման ծրագրից, այլև պատրաստ պիտի լինենք սեղմվելու Անատոլիայի մեջ միայն, Կոնիայի նախկին սելջուկյան սուլթանների նեղ հողամասերի վրա: Այն ժամանակ դա կնշանակի մահացում: Անմիջապես կցանկանան նաև օգտվել հույները՝ իրենց դարավոր իդեալն իրականացնելու ցանկությամբ: Որևէ Թուրքի համար անհնար է հաշտվել նման իրականության հետ... Մնում է միակ և մի վերջին կարելիություն, որի հետ կամա թե ակամա պարտավոր ենք հաշտվել՝ ընդունելով Թուրքական շահերին համապատասխանող միակ ելքը՝ պետք է բնաջնջել հայերին մեր կայսրության մեջ... Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային, դժվարին, բայց հարցը խղճի խնդիր չէ, ոչ էլ մարդկային զգացմունքների խնդիր: Կա՛մ կհամաձայնենք հայերի ամբողջական և արմատական բնաջնջման ծրագրին, ապահովելով մեր ներկան ու ապագան, պատրաստելով մեր զարգացման ուղին, և կա՛մ, մերժելով այս ծրագիրը, կշարունակենք մնալ զորացման ուղին, և կա՛մ, մերժելով այս ծրագիրը, կշարունակենք մնալ արդի կացության մեջ, մեր ոտքի տակ հողը փորելով մեր երկրի մեջ

իսկ, բռնելով քայքայման ու անհետացման ճամփան։ Ուրիշ ելք գոյություն չունի մեզ համար։ Այսօր իսկ, մինչև հիմա մեր կատարած երկար խորհրդակցություններից հետո, պարտավոր ենք կատարել ընտրությունը։ Այո կամ ոչ ասել՝ հստակ և վճռական կերպով, բոլոր տեսակի վարանումները մի կողմ ձգելով, և կազմել համապատասխան մի ծրագիր, նկատի առնելով ամենափոքր մանրամասնություններն իսկ, որպեսզի ամբողջական լինի նրա իրականացումը...

Բոլորս էլ հասկանում ենք, որ շատ բարդ ու դժվար է ձեռնարկելը։ Հարցը մեկ շրջանի, Արևելյան Անատոլիայի մեջ բնակվող հայության բնաջնջման ձևով չի ներկայանում միայն, այլ ամբողջ կայսրության մեջ տարածվող այդ նենգամիտ, ճարտար և ճկուն էրմենի կոչված մի ցեղի, որի եռանդին և աշխատանքին գոհացում չի կարող տալ նեղ ու փոքր սեփական մի հայրենիքն իսկ, որն ընդարձակ կայսրության պահանջ է զգում իբրև գործունեության դաշտ, Պոլսից մինչև Բաղդադ, Բայազետից մինչև Ադանա, Իսկենդերուն։ Պետք է արմատից բնաջնջել այդ ցեղը, որը որդի պես փարված է մեր մարմնին ու կրծում է մեզ...

Եթե հաջողությամբ ավարտենք այդ ծրագիրը.

ա. Լուծված կլինի մի անգամ ընդմիշտ «Հայկական խնդիր» կոչվածը՝ նրա նյութը կազմող տարրի անհետացումով։

բ. Մեր պետությունը ձերբազատված կլինի թե՛ միջազգային և թե՛ ներքին քաղաքականության տեսանկյունով այդ հարցի ստեղծած տագտուկներից, նեղություններից ու տագնապներից։

գ. Երկիրը ազատված լինելով հայ տարրից, ընդարձակ դաշտ կբացվի մեր ժողովրդի գործունեության համար, հատկապես տնտեսական գետնի վրա, որի տերը դարձել են հայերը։

դ. Նրանց հարստության տեր կդառնան մեր ժողովուրդը և մեր պետությունը։

ե. Ամբողջ Անատոլիան թուրքերով բնակված միատարր երկրի կվերածվի։

զ. Այդ ամենից հետո՝ ամենամեծ խոչընդոտի անհետացումով կհարթվի ճամփան մեր իդեալի՝ համաթուրանականության գաղափարի իրականացման համար, որին կառչած ենք մեր ամբողջ էությամբ։

...Անշուշտ, բողոքի, զայրույթի ալիքը պիտի տարածվի ամեն տեղ։ Ահագին անկում պիտի կրի մեր բարոյական վարկը, և նրա հետևանքով նաև մեր տնտեսական վարկը։ Պետք չէ մոռանալ սակայն, որ այդ վիճակը պիտի լինի ժամանակավոր, կարճ կամ երկար, որոշ ժամանակի համար միայն ու ետևից ետևը ամեն ինչ մոռացության պիտի տրվի,

ու մենք պիտի կարողանանք վերադառնալ միջազգային կյանքի մեջ նախկինից ավելի մի փայլուն դիրքի, որովհետև բազմապատկված պիտի լինի մեր ուժը։ Այդ ուժն է միակ հաշվի առնելիքը կյանքի մեջ»[66]։

Արևմտահայությանը ոչնչացնելու այս որոշումը վերարծարծվեց և ամրապնդվեց 1911 թ. տեղի ունեցած Իթթիհադի հաջորդ համագումարում։

Թուրքերը պահանջում էին այլևս ակնարկ չանել հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու մասին։ Կ. Պոլսի թուրքական թերթերը բացեիբաց գրում էին, որ շատ չանցած հայությունը, հայ ցեղը կկործանվի «մեծ շառաչումով»[67]։ Այդ սպառնալիքներին հետևում էին արևմտահայության դեմ ուղղված կոնկրետ գործողությունները՝ առևանգումներ, սպանություններ, կողոպուտներ։ Ժամանակակից Լ. Օշերովսկին գրել է, որ Թուրքիայի տարածքի վրա բնակվող բոլոր ժողովուրդներից բռնությունների և ջարդերի ամենից շատ ենթակա էին հայերը[68]։

Այդպիսի կարծիքի էին նաև եվրոպական շատ ճանապարհորդներ, մտավորականներ, դիվանագետներ։

Արևմտահայությանն անհրաժեշտ էր զրկել տնտեսական բոլոր դիրքերից, գոյության բոլոր միջոցներից։ Այդ խնդրի իրականացման համար երիտթուրք կառավարողները նոր ուժով հովանավորեցին և ոգեշնչեցին քրդական ավազանուն, հույս ունենալով նրանց ողջ ջարդարարական եռանդն ուղղել հայերի դեմ։ Օսմանյան սահմանադրությունը ոչնչություն դառնալուց հետո քուրդ շեյխերն ու բեգերը էլ ավելի սանձարձակ էին դարձել։ Այդ մասին իր բազում զեկուցագրերում հաստատում էին Թուրքիայում ռուսական դեսպան Մ. Գիրսը և հյուպատոսները։

Բալկանյան պատերազմներից հետո տեղի թուրքերի համար աննըպաստ իրավիճակ էր ստեղծվել, նրանք զրկվել էին այն առանձնաշնորհներից և արտոնություններից, որոնցից օգտվում էին դարեր շարունակ։ Սկսվեց Թուրքիա տեղափոխվելու զանգվածային շարժում։ Պարտություն կրած թուրքական զորամասերը իրենց հետևից բերում էին մահմեդական գաղթականության ունեզրկված ու քաղցած զանգվածին, որն ապրելու տեղ էր որոնում։ Այսպես կոչված մուհաջիրների այդ հսկա զանգվածը թուրքական կառավարությունն ուղղեց դեպի Արևմտյան Հա-

[66] Մեվլան զադե Ռիֆաթ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը*, Բեյրութ, 1938, էջ 160—165։

[67] *Տե՛ս* Հ. Գանգրունի, *Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ (1890—1910)*, Պեյրութ-Լիբանան, 1973, էջ 223։

[68] *Տե՛ս* Л. **Ошеровский,** Трагедия армян-беженцев, СПб, 1916, стр. 21.

յաստան։ Նրանք հայերից խլում էին անշարժ գույքը, հողերը, այգինե-
րը, ամբողջ ունեցվածքը։ Ինչպես քրդերի գործողությունները, այնպես
էլ նորագաղթ մուհաջիրների զանգվածային բնակեցումը հայկական տա-
րածքներում հետամտում էր մի հիմնական նպատակ՝ ճանապարհ հար-
թել հայերի ոչնչացման ընդհանուր ծրագրի իրագործման ուղղությամբ,
նվազեցնել հայ տարրը և դրանով իսկ վերջ դնել եվրոպական երկրների
և Ռուսաստանի միջամտության ադիթումներին։

Արևմտյան Հայաստանի շրջաններից ստացված բազմաթիվ բողոք-
ների հիման վրա 1912 թ. հուլիսին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը
կազմում է ընդարձակ մի խնդրագիր և ներկայացնում Թուրքիայի ար-
դարադատության նախարարություն, գոյություն ունեցող բռնություննե-
րին վերջ տալու պահանջով[69]։

Արևմտյան Հայաստանում կատարվող բարբարոսությունների փաս-
տերը հրապարակվում էին հայ, ռուս և օտար մամուլի էջերում։ «Մշակ»
թերթը «Բազմաշարշար Հայաստանը» ընդարձակ խմբագրականով կոչ
էր անում «քաղաքակիրթ» աշխարհին, մանավանդ Ռուսաստանին, իրենց
ձեռքը վերցնել արևմտահայության ազատագրության գործը[70]։

Ահա ներքին ու արտաքին, Արևմտյան Հայաստանում ճնշումների
սաստկացման և Բալկանյան իրադարձությունների կապակցությամբ,
որոշակիորեն փոխվում է նաև հայ ազգային շրջանների, այդ թվում նաև
դաշնակցության ղեկավարության ընդհանուր տրամադրությունը՝ դիմել
մեծ տերությունների դեսպանաժողովին և մասնավորապես Ռուսաստա-
նի կառավարությանը, որպեսզի Մակեդոնիայի և Ալբանիայի հարցերի
հետ միասին քննության առնվի նաև ծրագրված բարենորոգումները հայ-
կական վիլայեթներում իրականացնելու խնդիրը։

1912 թ. սեպտեմբերին Թիֆլիսում հրավիրվում է մի ժողով, որին
մասնակցում էին հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ։
Ժողովը որոշում է դիմել ռուսական կառավարությանը։ Գևորգ 5-րդ կա-
թողիկոսը դիմում է փոխարքային՝ խնդրելու ցարի օգնությունը արևմտա-
հայությանը։ Փոխարքա Վորոնցով-Դաշկովը հիշեցնում էր ցարին, որ
Ռուսաստանը հանձին հայերի միշտ էլ ունեցել է իր «հավատարիմ բա-
րեկամները», որոնք Պետրոսի Մեծի ժամանակներից ի վեր գործուն օգ-
նություն են ցույց տվել ռուսական բանակին պատերազմների ժամանակ։
Հաշվի առնելով, որ Հայկական հարցում եվրոպական միջամտությունը
դառնում է անխուսափելի, ուստի նա խորհուրդ էր տալիս թագավորին՝

[69] Տե՛ս АВПР, фонд «Политархив», 1912, д. 3727, л. 5.
[70] Տե՛ս «Մշակ», 1912, № 195։

շտապել, որպեսզի նախաձեռնությունը չանցնի Եվրոպայի ձեռքը, որ-
պեսզի հայերն իրենց պաշտպանությունը չորոնեն Ռուսաստանից դուրս։
Ուստի, փոխարքայի կարծիքով, անհրաժեշտ էր, որպեսզի Ռուսաստանն
ունենար «մի համակիր ժողովուրդ այն մարզերում, որոնք իրերի ներ-
կա պայմաններում կամա թե ակամա հեշտությամբ կարող են դառնվել
մեր ռազմական գործողությունների թատերաբեմում»[71]։ Փոխարքայի
միջնորդությունը Պետերբուրգում սկզբունքային հավանության արժա-
նացավ։ 1912 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովը որո-
շում է ընդունում Հայկական հարցը բարձրացնել Լոնդոնում հրավիրվե-
լիք դեսպանների կոնֆերանսում, որը պետք է քննարկեր Բալկանյան
առաջին պատերազմի հարցը։ Ժողովն ընտրում է «Ապահովության հանձ-
նաժողով», որը լիազորվում էր հետամուտ լինել Հայկական հարցի լուծ-
մանը, պահանջելով ինքնավարություն հայկական վեց վիլայեթների հա-
մար՝ եվրոպական տերությունների երաշխավորությամբ[72]։ Բայց, հա-
րաբերությունները թուրքական կառավարության հետ «չվտանգելու»
մտահոգությամբ, որոշում է հարցի միջազգային արծարծման նախա-
ձեռնությունը վերապահել Ամենայն Հայոց կաթողիկոսին։ 1912 թ. նո-
յեմբերից կաթողիկոսը Եվրոպայում իբրև իր լիազոր ներկայացուցիչ էր
նշանակել Պողոս Նուբարին, որը հանձնարարություն էր ստացել հու-
շագիր պատրաստելու Լոնդոնի կոնֆերանսին ներկայացնելու համար։

Ռուսական դիվանագիտության և Պողոս Նուբարի ցուցաբերած
եռանդուն գործունեությունն սկսում է մտահոգել թուրքական կառավա-
րությանը, ուստի և վերջինս պահանջում է պատրիարքից՝ հասկացնելու
Պողոս Նուբարին, որ նա ուղղակի դիմի թուրքական կառավարությանը։
Ջմռռանանք, որ դեռ հոկտեմբերին պատրիարքական տեղապահ Արշա-
րունին և Ազգային ժողովի ատենապետ Սմ. Կարայանը ներկայացել
էին Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսին և շարադրել արևմտահայու-
թյան պահանջները։ Կարայանը հիշեցրել էր, որ եթե այս անգամ էլ
եվրոպական տերությունները հրաժարվեն գործնական քայլերից, ապա
հայերին մնում է դիմել «զենված պայքարի», ավելացնելով, որ նրանք
իրենց ճակատագիրը կապում են ոչ թե Թուրքիայի, այլ Ռուսաստանի
հետ[73]։

1912 թ. նոյեմբերին Գիրսը Ռուսաստանի արտաքին գործերի նա-
խարար Ս. Սազոնովին հաղորդում էր արևմտահայերի ծանր կացության

[71] Տե՛ս АВПР, ф. «Политархив», 1912, д. 3727, л. 17.
[72] Տե՛ս Մ. Սեւոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Դահիրե, 1948, էջ 223։
[73] Տե՛ս АВПР, ф. «Политархив», д. 104, л. 214.

մասին, որից ելնելով էլ նրանք «առանց կուսակցությունների խորության... շատ են ուզում Ռուսաստանի հովանավորությունը», «անկեղծ ցանկանում են կամ մեր զորքերի գալուստը, կամ բարենորոգումներ մտցնել Ռուսաստանի հսկողության ներքո»[74]։ Դեսպանն ընդգծում էր, որ Հայկական հարցը Ռուսաստանի համար առաջնակարգ պետական կարևորության հարց է և պետք է նրա լուծման նախաձեռնությունը դռնվի ռուսական պետության ձեռքում։ Նա միաժամանակ նախազգուշացնում էր հայերին, որպեսզի նրանք նույն հարցով չդիմեն եվրոպական տերություններին, ինչպես նաև ձեռնպահ մնան «հեղափոխական» քայլերից։ Այդ առթիվ Գիրսը հատուկ զրույց է ունենում Կ. Պոլիս ժամանած դաշնակցության դիվանագետ գործիչներից մեկի՝ բժիշկ Հակոբ Ջավրիևի (Ջավրյան) հետ, որին իր տված շատ ուշագրավ պատասխանը նա հեռագրել է արտաքին գործերի նախարարին. «Կայսերական կառավարությունը եռանդուն կերպով մասնակցում է Հայաստանի բախտով։ Բայց այդ բոլորով հանդերձ հայերը չպետք է անտեսեն ներկա պահի բացառիկ պայմանները և վատացնեն իրենց դրությունը՝ ազգային ելույթներով։ Կարևոր է, որ հայերը Եվրոպայի աչքին մնան որպես թուրքական կամայականության զոհեր, այլ ոչ թե դառնան քաղաքական հեղափոխականներ, որոնք ցանկանում են օգտվել Թուրքիայի ռազմական անհաջողություններից՝ իրենց ազգային ձգտումներն իրականացնելու համար։ Ուստի, հայերը ամենևին չպետք է դիպչեն թուրքերին, առավել ևս ապստամբություն բարձրացնեն, նրանք չպետք է Եվրոպային ներկայացնեն որևէ քաղաքական պահանջ։ Բայց մյուս կողմից՝ հայերն ինչպես մամուլում, այնպես էլ իրենց կոչերում, իհարկե, իրավունք ունեն բոլորի ուշադրությունը հրավիրել այն աղաղակող հալածանքների վրա, որոնց ենթարկվում են նրանք քրդերի և թուրքական իշխանությունների կողմից»[75]։ Հ. Ջավրիևը դրան ըմբռնումով պատասխանում է, որ ինքը մեծապես զոհ է նման հարցադրումից և ուս դեսպանի «խոսքերն ընդունում է ի գեկավարություն»[76]։

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Ռուսաստանը ձգտում էր իր ձեռքը վերցնել Հայկական հարցի մենաշնորհը և դեպի հնարավոր լուծման նրա ընթացքը տանել բացառապես իր աշխարհատարածքային շահերի դիտակետից։ Նրա համար շատ ավելի ձեռնտու էր անմիջապես գրավել Արևմտյան Հայաստանը, բայց ժվյալ պահին դա հնարավոր չէր.

[74] «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, стр. 4.
[75] Նույն տեղում, էջ 12։
[76] Նույն տեղում։

և նա արդ բավարարվում էր այնտեղ բարենորոգումներ իրականացնելու պահանջով։ Բայց այդ պահանջը վաղուց էր դրված և թուրքական կառավարությունը ոչ միայն չէր կատարում այն, այլև անվերջ բարդություններ էր ստեղծում հատկապես հայկական այն նահանգներում, որոնք կից էին Անդրկովկասի հայաբնակ շրջաններին՝ Ռուսաստանին։ Այդ առթիվ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ներատովը 1913 թ. մայիսին Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի, Հռոմի և Վիեննայի ռուսական դեսպաններին ուղղած հեռագրում կարևորում էր. «Անհապաղ սկսել քննարկումն այն անհրաժեշտ բարենորոգումների, որոնք կարող են խաղաղություն մտցնել հայերով բնակեցված թուրքական մարզերում։ Ռուսաստանը, որպես Թուրքիային սահմանակից պետություն և ունենալով բազմաքանակ հայ բնակչություն Կովկասում, բոլորից շատ է շահագրգռված այդ մարզերում խաղաղության և հանգստության պահպանմամբ»[77]։ Ընդամին, Սազոնովը հանձնարարել էր Գիրսին՝ զրուցել Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ և զգուշացնել, որ բարենորոգումների հարցը անուշադրության մատնելու դեպքում թուրքական կառավարությունը ստիպված կլինի գործ ունենալ Հայկական հարցի հետ այնպիսի բորբոքված վիճակում, որ անխուսափելի կդարձնի եվրոպական տերությունների միջամտությունը[78]։

Թուրքական կառավարությունն ինքն է առաջինը փորձում կանխել պետությունների միջամտությունը՝ ճարպկորեն հրապարակ հանելով հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու իր նախագիծը։ Նախագծի տեքստը չէր հաղորդվել նույնիսկ պատրիարքին։ Նրա բովանդակությունը ծանոթացվել էր թուրքական կառավարության հետ բանակցող ապահովության հանձնաժողովի երկու անդամներին։ Նման բանակցող ապահովության հանձնաժողովի երկու անդամներին։ Նման ծանոթացումից հետո Թուրքիայի արտգործնախարարը պահանջել էր, որ հանձնաժողովի անդամները տան իրենց կարծիքը կառավարության «նախագծի» վերաբերյալ։ Դեկտեմբերի 8-ի կառավարական հանձնաժողովի նիստին հրավիրվել էին մի քանի հայ գործիչներ, որոնք հայտնի էին որպես օտար միջամտության հակառակորդներ և պատրիարքարանում պաշտոնական դիրքեր չէին զբաղեցնում, օրինակ, նախկին պատրիարք Մ. Օրմանյանը, թուրքական «Սաբահ» թերթի խմբագիր Տ. Քելեկյանը և մեծահարուստ Գ. Կյուլպենկյանը։

Թուրքական «նախագիծը» կատարյալ աչքակապություն էր։ Այն նախատեսում էր բարենորոգումներ մտցնել միայն Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Տրապիզոնի նահանգներում, բացառելով էրզրումն ու

[77] Նույն տեղում, էջ 41։
[78] Նույն տեղում, էջ 6։

Սերաստիան։ Նույնիսկ կառավարության վստահությունը վայելող մարդկանց զարմանք էր պատճառել «նախագծի» ձևական և սահմանափակ բնույթը, որոնք չբաշվեցին պարզ և որոշակի հայտնել իրենց տեսակետները նրա կիսատության և մակերեսայնության մասին, և, որ կարեվոր է, այն պետք է տարածել բոլոր հայկական նահանգների վրա։ Շուտով թուրքական մամուլում պաշտոնական հաղորդագրություն տպագրվեց այն մասին, որ, իբր, բարենորոգումների նախագիծը վերամշակվել է հայերի արտահայտած ցանկությունների ոգով։ Պատրիարքարանը անդրադառնալով այդ լրատվությանը, նշեց, որ մասնավոր անձանց հետ բանակցությունները չեն կարող հեղինակություն համարվել և այդ պատճառով էլ հնարավորություն չունի կարծիք հայտնելու նախագծի բովանդակության մասին և չգիտե, թե կառավարությունը «ինչ ձևով է մտադիր ապահովելու բարենորոգումների իրագործումը»[79]։

Զուգահեռաբար ընթանում էին Պողոս Նուբարի բանակցությունները Եվրոպայում։ Ուշագրավն այն է, որ Պետերբուրգը կարողացավ Ամենայն հայոց կաթողիկոսի միջոցով Պողոս Նուբարի գործունեությունը կախման մեջ դնել ռուսական դիվանագիտությունից[80]։

Արևմտահայերը 1913 թ. ապրիլին Ռուսաստանի դեսպան Գիրսին ներկայացրին բարենորոգումների իրենց նախագիծը, ուր ազգային բնականոն զարգացման համար նախատեսված համապարփակ միջոցառումներ բարենորոգումների գործը դրվում էր եվրոպական տերությունների վերահսկողության տակ, իսկ իրագործման ընթացքի հսկողությունը՝ հանձնվում Ռուսաստանին։ Եվ դա դիվանագիտական սթափ ուղեգիծ էր։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ավելի քան երբևէ սրված էին իմպերիալիստական ղեկավոր տերությունների քաղաքական և տնտեսական հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքում։ Տակավին Սայքս-Պիկոյի 1916 թ. գաղտնի համաձայնությունից էլ շատ առաջ Անգլիան ձգտում էր իր գերիշխանությունն ապահովել Միջագետքում (Իրաք, Պաղեստին, Հորդանան), Ֆրանսիան՝ Լիբանանում և Սիրիայում, Ռուսաստանը՝ Արևմտյան Հայաստանում և նեղուցներում, Ավստրիան ու Գերմանիան՝ բուն Թուրքիայում (Փոքր Ասիա) և նրա միջոցով նաև ամբողջ Մերձավոր Արևելքում։ Աստիճանաբար ասպարեզ էր իջնում նորագույն պատմության մեծ գիշատիչը՝ ԱՄՆ-ը, որը ձգտում էր նավթի և այլ հանույթների կոնցեսիաներ ձեռք բերել Միջագետքում և Արևմտյան Հայաստանում։ Մի ժամանակաշրջան էր դա, երբ երիտթուրքերի շովինիստական կառավարությունը գերապատվությունը

[79] Տե՛ս նույն տեղում, էջ 23։
[80] Տե՛ս նույն տեղում, էջ 23։

տալիս էր կայզերական Գերմանիային, քանզի նա էր, որ ոչ միայն խոստանում էր երաշխավորել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, այլև ստեղծելու Գերմանիայի հովանավորությամբ մեծ Թուրան՝ Բոսֆորից մինչև Պամիր և Վոլգա-Եվրոպական տերություններից Անգլիան և Ֆրանսիան չէին ցանկանում ո՛չ Գերմանիայի և ո՛չ էլ Ռուսաստանի գերիշխանությունը Թուրքիայում և Մերձավոր Արևելքում։ Նրանք ավանդաբար ձգտել են Ռուսաստանին հեռու պահել Մերձավոր Արևելքի դարպասներից։

Եթե այս աշխարհատարածքում գերիշխանության հասնելու ձգտման ճանապարհին գերմանական իմպերիալիզմի քաղաքական նախագծերում Թուրքիան դիտվում էր որպես տնտեսական և քաղաքական ներթափանցման կայան և իբրև պոտենցիալ դաշնակից եվրոպական մյուս դիշատիչների դեմ, եթե օսմանիզմի և պանթուրքիզմի նվաճողական ծրագրերով տարված երիտթուրքերը ոգևորվում էին գերմանական միլիտարիզմի նախագծած հեռանկարներով, ապա գերմանական դիվանագիտական և զինվորական շրջաններում նաև անհանգստանում էին, որ «ամեն ինչ կարծես ճակատագրորեն հակվում է դեպի այն, որ Ռուսաստանը փորձի ի վերջո իր ձեռքը վերցնել Արևմտյան Հայաստանը՝ Փոքր Ասիայի և Միջագետքի բանալին»[81]։

Թավալգոր անկում ապրող Օսմանյան կայսրությանը տնտեսապես և ռազմապես իրեն ենթարկելու համար գերմանական իմպերիալիզմը որոշում է իր ձեռքը վերցնել Կ. Պոլիսը և բանակը։ Այդ նպատակով էլ 1913 թ. դեկտեմբերին Կ. Պոլիս ժամանեց գերմանական զինվորական առաքելությունը (միսիան) Լիման ֆոն Զանդերսի գլխավորությամբ, որը պետք է գրավվեր Բալկաններում ջախջախված թուրքական բանակի վերակազմությամբ և վարժեցմամբ։ Բեռլինի կարծիքով այդ ռազմավարության իրագործմանը գլխավորապես պետք է խոչընդոտեին Անգլիան ու Ռուսաստանը։ Սակայն գերմանական զեկավարությունը միաժամանակ հույս ուներ, որ Ռուսաստանին կարելի է համակաղրել Անգլիայի, քանի որ վերջինս չէր կարող անտարբեր նայել զեպի հարավ Ռուսաստանի առաջխաղացմանը։

Ընդհանուր այս նկատառումից ելնելով Թուրքիայում գերմանական դեսպան Հանս Վանգենհայմը համառ զիմադրություն էր ցույց տալիս Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ մտցնելու Ռուսաստանի փորձերին։ Իսկ նոր իրադրությունից բխող Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ Արևմտյան Հայաստանը որոշակի տեղ էր գրավում։

[81] АВПР, ф. «Политархив», 1913, д. 3470, л. 44.

Ռուսաստանի համար այն ոչ միայն բանալի էր դեպի Մերձավոր Արևելք, այլև գրահ՝ Կովկասի մատույցները պաշտպանելու տեսակետից։ Միջազգային բարդ իրադրության և ճակատագրական այդ պահին դաշնակցության ղեկավար գործիչներից շատերը չհասկացան, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն օբյեկտիվորեն ընդառաջում էր նաև արևմտահայության ազգային-ազատագրական շարժման պահանջներին։ Նրանք այս տեսակետից շատ բան ունեին սովորելու ռուս կադետներից։ Հիշենք, թե ինչպես ռուսական բուրժուական մամուլը՝ «Ռեչից» սկսած մինչև տասնյակ տարիներով ամենակատաղի հակահայկական քարոզչություն փողհարող «Նովոյե վրեմյա» թերթը ինչպիսի համակրական տոնով էր սկսել խոսել հայերի ազատագրական ձգտումների մասին, իսկ «Ռուսսկոյե սլովոն» կոչ էր անում. «զենքը ձեռքին միջամտել ի պաշտպանություն Հայաստանի»[82]։

Ռուսական լիբերալ բուրժուազիայի դիրքորոշումն առավել որոշակի էր արտահայտվում կադետների պարագլուխ Պ. Միլյուկովի՝ հայկական հարցի վերաբերյալ ելույթներում և հոդվածներում։

«Ես խոսում եմ Թուրքահայաստանի մասին...

— Այդ վայրերը մեզ անհրաժեշտ են տնտեսական տեսակետից, որպես վաճառահանման շուկա, և ռազմաստրատեգիական առումով»։ Նա հարց էր տալիս՝ «Ինչո՞ւ Ռուսաստանը, որ Ֆրանսիայի հետ միասին ստորագրել էր Լիբանանին ինքնավարություն տալու մասին համաձայնագիրը, չպահանջեց պետություններից, որպեսզի նման արձանագրություն ստորագրեն Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն իրագործելու մասին»[83]։

Առաջին աշխարհամարտին նախորդող տարիներին Պ. Միլյուկովը հանդես էր գալիս միջազգային բախումները և ազգամիջյան ընդհարումները խաղաղ ճանապարհով լուծելու կողմնակից, որպես «համոզված պացիֆիստ» հավատում էր ժողովուրդների համագործակցության և մերձեցման հնարավորությանը։ Ամերիկյան միլիարդատեր Դեյլ Կարնեգիի ղեկավարած հանձնաժողովի կազմում նա մասնակցում էր 1914 թ. գարնանը Փարիզում տեղի ունեցած պատերազմի հակառակորդների համագումարին։ Այստեղ արտասանած իր ճառում նա կոչ էր անում բոլոր միջոցներով կանխել միջազգային հարաբերությունների սրումը։ Պատերազմի նախօրյակին նա կամպանիա ծավալեց ինչպես ընդդեմ պատերազմի ընդհանրապես, այնպես էլ պատերազմին Ռուսաստանի մասնակցությանը՝ մասնավորապես։ Հակապատերազմական քարոզչության համար նրա խմբագրած «Ռեչ» թերթը նույնիսկ երկու օրով փակվեց։ Սակայն պատերազմն սկսվելուց հետո նա դարձավ այն մինչև հաղթական ավարտի հասցնելու կողմնակից։ Պ. Միլյուկովի այս դիրքորոշումը թելադրված էր կադետական կուսակցության արտաքին քաղաքականության դոկտրինայով, որը ցանկանում էր Ռուսաստանի համար առավելագույն օգուտ ապահովել, քաղաքական և տնտեսական թելադրող դիրքեր նվաճել, բարձրացնել Ռուսաստանի միջազգային հեղինակությունը, ինչպես նաև պատերազմի անբարենպաստ ելքի դեպքում՝ թույլ չտալ հեղափոխական նոր իրադրության ստեղծում։ «Ինչպիսին էլ լինի վերաբերմունքը կառավարության ներքին քաղաքականության նկատմամբ,— ասված էր Միլյուկովի գործուն մասնակցությամբ կազմված կադետական կուսակցության Կենտկոմի 1914 թ. հուլիսի 21-ի հայտարարության մեջ, — մեր անմիջական պարտքն է պահել հայրենիքը միասնական ու անբաժանելի, և դրա համար պահպանել համաշխարհային տերությունների շարքում գրաված այն դիրքը, որ այսօր մեզանում վիճարկվում է թշնամիների կողմից։ Մի կողմ թողնենք ներքին վեճերը, նվազագույն ուժի իսկ չտանք մեզ՝ տարաձայնությունների բաժանման նրանց հույսերին»[84]։

1914 թ. հուլիսի 26-ին Պետդումայի մեկօրյա արտակարգ նստաշրջանում Միլյուկովը հանդես եկավ կառավարության հետ «Սրբազան միասնության» հայտարարությամբ։ Նրա ճառի բովանդակությունը պատերազմի ժամանակաշրջանում ընդդիմությունից հրաժարվելու, ժամանակավորապես արդիականության կենճառտ շատ հարցեր մի կողմ թողնելու, մեկ ընդհանուր հունի մեջ հայրենասիրական միասնական ջանքերը միավորելուն ուղղված մի յուրահատուկ կոչ էր։ Նրա համար Սև ծովը ռուսական ներքին ծով էր։

Միլյուկովի համար Առաջին աշխարհամարտը գերմանական իմպերիալիզմի դեմ պատերազմ լինելուց զատ՝ Բալկաններում Ռուսաստանի ազդեցության հզորացման և կոստանդնուպոլսյան նեղուցները վերջնիս միացման պատերազմ էր, որի համար նա ստացավ «Միլյուկով Դարդանելսկի» մականունը։

Պառլամենտական պատվիրակության կազմում Անգլիայում եղած ժամանակ (1916 թ.) Ֆորին օֆիսի ղեկավար էդ. Գրեյին ասել էր. «Նեղուցները մեր դաշինքի գինն են»։ Էդ. Գրեյը Համաշխարհային առաջին պատերազմի նախօրեին հայկական բարենորոգումների, Հայկական

[82] «Русское слово», 10 ноября 1912 г.
[83] «Речь», 14 декабря 1912 г.

[84] «Русские ведомости», 22 июля 1917 г.

հարցի նոր արծարծումների ժամանակ վարել է երկդիմի քաղաքականություն՝ ի վնաս հայերի Թուրքիային պաշտպանել է ընդդեմ Ռուսաստանի և փաստորեն ձախողել բարենորոգումների ռուսական ծրագիրը։ Պատերազմի ժամանակ Անտանտի ղեկավարներից Գրեյն առաջինն էր, որ բարձրացրեց Օսմանյան կայսրության անդամահատման հարցը՝ հայտարարելով, որ եթե Թուրքիան հանդես գա Գերմանիայի կողմում, ապա պետք է դադարի գոյություն ունենալուց։ Գրեյի անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ են կնքվել Օսմանյան կայսրության, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի բաժանման գաղտնի (Սայքս-Պիկոյի) համաձայնագիրը։ Ահա նույն այս էդ. Գրեյի հետ 1916 թ. զրույցի ժամանակ Պ. Միլյուկովը ժխտում էր Ռուսաստանում բնակվող ժողովուրդների տարածքային ու քաղաքական ինքնորոշման իրավունքը։ Այսպես, ռուսական ազդեցությունից լեհերի անկախության պահանջի առնչությամբ Միլյուկովն ասում էր. «Մենք գեմ ենք միջազգային ակտում Լեհաստանի ներքին սահմանադրության վերաբերյալ հիշատակության։ Ամենաշատը՝ նրա տարածքային սահմանի հիշատակության»[85]։ Այս ամենի հենքի վրա տարօրինակ էր հնչում, երբ 1914 թ. վերջերին հայ մամուլի որոշ հրապարակումներում, մասնավորապես «Հորիզոնի» էջերում բանակռիվ սկսվեց Միլյուկովի դեմ այն բանի համար, թե ինչու նա կողմ է արտահայտվել հայկական նահանգների բռնակցման (անեքսիա) գաղափարին։ Եվ Միլյուկովը, որպեսզի անդորրություն պարգևի հայերի գրգռված կրքերին, ստիպված եղավ հայտարարել, թե նրա հասկացած անեքսիան չի բացասում ինքնավարությունը, որ Արևմտյան Հայաստանի գոյությունը նա պատկերացնում է Բուխարայի կարգավիճակի նման։ Այս խոստովանությունը գոհացրեց դաշնակցությանը և «Հորիզոնը» աղատ արձակեց ռուս գործիչի օձիքը[86]։

Հայկական հարցում Միլյուկովը իր կարծիքը շատ ավելի հստակ արտահայտեց 1916 թ. Ջ. Բրայսի և Նոել Բաքստոնի հետ զրույցի ժամանակ։ «Բազում մասնավոր հանդիպումներից, ծանոթություններից, նախաճաշերից ու ճաշերից, — հետագայում գրել է Միլյուկովը,— հիշատակեմ միայն մի քանիսի մասին։ Բրայսը և Նոել Բաքստոնը ինձ համար ճաշկերույթ էին կազմակերպել, որի ժամանակ գլխավոր թեման Հայկական հարցն էր. երկուսն էլ Հայաստանի պաշտպաններ էին։ Ինքս էլ լինելով այդպիսին, ես, սակայն, Ռուսաստանի գերիշխանության ներքո մեծ Հայաստանի ինքնավարությունը հակադրում էի ան-

[85] **П. Н. Милюков,** Воспоминания, т. 2, Нью-Йорк, 1955, стр. 185.

[86] *Տե՛ս Գ. Ալեքսինսկի, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. երրորդ, Վիեննա, 1926, էջ 581։ Տե՛ս նաև՝ «Հորիզոն», 1915, № 12։*

րությունների հովանավորության ներքո Հայաստանի անկախության նրանց ծրագրին։

Ապագա Հայաստանի տարածքի մասին հարցում ես հերքեցի, որ մենք գեպի Մոսուլ ենք ձգտում, և մեր ձգտումը սահմանափակեցի Դիարբեքիրով, այսինքն՝ լեռների և հարթավայրի սահմանով, դուրս թողնելով Փոքր Հայքը (Կիլիկիան) և Ալեքսանդրետը։

Նրանք գիտեին և ցույց տվեցին ինձ Հայաստանի մասին իմ դումայական ճառը»[87]։

Հայկական հարցի վերաբերյալ Պ. Միլյուկովի տեսակետների կարեվորման մեր նպատակն էր ցույց տալ, որ ռուսական լիբերալ բուրժուազիայի քաղաքական ուղեգիծը բնավ չէր շեղվում ցարական կառավարության որդեգրած քաղաքականության ընթացքից։

Հայկական հարցի շուրջը նոր բորբոք առած դիվանագիտական մըրցապայքարը և դրանում ռուսական քաղաքականության հետևողականությունը վերն ասվածի լոկ հաստատումն է։

Ռուսաստանը ներկայացնում է Թուրքիայի հայկական վիլայեթներում բարենորոգումների անցկացման իր նախագիծը, որը կազմել էր Կ. Պոլսում ռուսական դեսպանատան առաջին թարգման Անդրեյ Մանդելշտամը։ Նախագծով նախատեսվում էր հայկական վեց վիլայեթներից կազմել մի ամբողջական «Պրովինցիա»՝ երկրամաս (նահանգ), բացառյալ մի քանի շրջանների, ուր գերակշռում էր քուրդ բնակչությունը։ Նահանգի գերագույն կառավարիչը պետք է լիներ Թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, որին նշանակելու էր սուլթանը՝ տերությունների առաջարկությամբ։ Նահանգի գլուխ պետք է կանգներ գեներալ-նահանգապետը, որը պետք է պաշտոնավարեր հինգ տարի ժամանակով։ Նահանգը ազգագրական սկզբունքով պետք է բաժանվեր սանջակների (դեպարտամենտների), կազաների (օկրուգների) և նահիեների (համայնքների)։ Նահանգապետը իրավունք ուներ նշանակել կամ հեռացնել բոլոր պաշտոնյաներին, դատավորներին, ըստ իր հայեցողության օգտագործել ոստիկանությանը, ժանդարմերիային և համապատասխան զինված ուժերին։ Վիլայեթների և սանջակների վարչական խորհուրդները բաղկացած էին լինելու 6-ական հոգուց՝ երեք մահմեդականից և երեք քրիստոնյայից։ Նահանգի օրենսդիր մարմինը պետք է լիներ մարզային ժողովը, որը պիտի ընտրվեր գաղտնի քվարկությամբ 5 տարի ժամանակով և կազմված լիներ քրիստոնյա և մահմեդական հավասար անդամներից, բայց ժողովի ընդունած որոշումները պետք

[87] **П. Н. Милюков,** Воспоминания, М., 1991, стр. 424.

է ներկայացվեին սուլթանին, որը կարող էր հաստատել կամ մերժել։ Նահանգում սահմանվում էր լեզուների (թուրքերեն, հայերեն և քրդերեն) իրավահավասարություն, բայց թուրքերենի ուսուցումը պարտադիր էր համարվում բոլոր դպրոցներում։ Զինվորական ծառայությունն անցկացվելու էր նահանգում։ Վերացվելու էին քրդական ԹԷԹև հեծելազորի («Համիդիե») գնդերը, արգելվում էր մուհաջիրների բնակեցումը, հայերից ապօրինաբար զավթված հողերը պետք է վերադարձվեին կամ փոխհատուցվեին։ Այս բոլորի իրագործման հսկողությունը դրվում էր պետությունների վրա[88]։

Դյուրին է նկատել, որ ռուսական նախագիծն առանձնապես էլ արմատական միջոցառում չէր Հայկական հարցի լուծման համար, բայց և այնպես այն իրագործվելու դեպքում զգալիորեն կթեթևացներ արևմտահայության վիճակը։ 1913 թ. հուլիսին Կ. Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում, ավստրո-հունգարական դեսպանատանը իր աշխատանքներն սկսեց «Հայկական բարենորոգումների հանձնաժողովը» վեց պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ռուսական նախագծին հենց սկզբից, Գերմանիայի դրդմամբ, առարկեց Թուրքիան։ Արտահայտելով երիտթուրքերի տեսակետը, Թուրքիայի ներկայացուցիչ Ջևիդ բեյն այն համարեց «Թուրքիայի ինքնուրույնությունը» խախտող, ուստի և մերժելի, իսկ Գերմանիան ուղղակի պնդեց, որ «հնարավոր ու ցանկալի չի համարում Թուրքիային հարկադրել ընդունելու այն, ինչ նա չի ընդունում կամովին»[89]։

Հետևելով Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յագովին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյը նույնպես հայտարարեց, որ ռուսական նախագիծը «անխուսափելիորեն հանգեցնելու է Թուրքիայի բաժանմանը»։ Անգլիական դիվանագիտությունը իր դիրքորոշումը պատճառաբանում էր այն «փաստարկումով», որ իբր թե Հընդկաստանի մահմեդականությունը կարող է մեղադրել Անգլիային Թուրքիայի բաժանման գործընթացին մասնակցելու համար։ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու պահանջով հանդես եկան նաև Ավստրո-Հունգարիան և Իտալիան։

Դեսպանները վճռականապես դեմ էին Հայկական վեց վիլայեթները մեկ գեներալ-նահանգապետի իշխանությանը հանձնելու առաջարկին, պահանջում էին դրանք բաժանել երկու սեկտորի, ինչպես ավստրո-

[88] Տե՛ս «Сборник дипломатических документов. Реформы в Армении», стр. 61—69։ Տե՛ս նաև՝ Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 314—329։

[89] Տե՛ս «Сборник дипломатических документов...», стр. 80.

գերմանական բլոկն էր առաջարկում, նահանջ կատարել նույնիսկ 1895 թ. սուլթանական հրահանգից, որը մեկ գեներալ-նահանգապետ էր նախատեսում հայկական նահանգների համար[90]։

Հայկական հարցի քննարկման այս առաջին փուլում ռուսական դիվանագիտության ջանքերը փաստորեն ձախողվեցին։ Կ. Պոլսի հանձնաժողովը կարծեք թե պատմական նոր պայմաններում Բեռլինի կոնգրեսի կրկնությունն էր՝ նրա այլաձևված տարբերակը։

Ոգևորված քննարկման բարենպաստ ընթացքից, Թալեաթը իր մոտ է հրավիրում օսմանյան պառլամենտի հայ պատգամավորներին և առաջարկում «օգնել թուրքերին վերացնելու Հայկական հարցի քաշքշուկը»[91], հայտարարելով, որ ավելի լավ է հարցը լուծել հայերի և թուրքերի անմիջական բանակցություններով։ Նա չթաքցրեց նաև, որ ինքը գերմանական կողմի հետ համախոհ է պետությունների կողմից վերահսկողության խնդրում, քանի որ այն փաստորեն գոյություն ունի. հենց որ քրդերի կողմից մի հայ է սպանվում, դեսպաններն իսկույն բողոք են ներկայացնում։

Ինչպես Գերմանիան, այնպես էլ Թուրքիան, պահանջում էին հայերից՝ ետ կանչել Պողոս Նուբարին և դադարեցնել նրա եվրոպական բանակցությունները։

Տեսնելով, որ եվրոպական տերությունների համարյա միաձայնական ջանքերով բանակցությունների գործընթացը ձախողվում է, Սազոնովը հայկական միասնական նահանգ ստեղծելու և գերագույն միասնական կառավարիչ նշանակելու փոխարեն առաջարկում է հայկական տարածքները երկու սեկտորի բաժանել՝ յուրաքանչյուրի համար առանձին կառավարիչ նշանակելով, բայց պարտադիր կերպով պահպանելով հետևյալ պայմանները. ա) որպեսզի սեկտորների բաժանման ենթարկվեն միայն այն տարածքները, որոնց նկատի ունի ռուսական նախագիծը, բացառված լինի ուրիշ տարածքների միացումը սեկտորներին։ Մինչդեռ թուրքական նախագիծը նախատեսում էր սեկտորների մեջ մտցնել մահմեդական շրջանները, որպեսզի ստեղծվեր մահմեդական մեծամասնություն, բ) որպեսզի երկու կառավարիչներն էլ նշանակվեին պետությունների համաձայնությամբ և լինեն ինքնուրույն իրենց ենթակա սեկտորներում պաշտոնյաներին արձակելու և նշանակելու մեջ[92]։

Դիվանագիտական երկար քաշքշուկներից հետո ռուս-գերմանական երկկողմ բանակցությունների արդյունքը եղավ վեց կետից բաղկացած

[90] Նույն տեղում, էջ 192—200։

[91] Նույն տեղում։

[92] Տե՛ս նույն տեղում, էջ 78։

մի նախագիծ, որը և ներկայացվեց Թուրքական կառավարությանը[93]։ 1913 թ. դեկտեմբերին Թուրքական կառավարությունը դեսպաններին է ներկայացնում հայկական նահանգների գերագույն կառավարիչների նշանակման և նրանց իրավասությունների մասին հուշագիրը[94]։ Բայց դա չէր խանգարում, որպեսզի Թուրքական կողմը շարունակի իր մեքենայություններ։ Թուրքական դիվանագետ Ֆահրեդդին բեյը հայտնեց Սազոնովին, որ իր կառավարությունը պատրաստ է անհապաղ ստորագրել պայմանագիրը, եթե ռուսական կողմը համաձայնվի, որ գլխավոր խորհուրդներն իրավունք չունենան հարկեր սահմանելու կրոնական և կրթական հիմնարկների օգտին, հրաժարվի խորհուրդներում և վարչական մարմիններում քրիստոնյաների և մահմեդականների թվի հավասարության և «համիդիե» գնդերը, որոնք 1910 թ. վերանվանվել էին «հաֆֆի սուվարի» (թեթև հեծելազոր), ցրելու պահանջից։

Սազոնովը վճռականապես մերժում է Թուրքական առաջարկությունների մեծ մասը։ Միայն համաձայնություն է կայացվում, որ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների խորհուրդներում կիրառվի հավասարության սկզբունքը, իսկ Դիարբեքիրի, Սեբաստիայի, Խարբերդի և Տրապիզոնի վիլայեթներում մահմեդականները կազմեն 2/3-ը, իսկ քրիստոնյաները՝ 1/3 մասը։

1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում ի վերջո ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ։ Թուրքիայի կառավարության կողմից այն ստորագրեց մեծ վեզիրը՝ Սայիդ-Հալիմ փաշան, իսկ Ռուսաստանի կողմից՝ դիվանագիտական հավատարմատար Կ. Ն. Գուլկևիչը։

Գերագույն կառավարիչների համար տերությունների առաջադրած հինգ թեկնածուներից ապրիլին Թուրքական կառավարությունն ընտրեց անհրաժեշտ երկուսին՝ հոլանդացի դիվանագետ Վեստենենկին (Կոնգոյի նախկին նահանգապետը) և նորվեգացի գնդապետ Հոֆին։ 1914 թ. մայիսի 10-ին այս երկուսը Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի հետ ստորագրեցին իրենց համաձայնագիրը, որոնք, սակայն, մնացին չիրականացված վերահաս պատերազմի պատճառով։

Այսպիսով, լեռը մուկ ծնեց, բայց մուկն էլ երկար չապրեց։ Բայց ինչ էլ որ լինի, այնուամենայնիվ, հունվարի 26-ի համաձայնագիրը միջազգային դիվանագիտական փաստաթուղթ է։ Ժամանակակիցների կարծիքով, հայկական վիլայեթների կառավարման մասին այդ համաձայնագիրը մի քայլ առաջ էր Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածից։ Արևմտահայաստանի երկու գերագույն կառավարիչներն իրավունք էին ունենալու նշանակել կամ ազատել պետական բոլոր ստորին ծառայողներին, առաջարկություններ անել բարձր պաշտոնների համար (բացի կուսակալներից)։ Նրանց էին ենթարկվելու ոստիկանությունը, ժանդարմական ապարատը և դատավորները։ Կուսակալների հետ ունեցած տարաձայնությունների դեպքում կառավարիչները հեռագրով հայտնելու էին կառավարությանը, որը պարտավոր էր չորս օրվա ընթացքում որոշում ընդունել։

Գերագույն կառավարիչներն իրենց տրամադրության տակ ունենալու էին ռազմական ուժեր՝ ներքին կարգը պահպանելու համար։ Ջենք կրելու խնդրում հայերի իրավունքները հավասարեցվում էին մահմեդականների իրավունքներին։ Համաձայնագրով թեև «համիդիե» գնդերը չէին ցրվում, բայց ընդհանուր զորահավաքից ու զորաշարժերից դուրս, խաղաղ ժամանակ, նրանք զրկվում էին զենք կրելու իրավունքից։ Հայկական դպրոցները պետք է ֆինանսավորվեին պետական բյուջեից։ Պաշտոնական հարաբերություններում բավական տեղ էր տրվում մայրենի լեզվին և այլն։

Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների այս փուլում ևս որոշակի դրևորվեցին իմպերիալիստական մեծ տերությունների շահերի բախումները և նրանց պայքարը Մերձավոր ու Միջին Արևելքի այս աշխարհատարածքում ռազմավարական դիրքեր, ազդեցության գոտիներ, սպառման շուկաներ և հումքի աղբյուրներ զավթելու համար։ Արևմտյան Հայաստանն ընկած էր մրցակցության ու շահերի բախման խաչուղիներում։ Հայ ժողովրդի համար ստեղծված ծանր դրությունը քիչ էր հետաքրքրում և չէր մտահոգում աշխարհի վերաբաժանման համար պայքարի ելած իմպերիալիստական գիշատիչներին։

Բարենորոգումների մասին ռուս-թուրքական համաձայնագիրը միանշանակ գնահատականի չարժանացավ հայ հասարակական-քաղաքական շրջանների, ազգային երևելի գործիչների կողմից։

Նախ՝ ասենք, որ պաշտոնական Ռուսաստանը գոհ էր իր դիվանագիտական «ավարից»։ Հունվարի 27-ին Սազոնովին հղած հեռագրում դա հաստատում էր Գուլկևիչը. «այդպիսով ընդգծվում է պաշտոնապես Ռուսաստանի ղեկավար դերը հայկական բարենորոգումների հարցում, թեև հաստատվում է Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը։ Այդ հանգամանքն, իհարկե, չի կարող չունենալ ամենանպաստավոր հետևանք Ռուսաստանի միջազգային հեղինակության համար և Մեր-

[93] Տե՛ս նույն տեղում, էջ 93—94։
[94] Տե՛ս նույն տեղում, էջ 127։

ձավոր Արևելքի քրիստոնյա ազգաբնակչության սիրտը կլցնի նոր երախտագիտությամբ դեպի ռուսական միապետը»[95]։

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-ը շնորհակալական ուղերձներ հղեց Նիկոլայ 2-ին, Սազոնովին և Վորոնցով-Դաշկովին, որոնցում նա «սիրեցյալ միապետ թագավոր կայսրին» անվանում էր «ազատարար», որի «արքայական կամքով հայ ժողովուրդը նորից կանչվում է պատմական ասպարեզ», Կովկասի փոխարքային համարում էր «հայ ժողովրդի ճշմարիտ ձգտումների մեկնաբանիչ», իսկ արտաքին գործերի նախարարին՝ «մարդասեր»։ Այնուհետև, մտահոգված հնարավոր բարդացումներից, նա հատուկ հույս էր հայտնում, որ «կայսերական կառավարությունը հզոր ձեռքով կկանգնեցնի հնարավոր արյունահեղությունները Թուրքաց Հայաստանում և չի մերժի հայերին աջակցելու, որ նրանք պաշտպանեն իրենց կյանքը, պատիվը և ստացվածքը»։

Միանգամայն ճիշտ գնահատելով եվրոպական տերությունների հակահայկական քաղաքականության ողջ նախընթացով պայմանավորված՝ 1914 թ. հունվարի 26-ի խուզված, թլպատված ռուս-թուրքական համաձայնագրի թուրք-գերմանական ոճավորման էությունը, Լեոն գրել է. «Նորից պատռված ու ոտի տակ էր տրորված Հայաստանի բարեկարգման թույլ փորձերի ծրագիրը։ Գուլկևիչը գրում էր, թե ռուսական դիվանագիտության ձեռք բերած արդյունքը սկիզբ է մի նոր, ավելի երջանիկ շրջանի հայ ժողովրդի պատմության մեջ։ Ավա՜ղ։ Երջանկություն չտեսավ նահատակ թուրքահայ ժողովուրդը։ Եվ այժմ նրա արյունոտ պատմության ամենասարսափելի մի երկունքն է տեղի ունենում, երբ նորից ու նորից նորա գոյությունն անգամ սաստիկ վտանգված է...»[96]։

Ընդհանրապես Հայկական հարցի շուրջ դիվանագիտական պայմանագրերի և համաձայնագրերի նշանակությունը տեսնելով «միջազգային իրավունքի ուժի մեջ», Լեո պատմաբանն ու հրապարակախոսն անխնա հեգնանքով է որակավորում հայ ժողովրդի վերջնական արդյունքը՝ «այդ իրավունքի ուժը դուրս է գալիս անզոր-անիրական»։ Այդպիսին է իմպերիալիստական անբարոյական դիվանագիտության և իրավունքի ուժը, որ ծառայում է միայն «այս աշխարհի հզորներին» և դաժանորեն հարվածում փոքր ժողովուրդներին։

Ըստ Լեոյի, ահավոր եղեռնը փաստորեն սկսվեց մինչև Առաջին աշխարհամարտը, երբ թույլ, բայց կատաղած թուրքական բռնապետությունը, մի կողմից՝ հարկադրված էր բանակցությունների մեջ մտնել մեծ տերությունների հետ՝ հայկական բարենորոգումներ անցկացնելու համար, իսկ մյուս կողմից՝ ոգևորված Գերմանիայի հովանավորությամբ, բորբոքում էր ազգամիջյան կրքերն ու թշնամանքը հայ և ոչ թուրք մյուս ժողովուրդների միջև և հատկապես հայերի նկատմամբ կիրառում դարանակալ քաղաքականություն, կազմակերպում հալածանքներ և ջարդեր։

Ալ. Մյասնիկյանը հատուկ հոդված գրեց ռուս-թուրքական համաձայնագրի թարմ հետքերով և ցույց տվեց, որ այն «այնքան անորոշ, անգույն ու անկերպարանք է, որ դժվար է լուրջ կերպով «օրենսդրական» բառը գործածել նրա նկատմամբ... Մեր կարծիքով՝ հայկական ռեֆորմների նախագիծը ոչ մի պատասխան չի տալիս այն «անիծյալ հարցին», որի անունն է թուրքահայ խնդիր»։ Դա թուրքահայերի դժնդակ կացության և նրանց կատարյալ իրավազրկության հարցն է։ Ռեֆորմների նախագիծը ոչ մեկի և ոչ էլ մյուսի մեջ ոչ մի սրբագրություն, շոշափելի սրբագրություն չի մտցնում»[97]։

Ի՞նչ էին անում ազգի ցավով «տառապող» կուսակցությունների «ազգային ջոջերը»։

Դաշնակցության երևելի գործիչներից ոմանք տակավին շարունակում էին քաղաքականություն խաղալ երիտթուրքերի հետ։ Արմեն Գարոն, Վարդգեսը, Վ. Փափազյանը և ուրիշներ դեռ հույսեր էին փայփայում հայկական բարենորոգումների շուրջը՝ զրույցներ վարելով երիտթուրք ղեկավարների հետ։ Բարենորոգումների շուրջը թեժ բանակցությունների օրերին, 1913 թ. դեկտեմբերին, Ջեմալ փաշան իր մոտ է հրավիրում Վարդգեսին և ասում. «Եթե դուք պնդեք եվրոպական հսկողության վրա, մենք ստիպված պետք է ընդունենք, բայց դրա հետևանքն այն կլինի, որ այդ վեց վիլայեթների մահմեդական բնակչությունը ոտքի կկոչի և 300—400 հազար հայ կկոտորվի։ Ռուսները առիթից օգտվելով կգան և կգրավեն այդ նահանգները»[98]։

1914 թ. Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում Երվանդ Օտյանը ծաղրում էր դաշնակցության ղեկավարներից Խ. Մալումյանին (Ակնունի) այն բանի համար, որ նա «միշտ դեպի երկիր է հանկերգում, առանց ինքն այն տեսնել ուզելու, նման է մի ժամկոչի, որը զանգակ է հնչեցնում հավատացյալներին եկեղեցի հրավիրելու, բայց ինքը ներս չի մտնում և աղոթքին չի մասնակցում»[99]։ Այն բանից հետո միայն, բավական ուշացած, երբ երիտթուրքերը մերժեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, պառլամենտի հայ պատգամավորների կողմից բարենորոգում-

95 Նույն տեղում, էջ 110—111։
96 Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 357։
97 «Մշակ», 1914, № 28, փետրվարի 7։
98 «Հայրենիք» ամսագիր, 1922, № 2, էջ 41։
99 Արմէն Գարօ, Ապրած օրեր, Պոսթըն, 1948, էջ 191—192։

ների նպատակին ուղղված անդամ չափավոր ծրագրերն ու առաջարկությունները, երբ փշրվեցին բոլոր հույսերը, այդ պահ միայն հայ գործիչները գիտակցեցին ազգային-քաղաքական բոլոր ուժերի համախմբման անհրաժեշտության հրամայականը։ ՀՀԴ-ի Արևմտյան բյուրոն, ՍԴՀ-ի կուսակցության Տաճկաստանի կենտրոնի վարիչ մարմինը, Սահմանադրական ռամկավարներու կենդրոնական ակումբը և Վերակազմյալ հնչակյան կենտրոնի վարչությունը Կ. Պոլսում հրապարակեցին մի հայտագիր, ուր խոստանում էին միասնաբար գործել «հայկական բարեկեցության իրականացման համար, համերաշխորեն ընթանալ երեսփոխանական ընտրությունների և պառլամենտական խնդիրների մեջ», խոստանում և պահանջում էին «հարգանք միջկուսակցական համագործակցության, հարգանք հայ ժողովրդին, որին պիտի ծառայեն բոլոր կուսակցությունները»[100]։ Տարաբախտաբար բազմախոստում այս հայտարարությունը գործնականում փոխվստահության և համագործակցության չբերեց։ Չափազանց ուշացած էր նաև դաշնակցության քաղաքական ձայնափող «Հորիզոնի» 1913 թվականի՝ «Մեր գործունեության ծանրության կենտրոնը պետք է լինի տաճկահայ ժողովրդի ինքնապաշտպանությունը» խոստովանությունը[101]։ Ընդհանրապես Հայկական հարցի արծարծման պատասխանատու այդ ժամանակաշրջանում հայ կուսակցական մամուլը մնաց դորշ և անսկզբունք։ Նա ազգային շահերի պաշտպանության համար հասարակական կարծիքի մշակման ոչ միայն կազմակերպիչ չդարձավ, այլև ինքը հաճախ խառնիխուռն կարծիքների ու տեսակետների տարածող հանդիսացավ։ Հրապարակումներից շատերը ազգային համախմբման մտածողությունից իրենց շեղվածությամբ ու մակերեսայնությամբ չէին նպաստում համազգային գաղափարախոսության ձևավորմանը, սրընթաց մոտեցող աղետի դեմ ժողովրդի զգոնության բարձրացմանը։ Պատերազմի նախորդող ամիսներին մամուլի էջերում նորից հայտնվեց արժեզուրկ այն մտայնությունը, թե արևմտյան տերությունների աջակցությամբ արևմտահայությունը կթոթափի թուրքական լուծը։

Երիտթուրքերի ղեկավարությունը լավ գիտեր իր գործը։ Պատերազմի նախօրյակին նա սպառնում էր արևմտահայերին՝ չմիանալ, չգործակցել ռուսների հետ, այլապես կջնջվեն ու կփոշիանան։ Այս պահանջը հատկապես խիստ դրվեց դաշնակցության 1914 թ. ամռանը Էրզրումի

[100] Նյութեր ՀՀ Դաշնակցության պատմության համար, Ա հատոր, Բեյրութ [(թ. ա), էջ 187—188։

[101] Տե՛ս «Հորիզոն», 1913, № 65։

համագումարի ժողն, ուր որոշ դաշնակցական գործիչներ փորձեցին երիտթուրքերին «խորհուրդներ» տալ հեռու մնալ վերահաս պատերազմին մասնակցելուց։ «Մենք մեր անելիքի մասին չենք եկել ձեզ հետ խորհրդակցելու, — եղավ համագումարին մասնակցող երիտթուրք գործչի պատասխանը, — և սպասում ենք ձեր այո կամ ոչ պատասխանին. դուք կամ մեզ հետ միացեք, կամ չեզոք, լոյալ մնացեք»[102]։ Երիտթուրքերը օգտագործում էին դիվանագիտության վերջնագրային ոճը, քանզի ներքանք գիտեին արդեն, որ դաշնակցությունը իր նախորդ՝ 1913 թ. օգոստոսին տեղի ունեցած 7-րդ համագումարում որոշել էր ցրել «մահաբեր պատրանքը։ Ժամանակն է նողկանքով երես դարձնենք թուրք պաշտոնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամեն վտանգավոր դավերն եղան մեր ժողովրդի գոյության դեմ։ Չենք հավատում ձեզ, չենք կարող այսուհետև ձեզ վստահել. հայ ժողովրդի ապագան և նրա փրկությունը փընտրելու ենք միմիայն Եվրոպայի խոստացած իրական երաշխիքների մեջ»[103]։ 1914 թ. հուլիսին դաշնակցության 8-րդ համագումարը որոշեց նաև տեղական անվտանգության երաշխիքների համար գաղտնի կերպով զինել բնակչությանը։

Զինվորական ծառայության մասին որոշվում է, որ պետք է ընդհանուր առմամբ ենթարկվել օրենքին, բայց խուսափել, շրջանցել այն։ Նույն համագումարում որոշվեց դաշնակցության Արևմտյան բյուրոն դուրս բերել Կ. Պոլսից։ Կ. Սասունին հետագայում գրում է, որ այդ պահին անգամ դաշնակցությունը «կատարյալ երկվության» մեջ էր դրել խավար հարցը որոշելիս[104]։

Այսպիսով, կարելի է ասել, որ հիմնականում 1913 թվականի կեսերից ՀՀԴ-ի և երիտթուրքերի միջև ռազմավարական դաշինքն արդեն փլուզված էր, իսկ ուժեղի և անզորի մարտավարական դիվանագիտությունը տակավին գոյատևեց մինչև պատերազմը։

1914 թ. աշնանը Թալեաթին հղած իր մի շարք նամակներում, Վանից թուրքական պառլամենտի պատգամավոր Արշակ Վռամյանը (Վրաց) ցույց էր տալիս, որ «կառավարության հայահալած քաղաքականությունն այլևս տխուր ճշմարտություն մըն է», որ թուրքական «մամուլին, օսմանյան տեղեկատու դիվանին, իթթիհադի գործիչներուն և արդի դավլիճեն հայանպաստ, հանդիսավոր բոլոր հավաստիքները դի-

[102] Ե. Գեղամյանց, Հայ ազատագրական շարժումները 20-րդ դարում կամ հայկական հարցի յոթներորդ շրջանը, Բաքու, 1914, էջ 588։

[103] «Դրոշակ», 1914, № 4, էջ 51։

[104] Տե՛ս Կ. Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927, էջ 21։

վանագիտական խաղեր են հայ ժողովրդի գոյության դեմ նյութվող նոր ոճիր մը պատկերելու համար»[105]։

Նա շարունակում էր Հայկական հարցի պատմության և արդիականության մատակարարած ողբերգական փաստերի համադրմամբ և ընդհանրացմամբ Թալեաթին բացատրել, որ «թուրք պետական մարդոց մեծագույն և նշանակալից սխալը եղած է միշտ հայ ժողովրդի ողբերն ու բողոքները «օտար սատրապներու» կամ «դավաճանության» մը վերագրել, փոխանակ անդրադառնալու, թե անոնք անխուսափելի, բնական հետևանք են հին ռեժիմի ահավոր սխալներուն, անհետացող արձագանք դառած ոճիրներուն։ Եվ եթե բողոքողը չէր, որ հանցավոր էր, այլ անոնք, որ այդ բողոքին առիթ տվող դժոխք կացությունը ստեղծել և անոնք, որ զայն պահպանել ջանացին»[106]։

Արդ՝ ի՞նչ դիրքորոշում ունեցան հայ հասարակական-քաղաքական մյուս ուժերը՝ հոսանքներն ու կուսակցությունները, Հայկական հարցի նոր արծարծումների, երիտթուրքերի խոսք ու գործի նկատմամբ։

Արևմտահայ պահպանողականության ճանաչված դեմքերից առաջինը Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանն էր, որ պատրաստվում էր երախտագիտական ուղերձ հղել սուլթանին սահմանադրության պարգևման համար, բայց պատրիարքարան ներխուժած բազմությունը ստիպեց նրա հրաժարականը։ Դա տարիներ շարունակ արևմտահայության մեջ կուտակված ցասման արտահայտությունն էր հայակեր բռնակալի քիմ տակ ավելի քան մեկ տասնամյակ գործող պատրիարքի դեմ։ Եվ պատրիարքը կատարեց ժողովրդի պահանջը՝ բռնելով իր տան ճամփան։ Հետագա տարիներին արևմտահայ պահպանողականությունն աստիճանաբար հիասթափվեց երիտթուրքական վարչակարգից և ազգային ազատագրության հույսերը վերստին կապեց տերությունների միջամտության հետ։ Երիտթուրքական հեղաշրջման արշալույսը աչքալուսանքով դիմավորեցին նաև արևմտահայ լիբերալները, որոնք այն կարծիքն ունեին, որ սահմանադրության ընդունումը կթեթևացնի արևմտահայության վիճակը և կնպաստի նրա առաջընթացին։ Լիբերալները հեղաշրջումն ողջունում էին հատկապես գտնելով, որ առաջընթացը պետք է կատարվեր առանց հասարակական հարաբերությունների արմատական հեղաբեկումների, ազգային խնդիրը, այդ թվում և արևմտահայերի հարցը կլուծվի առանց ցավագին կատակլիզմների։ Նրանց պետք չէր անկախություն կամ ինքնավարություն. գոհ էին, որ սահմանադրությունը հաստատելու է կյանքի ու կայքի, խոսքի ու մամուլի ազատություն։ Պաշտպանելով երկիրը համատեղ ուժերով բարեկարգելու սահմանադրության սկզբունքները, նրանք միայն դեմ էին երիտթուրքերի օսմանացման քաղաքականությանը[107]։

Ստեղծված նոր պայմաններում էական փոփոխություններ չկրեցին նաև արևելահայ և արևմտահայ պահպանողականների ու լիբերալների դիրքորոշումները։ Մինչև Հայկական հարցի նախապատերազմյան նոր արծարծումը արևելահայ լիբերալները ևս Թուրքիայում հայկական ինքնավարության պահանջ չէին դնում, Համբարձում Առաքելյանն ու Ալ. Քալանթարը խոսում էին միայն վարչական ապակենտրոնացման մասին, որն ի վերջո հանգում էր անձի և ինչքի ապահովության պահանջին։

Արևմտյան Հայաստանում տերությունների միջամտությամբ բարենորոգումներ մտցնելու հարցերի քննարկման ժամանակաշրջանում արևելահայ լիբերալները առաջ քաշեցին եվրոպացի վերահսկողությամբ հայկական ինքնավարության ստեղծման պահանջը։ «Տեղական ավտոնոմիա՝ եվրոպացիների հսկողության ներքո և զենք կրելու իրավունք՝ ինքնապաշտպանության համար, — ահա թե ինչ պետք է պահանջենք բոլոր հայերս Թուրքիայի մեր հայ եղբայրների համար»[108]։ Նրանք ողջունեցին բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագիրը։ Արևելահայ լիբերալներն ունեին մի լավատեսություն և դա նրանք կապում էին ավելի շատ ոչ թե բարենորոգումների, այլ հայկական տարածքները Ռուսաստանին միակցելու հեռանկարների հետ։ Այս հարցում համարյա գոյություն չուներ լիբերալների և պահպանողականների տեսակետների տարանջատում։

Ի՞նչ դիրք գրավեց հայ հասարակական միտքը Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպիսին էր ներկայանում նրան Հայկական հարցի լուծման հեռանկարը։

1914 թ. հոկտեմբերին Կ. Պոլսի հայոց պատրիարքի նախաձեռնությամբ հրավիրված տարբեր հոսանքների և կուսակցությունների խորհրդակցությունն արձանագրեց, որ արևմտահայոց վիճակը շատ ծանր է և հանձնարարեց պատրիարքին ու Ազգային վարչությանը բարվոք հարաբերություններ մշակել կառավարության հետ, «շրջաբերական հրահանգ մը ղրկել անմիջապես բոլոր գավառները և հրավիրել ժողովուրդը կատարել իր պարտականությունը»։

---

105 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թղթ. 18։
106 Նույն տեղում, թղթ. 27։

107 Տե՛ս «Արևելք», 1910, հունվարի 22։
108 «Մշակ», 1912, № 196, սեպտեմբերի 5։

Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցությունը ևս պատերազմի սկզբում կանգնեց օսմանյան ընդհանուր հայրենիքի պաշտպանության դիրքերում և արևմտահայերին զինվորական պարտքի կատարմանը հորդորեց։ Ռամկավարները դեմ էին նաև կամավորական շարժմանը, որովհետև այն պիտի բորբոքեր «Թուրքերու մինչև այժմ զսպված բարբարոսական կրքերը և այս անգամ Թուրքահայությունը անխնայորեն պիտի ջարդվի ամեն տեղ, մանավանդ որ ինքնապաշտպանության միջոցներեն բոլորովին զուրկ է»[109]։

Արևելահայ պահպանողականների և լիբերալների տեսակետները պատերազմի նկատմամբ վերաբերմունքի հարցում համարյա նույնական էին։ Երկուսն էլ Ռուսաստանին ազատագրական առաքելություն էին վերագրում։ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-ը հույս էր հայտնում, որ Ռուսաստանը սկսված պատերազմում կավարտի քրիստոնյա ժողովուրդների ազատագրման իր պատմական մեծագործությունը։ Լիբերալների կարծիքով, այդ ազատագրական պատերազմի հաղթական ավարտով Հայկական հարցը կարելի է լուծել երկու եղանակով. կամ Արևմտյան Հայաստանը կարելի կլինի կցել Ռուսաստանին և կամ էլ նրան կտրվի ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո՝ կցելով նաև Կիլիկիան[110]։ Լիբերալներից ոմանք խոսում էին նաև գալիք Հայաստանի վարչական կառուցվածքի մասին։ Մի մասը բավարարվում էր ինքնավարությամբ, մյուսը խնդիր էր դնում ստեղծել հայկական կիսանկախ պետություն՝ Ռուսաստանից սերված որևէ իշխանի գլխավորությամբ[111]։ Ռուսաստանին Արևմտյան Հայաստանի բռնակցման արևելահայ մեծահարուստ բուրժուական խավի տեսակետի հետ համաձայն էր նաև արտասահմանի հայ բուրժուական մտավորականությունը։ Մ. Փորթուգալյանը տակավին հույս ուներ, որ Թուրքիայի ջախջախումից հետո արևմտահայությունը կարող է ձեռք բերել ազատություն՝ իր անկախության հռչակումով և բարգավաճ Հայաստանի ստեղծումով, բայց անպայման Ռուսաստանի հովանավորության տակ։

ՀՀԴ-ն որոշել էր պատերազմի ժամանակ պահպանել չեզոքություն։ Երիտթուրքերի բոլոր փորձերը նրան ներքաշելու հակառուսական ուժերի ճամբարը՝ ավարտվեցին անհաջողությամբ։ Խզվելով երիտթուրքերից, նա պատերազմի առաջին իսկ օրից, ռուսական բանակներին օգնելու համար, ձեռնամուխ եղավ հայկական կամավորական ջոկատների ստեղծմանը։

[109] Ա. Պարթևյան, *Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 254։*
[110] *Տե՛ս «Մշակ», 1914, № 289։*
[111] *Տե՛ս* **Г. Мнацаканян,** Разрешение армянского вопроса, М., 1914, стр. 35-37.

Հայկական կամավորական շարժման ծավալման գործում որոշիչ դեր ստանձնեց Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը։ Ճարպիկ այդ սիվանագետը իր կողմը քաշեց Թիֆլիսի ազդեցիկ համարյա բոլոր հայերին, կառավարության անունից նրանց շռայլ խոստումներ տվեց, չմոռանալով գծել հայ ժողովրդին սպասվող երջանիկ հեռանկարը՝ Հայկական հարցի լուծումը ամենաթիչը Արևմտյան Հայաստանի ինքնավարության տարբերակով։ Հայկական կամավորական ջոկատների նպատակը պետք է լիներ ռուսական զորամիավորումների կազմում մասնակցել Թուրքերի դեմ կռիվներին, նպաստել Արևմտահայաստանն ազատագրող ռուսական բանակի մարտական գործողություններին։ Կամավորական շարժման կազմակերպման ղեկը վարում էր հայ հասարակական և քաղաքական գործիչներից, նշանավոր դեմքերից կազմված Ազգային բյուրոն, որը գոյատևեց մինչև 1917 թվականի հոկտեմբերը։ Ազգային բյուրոն ստեղծվել էր 1912 թ. հոկտեմբերին Թիֆլիսի, Երևանի, Բաքվի, Նոր-Նախիջևանի, Բաթումի, Արմավիրի և Կովկասի հայաշատ այլ վայրերի պատգամավորների խորհրդակցություն-համագումարում, որի նպատակն էր՝ օգտվել Բալկանյան պատերազմների հետևանքով ստեղծված բարենպաստ իրադրությունից և նպաստել Հայկական հարցի լուծմանը։ Համագումարն ընտրում է 7 հոգանոց Ազգային բյուրո (Ս. Հարությունյան, Ալ. Խատիսյան, Ալ. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հ. Թումանյան, Ն. Ադրալյան), որը վարել է ընթացիկ գործերը և նախապատրաստել նոր համագումարի հրավիրումը։ Երկրորդ համագումարում Ազգային բյուրոյի կազմը ընդլայնվել է (Լեո, Խ. Աֆրիկյան, Հ. Արղության, Ա. Աբելյան, Ս. Սահակյան և ուրիշներ)։ Փաստորեն Ազգային բյուրոյում ներկայացված էին բոլոր ազդային կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները։ Եվրոպական տերությունների մոտ Հայկական հարցը վերստին բարձրացնելու նպատակով ստեղծված պատվիրակության ղեկավար Ազգային ժողովի կողմից նշանակվում է Պողոս Նուբար փաշան՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի առաջարկությամբ-երաշխավորմամբ։

Ազգային բյուրոն ցարական կառավարության կողմից պաշտոնապես չէր ճանաչված, սակայն իշխանությունները քաջատեղյակ էին նրա գործունեությանը և արդելքներ չէին հարուցում նրա առջև։ Ազգային բյուրոն իր ճյուղերով և գործակալներով անցել էր կամավորական շարժման գլուխ։ Բանաստեղծ Հ. Թումանյանը և բժիշկ Հ. Զավրիևը Ազգային բյուրոյում ներկայացնում էին ռուսական կողմնորոշման թևը։ Անդրանիկը, որն ինքն էլ բանաստեղծի ազդեցությամբ խորացրել էր իր ռուսասիրությունը, նրա գործունեության այդ շրջանը նկատի ունենալով,

հետագայում գրել է. «Թումանյան իր հեռատես կարողությամբ հասկացած և ըմբռնած էր, թե հայ ժողովուրդն իր աշխարհագրական դիրքին համար պետք է կապե իր քաղաքական ճակատագիրը ռուսներու բախտին հետ»[112]:

Կամավորական շարժման շարքերը խտացնելու և նրան ղեկավարելու համար Թիֆլիս էին շտապում հայ ազգային-ազատագրական շարժման խիզախ դեմքեր, ջերմ հայրենասերներ ու հանդուգն ռազմիկներ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Վարդանը, Մուրադը, Քեռին, Սմբատը, Սեպուհը, Թորգոմը, Արմեն Գարոն, Սողոմոն Թեհլերյանը, Իշխան Արղությանը և շատ ուրիշներ: Գալիս էին անկախ քաղաքական հայացքներից և կուսակցական պատկանելությունից: Եթե 1914 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կամավոր գրվողների մեջ գերակշռում էին արևելահայերը, ապա երկու-երեք ամիս անց նրանց հիմնական մասն արդեն Կովկասում ապաստանած արևմտահայերն էին:

Պատմական իրողություն է, սակայն, որ բոլորը չէին խանդավառված կամավորական շարժմամբ: Անդրանիկն անգամ սկզբում ինչ-որ մտավախություն ուներ: Նրա խոր ու թափանցող միտքն ըմբռնում էր երևույթների դրական ու բացասական հետևանքները: Գալով Թիֆլիս, նա առաջին օրերին իրեն հարց էր տալիս. ինչո՞ւ համար է կառավարությունը խրախուսում և կազմակերպում այս շարժումը, չէ՞ որ մի քանի հազար հայ կամավորները Կովկասյան ճակատի ընդհանուր հրամանատար, գեներալ Ալեքսանդր Միշլաևսկու վկայած 800 հազարանոց ռուսական բանակի շարքերում չէին կարող եղանակ ստեղծել, բայց դրա փոխարեն Թուրքերին հավելյալ առիթ կտրվեր հայկական նոր ջարդեր իրականացնելու համար[113]: Սակայն հայ երիտասարդության աննախընթաց խանդավառությունը, նրա հայրենասիրական ոգու հուժկու պոռթկումը, ինչպես նաև իշխանությունների առատ խոստումները Անդրանիկին նույնպես կանգնեցրին շարժման գլուխ:

ՀՀԴ-ի նշանավոր գործիչներից ոմանք ևս դեմ էին կամավորական շարժմանը, ինչպես, օրինակ, Արամ Մանուկյանը, Սիմոն Վրացյանը և ուրիշներ: Անդրադառնալով Կովկասում տիրող ընդհանուր տրամադրություններին, Ս. Վրացյանը 1914 թ. սեպտեմբերին Թիֆլիսից դաշնակցության Ամերիկայի կենտկոմի անդամ Հ. Կոբոյանին գրում է. «Այսքանը ըսեմ, որ ես դեռ չեմ կրցած հաշտուիլ կացության հետ: Տեսակ մը փսիխոզ (հոգեկան հիվանդություն՞ն) կը տիրե ամեն կողմ: Պատե-

[112] «Պայքար», Բոստոն, 1923, մայիսի 12:
[113] Տե՛ս Հր. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Երևան, 1996, էջ 380—381:

րազմը կը նկատեն հարմար առիթ հայկական հարցի արմատական լուծման համար: Թիֆլիս հասնելուս հաջորդ օրը մոտս եկան Անդրանիկը, Համազասպը և Դրոն՝ տեղեկություն առնելու համար Ընդ. ժողովի և Կարինի վիճակի մասին: Պատմեցի, որ Թուրքերը սկսեր են սահմանամերձ վայրերեն տեղահանել հայերը, որ չեթաները կը կողոպտեն հայ գյուղերը և երբ վախ հայտնեցի, որ կարող են կոտորածներ տեղի ունենալ, Անդրանիկը հեգնական կերպով խնդաց և ասաց, որ «մեկ-երկու ամսեն էրզրում կը լինենք»: Նույն կարծիքին էին նաև Համազասպն ու Դրոն: Վերջը տեսա, որ նույն համոզումը տիրող է և՛ Ազգային բյուրոյի, և՛ մեր ղեկավար ընկերների մեծ մասի մեջ»: Այնուհետև նշելով, որ շուտով գումարվելիք ՀՀԴ-ի Կովկասի ռայոնական ժողովը վերջնական որոշում կընդունի կամավորական խմբեր կազմելու մասին, Վրացյանը գրում է. «...Ռայոնական ժողովին մեջ հակառակ պիտի լինեմ կամավորական շարժման, բայց կրկնեմ, անօգուտ է. պատմությունն ունի իր տրամաբանությունը, պիտի կրկնվի Ներսես Աշտարակեցիի օրերը, վախնամ, ավելի վատ հետևանքներով...»[114]:

Կամավորական շարժմանն իրենց գործուն մասնակցությունը բերեցին նաև մյուս կազմակերպություններն ու կուսակցությունները՝ հրնչակները, ռամկավարները, կադետները, սպեցիֆիկները...

Պատերազմը մինչև հաղթական ավարտի հասցնելու ջերմ կողմնակից էր Հայ ժողովրդական կուսակցությունը, լիբերալ մի կուսակցություն, որը հիմնել էին 1917 թ. ապրիլին հայ կադետները: Մինչև որպես կուսակցություն կազմակերպորեն ձևավորվելը կադետները (Մ. Պապաջանյան, Հ. Առաքելյան, Խ. Ամիրյան և ուրիշներ) գործուն աշխատանք ծավալեցին կովկասյան ռուսական զորքերին համակողմանի օգնություն և աջակցություն կազմակերպելու համար: Գերմանիայի գլխավորած բլոկի պարտության մեջ տեսնելով Թուրքիայի անդամահատման և Հայկական հարցի լուծման մայրուղին, հայ կադետները դեռևս պատերազմի առաջին ամիսներին արդեն նախագծում էին ինքնավար Հայաստանի սահմանները՝ ելնելով ինչպես պատմական, այնպես էլ էթնոդեմոգրաֆիական սկզբունքներից: Նրանք Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը հնարավոր էին տեսնում միայն Ռուսաստանի օգնությամբ և խնամակալությամբ, իսկ ինքնավա՛ր Հայաստանն իր գոյությամբ հուսալի պատնեշ կդառնար Ռուսաստանի կովկասյան հանգների պաշտպանության և մերձավորարևելյան երկրների հետ առևտրատնտեսական կապերի զարգացման համար:

[114] Սիմոն Վրացյան, Հին թղթեր նոր պատմության համար, էջ 120:

20-րդ դարի առաջին քսանամյակին Հայկական հարցի լուծման ուղիների որոնման իրենց տեսակետը պարզեցին նաև սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («սպեցիֆիկներ») տեսաբանները, որոնց հասարակական զարգացման ուղիների վերաբերյալ տեսական հիմնադրույթները ժամանակին մերժվեցին հայ քաղաքական մտքի ամենատարբեր ուղղությունների կողմից: Սպեցիֆիկներն ուրույն տեսակետներ ունեին նաև Հայկական հարցի լուծման ուղիների մասին: Հայկական հարցը համարելով միայն արևմտահայերի հարց, նրանք համոզված էին, որ դարասկզբի քաղաքական և միջազգային խառնակ պայմաններում այն հնարավոր չէ ցանկալի վերջնագծի հասցընել, որովհետև «ոչ Թուրքիայի հեղափոխական ուժերն են բավարար և ոչ էլ Թուրքիայով շահագրգռված եվրոպական մեծ տերությունների դիպլոմատիկական հարաբերությունները նպաստավոր, որպեսզի վճռվի «Արևելյան խնդրի» այդ բարդ հատվածը»[115]: Իր «Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան» գրքում սպեցիֆիկների տեսաբաններից Բախշի Իշխանյանը փորձում է ուրվագծել Հայկական հարցի լուծման ուղին: Նա գտնում էր, որ «Հայկական հարցը... ունի լուծման միևնույն եզակի և բացառիկ մեթոդը, — դա եվրոպական վեց մեծ տերությունների կամ նրանց մեծագույն մասի, կամ առնվազն նրանցից երեքի, սակայն ամենաազդեցիկների հավաքական միջամտությունն է դիվանագիտական միևնույն համերաշխ, անհակասական պլատֆորմի վրա»: Իսկ ե՞րբ նորից տեղի կունենա Հայկական հարցում տերությունների միջամտությունը, Բ. Իշխանյանը պատասխանում է՝ միայն այն դեպքում, երբ մեծ տերություններն ունենան տնտեսական և քաղաքական իրական շահեր այն միջավայրում, ուր հարկադրական պահանջ կա սահմանելու մանր ազգերի քաղաքական ճակատագիրը: Սակայն այս հեռանկարի հանդեպ էլ Բ. Իշխանյանը լավատեսորեն չի տրամադրված, որովհետև մեծ տերություններից ոչ մեկը «չունի որևէ իրական ինտերես՝ ձեռներեց լինելու Հայկական հարցի լուծման, նպաստելու առանձնապես խոստացված ռեֆորմների գործադրությունը: Եվ եթե մեկ կամ մյուս պետությունը որոշ պայմաններում արտահայտել է ուժ ու ցանկություն առաջ ընթանալու հօգուտ հայերի, ապա այդ եղել է ոչ թե ի սեր հայերի, ոչ թե «անկեղծ» մոտիվներից դրդված, այլ... նյութապաշտական մոտիվներից, ստամոքսի զոհիկ պահանջներից շահագրգռված»[116]:

[115] Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպչական սիստեմը և կանոնադրությունը, 1905, էջ 31 (կոնսպիրացիայի նպատակով հրատարակման վայրը չի նշված):

[116] Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 14—17, 82:

Իսկ ո՞րն է ելքը: Բ. Իշխանյանը ելքը տեսնում էր հակասուլթանական շարժման տեսական նախապատրաստման միասնական ճակատով՝ ապստամբության միջոցով Թուրքական բռնատիրական վարչակարգի տապալման մեջ: Իսկ դրա համար հարկավոր է նախապատրաստվել մինչև այն աստիճան, որ «ապագա համաթուրանական հուզմունքի և ապստամբության օրերին Թուրքահայ ժողովուրդը դառնա ազատագրության առաջնակարգ ուժերից մեկը...

Թուրքահայոց հարցը Թուրքահայերի համար, առանց աչք դնելու դրսի հայերի օժանդակության վրա, Թուրքահայ գործի ղեկավարությունը Թուրքահայերի ձեռքում, առանց ենթարկվելու կովկասյան ռոմանտիկ հեղափոխականների դիրեկտիվներին, հրամաններին, Թուրքահայերի ապագան որոնել համաթուրքական ապագայի ծոցում, առանց խաբվելու ուտոպիական ծրագրերից և անբովանդակ պատրանքներից: Ահա մեր ասելիքը»[117]:

Համարյա նույն գիծն էր պաշտպանում Դ. Անանունը, որի տեսակետներին կանդրադառնանք ուսումնասիրության վերջին՝ «Հայկական հարցը մինչխորհրդային հայ պատմագրության» մեջ գլխում: Նշենք միայն, որ քննադատելով սպեցիֆիկների մշակութային ինքնավարության տեսությունը, Ստ. Շահումյանը հատկապես իր «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատության մեջ գտնում էր, որ պետական սահմանադրությունը պետք է «երաշխավորի ազգերի ինքնուրոշման իրավունքը: Դա նշանակում է ամենից առաջ, որ եթե մի որևէ ազգություն՝ օբյեկտիվ-տնտեսական թե սուբյեկտիվ-հոգեբանական պատճառներով չի կարող կամ չի ցանկանում մի ժողովուրդ կազմել ռուս և մյուս ազգերի հետ միասին, — նրան սահմանադրությունը իրավունք պետք է տա բաժանվելու և ինքնուրույն պետություն կազմելու»[118]: Շահումյանն առաջարկում էր Հայկական հարցը լուծել ինքնորոշման սկզբունքով «Թուրքահայաստանի հարցի լուծումը մենք պետք է թողնենք այդ մարզի բնակչությանը իրենց, որոնք իրենք պետք է որոշեն իրենց բախտը: Ռուսաստանին միանալու՝ նրանց որոշման դեպքում, նրանք պետք է միացվեն հայերին»[119] (արևելահայերին. — Ս. Ն.):

Մի ուրիշ առիթով Ստ. Շահումյանն այն տեսակետն էր հայտնում, որ եթե հաշվի չառնենք տեսակետների մեջ և գործելակերպում եղած առանձին շեղումներն ու տատանումները, ապա կարող ենք ասել, որ պատերազմին նախորդող տարիներին և պատերազմի ընթացքում հայ-

[117] «Երկրի ձայն», 1907, № 25:

[118] Ստ. Շահումյան, Եվր, հ. 2, Երևան, 1976, էջ 415—416:

[119] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 516:

կական կուսակցություններն ու կազմակերպությունները հիմնականում շարունակում էին հույսերը դնել դրսի ուժերի միջամտության վրա, հավատալ Անտանտի տերությունների պետական ու դիվանագիտական գործիչների հայասիրական ճառերին ու հայտարարություններին։ Դրա յուրօրինակ արտահայտությունը Պողոս Նուբարի նախագահությամբ և Ա. Ջոպանյանի, Վ. Թեքեյանի, Գ. Նորատունկյանի, Մ. Տամատյանի և ուրիշների անդամակցությամբ Հայկական հարցը բարձրացնելու նպատակով ստեղծված պատվիրակության տևական գործունեությունն էր, որը պատերազմի տարիներին բախում էր Անտանտի երկրների դռները և աղերսում, որ նրանք Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարածքի վրա ստեղծեն հայկական ինքնավարություն իրենց հովանավորության ներքո։

1917 թվականը բախտորոշ տարի էր ոչ միայն ռուսական կայսրության համար, այլև ճակատագրական՝ բովանդակ հայ ժողովրդի, Հայկական հարցի համար։ Պատմությունն առավել քան դժվար պարտականություն էր դնում հայ հասարակական-քաղաքական գործիչների վրա։ Մարդաթափ Արևմտյան Հայաստան, Հայկական հարցի ներկան ու ապագան մշուշի մեջ, համազգային ծրագրի բացակայություն և գործելակերպի անորոշություն... Ահա այսպիսի կացության մեջ էր հայ ժողովուրդը դիմավորում Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխության լուրը, ընդամին, դիմավորում էր խանդավառ, բնավ չմտաբերելով կամ չպատկերացնելով կատարվածի տխուր հետևանքների մասին։

Ի՞նչ իմանային, որ Ռուսաստանը դառնալու էր «ամենադեմոկրատական երկիրն աշխարհում» և նրանում գլուխ էր բարձրացնելու կործանարար անիշխանությունը, որ ազատության բուրժուադեմոկրատական կարգախոսները միաժամանակ բարենպաստ պայմաններ էին ստեղծելու «ազգերի խառնարան» Կովկասը դարձնելու «ազգերի դժոխարան»։

Ժամանակավոր կառավարությունը ժողովրդին հղած դիմումի մեջ տալիս էր խոսքի, մամուլի, ժողովների, հանրահավաքների ու գործադուլների ազատություն, քաղաքական բանտարկյալների ներում, Սահմանադիր ժողովի գումարում, տեղական ինքնավարության հաստատում և այլն։ Ժամանակավոր կառավարությունը լիակատար ինքնավարություն էր խոստանում Լեհաստանին ու Ֆինլանդիային։

Ժամանակավոր կառավարության և նրա իշխանության տեղական մարմինների կողքին հրապարակ եկան նաև այլընտրանքային մարմինները՝ խորհուրդները, որոնց ղեկավարությունը հիմնականում անցավ մենշևիկների, էսէռների ձեռքը և ուր աստիճանաբար ազդեցիկ դիրքեր էին ձեռք բերում նաև բոլշևիկները։

Ժամանակավոր կառավարությունը կայսրության տարածքները ղեկավարելու համար շուտով ստեղծեց իր երկրամասային մարմինները։ Մարտի 18-ին Պետրոգրադից Թիֆլիս հասավ կառավարության կողմից կազմված մի հատուկ մարմին, որը ստացավ Անդրկովկասի հատուկ կոմիտե (Օզակոմ) անունը։ Անդրկովկասում իշխանության այդ գերագույն մարմնի նախագահ էր նշանակվել կադետական կուսակցության նշանավոր գործիչ Վ. Խատիսովը (ռուս), որը գալիս էր փոխարինելու փոխարքային։ Նրա հետ Կովկաս էին եկել Պետդումայի անդամներ Մ. Պապաջանյանը (հայ), Կ. Աբաշիձեն (վրացի), Չխենկելին (վրացի) և Մ. Ջաֆարովը (կովկասյան թուրք)։

Ժամանակավոր կառավարությունը հանդես եկավ պատերազմը մինչև հաղթական ավարտն հասցնելու ցարական քաղաքականության հետևողական պաշտպանությամբ։ Դաշնակից պետություններին հղած ուղերձում նա նշում էր, որ Ռուսաստանը կկատարի դաշնակցային բոլոր պարտավորությունները։ Այդ քաղաքականությունը պաշտպանում էին երկրի բոլոր քաղաքական կուսակցությունները և հոսանքները, բացի բոլշևիկներից, որոնք հանդես էին գալիս պատերազմի քաղաքականության դեմ և պահանջում էին զորքերը դուրս բերել գրավված տարածքներից։

Մատհոդ առաջին հերթին սեփական ժողովրդի ճակատագրով, հայ քաղաքական կուսակցությունները հանդես էին գալիս պատերազմը շարունակելու և ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից դուրս չբերելու պահանջով, քանի որ հակառակը հղի էր աղետաբեր վտանգներով՝ առաջին հերթին արևմտահայության համար։ Ոչ մի երաշխիք չկար, որ ռուսական զորքերի նահանջից հետո Արևմտյան Հայաստանը նորից վերագրաված թուրքական զորքերը չէին ներխուժի Անդրկովկաս և սրի չէին քաշի նաև արևելահայությանը։

Հասկանալի պատճառներով, հայկական տարածքներից ռուսական զորքերը դուրս բերելու տեսակետի դեմ խիստ բացասական վերաբերմունք դրսևորեցին արևմտահայ գաղթական զանգվածները և նրանց ղեկավարները։ Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի մնալը, այդ պահին ստեղծված կացության մեջ, նրանք իրավացիորեն համարում էին հայրենի օջախներ վերադառնալու միակ հնարավոր պայմանը։ Ուստի Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայկական հարցի բնույթի տարբերիչ կողմերից մեկն այն էր, որ հարցն արծարծվելու էր շարունակվող հաղթական պատերազմի պայմաններում, առավել քան երբևէ դառնալով պատերազմական հարց, անեքսիայի՝ հայ ժողովրդի

համար շահավետ և առաջադիմական իմաստով։ Արդ՝ Հայկական հարցը չուներ իր նախորդ փուլերին հատուկ միջազգային դիվանագիտական ուղղվածությունը, չէր հանձնվելու վեհաժողովների քմահաճույքներին։

1917 թ. Հայկական հարցը դարձել էր ավելի շատ բուն հայոց հարց, որը պայմանավորվում էր հայ իրականության ներքին կյանքի հակասական խնդիրներով։ Դրանք էին՝ նախ և առաջ Հայկական հարցի բարձրացման նպատակահարմարության, ինքնավարության կամ բռնակցման ընտրության, ռազմաճակատի պահպանման, հաղթական պատերազմի շարունակման, վերջինիս երաշխիքը հանդիսացող ազգային զորամասերի ձևավորման, արևմտահայության և արևելահայության շահերի համատեղ գործունեության, Արևմտյան Հայաստանում քաղաքացիական իշխանության ստեղծման, ինքնապաշտպանության, Ազգային բյուրոյի վերակազմավորման. Անդրկովկասի ազգային հարցի, Հայկական հարցի լուծման համար հայկական և օտար միջազգային կազմակերպությունները ներգրավելու, գաղթականության և այլ խնդիրները։ Այս բոլորի ամբողջությունը, հարկավ, ռուս-հայկական հարաբերությունների սերտացման հենքի վրա կազմում էր 1917 թ. փետրվարից հոկտեմբերն ընկած ժամանակաշրջանում Հայկական հարցի էությունը[120]։

1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվեց Թուրքահայաստանի կառավարման մասին ժամանակավոր կառավարության որոշումը, ըստ որի պատերազմի իրավունքով գրավված հայկական տարածքների քաղաքացիական կառավարումը վերցվում էր կովկասյան իշխանություններից, ինչպես նաև Կովկասյան ճակատի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն գրվում էր ժամանակավոր կառավարության տրամադրության տակ, երկրամասի քաղաքացիական կառավարումը հանձնվում էր գեներալ-կոմիսարին, գյուղական և քաղաքային բնակչությունը օգտվելու էր ներքին ինքնավարության իրավունքներից և այլն։ Մայիսի 15-ին գեներալ-կոմիսար նշանակվեց Պ. Ավերյանովը։ Այսպիսով, Արևմտյան Հայաստանը, որը մեկ հարյուրամյակում հինգ անգամ ռուս-թուրքական պատերազմների թատերաբեմ էր դարձել, առաջին անգամ իր պատմության մեջ անմիջականորեն ենթարկվեց ռուսական պետությանը։

Առաջին համաշխարհային պատերազմի շարունակվող պայմաններում Ռուսաստանի կողմից արևմտահայկական տարածքների բռնակցումը (անեքսիա) տվյալ պատմական իրադրության մեջ առաջընթաց էր, այլ խնդիր էր, թե ինչո՞ւ ժամանակավոր կառավարությունը ապրիլի

[120] *Տե՛ս* Վ. Մելիքյան, *Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917 թ.*, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2, էջ 115—116։

վերջերին և ոչ թե իշխանությունը գրավելուց անմիջապես հետո էր իրեն ենթարկում Արևմտյան Հայաստանը։ Այս իրողության պատճառներից ամենակարևորը ժամանակավոր կառավարության կովկասյան մարմին Օզակոմի բացահայտ անկարողությունն էր, որի գործունեությունն իր ամբողջության մեջ հետագայում որակվեց որպես «անիշխանություն»։ Պակաս կարևոր չէր այն, որ Անդրկովկասի ազգային ուժերը, մասնավորապես վրացական մենշևիզմը, բացահայտ հակահայկական դիրք էր գրավել։ Նոյ Ժորդանիան, օրինակ, այն համոզմունքն ուներ, որ «գրավված վայրերը, միևնույն է, կանցնեն Թուրքիային, ուստի հարկ չկա այդ մարզերի կառավարումը կազմակերպելու նպատակով հսկայական միջոցներ ծախսել», մի տեսակետ, որը 1917 թ. աշնանը և հատկապես 1918 թ. դարձավ վրաց մենշևիզմի համար պետական քաղաքականություն՝ բացահայտ թուրքամետ ուղղվածությամբ։ Ահա սրանով պետք է բացատրել նաև, որ տեղյակ լինելով Կովկասյան ավանդական դարձած ազգամիջյան հակասություններին, ժամանակավոր կառավարությունը իրեն ենթարկեց Արևմտյան Հայաստանը։ Եվ ի վերջո, դա թելադրված էր կովկասյան բանակում հակապետական, հեղափոխական շարժումների ուժեղացմամբ, Արևմտյան ռազմաճակատում ռուսական զորքերի անհաջողություններով, ինչը մեծապես տապնապ էր առաջացնում կառավարական շրջաններում։ Մասամբ դրանով պետք է բացատրել նաև ապրիլ-մայիս ամիսներին ժամանակավոր կառավարության կողմից հայկական ազգային զորամասեր ստեղծելու ուղղությամբ մատնոգությունը, զորամասեր, որոնք նույն պատերազմում երկրորդ անգամ պետք է պաշտպաններին ընդհանուր ռազմաճակատը թուրքական ներխուժումից[121]։

Կովկասում գտնվող հարյուր հազարավոր փախստական արևմտահայերն առաջինը հավանություն տվեցին ազգային զորամասեր ստեղծելու և պատերազմի շարունակման նկատմամբ կենտրոնական իշխանությունների բռնած դիրքին և պատրաստակամություն հայտնեցին ուժերի ներածին չափ իրենց աջակցությունը։

Փետրվարյան հեղափոխությունը հրապարակ հանեց նաև ազգային հարցի լուծման տարբերակներից մեկը՝ ազգային ինքնորոշման սկզբունքը։ Քաղաքական ինքնորոշման գաղափարը գնալով խոր արմատներ էր գտնում նաև հայ իրականության մեջ, որն իր հերթին հող էր ստեղծում եղած ազգային մարմինների ամրապնդման և նորերի ստեղծման համար։

[121] *Տե՛ս նույն տեղում, էջ 218—219։*

Փետրվարյան հեղափոխությունից հետո ազգային գործերը վարելու համար հայ քաղաքական կուսակցությունների ջանքերի միավորումը հրամայական պահանջ էր դառնում: Բանն այն է, որ ցարիզմի տապալումից հետո, ընդհուպ մինչև 1917 թ. մայիսի սկիզբը, իբրև ճանաչված ազգային իշխանություն, շարունակում էր մնալ 1912 թվականից ստեղծված Ազգային բյուրոն: Չնայած հայ կամավորական խմբերի կազմալուծումից և դրանք ռուս-հայկական զորամասերի վերածվելուց հետո բյուրոյի տեղական մարմինները դադարել էին գործելուց, սակայն Թիֆլիսի կենտրոնական Ազգային բյուրոն, ճիշտ է շատ սահմանափակ իրավունքներով ու լիազորություններով, տակավին շարունակում էր գործել: Ազգային բյուրոն, ուր դաշնակցությունն ուներ քաղաքական մենաշնորհ, ապագա Ազգային խորհրդի պատրաստի նախատիպն էր:

Անջատողական պայքարի նոր փուլում առաջանում են արևմտահայերի և արևելահայերի ազգային անջատ մարմիններ, այդ թվում՝ Ազգային խորհուրդներ:

Կենտրոնական և տեղական ազգային մարմինների ստեղծմանն առաջինը ձեռնամուխ եղան արևմտահայերը: Անդրանիկն առաջիններից մեկն էր, որ հայրենակիցների ուժերը համախմբելու նպատակով առաջադրեց արևմտահայերի համագումար հրավիրելու պահանջը: Այդ ուղղությամբ տարվելիք անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներում Անդրանիկը չափազանց կարևորում էր արևմտահայերի իղձերն ու ձգտումներն արտահայտող թերթի գոյությունը: Այդպես ծնունդ առավ «Հայաստան» թերթը[122]: «Հայաստան» թերթի գաղափարական բովանդակության համար ծրագրային էր Ռուսաստանի հետ սերտ բարեկամության: Թերթի համար Ռուսաստանը ոչ միայն հայ ժողովրդի պատմական բարեկամն էր, այլև նրա գալիքի երաշխավորը: «Մենք կը հավատանք, — ասված էր թերթի առաջին համարի «Ողջույն ազատ Ռուսաստանին» խմբագրականում, — որ Ազատ Ռուսաստան մը պիտի առնե այնպիսի գործնական քայլեր, որ մեր ինքնամին ծունկի գա և զղջումներու զղջումը աղաղակե: Մենք կը հավատանք, որ ազատ Ռուսաստան մը իր հզոր դաշնակիցներու հետ պիտի կառուցանե մեր ազգային բաղձանքներու կոթողը»[123]:

Ունենալով ընդգծված ռուսական կողմնորոշում, Անդրանիկը, ցավոք, արժանի հակահարված չտվեց իրեն Ռուսաստանի դաշնակից հորջորջող Անգլիայի կողմից շատ նրբորեն անցկացվող հակառուսական և հակահայկական ձեռնարկներին: Խոսքն առաջին հերթին արևմտահայե-

[122] *Տե՛ս* Հրաչիկ Սիմոնյան, *Անդրանիկի ժամանակը*, Գիրք Ա, Երևան, 1996, էջ 552:
[123] «Հայաստան», Թիֆլիս, 1917, ապրիլի 16:

րի առաջին համագումարի հրավիրմանը և արևմտահայ ազգային իշխանությունների ստեղծմանը նյութական անհրաժեշտ միջոցներով անգլիական աջակցությանը սատար կանգնելու մասին է: Ի՞նչ նպատակի էին հետամուտ անգլիացիները: Անգլիական քաղաքականության համար ամեն ինչ հաշվարկված էր, բացի անշահախնդիր օգնությունից:

Այն բանից հետո, երբ ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլին ստեղծում է Արևմտյան Հայաստանի կառավարման կոմիսարիատ, որտեղ արևելահայ քաղաքական ուժերին առաջին խոսքն ասելու իրավունք էր վերապահված, անգլիական իշխանություններն այդ պայմաններում ձեռնարկեցին հակամիջոցներ՝ ռուսական ազդեցությունը արևմտահայության վրա թուլացնելու համար: Օգտագործված այդ միջոցառումների շարքում հետին տեղ չէր զբավելու արևմտահայ քաղաքական ուժերի ակտիվացումը և դրա միջոցով հայ ժողովրդի երկու հատվածների միջև տարանջատում առաջ բերելը, մի բան, որ նրանց հաշվարկներով նպաստելու էր Արևմտյան Հայաստանի վրա ռուսահայերի, հետևաբար նաև՝ Ռուսաստանի ազդեցության թուլացմանը: Անգլիացիների ձեռնարկած քայքայիչ այդ գործում շատ կարևոր դեր էր ստանձնել Թիֆլիսում անգլիական առաքելության ղեկավար, գնդապետ Պայկը: Նա առանձնապես մեծ ջանքեր էր գործադրում Անդրանիկին կովկասահայությունից անկախ, եղակի դեր տալու համար և նպաստում էր, որպեսզի կովկասահայ ազգային իշխանությունների կողքին ստեղծվեն և գործեն արևմտահայ ազգային իշխանություններ: Այս պայմաններում, տարաբախտաբար, ինչպես ակնարկել ենք, Անդրանիկի մեջ էլ ավելի ընդգծվում էր արևմտահայերի առաջնորդ հանդես գալու և անկախ գործելու ազգավնաս գաղափարը[124], որը բարեբախտաբար, չհասցրեց ինքնաբավության և սեպտեմբեր-հոկտեմբերի համախորհրդակցությունից սկսած նա վերստին ազգային միասնության գաղափարի իրականացման առաջամարտիկներից էր: Մայիսի սկզբին Արևմտահայերի առաջին համագումարում ընտրված Արևմտահայ խորհրդի և խորհրդի Գործադիր բյուրոյի (նախագահ՝ Վահան Փափազյան, անդամներ՝ Կ. Մասունի, Ա. Դարբինյան, Հ. Տեր-Զաքարյան, Ա. Թերզիբաշյան և Գ. Գալիկյան) ստեղծումով հայության երկու հատվածների քաղաքական ուժերի միջև առաջացած ճեղքվածքը խորացնելու երկրորդ քայլն արվեց: Երկփեղկվում էր առանց այն էլ ոչ այնքան ամուր ազգային միասնությունը:

Այս պայմաններում գեթ հուսադրողն այն էր, որ ժամանակավոր կառավարությունը պարզել էր իր անելիքները, այն է՝ առաջին հերթին

[124] *Տե՛ս* Հրաչիկ Սիմոնյան, *նշվ. աշխ.*, էջ 565:

մինչև թշնամին վայր չդնի զենքը, ռուսական զորքերը կմնան Արևմտյան Հայաստանում, այսինքն հայերը մեն-մենակ չէին մնում թուրքերի դեմ։ Կառավարությունն ամեն կերպ նպաստում էր հայ գաղթականների հայրենիք վերադառնալուն։ Հայոց ազգային բյուրոն և Արևմտահայ գործադիր բյուրոն, օգտվելով ժամանակավոր կառավարության բարյացակամությունից և աջակցությունից, գործուն հարաբերությունների մեջ մտան կովկասյան իշխանությունների հետ և բուռն գործունեություն ծավալեցին գաղթականությանը հարազատ վայրերում բնակեցնելու համար։ Վերաբնակեցման գործը ավելի արագ առաջ մղելու համար կոմիսար Ավերյանովի քաղաքացիական գծով տեղակալ, բժիշկ Հ. Զավըրյանը (Զավրիև) կարողացավ հասնել նրան, որ կառավարությունն արագացրեց գրավված Արևմտահայաստանը կովկասյան իշխանությունների անօրինությունից վերցնելու և ժամանակավոր կառավարության անմիջական հսկողության տակ դնելու իր իսկ որոշման կենսագործումը։ Արևմտյան Հայաստանն արագորեն վերաբնակեցվում էր և տեղերում իշխանությունն արագորեն անցնում էր հայերի ձեռքը։ Այսպես, օրինակ, ժամանակավոր կառավարության կարգադրությամբ մայիսի սկզբներին Վանի նահանգապետ Տերմինը ետ կանչվեց և նրա փոխարեն նշանակվեց դաշնակցական Կոստի Համբարձումյանը։ Քաղաքացիական գործերի գրեթե ողջ գեկավարությունը Վանում և մյուս նահանգներում անցնում էր հայերի ձեռքը։ Մի կողմից՝ ժամանակավոր կառավարության հայանպաստ կեցվածքը, մյուս կողմից՝ երկրամասի նորաստեղծ հայկական վարչական կառույցների եռանդուն գործունեությունը հույս էին ներշնչում, որ թուրքական ջարդերից փրկված հայ գաղթականների մեծ մասը մի քանի ամսում կվերադառնա հայրենի երկիր։ Արևմտյան Հայաստանը դանդաղորեն հարություն էր առնում մոխիրներից, բայց մարդավայել ապրելու համար հարկավոր էր արագորեն վերաշինել երկիրը։ Հենց օրվա հերթական ազգային խնդիրները պարզելուն և կառուցողական ծրագրեր մշակելուն էր հետամուտ Հայոց ազգային համախորհրդակցությունը։ Մինչ այդ, Թիֆլիսում, Ազգային բյուրոյի հրավերով ապրիլին գումարվում է միջկուսակցական մի խորհրդակցություն, որին մասնակցում էին Ազգային բյուրոյի և կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի անդամները, նախկին կամավորական խմբերի հրամանատարները, գավառական բյուրոների և կոմիտեների ներկայացուցիչները, Թիֆլիսի միջկուսակցական մարմինը, Արևմտահայ խորհրդի անդամները և ուրիշներ։ Այդ ժողովում էլ որոշվեց երկու ամսից ոչ ուշ հրավիրել ազգային համագումար՝ արևելահայերի կյանքին վերաբերվող խնդիրների լուծման համար։ Համագումարին մասնակցելու էր նաև ներ-

կայացուցչություն՝ Արևմտահայ խորհրդի կողմից։ Հետագայում որոշվեց համագումարի փոխարեն հրավիրել Ազգային համախորհրդակցություն։

Հայոց ազգային համախորհրդակցությունն իր աշխատանքն սկսեց Թիֆլիսում սեպտեմբերի 29-ին և ավարտեց հոկտեմբերի 13-ին։ Ազգային համախորհրդակցությանը մասնակցում էին 22 Դաշնակցության, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան, Հայ ժողովրդական կուսակցության, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («սպեցիֆիկներ»), Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (մենշևիկներ) և Սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) կուսակցությունների ներկայացուցիչները։ Համախորհրդակցությունից բացակայում էին միայն հայ բոլշևիկները, որոնք բոյկոտել էին՝ այն համարելով հայ աշխատավոր դասակարգի ուժերի ջլատմանը և ազգայնական ուժերի համախմբմանն ու ամրապնդմանն ուղղված միջոցառում։ Բոլշևիկները մյուս կուսակցություններին մեղադրում էին, թե նրանք նպատակ ունեն Անդրկովկասն անջատել Ռուսաստանից և որ, իբր, խորհրդակցությունը ծրագրված է հենց այդ նպատակով։ Շուշիում լույս տեսնող բոլշևիկյան «Նեցուկ» թերթը, որի խմբագիրն էր Աշ. Հովհաննիսյանը, գրում էր, որ բոլշևիկների Շուշվա կոմիտեն իր հուլիսյան նիստում որոշել է հրաժարվել համախորհրդակցությանը մասնակցելուց, որովհետև այն չի արտահայտելու «ժողովրդական ցանկությունները»[125]։ Մի ուրիշ հոդվածում թերթի խմբագիրը առաջիկա խորհրդակցությունը որակում էր որպես «հայ կղերականության, վաճառականության և մանր բուրժուազիայի ներկայացուցչություն»։ Նա կոչ էր անում «հայ բանվորության առաջ» բոյկոտել և մերկացնել «ազգային այդ կատաղերգության հակաժողովրդական բովանդակությունը»[126]։ Համախորհրդակցությունը բոյկոտի ենթարկելու մասին իրենց որոշումներն էին ընդունել նաև ՌՍԴ(բ)Կ Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի կոմիտեները[127]։

Երկրում սիրող քաղաքական ընդհանուր կացության մասին զեկուցումով հանդես է գալիս Ս. Վրացյանը։ Նրա զեկուցումը պարունակում էր մի քանի նոր մտքեր, որոնք արտացոլում էին Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին հայ հասարակական-քաղաքական մտածողության մեջ տեղի ունեցած խորքային տեղաշարժերը։ Եթե հեղափոխության առաջին ամիսներին հայ հասարակական միտքը լիովին համաձայն էր պատերազմը մինչև հերթական ավարտը շարունակելու՝

125 Տե՛ս «Նեցուկ», 1917, հուլիսի 16։
126 Տե՛ս նույն տեղում, սեպտեմբերի 28։
127 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 71։

ժամանակավոր կառավարության և դաշնակից տերությունների քաղաքականությանը, ապա արդ՝ նկատելի էր ակնհայտ նահանջ։ Դրա պատճառը երկրի ներսում և ռազմաճակատում տիրող խոր հիասթափությունն էր, որն իր հերթին հետևանք էր անիշխանության և տնտեսական կյանքի կազմալուծման։ Այն գենքը, ասում էր զեկուցողը, որ հեղափոխության առաջին օրերին հրապարակ դուրս եկավ պատերազմը մինչև հաղթական վախճան տանելու կարգախոսով, այսօր լքումի է մատնված։ Ընկրճված է նրա տրամադրությունը, ընկած՝ կարգապահությունը, խորտակված՝ տոկունությունը։ Այդ բոլորի հետ միասին նա մերկ է, անոթի, անզեն։ Հաց չկա, պարեն չկա։ Այս բոլորը թույլ է տալիս հետևություն անելու, որ վտանգի մեջ է ոչ միայն հեղափոխությունը, այլև՝ բովանդակ պետությունը։

Ի՞նչ անել հարցին զեկուցողն առաջարկում է.

«Առաջին՝ երկրում պէտք է ստեղծել զօրեղ իշխանութիւն, որը պէտք է լինի կօալիցիօն։ Յեղափոխութեան յարուցած բոլոր տարրերը պէտք է կազմեն կուռ ճակատ ոչ միայն կենտրոնում, այլ եւ ամենայատին գիւղում։ Դէմօկրատիան է իշխանութեան նեցուկն ու հիմքը։

Երկրորդ՝ պէտք է աշխատել հաշուէյարդարի ենթարկել պատերազմը, որը աղբիւրն է բոլոր չարիքների։ Ներկայ պայմաններում, երբ երկրի բոլոր ուժերը քայքայման վերջին ծայրն են հասել, պնդել թէ պատերազմը պէտք է շարունակել մինչև յաղթական վախճանը, անհեռատեսութիւն է։ Սակայն, ինչպէ՞ս վերջացնել պատերազմը։ Հնարաւոր է միթէ անջատ հաշտութիւն կնքել։ Եթէ հնարաւոր է, այդ կը լինէր լաւագոյն ելքը, բայց այդ յոյսը դժուար իրագործելի է, որովհետև միայն Ռուսաստանից չէ կախուած։ Ռուսաստանը համաեւրոպական ընդհանուր շղթայի մի օղակն է եւ անջատ հաշտութիւնը մի ճակատում, կարող է պատճառ դառնալ նոր պատերազմի մի ուրիշ ճակատում։ Հաշտութիւնը կարող է լինել կամ Դաշնակիցների հետ միասին եւ կամ նրանց համաձայնութեամբ։ Ռուսաստանը պէտք է ձգտի հաշտութեան՝ եւրոպական դէմօկրատիան էլ ոտքի հանելով յանուն հաշտութեան։ Իսկ մինչ այդ պէտք է վարել ոչ թէ յարձակողական, այլ պաշտպանողական պատերազմ՝ ամուր պահպանելով գրաւած դիրքերը։ Այս հանգամանքը առանձին նշանակութիւն ունի մասնաւորապէս մեզ՝ հայերիս համար։ Հասկանալի է, թէ ինչ կը լինի մեր վիճակը, երբ թշնամու առջեւ ռազմաճակատը մերկանայ։ Մենք ուրիշներից աւելի ուժ պիտի տանք ճակատի ամրացման եւ միջոց չխնայենք ճակատի կայունութիւնն ու զինուորների ֆիզիքականն ու բարոյականը բարձրացնելու համար։ Ճակատի պաշտպանութիւն եւ հաշտութիւն — այս ձեւով կարելի կը լինի ապահովել մեր նաւճումները Թուրքահայաստանում»[128]։

Քաղաքական պահի մասին Ս. Վրացյանի զեկուցման հիմնական դրույթները պաշտպանություն գտան համախորհրդակցության բոլոր խմբակցությունների կողմից։ Պաշտպանողական պատերազմի օգտին ելույթ ունեցան Դավիթ Ենանունը (սպեցիֆիկ), Լ. Աթաբեկյանը (Էսէռ), դաշնակցական Արշ. Շահխաթունին, Քր. Վերմիշյանը (ժողովրդական կուսակցություն) և ուրիշներ։

Դժվար չէ նկատել, որ պատերազմի և հաշտության հարցում հայ ազգային-քաղաքական մտքի և բոլշևիկյան տեսակետի միջև նկատելի մերձեցում էր տեղի ունենում։ Երկուսն էլ կողմնակից էին պատերազմի դադարեցմանը։ Բայց պատերազմից դուրս գալու ուղիների նրանց բմբռնումներն ու մոտեցումները տրամագծորեն տարբեր էին։ Եթե հայ ազգային-քաղաքական ուժերը վճռականորեն դեմ էին դաշնակիցների թիկունքում անջատ հաշտությանը, ապա բոլշևիկները հանդես էին գալիս հենց անջատ հաշտության պահանջով, գտնելով, որ Ռուսաստանը պետք է դուրս բերել դաշնակիցների շարքից, նույնիսկ հակադրել նրանց, բանը նույնիսկ հասցնելով նրանց հետ կնքված գաղտնի պայմանագրերի հրապարակմանը, որը և կատարեցին Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո։ Բայց հայ ժողովրդի համար ավելի սարսափելին բոլշևիկյան տեսակետի մի այլ կողմն էր. այն, որ նա համառորեն հանդես էր գալիս գրավված տարածքներից զորքերն անհապաղ դուրս բերելու պահանջով։ Այստեղ հայ ժողովրդի հավաքական շահերն ամբողջովին հակառակ էին բոլշևիկյան պահանջներին։

Ռուսաստանի կենտրոնական կառավարությանն անվերապահ պաշտպանելու և պաշտպանողական պատերազմ վարելու մարտավարության հետևողական պաշտպան էին արևմտահայ գործիչները՝ Անդրանիկը, Արշ. Չոպանյանը և նրանց համախոհները։ Պատերազմի և խաղաղության հարցում արտահայտելով արևմտահայության տրամադրությունը, Արշ. Չոպանյանը գրում էր. «Շուտով և ամեն գնով հաշտություն կընքիլ ուզող ռուս հասվածի դեմ ոչ մեկ ցեղ այնքան իրավունք ուներ բողոքելու և հակազդելու, որքան հսկայական սուգով մը բեռնավոր հայ տարրը. հակաթուրք պայքարին սրբազանությունը, զայն բոլոր ուժերով շարունակելու, յառաջ տանելու անհրաժեշտությունը, քարոզելու, պահանջելու ոչ մեկ տարր այնքան իրավունք ու պարտականություն ունի որքան հայ տարրը»[129]։

[128] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 35—36։
[129] «Հայաստան», Թիֆլիս, 1917, հոկտեմբերի 27։

Հայ հասարակական-քաղաքական ուժերի համար պարզ էր, որ ժամանակավոր կառավարության հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքը կարող էր կատարվել միայն կայսրության սահմաններից ներս, այսինքն՝ անընդունելի է ինքնորոշման այն իրավունքը, որը կարող էր իր մեջ ներառնել ընդհուպ մինչև ռուսական բազմազգ պետությունից անջատվելու և միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ դառնալու սկզբունքը: Այդ պահին Ռուսաստանից լիակատար անկախության չէր ձգտում ռուսահայ իրականության մեջ եղած քաղաքական կազմակերպություններից և ոչ մեկը: Արևելահայերի ինքնորոշման խնդրի առնչությամբ անխուսափելիորեն դրվում էր նաև Արևմտահայաստանի ինքնորոշման հարցը: Այստեղ արդեն, բնական է, տարբեր էին մոտեցումները: Ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանը դիտում էր որպես գրաված տարածք, որը ռուսահայ տարածքների հետ պետք է մըտներ ֆեդերալ կառուցվածք որդեգրող Ռուսաստանի կազմի մեջ՝ ներքին լայն ինքնավարությամբ: Այդ տեսակետը մասնավորապես պաշտպանում էին, ինչպես մենք ցույց ենք տվել նախորդ էջերում, կադետների պարագլուխ Պ. Միլյուկովը և ժամանակավոր կառավարության այլ անդամներ (Սկոբելև և ուրիշներ): Պ. Միլյուկովը, ինչպես փետրվարից առաջ, այնպես էլ հետո բազմիցս հայտարարել էր, որ հայերի համար լավագույն լուծումը ռուսական պետության կազմի մեջ հայության բոլոր հատվածների միացումն է՝ ներքին ինքնավարությամբ: Արևմտյան Հայաստանի լիակատար անկախության գաղափարն ընդհանրապես ժամանակավոր կառավարության կազմում չուներ կողմնակիցներ: Ինչ վերաբերում է հարցի նկատմամբ հայ հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշումներին, ապա դրանք տարաբնույթ էին, որոշները չէին հստակեցրել իրենց տեսակետները, սոցիալիստ-հեղափոխականները պաշտպանում էին կառավարության մոտեցումները: Արևմտահայ և արևելահայ հասարակ, աշխատավոր ժողովրդի համար բոլոր մոտեցումներն ու լուծումներն էլ ընդունելի էին՝ միայն թե Արևմտյան Հայաստանը դուրս գար Թուրքիայի ենթակայությունից:

Ստեղծված կացությունում, օբյեկտիվ գործոնների հաշվառումից շեղ, զգացմունքային և իդեալիստական տեսակետ ունեին ռամկավար, Հայ ժողովրդական և վերակազմյալ հնչակյան կուսակցությունները, որոնց հետ համախոհ էր նաև Անդրանիկը՝ Արևմտահայ ազգային խորհրդի գլխավորությամբ: Սրանք քաղաքական այն տեսակետն էին պաշտպանում, որ Արևմտահայաստանի խնդիրը ամբողջովին պետք է սահմանազատել Արևելյան Հայաստանի խնդրից: Արևմտահայերը ռուսահպատակներ չեն և ոչ էլ նրանց քաղաքական կազմակերպություննե-

րը՝ կաշկանդված ռուսաստանյան սահմանափակումներով: Արևմտյան Հայաստանը պետք է լինի անկախ՝ ուրիշ տարբերակ չէին ընդունում: Ինքնին պարզ է, որ Համախորհրդակցության ընտրած Ազգային կենտրոնական խորհուրդը քաղաքական իրարամերժ ուժերի առկայության պայմաններում պետք է դժվարին աշխատանք կատարեր: Մանավանդ, երբ երկրում գնալով խորանում էր քաղաքական ճգնաժամը, երբ միաժամանակ բոլշևիկների հակապատերազմական կարգախոսների և այլևայլ գործողությունների ազդեցության ներքո կործանվում էր Ռուսաստանի Դեմոկրատական Հանրապետությունը և մարմին էր առնում մարդկությանն անծանոթ պետական մի նոր կարգ՝ խորհրդային իշխանությունը: Մի իշխանություն, որի վարած արտաքին գաղափարականացված քաղաքական մարտավարությունն ու ռազմավարությունը Հայկական հարցի լուծման ընթացքը ևս տարան բոլորովին անծանոթ մի ուղիով, որին չկարողացավ հասու լինել և ի շահ ազգի օգտագործել ինչպես բուրժուական, այնպես էլ բոլշևիկյան հայ նորելուկ քաղաքական միտքն ու դիվանագիտությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը Հայկական հարցը «հանեց» հին փակուղուց և Խորհրդային Ռուսաստանի կառավարության դեկրետով մտցրեց մի նոր փակուղի: Հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի այս նոր շրջափուլի ուսումնասիրությունն այսօր գիտաքաղաքական մեծ կարևորություն ունեցող խնդիր է, որն սպասում է իր անկողմնակալ պատմաբանին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

19-րդ դարի 70-ական թվականներից հայ պատմագրության շատ ներկայացուցիչների հետաքրքրել են արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների ներկա ու գալիք խնդիրները, այլազգիների և հայերի նկատմամբ Թուրքիայում կիրառված հալածանքների քաղաքականությունը, Հայկական հարցի արծարծումները։ Ստեղծվել են ծավալուն գրականություն, հարուստ փաստական տվյալների վրա գրված մեծ թվով աշխատություններ, մամուլում տպագրվել են հարյուրավոր հոդվածներ, որոնցում իրազարձությունները մեկնաբանվել են տնտեսական, քաղաքական այլևայլ տեսանկյուններից, բացահայտվել են Հայկական հարցի ակզբնավորման և նրա հետագա գործընթացի հայտնի ու գաղտնի նենգ դիտավորությունները, որոնք սկիզբ են առնում օսմանյան սուլթաններն «խաղաղ» ֆերմաններում, Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես ստրկացնող եվրոպական տերությունների կապիտուլյացիաներում, Համիդյան բռնատիրության «զուլումի» քաղաքականության որոգայթներում, կոտորածներում և, վերջապես, արդեն զանգվածային ցեղասպանության ուսմունք դառնում երիտթուրքերի ծրագրային մշակումներում և գործողություններում։ Հայ ազգային-ազատագրական շարժման անշեղ կողմնորոշման որոնման, Հայկական հարցի լուծման ճշմարիտ ճանապարհը գտնելուն է նվիրաբերել իր հասարակական և գիտական գործունեությունը Ալեքսանդր Երիցյանը (1841—1902)։ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հեղինակներից ոչ ոք հայ-ռուսական հարաբերությունների, հայերի ռուսական կողմնորոշման հիմնահարցերն այնպիսի լայն քննության առարկա չդարձրեց, որքան նա։ Ալ. Երիցյանը հասարակական իր գործունեությունը սկսեց անցյալ դարի 60-ական թվականներին։ Մի ժամանակաշրջան էր դա, երբ արդեն քաղաքականապես ձևավորվել էին հայ հասարակական-քաղաքական հոսանքները, բայց նա չդարձավ այդ հոսանքներից և ոչ մեկի հետևողական ախոյանը կամ գաղափարական պաշտպանը։ Իր քաղաքական հայացքներով նա գերազանցապես օրորվում էր ազգային-

պահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքների արանքում[1]։ Բոլոր պարագաներում հեռու մնալով արևելահայ հասարակական մտքի հեղափոխական-դեմոկրատական և կղերա-աղայական բևեռների ազդեցությունից՝ Երիցյանը հայ-ռուսական հարաբերությունների և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումների հարցերում երևան էր բերում որոշակի անհետևողականություն։ Այդ անհետևողականությունն առաջանում էր այն մտայնությունից, որ ազգային ավանդույթի և ժառանգված արժեքները քննադատորեն յուրացնելու մտահոգությամբ, նա մերթ դժգոհում էր ռուսական տիրապետության նորամուտ բարքերից, մերթ գոհունակություն հայտնում Անդրկովկասի տնտեսական և քաղաքական նվաճման հետևանքով հայերի համար ստեղծված անձի ու գույքի ապահով վիճակից, որ իսպառ բացակայում էր Արևմտյան Հայաստանում։

1860-ական թվականներին, հասարակական գործունեության իր մեկնարկի տարիներին, հարելով ազգային-պահպանողականներին, Ալ. Երիցյանն իր խմբագրած «Վաճառական» թերթում բացասաբար էր արժեքավորում Հայաստանի նորդարյա պատմության մեջ Ռուսաստանի խաղացած դերը։ Մասնավորապես նա քննադատում էր ցարիզմի անդրկովկասյան քաղաքականությունը, նշում անբարենպաստ այն դրությունը, որի մեջ գտնվում էր հայ առևտրական կապիտալը։ Իբրև մանր արտադրողների շահերի պաշտպան, նա դժգոհ էր առևտրական կապիտալիզմի առաջ բերող հետևանքներից, որն, ըստ նրա, վատ ներգործություն էր ունենում Անդրկովկասի հայ վաճառականական կապիտալի «կանոնավոր» զարգացման ընթացքի վրա։ Հակադրվելով ցարիզմի տնտեսական և ֆինանսական քաղաքականությանը, Երիցյանը տեսնում էր, որ Անդրկովկասի տնտեսական, արդյունագործական և հողագործական հարաբերությունները միտում ունեն մարդկանց միմյանցից անջատված գործողությունները մղելու դեպի կապիտալիստական հանրայնացում։ Ալ. Երիցյանը ատելությամբ է խոսում Անդրկովկասում հայտնված բուրժուական վարկերի ու բանկերի մասին։ Գործելով սկզբում վարկային կապիտալի ձևով, ռուսական կապիտալն սկսում էր քանդել, ավերել Անդրկովկասի նախկին բնատնտեսությունն ու մանր արտադրությունը։ «Երբ բանկի մեջ շատանում է վեր առած վեքսիլների թիվը, — գրում էր նա, — իսկ քշանում է նաղդ փողը, էն ժամանակ... բանկը

[1] Տե՛ս Ա. Համբարյան, Ալ. Երիցյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 180։

քացնում է իր և վաճառականների միմյանց մեջ ունեցած էհտիբարը և հետևանքը լինում է առևտրական քեսատություն և կրիզիսներ»[2]։

1860—1870-ական թվականներին երկրամասն ապրում էր ավատատիրության, հին նահապետական կյանքի քայքայման և բուրժուական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջան։ Ռուսական արիստոկրատիան ցանկանում էր տնտեսապես նվաճել Անդրկովկասը, պլուտոկրատիան ուզում էր կողոպտել, իսկ արդյունաբերական բուրժուազիան ձգտում էր հպատակեցնել նրան իր ապրանքների էժանությամբ։

Նույն գործընթացն ավելի դաժան եղանակներով եվրոպական դաղութարարները գործադրում էին Թուրքիայում։ Անդրկովկասի և Թուրքիայի տնտեսական նվաճման այդ պատմաշրջանում, մի կողմից՝ Անդրկովկասն ու Թուրքիան սաստիկ գաղութացման էին ենթարկվում, մյուս կողմից՝ տեղի էին ունենում բնիկ տնայնագործական արհեստագործությունների արտամղումը, որոնք Ռուսաստանից և Արևմուտքից ներմուծվող ապրանքների մրցման հետևանքով ընկնում էին։

Ղեկավարվելով պատմականության մեթոդի (historical method) հայտնի դրույթով, որ պատմական ամեն մի երևույթ պետք է գնահատել պատմաշրջանի կոնկրետ իրադրության պայմաններում, լիակատար իրավունքով կարող ենք ասել, որ արևելյան բռնատիրության տապալումն Անդրկովկասում պատմական առաջադիմական իրողություն էր, քանզի անկախ ցարիզմի կողմից իրագործվող գաղութային քաղաքականության, Ռուսաստանն օբյեկտիվորեն նպաստում էր նրա զարգացմանը՝ անձի և ազգի ապահովություն երաշխավորող իր հաստատ ու կայուն պետական օրենքներով։

Ի տարբերություն Արևմուտքի իմպերիալիստական տերությունների կողմից Թուրքիան տնտեսապես ու քաղաքականապես ստրկացնելու բացահայտ միտումներին ռուսական տիրապետությունն անհրաժեշտ պայմաններ ստեղծեց արդյունաբերական կապիտալի ներմուծման և Անդրկովկասի տնտեսական զարգացման համար։ Դժգոհ հայ վաշխառուական կապիտալի մեկուսացման ցարիզմի վարած վերջին տասնամյակների քաղաքականությունից, Ալ. Երիցյանը կարոտախտով էր հիշում Անդրկովկասում ռուսական տիրապետության առաջին տարիները։ Ինչպես 1860-ական թվականների ազգային-պահպանողականների մեծ մասը (Մ. Աղաբեկյան, Գ. Պատկանյան, Կ. Շահնազարյանց, Գ. Ախվերդյան, Պ. Շանշյան և ուրիշներ), Ալ. Երիցյանը ևս չէր ընկալում, որ Ռուսաստանի

[2] «Վաճառական», Թիֆլիս, 1866, № 24։

քաղաքական շահերը զգալիորեն միահյուսվում էին Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի զարգացման հեռանկարներին։ Նա անտես էր առնում այն հանգամանքը, որ ի տարբերություն անգլիական ու ֆրանսիական գաղութարարների, ռուսական նորագրավ տարածքներում ինչքան զարգանում էին բուրժուական արտադրահարաբերությունները, այնքան դրանք ավելի էին առաջադիմում տնտեսապես և մերձենում մայր երկրին։ Ալ. Երիցյանի ժառանգության ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ գեթ 1860-ական թվականներին նա չէր պաշտպանում ցարիզմի ներքին, հատկապես տնտեսական, քաղաքականությունը։ Բայց անգամ նման դիրքորոշմամբ հանդերձ, նա հավատարիմ մնաց համազգային արժեքների պահպանման իր դավանանքին և այդ դիրքերից էլ գնահատեց ցարիզմի ռադիկալ ընդիմադիրներին։ Հատկանշական է, որ երբ ցարական սատրապները անբարեհույսների հալածանք ու որս էին սկսել Միքայել Նալբանդյանի թարմ հողաթմբի շուրջը, Ալ. Երիցյանը «Վաճառական» թերթում զետեղած մահագույժի մեջ ասում էր. «Շատ քիչ են մեզանում առհասարակ նրա պես երիտասարդներ... «Հյուսիսափայլ» անունով ժուռնալը կարող ենք հաստատ ասել, որ եթե ուներ արժանավորություն՝ լի էր միայն էս հանգուցյալի աշխատություններով, որոնք տպվում էին առհասարակ Կոմս Էմմանուել անունով»[3]։

Անդրկովկասում ցարիզմի քաղաքականության միակողմանի ընկալումն էլ այն պատճառն էր հենց, որ գործունեության այս շրջանում նա հակված էր դեպի Թուրքիան ու Եվրոպան։ Նույնիսկ ռուս-թուրքական պատերազմի նախորդող տարիներին, «Փորձի» 1876—1877 թթ. 1—4 համարներում տպագրված «Տաճկահայերի հայոց իրավունքները և նոցա սահմանադրությունը» ընդարձակ հոդվածում Ալ. Երիցյանը պատմական քննության ենթարկելով արևմտահայության վիճակը, ակնածանքով է խոսում Ազգային սահմանադրության մասին և միաժամանակ միասնության կոչ անում «պետական հարվածներից» այն պաշտպանելու համար։

Ազգային-պահպանողական հոսանքի մյուս գործիչների հետ միասին Երիցյանն էլ ոգևորված էր Միդհատի սահմանադրությամբ, այն կարծիքն ուներ, թե վերջինիս գործադրմամբ երկիրը կփոխադրվի կառավարման պառլամենտական ուղի և պետական գործերն աստիճանաբար կանցնեն ժողովրդի ընտրած ներկայացուցիչների ձեռքը։ Սակայն 1870-ական թվականների վերջերին Երիցյանն այն չէր, ինչ նա էր ամբողջ 1860-ական և 1870-ական թվականների նախապատերազմյան տա-

[3] «Վաճառական», 1986, ապրիլ, էջ 26։

րիններին: Ռուս-թուրքական պատերազմի սկզբից արմատական շրջադարձ է կատարվում Ալ. Երիցյանի աշխարհայացքում և գործելակերպում: Պատերազմը ստիպում է վերանայել քաղաքական, այդ թվում նաև կողմնորոշումների, որոշ արժեքներ:

Պատերազմը և Թուրքիայում Միդհատի սահմանադրությանը հաջորդած տարատեսակ տարիները նրան բերին այն համոզման, որ եվրոպական վարկերի ու պարտքերի, կապիտուլյացիաների ցանցի մեջ խճճված՝ տնտեսապես ու քաղաքականապես անկենսունակ այդ երկրում, այսուհետև հայ ժողովուրդն առավել ևս պետք է կանգնի ազգային իր նկրտագիրը խախտելու և կրթական-մշակութային հեռանկարները կորցնելու վտանգի առջև:

Թուրքիայում ապրող հայերի ազգային-քաղաքական ամենաչնչին հեռանկարներից հուսախաբ՝ Երիցյանը մի հայտնի չափով երես դարձրեց ազգային-պահպանողականներից և նշմարելի շրջադարձ կատարեց դեպի լիբերալիզմը: Փոխվեց նաև հրապարակագիր-պատմագրողի քաղաքական կողմնորոշման ուղղությունը՝ նրան կարուկ դիմաշրջելով դեպի Ռուսաստան: Ոգևորված սկսված պատերազմում Ռուսաստանի ազատագրական առաքելությամբ, նա Արևմտյան Հայաստանի ազատության իր ակնկալությունները որոշակիորեն կապում էր դեպի Անատոլիայի խորքերն արշավող և Կ. Պոլսի մատույցներին մոտեցող ռուսական զորքերի հաղթանակի հետ:

Ալ. Երիցյանը խորապես գիտակցում էր հայ ժողովրդի համազգային շահերը, որոնք անբաժանելիորեն նա կապում էր Ռուսաստանի հովանավորության ներքո գտնվելու գաղափարի հետ:

Ռուս-թուրքական պատերազմի նախօրեին և ընթացքում գրած իր բոլոր հոդվածներում Երիցյանը խոսում էր վերջին երկու դարերում հայերի ռուսական կողմնորոշման անկեղծ հնարավորությունների մասին, խորին ափսոսանք հայտնում, որ Եկատերինա II մահով խախտվել է ամբողջ Հայաստանի ազատագրման ծրագիրը: Ռուս-թուրքական վերջին պատերազմը նոր հույսեր է արթնացնում հայության արևելյան և արևմտյան հատվածներում: Այն հավատը, որ Ռուսաստանը պատերազմի մեջ է մտել Թուրքիայի դեմ՝ ազատագրելու նրա լծի տակ տառապող քրիստոնյաններին, նոր պարտավորություն էր դնում նաև այդ հավատը կրող ժողովուրդների պատմաբանների վրա: Պատմաբանը պարտավոր է հետադարձ հայացքի ուժով գործնական շունչ հաղորդել արդիական խորհուրդ պարունակող պատմական անցյալի անանց էջերին: Ալ. Երիցյանը «Փորձի» էջերում սկսում է տպագրել «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ» ծավալուն ուսումնասիրությունը, որը թարգմանաբար տպագրում է նաև «Тифлисский вестник» լրագիրը: Այդ աշխատության մեջ Երիցյանը վերահմաստավորում էր ռուսական արքունիքի և բարձրագույն հրամանատարության հետ արևելահայ գործիչների քաղաքական փոխհարաբերությունների հավաստի պատմությունը: Պատմական փաստերի վրա խարսխված գիտական հրապարակախոսության մի հազվագյուտ նմուշ էր դա, ուր Ալ. Երիցյանը հիշեցնում էր Ռուսաստանի տիրակալին և քաջալերում նրան՝ պաշտպանելու աշխարհի ստեղծագործ և առաքինի ժողովուրդներից մեկի իրավունքները՝ ի տրիտուր նրա ծառայությունների ու հավատարմության:

Ուսումնասիրությունն ավարտվում է Ալեքսանդր Առաջինի՝ հայերին ուղղած 1813 թ. հրովարտակով, որով գնահատելով նրանց հավատարմությունը, ցարը երախտագիտության խոսք է հղում հայ ժողովրդին[4]:

Բեռլինի կոնգրեսից հետո Աբդուլ Համիդի դիվային քաղաքականության մեքենան նորանոր միջոցների էր դիմում, ծուռ հայելու մեջ ներկայացնելու Հայկական հարցը: Այն բանից հետո, երբ վեց տերությունների դեսպանները բարենորոգումներ իրականացնելու պահանջով համատեղ վերջնագիր են ներկայացնում օսմանյան կառավարությանը և սուլթանն իր արտաքին գործերի նախարար Սրիդին փաշայի օգնությամբ կեղծում է Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակագրական տվյալները, երբ թուրքական կառավարությունը 1880 թ. հունիսին ի լուր աշխարհի հայտարարում է, որ Արևմտյան Հայաստանում հայ բնակչությունը կազմում է ընդհանուրի ընդամենը 17 տոկոսը, այդ պահին թուրքական կեղծարարների գլխին ծանրորեն իջնում է հայ ժողովրդի պատմաբանի հարվածող բռունցքը: 1878 թվականին Կարինում աշխատելով որպես ռուսական բանակի շտաբի հատուկ հանձնարարությունների պաշտոնյա, Ալ. Երիցյանը, որպես առաջադրանք, կազմում է Էրզրումի վիլայեթի վիճակագրությունը: Այդ նպատակի համար օգտագործելով օսմանյան կառավարության պաշտոնական տեղեկությունները, ռուսական գավառապետների, հայոց պատրիարքարանի տվյալները և իր հավաքած վիճակագրական նյութերը, Ալ. Երիցյանն այս ամենի հիման վրա տպագրում է մի աշխատություն[5], ուր անդրադառնալով օսմանյան կառավարության հրապարակած փաստաթղթին,

[4] Տե՛ս «Փորձ», 1877—1878, № 1—2:

[5] Տե՛ս Ալ. Ерицян, Материалы для описания Турецкой Армении, Эрзерумский вилает, Тифлис, 1884.

գրում է, որ նման հայտարարությամբ օսմանյան տերությունը ցանկանում է նվազեցնել «հայոց իրավունքը քաղաքական և վարչական օրենքների պաշտպանությունը վայելելու... Մի կողմ թողնելով Տաճկաստանի քրիստոնյաներից խնդիրը, այս անգամ պարտք եմ համարում պնդել, որ օսմանյան պետության հրատարակած հիշյալ թվանշանը ոչ միայն սխալ է, այլև պաշտոնյաների հնարած սուտ»[6]։

Ալ. Երիցյանը ջերմ հայրենասեր էր և համազգային շահերի հետևողական պաշտպան։ Նվիրվելով հայ ժողովրդի հոգևոր վերածննդի գործին, նրա համար առաջնահերթը Հայկական հարցի լուծումն էր, մայր բնօրրանի մեծագույն հատվածի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը, սեփական հողի վրա, հայկական վիլայեթներում ապահով կյանք ստեղծելու խնդիրը։ Պատմաբանի համար Ռուսաստանում ապրող հայը փրկված էր կործանարար «նեղիչների հանկարծահաս» անակընկալներից, ֆիզիկական ոչնչացման մշտական երկյուղից։ 1870-ական թվականների վերջերին՝ հետադարձ հայացքով բաղդատելով 1850-ական թվականների Թուրքիան Ռուսաստանի հետ, Ալ. Երիցյանը վերջինիս մասին գրում էր. «Այս տերության մեջ ժողովուրդն արդեն նվիրված էր մասամբ հասարակական կյանքի մեջ մասնակցելու, ստեղծելով մի նոր լուսավորություն, սկիզբն առավ մի նոր գրականություն, պատրաստվում էին սերունդների ազատությունը, դատարանական հեղափոխությունը, գյուղա-վարչական կանոնադրությունը և շատ ուրիշ բարենորոգումներ, որոնց համակրում և մասնակցում էր ժողովուրդը, ամեն տեղ շարժում և կյանք էր սկսում։ Բնականաբար, Ռուսաստանի հայերիս վերաբերմամբ առանց ազդեցության չէր կարող անցնել այդ բոլորը, ինչպես և չանցավ»[7]։

Գործունեության երկրորդ շրջանում Ալ. Երիցյանն ընկավ մի այլ ծայրահեղության մեջ։ Ճիշտ գնահատելով Արևելյան Հայաստանի ազատագրման գործում Ռուսաստանի առաջադիմական նշանակությունը, ինչպես նաև Անդրկովկասն ու Պարսկաստանը «յուրյանց բարոյական ազդեցության տակ նվաճելու» Անգլիայի և Ֆրանսիայի շահերը, նա սկսեց ներբողել ցարիզմի քաղաքական նպատակամղումները[8]։ Ռուս ցարերն անցյալում «անշահախնդրաբար ու բարեգթաբար» հովանավորել և ապաստան են տվել հազարավոր հայ գաղթականների։ Ռուսական գահին հայ ժողովրդի մատուցած անձնվեր հավատարմությունը, ջանասիրությունն ու ծառայությունները բազմիցս վկայել ու արձանագրվել են հզոր ինքնակալների երախտագիտական հրովարտակներով։

«Անցյալ դարու ընթացքում,— գրում էր Երիցյանը,— գաղթականության շնորհիվ այնքան բազմացավ Ռուսիո հայ հպատակների թիվը, որ հյուսիսային գահակալները յուրյանց սրտին մոտ համարեցին հայոց բարոյական-կենսական շահերն ու 1800 թվականից սկսած կարուկ կերպով միջամուխ եղան հեռու-հեռու պարսկական սահմաններում գտնվող էջմիածնական աթոռի հայրապետների ընտրության գործում»[9]։ Պատմական իսկությունը այս տողերում խեղաթյուրված էր հարկավ։ Հայ եկեղեցու գործերին ռուս ցարերի «միջամուխ» լինելը բնավ չէր բխում «հայոց բարոյական-կենսական» շահերից, ինչպես հակված էր կարծելու Ալ. Երիցյանը, այլ դեպի Անդրկովկաս առաջանալու նրա ռազմաքաղաքական նպատակամղումներից։ Ռուսաստանի հետաքրքրությունը հայ եկեղեցու վիճակով ավելի ու ավելի լայն բնավորություն էր ստանում, իսկ մահմեդական հսկայական զանգվածի մեջ խրված մի բուռ ժողովրդի նկատմամբ վստահությունը կորցրած հայ հոգևոր դասի ճնշող մեծամասնությունը շարունակում էր ունկնդրել պատմության փոխականչի ձայնին, հավատարիմ մնալ անցյալի հայ գործիչների ազգային-քաղաքական ուղեգծին՝ ցարիզմի «ազատագրական առաքելության» հետ լծորդելով հայ ժողովրդի ազգային-քաղաքական բաղձանքները[10]։

Ցարիզմի գաղութային քաղաքականության սքողման մասնությունը հատուկ էր ոչ միայն Երիցյանին։ Եթե 19-րդ դարի երկրորդ կեսի գերմանական պատմագրության մեջ Պետրոս Մեծը «բարբարոսաբար հաղթեց ռուսական բարբարոսությանը», ապա նույն դարաշրջանի հայ ազգային-պահպանողական Կարապետ Եզյանի կարծիքով, նույն ինքը՝ Պետրոս Մեծը «մարդասիրաբար ու քրիստոնեաբար» մահմեդական նեղիչներից փրկում էր վրացիներին ու հայերին։ Կ. Եզյանը եռանդուն կերպով ընդգծում էր «այն առավելություններն ու օգուտները, որոնք բխում էին քրիստոնյա ժողովուրդներին Ռուսաստանին միացնող բարոյական կապերից»[11]։

---

[6] «Փորձ», 1880, № 6—7, էջ 216։

[7] Ալ. Երիցյան, *Ստեփանոս Նազարյանց և նորա գրական գործունեությունը*, «Փորձ», 1879, № 9, էջ 61։

[8] *Տե՛ս* Ալ. Երիցյան, Ներսես Աշտարակեցի, «Փորձ», 1881, № 3, էջ 59։

[9] Ալ. Երիցյան, *Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում*, մաս Ա., Թիֆլիս, 1894, էջ 9։

[10] *Տե՛ս* Ն. Սարուխանյան, *Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ*, Երևան, 1971, էջ 168—169։

[11] Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, стр. 11.

Իբրև բարձրադիր ցարական պաշտոնյա, ազգային-պահպանողական Եզյանը ևս սքողում էր բացարձակ այն ճշմարտությունը, որ Ամեռային պալատին մտահոգողը ոչ թե հայերի ճակատագիրն էր, այլ ռուս ազնվականության և բարձրացող բուրժուազիայի շահերը։ Նա զանց էր առնում Ռուսաստանի քաղաքականությանը տոն տվող հիմնական շարժառիթը՝ գլխավոր այն գործոնը, որ ճորտատիրական տնտեսության հասունացող ճգնաժամի պայմաններում երկրի տիրապետող դասակարգին՝ ազնվականությանը մղում էր լայնացնելու իր իրավունքները։ Կ. Եզյանը միակողմանի մոտեցում էր ցուցաբերում նաև հայ ժողովրդի ազատագրական ակնկալությունների պատճառները որոնելիս։ Ինչպես Ն. Դուբրովինն իր «Կովկասում ռուսների տիրապետության և պատերազմների պատմությունը» բազմահատոր աշխատության մեջ ջանում էր 19-րդ դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների պատճառները հանգեցնել կրոնական տարաձայնություններին[12], այնպես էլ Կ. Եզյանը 19-րդ դարի 20-ական թվականների հայ ազատագրական պայքարը պարսկական տիրապետության դեմ ներկայացնում էր իբրև նահատակություն հավատի համար։ Նա շրջանցում կամ թերևս սքողում էր այն իրողությունը, որ եթե 18-րդ դարում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները զարգանում էին Ռուսաստանի ռազմական օգնությամբ, Հայաստանը մահմեդական տիրապետությունից ազատագրելու և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական կախյալ իշխանություն ստեղծելու նշանաբանով, ապա 19-րդ դարի սկզբին ցարական կառավարությունը հայ ազատագրական շարժման գործիչների ազգային ինքնավարության ռոմանտիկ ծրագրերի փոխարեն որպես գործնական խնդիր առաջ մղեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանի մի սովորական նահանգ դարձնելու ծրագիրը։ Ռուսաստանի քաղաքականությունը ոչնչով չէր փոխվել։ 19-րդ դարի ոչ միայն առաջին քառորդում, այլև մինչև ժամանակավոր կառավարության վախճանը, այդ քաղաքականությունը փոփոխություն չկրեց նաև Արևմտյան Հայաստանի նկատմամբ, այն դեպքում, երբ հայ գործիչները տակավին շարունակում էին կառչած մնալ անցյալ դարձած հայ ազատագրական շարժման վաղ ռոմանտիզմից։

Կ. Եզյանը հոգով բարձրաստիճան այն հոգևորականության հետ էր, որոնք հայրենիքի սիրուց վառված՝ 19-րդ դարի առաջին երեսնամյակին Ռուսաստանի և մուսուլմանական երկու հզոր պետությունների միջև

[12] **Н. Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, Т. IV, СПб, 1871—1888, стр. 384—385.

եղած չորս պատերազմների բոցերում կրակին տվին իրենց փափագած հույսերը և ի վերջո անձնատուր եղան ցարական ինքնակալությանը և վերջինիս հավատարիմ ծառայության մեջ տեսան առօրյայի իմաստն ու խորհուրդը։ Եվ Եզյանի համար դա օրինաչափ էր, որովհետև հայ հասարակական-քաղաքական կյանքի բնորոշ կողմը մարտիրոսությունն է եղել հանուն դավանանքի և սա էլ պատճառ ու ելակետ պիտի դառնա հասկանալու և մեկնելու նրա մերձեցումը «իշխանության և շրջապատող երևույթների նկատմամբ»[13]։

Բացառապես կամ համարյա այդպես էր մտածում Եզյանի «խորհող ու գործող» միջավայրը։ «Երբ ես Տաճկաստան եկա՝ այնպես էի համոզված, — Եզյանին հղած նամակում գրում էր նրան համախոհ գործիչ Համբարձում Իփէքճյանը, — թե հայերը Տաճկաստանում մեծամեծ արտոնություններ են վայելում, թե ինքնուրույն կերպով զարգանալու համար պահանջված արտոնություններ ունեն, թե հայոց շահերը պահանջում են սերտ հարաբերություններ ունենալ տաճկի կառավարության հետ և թե Ռուսիո քաղաքականությունը արգելք է լինում Տաճկաստանի հայոց առաջադիմության, և այլն։ Այս համոզման համաձայն էի վարվում ազգային գործերի մեջ, թեև ո՛չ տաճկի կառավարությունը երբեք պաշտպանած եմ հրապարակավ և ո՛չ Ռուսիո քաղաքականության դեմ աճխոհեմ և անվայել հարձակումներ արած։ Հետո ռուս-թուրքական պատերազմի միջոցին Անգղիա գտնվելով և անգղիացոց հետ հարաբերություններ ունենալով, մյուս կողմից գիտենալով, որ Անգղիո քաղաքականությունը մեծ ազդեցություն ունի տաճիկի կառավարության ընթացքին վերա՝ հուսացի, թե անգղիացիք կարող և տրամադիր կլինին մեր ազգի վիճակին բարվոքմանը աշխատելու, և ըստ այնմ վարվեցա։ Սակայն երեք չորս տարվա փորձերը ցույց տվին, թե եթե անգղիացիք կարող իսկ լինեն մեր ակնկալած ծառայությունն անել մեզ, նոցա գործելու եղանակը շատ դանդաղ է, մինչդեռ մեր ազգի (գլխավորապես գավառացոց) վիճակը շուտափույթ և հատու դարմանի կկարոտի։ Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ հաստատ համոզում գոյացած է իմ մեջ, թե աշխարհածանոթ «Հայկական խնդիրը» միայն Ռուսիո կառավարությունը կարող պիտի լինի լուծել, ինչպես որ ինք հաջողեցավ հարուցանել զայն, ուստի և խորհող և գործող հայոց պարտքն է այդ

[13] Տե՛ս **Г. Эзов**, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, стр. X.

լուծումը դյուրացնելու և փութացնելու աշխատել։ Այս է ահա... իմ քաղաքական ծրագիրը...»[14]։

Ինչպես տեսնում ենք, Կ. Եղյանը և նրա «խորհող» շրջապատը մեծ ապասելիքներ ունեին Ռուսաստանից, բայց 1880-ական թվականների ցարիզմի քաղաքականությունն այն չէր, ինչ որ կցանկանային ռուս ժողովրդի զարգացման լայն հնարավորություններ փափագող ռուսահայերը։ Կ. Եղյանը և նրա կողմնակիցները համոզվելով, որ Հայկական հարցի լուծման ուղղությամբ փոխվել է ռուսական կառավարության մարտավարությունը, որոշում են հնթարկվել նոր ժամանակների թելադրանքին, հակառակ չգնալ կառավարական միջոցառումներին և ակամա դառնալ հարմարվողական։ Այս տեսակետից ուշագրավ է նաև Եղյանի 1899 թ. հուլիսի 22-ի նամակը՝ ուղղված էջմիածնի ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, ուր մասնավորապես խորհուրդ է տալիս գործել հնարավորին չափ զգույշ, հրաժարվել ամեն տեսակ «ցուցամոլությունից», որը հղի է անկանխատեսելի վտանգներով։

Լինելով Հայ Առաքելական եկեղեցու ջերմ պաշտպան, Կ. Եղյանի նման, Ալ. Երիցյանն էլ կարծում էր, որ կրոնը «միակ փրկարար միջոցն է մեր պատմական անցյալի անջատված օղակը ձեռք բերելու համար»[15], եվ դա պատահական չէ։ Ե՛վ Կ. Եղյանը, և՛ Ալ. Երիցյանը պատմահայեցողությամբ ու հասարակական կյանքի երևույթների ընկալմամբ իդեալիստներ էին, հանգամանք, որ սակայն չխանգարեց նրանց, որպեսզի պատմական վճռորոշ շատ իրողություններ բացատրեն եկեղեցիով գոտեպնդված «ազգային շահերից կամ ուղղակի բուրժուական ռեալիզ մի դիրքերից։ Նրանք Ռուսաստանն ընկալում էին իբրև մի ամբողջական երկիր՝ զերծ ներքին խառնակություններից, գերադասում էին ռուսական պետական կարգն ու օրենքները, դրանք համեմատում Օսմանյան կայսրության հետ և մատնանշում Ռուսաստանի առավելությունները։ Դրանից ելնելով էլ նրանք Հայկական հարցի լուծման հեռանկարները կապում էին Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողությունների հետ։

Ազգային քաղաքական մտածողության այս ուղեգիծն ընտրեց նաև Ստեփան Պալասանյանը (1847—1889), որը կղերական Գաբրիել Այվազովսկու հետ համագործակցելուց հասել էր առաջադիմական գաղա-

[14] ՀՀ ՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Հ. Իփեքճյանի 1882 թ. ապրիլի 17-ին Եղյանին հղած նամակից։ Տե՛ս նաև Մ. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976 թ., էջ 72—73։

[15] Ալ. Երիցյան, Դարձյալ Ստեփանոս Նազարյանցի գրական ժառանգության մասին, «Փորձ», 1881, № 5—6, էջ 249։

փարների տարածման անհրաժեշտության մտքին, տերտերական երանգի իդեալիզմից պատմական օրինաչափությունների ընդունման տեսությանը։ Իհարկե, նա ևս ազատ չէր քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ռուս ցարերի «քրիստոնեասիրությունն» ու «անկեղծությունը» գովերգելուց։ «Ալեքսանդր Ա-ն սրտանց ցանկանում էր,— գրում էր նա,— հույներին ազատել օսմանյան իշխանությունից։ Սրբազան դաշնակցության խորհրդավոր ժողովներում արդեն խոսք էր եղել հույների, ինչպես նաև ուրիշ քրիստոնյա ժողովուրդների անկախության մասին. Ալեքսանդրը մի քանի անգամ հայտնեց իր մտքերը այդ խնդրի վերաբերմամբ, ավելի անկեղծությամբ խոսելով մանավանդ պրուսաց թագավորի հետ, որին յուր մտերիմ դաշնակիցն էր համարում[16]»։

1880-ական թվականներին Թիֆլիսում լույս տեսավ Ստ. Պալասանյանի «Պատմություն հայոցը», որը կարճ ժամանակահատվածում ունեցավ մի քանի վերահրատարակություն։ Ժամանակին մեծ համարում ունեցող իր այս դասագրքում Ստ. Պալասանյանը բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերից բնութագրեց հայերի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականության ողջ գործընթացը։ «Աչքի առաջ ունենալով յուր երկրի վաճառականության և արհեստների բարգավաճումը,— գրում էր նա,— և յուր ապագա աշխարհակալություններ Ասիայում, ռուս պետությունը... պաշտպան ու բարեկամ հանդիսացավ Հայոց։ Ռուսաց թագավորները մեծամեծ խոստումներ տվին հայոց, արտոնություններ շնորհեցին, աստիճաններ ու պատվանշաններ բաշխեցին, որպեսզի նոցա համակրությունը գրավեն»[17]։

Եթե Ռուսաստանը չէր ուզում վերականգնել Հայաստանի առաջվա փառքը, ապա զանգվածային հայրենադարձության շնորհիվ հնարավորություն տվեց կրկին «նորոգել» հայոց հայրենիքի մի հատվածը՝ Արևելյան Հայաստանը։ «Եվ հիրավի, հայերը իրենց նոր կացության մեջ կյանքի և ստացվածքի ապահովություն վայելելով, սկսան մեծ եռանդով վաճառականության ետևե լինել, որով Կովկասի առևտուրը կարճ միջոցում պայծառության հասավ։ Նյութական ապահովությունը հայոց միջոց տվեց կրթության հոգ տանելու, և այս կողմից ռուսահայք ավելի առաջադիմություն արին, քան Թուրքիայի հայերը՝ իրանց կանոնավոր ուսումնարաններով։ Տակավին ներկա դարի սկզբին դուրս եկան մի քանի ականավոր անձինք, որոնք իրանց առատաձեռնությունն ու ազ-

[16] Ստ. Պալասանյան, Հոնաստանի անկախությունը, «Փորձ», 1877—1878, № 1—2, էջ 197։

[17] Ստ. Պալասանյան, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 482—483։

դեպությունը գործ դրին Ռուսահայոց մտավոր և բարոյական կրթությունը հաստատ հիման վրա դնելու։ Նախաձեռնությունը այս գեղեցիկ գործի մեջ պատկանում է Լազարյանց տոհմին և Ներսես Ե կաթողիկոսին»[18]։

Ի՞նչ դիրք էր բռնել Ստ. Պալասանյանը, երբ ռուս թուրքական 19-րդ դարավերջի պատերազմը օրակարգ էր մտցրել Հայկական հարցը և հրապարակ էր իջել արևմտահայերի ազատության հիմնախնդիրը։ «19-րդ դարի նշանաբանը» իր ծրագրային հոդվածում, ի գիտություն ընդունելով այն իրողությունը, որ եվրոպական մի շարք ժողովուրդներ ըմբոստանալով իշխող ազգերի դեմ, պայքարի իրենց փորձով ապացուցել են ժողովուրդների իրավահավասարության անհրաժեշտությունը, նրանց սովորությունների, իրավունքների հարգումը, Ստ. Պալասանյանը գրում էր. «Այս գաղափարի հաղթանակը մենք տեսնում ենք Հունաստանի անկախության, Հունգարիայի ինքնավարության և Իտալիայի ու Գերմանիայի միության մեջ։ Այսօր իսկ մեր աչքերի առաջ նույն գաղափարը իրագործելու են ձգտում արևելյան քրիստոնյաները»[19]։

Ռուս-թուրքական պատերազմի օրերին գրելով Մ. Խրիմյանի «Վանգույժ» և «Դրախտի ընտանիք» ստեղծագործությունների գրախոսությունները, Ստ. Պալասանյանը բնագրից կատարած ընդարձակ մեջբերումներով արևմտահայությանն ուղղակի գործուն պայքարի է հորդորում բռնակալության դեմ։ Ժամանակին խիստ այժմեական էր նաև Ծերենցի «Թորոս Լևոնի» վեպի մասին գրախոսությունը, ուր պատմավիպասանի նպատակն էր «ներկա տագնապալից ժամանակներում» ցույց տալ, թե «ինչպես անցյալի համանման պարագաներում Թորոսի հայրենասեր և անվեհեր հոգին հայ ժողովրդին կորստյան անդունդից ազատեց և վերակենդանության կանչեց... Թե ինչպես մի ափ ժողովուրդ կարող է յուր ընկած տեղից բարձրանալ, որպես հրաշքներ կարող է գործել նա, եթե միայն կամք ու հոժարություն ունենա Թորոսների ձայնը լսելու, նոցա գեղեցիկ օրինակին հետևելու»[20]։

Շարունակվող պատերազմի ընթացքում նա հավատով էր նայում Ռուսաստանի հաղթանակին և արևմտահայերի ապագային, իսկ պատերազմի ավարտին, երբ տակավին չէր կայացել դեսպանաժողովի նիստը, Պալասանյանն իր պատմագիտական հրապարակախոսության մեջ հարկ էր համարում եվրոպական կարծիքը նախապատրաստելուն զուգընթաց

[18] Նույն տեղում, էջ 499—500։
[19] «Փորձ», 1877—1878, № 1—2, էջ 143։
[20] «Փորձ», 1879, № 2, էջ 136։

նախապատրաստել նաև հայ հասարակությանը։ Այս առումով շատ ուշագրավ իր պատմահրապարակախոսական «Հունաստանի անկախությունը» հոդվածում Ստ. Պալասանյանը հատկապես կարևորում էր, որ «ոչինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա դարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը քաղաքական անկախությունը ձեռք բերելու։ Հունաստանը, Դանուբյան իշխանությունները, սլավոնական փոքրիկ իշխանությունները — Մոնտենեգրոն և Սերբիան, Հունգարիան, վերջապես Իտալիան և Գերմանիան, յուրաքանչյուրը յուր ազգային ոգու և շրջապատող հանգամանքների համեմատ, զանազան միջոցներ են գործ դրել, այլևայլ ճանապարհով են ընթացել, իրանց դարավոր ցանկություններին հասնելու։ Բայց նոցա բոլորի նպատակը միևնույնն էր,— ազատվել օտարական իշխանություններից և մի քաղաքական ու ազգային մարմին կազմել»[21]։

Ստ. Պալասանյանի պահանջը հանգում էր հետևյալին՝ հավաքական հայությունը «մի քաղաքական և ազգային մարմին կազմելու» համար միջոցների խտրություն չպետք է դնի։ Նա ուրիշ ճանապարհ չէր տեսնում։ Իրադարձությունները պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում շիկանում էին, և սակայն միջազգային դիվանագիտությունը հեռու էր վճռական քայլեր կատարելուց։ Պատմաքննական հայացքով մերձենալով Հայկական հարցին, Պալասանյանը նրա լուծման ելքը տեսնում էր ազգի հոգևոր և ֆիզիկական ուժերի համախմբման, ազգային, ազատագրական պայքարի միասնական ճակատի ստեղծման մեջ։

Ի դեպ, չի կարելի անգիտանալ Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականության գնահատման շուրջ մինչխորհրդային հայ հեղինակների մոտ գոյություն ունեցող ներհակությունը։ Առանձնապես երկու դարերի սահմանագլխում հայ պահպանողականության ներկայացուցիչներից ոմանք չկարողացան ազատվել դասակարգային նեղմտությունից և օբյեկտիվ ու համակողմանի գնահատել Հայկական հարցում Ռուսաստանի խաղացած դերը։ Այսպես, 20-րդ դարասկզբի հայ հետագիմ պահպանողական մտավորականության ձայնատար եղիշե քահանա Գեղամյանը (1840—1920), որն անտարբեր չէր դեպի ազգային կյանքն ու խնդիրները և արձագանքում էր նրան հուզող հարցերին ազգապահպանության կղերական դիրքերից, այդ նեղմտությունից էլ գրչահարում էր Ռուսաստանի հնօրյա քաղաքականությունը և նրա հաջողության երթը դյուրաց-

[21] «Փորձ» 1877—1878, № 2, էջ 162։

նող հայ գործիչներին։ Ըստ նրա՝ բոլոր հայ քաղաքական գործիչները, Ի. Օրուց մինչև Ն. Աշտարակեցին և Լազարյան իշխանները՝ մեծամեծ գոհեր են մատուցել ռուսական դիվանագիտությանը և միշտ հուսախաբ եղել իրենց ակնկալությունների մեջ։ Աշտարակեցին «փոքր ի շատե քաղաքագիտական հոտառություն» չուներ և չէր հասկանում իր մասնակցությամբ կատարվող մեծ ու փոքր դեպքերի էությունը. նա նույնիսկ չգիտեր, որ այդ «դեպքերի առաջացնողը, նրանց շարժողն ու պարացնողը արտաքին քաղաքականությունն է գլխովին»[22]։ Գեղամյանը չկարողացավ գտնել այն կապը, որ գոյություն ուներ հայ գործիչների նպատակասլաց գործունեության և հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների օրինաչափ զարգացման միջև։ Ինչե՜ Ստ. Պալասանյանի պատմահայեցողությամբ պատմաբանը պետք է օգնի ժամանակակիցներին հասկանալու ժողովրդի անցյալի կյանքը և ներկայի մեջ ցույց տա առաջընթացի միտումները, կարողանա վեր հանել ազգի բարոյական զորության գաղտնիքը, որի շնորհիվ ժողովուրդը կարողանում է պահպանել իր ազգային ինքնուրույն դիմագիծը, ապա Եղիշե Գեղամյանն աշխատում էր վարագուրել ազգային քաղաքական իր իմաստասիրությունը և հակադեմոկրատական գաղափարախոսությունը երկդիմի տրտունջներով և նույնիսկ հայրենասիրության մասին նետված շատ զգուշավոր և միշտ քողարկված խրատներով։ Ժամանակի պահպանողական շրջաններում հայտնի դառնալով իբրև դեմոկրատական հայացքների մոլի հակառակորդ, նա միշտ ասում էր, որ ինքը չի կարող ձայնակցել ռուսական կողմնորոշումը պաշտպանող հայ գործիչների ուղեգծին[23]։ «ԺՀ դարու վերջերից և ԺԹ-ի սկզբներից,— գրում էր նա,— հայն իր փորձված ճանապարհից սկսեց շեղվել, իր աչքը դեպի իր սիրուն եկեղեցին ու պանծալի հավատը վարագուրեց օտարների բերած փայլուն թաշկինակով և իրար կորցնելով գազանաշատ անտառների, անդնդախոր ձորերի, մաշող առապարների կողմերն ուղեց իր մոլար քայլերը»[24]։

Գեղամյանը աչք էր գոցում այն ճշմարտության առջև, որ ռուսական կողմնորոշումը հայ ազատագրական շարժման գործիչների համար «հյուսիսային արծվի» թևերով արտահանված և հայերին պարտադրված գաղափարներ չէին, այլ արևելյան բռնատիրությունների դեմ նրանց հարգարժան ազատագրական պայքարի միակ, ուրեմն նաև՝ առաջադիմական, իրական ուղեգիծը։

[22] Եղ. Ք. Գեղամյան, Պատմական քաղվածքներ, պրակ 7, Բաքու, 1909, էջ 940։
[23] Տե՛ս Ն. Սարուխանյան, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, 1971, էջ 184։
[24] «Հովիտ», 1916, № 5, էջ 65։

Պատմաքաղաքական երևույթները ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակից անջրպետված քննության ենթարկելով նա դուռ էր բացում ինքնահակասությունների և հեղհեղուկ մտածողության համար։ Պատահական չէ, որ նա մերթ գովեստի տողեր էր նվիրում ռուսական տիրապետությանը և դրվատում հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց «մի քանի տասնյակ տարիների ջանքերից, տառապալից փորձերից հետո վերջապես հասավ ցանկալի օրը և հայ մելիքների երկիրը և Արարատյան աշխարհը իր ցանկալի գիրկն ընկան։ ...Հայոց եկեղեցին իր ազատ պաշտամունքի լիակատար տերը եղավ, հայոց հայրապետներն իրենց խղճուկ կացությունից ելան և արտաքին շուքով ու փայլով շողվեցան, հայ ժողովուրդը իր գույքի, պատվի ու աշխատանքի տերը դառնալով, դադարեց միայն մի պատառ հացով գոհանալ, նա հոգեկան պահանջ զգաց իր աշխատանքի ավելիով ուսանիլ, կրթուիլ և կենսակրթական ճանապարհի վրա ելնել։ Ռուսական տիրապետությունը իր քաղաքակրթության շունչը փչեց հայության երեսին և հայը նրա ազդեցությամբ և նրա միջոցով սկսեց յուրացնել եվրոպական կենսակրթությունը իր բազմազան ճյուղերով»[25], մերթ վերհիշելով իր այն նախորդներին, որոնք տակավին «հիսունական թվականներից սկսած, իրենց ժամանակակիցներին խրատել են և աշխատել համոզելու, որ մեր փոքրաթիվ, ցիր ու ցան եղած և տկար հայ ազգի ապագան կարելի է ապահովել այն ժամանակ միայն, երբ հայ ազգն ընդհանրապես և նրա ղեկավար շրջանները մասնավորապես իրենց համար անշեղ կանոն ընդունեն անցյալի վերաբերմամբ սիրել և հավատարիմ մնալ հայ ազգության գարավոր առանձնահատկություններին...

Մեր ազգի քաղաքական ձգտումների վերաբերյալ մեր նախորդները միշտ խրատել են հավատարիմ մնալ ամենուրեք տիրող պետության և իր վարկն ու ապագան չվտանգել թեթևամիտ բախտախնդրությամբ, քանի որ մեր աշխարհագրական և քաղաքական դիրքը այնպես է պահանջում»[26]։

Գեղամյանը հակակրանքով էր խոսում «համազգային հոգու զորության վրա» երկաթին գերապատվություն տալու Խրիմյանի, Արծրունու և Րաֆֆու «ինքնահնար գյուտի» մասին, որովհետև սրանք «համազգային զարգացած, հասուն գիտակցության զորությունն արհամարհելով՝ միայն երկաթի մեջ որոնեցին հայ ժողովրդի ազատագրությունը, որը

[25] «Հովիտ», 1916, № 5, էջ 66։
[26] Նույն տեղում, № 6, էջ 86.

մեծ մոլորություն էր, իր մեծ ու չարաչար հետևանքներով»[27]: Դա «Մեղու Հայաստանի» ուղղությունն էր, որ պաշտպանելով կղերականության մեծնաշնորհը և եկեղեցու միջոցով կատուցվող «ազգային կուլտուրայի» արժեքները, դրվատելով առևտրադրամատիրական հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին, աշխատում էր կուրացնել իր ընթերցողներին առաձգական և կեղծ դեմոկրատական հայտարարություններով: Պատահական չէր, որ «Խենթում» Րաֆֆու կողմից առաջադրվող ռուսական կողմնորոշման պաշտպանությունը ընդունվեց այդ լրագրի կողմից, որի աշխատակիցներն ու թղթակիցները հերթով պայքարի նետվեցին Րաֆֆու դեմ: Զգտելով «խելքի բերել» Րաֆֆու միամիտ և էնտուզիաստ ընթերցողներին, Եղ. Գեղամյանը 1881 թ. տպագրեց «Խենթի» քննադատությանը նվիրված ընդարձակ իր «իմաստասիրությունը»[28]:

Առավել ևս կտրուկ ու մոլեգին դարձավ նրա ելույթը «Կայծեր» վեպի հրապարակումից հետո: Բազմաթիվ իր հոդվածներում Գեղամյանը առաջադրեց հայ ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ պահպանողական՝ քաղաքականապես և բարոյապես մարող հոսանքի բացաև սկան պատգամները:

Հայ ազատագրական շարժման հարցերին նվիրված Գեղամյանի մանավորապես վերջին շրջանի աշխատություններում խստորեն բացակայում էր իրադարձությունների զարգացման պատճառականությունը: Դրանք կառուցված էին պատմության մեխանիստական ընկալման և կիրառական պրագմատիզմի՝ գիտական առումով ամուլ և էկլեկտիկ մեթոդով, ուր մասնավոր իրողությունները ապարդյուն կերպով փորձում էին սպառնալ հայ ազատագրական շարժման լուսավոր փաստերին, իսկ հեղինակի վերացական մտքի դեգերումները՝ երևույթների պատմահասարակական կապերին և օրինաչափություններին: Գեղամյանը հայ ժողովրդի ազգային-քաղաքական և ազգային-մշակութային զարգացման ներկան ու ապագան պատկերացնում էր հայ եկեղեցու և բուրժուական կարգերին համակերպված՝ կղերի ղեկավարությամբ, ուստի պատահական չէ հոգեկան այն խռովքը, որ երևան էր բերում նա հայ կղերի ազգային-մշակութային գործունեությունը խաթարող ցարիզմի քաղաքականության նկատմամբ:

Ե. Գեղամյանի կարծիքով, ցարիզմի անբարյացակամ քաղաքականությունը հայ եկեղեցու և հասարակական կյանքում նրա մենաշնորհը պաշտպանող կղերական մտավորականության նկատմամբ կաշկանդել է

[27] «Հովիտ», 1916, № 5, էջ 82:
[28] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1881, № 183:

հայ մշակույթի զարգացումը: «Բայց սրանով չենք ուզում ասել, — գրում է նա, — թե կառավարությունից որևէ փոփոխություն, պարտքի որևէ հատուցումն ենք պահանջում կամ խնդրում:

— Ո՛չ, քավ լիցի:

— Ընդհակառակը՝ շնորհակալ ենք կառավարությունից այն բարիքների համար, որ 75 տարի վայելել ենք նրա հովանու ներքո՝ ի տրիտուր մեր մատուցած մեծամեծ ծառայություններին: Բայց եթե կառավարությունից որևէ պահանջ անելը մեզ իրավունք չենք համարում, գոնե լիակատար իրավունք ենք համարում և բաց ճակատով միշտ կարող ենք պահանջել, որ կառավարությունը մեզ ազգովին ողջակեզ չթերե իր այն քաղաքականության նպատակին, որ վերջին Արևելյան պատերազմից հետո սկսել է գործադրել մեզ վրա»[29]:

Գեղամյանը նզովում էր ամեն կարգի ազգային և դասակարգային շարժումները, որովհետև որչափ հայերը հանգիստ ու խաղաղ են եղել, այնչափ վայելել են տիրողների «առատ շնորհները»:

Ըստ Գեղամյանի, մահմեդական աշխարհում հայերի անդորրը խանգարել են հատկապես նրանց ռուսական կողմնորոշումը և Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Գեղամյանը ջուր էր լցնում, առաջին հերթին, թուրք ջարդարարների ջրաղացին, երբ գրում էր, թե «մինչև Պետրոս Մեծի Արևելքի վրա աչք ունենալն, Տաճկաստանի հայ քրիստոնյաներն ընդհանրապես հանգիստ և լավ էին ապրում օսմանյան գահի հովանավորության տակ: Կրոնի և լեզվի կատարյալ ազատություն էին վայելում, տնտեսապես բարեկեցիկ վիճակ ունեին, առևտրի և արհեստների մեջ առաջին տեղն էին բռնում օսմանյան կառավարության մյուս հպատակների մեջ, պետական և հասարակական գործունեության ասպարեզը նրանց համար միշտ բաց էր լինում... Ընդհանուր կոտորած, ժողովրդի ջարդ, քաղաքների և գյուղերի ավարառություն և ավերում, կանանց հափշտակում և առևանգում, արտագաղթումն և այլ այսպիսի աղետներ՝ գոյություն չունեին Տաճկաստանում, մինչև այն օրը, երբ օսմանյան կառավարությունը ոչ մի կասկած չուներ տաճկահայերի բարեհնազանդության վրա»[30]:

Կամայականորեն պարբերացման ենթարկելով հայ ազատագրական շարժումների պատմությունը, Հայկական հարցի ծագման ակունքները տեղակայելով պատմության խորքերում, Գեղամյանը գրում է. «Այսպես թե այնպես Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով՝ Հայկական

[29] Եղ. Ֆ. Գեղամյան, Մտորումներ, «Հովիտ», 1906, № 39, էջ 618:
[30] Եղ. Ֆ. Գեղամյան, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, Բաքու, 1915, էջ 420—421:

հարցը ռուսական հարց էր, իսկ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով՝ դարձավ միջազգային հարց»[31]։ Ըստ Գեղամյանի՝ «Հայկական հարցի վեցերորդ շրջանը» սկսվում է այն բողոքագրով, որ Բեռլինի վեհաժողովի որոշումից գժգոհ հայ պատվիրակությունները ստորագրելուց երկու ժամ առաջ տվեց բոլոր լիազորներին, բացի թուրք լիազորներից, ուր «հայ պատվիրակությունն իր ցավն է հայտնում, որ իր օրինավոր և միանգամայն չափավոր պահանջները կոնգրեսի կողմից չընդունվեցին»[32]։

Սկզբունքորեն մերժում ենք նաև հայ հետադեմ պահպանողականի այն կարծիքը, որ եթե Ռուսաստանի շահը պահանջում էր իրեն միակցել Արևմտյան Հայաստանը, ապա անգլիական պրագմատիզմը թելադրում էր, որ Արևմտյան Հայաստանն ինքնավարություն ստանա և դրանով արգելք ստեղծվի Ռուսաստանի դեմ[33]։

Եթե Ռուսաստանի մասին կարծիքը ճիշտ է, ապա Մեծ Բրիտանիայի մասին ասվածը իրականության հենգափոխում է։ Ճիշտ է, քաղաքական դիվիդենդներ շահելու համար նման տեսակետ պաշտպանել են անգլիացի որոշ դիվանագետներ, բայց դա քնավ չի նշանակում, թե Անգլիայի շահերն իրոք համընկնում էին ինքնավար Հայաստանի գոյության հետ։ Չէ՞ որ հրապարակի վրա էր անգլիական քաղաքական գործիչների մի այլ խմբի կարծիքը, ըստ որի ինքնավար Հայաստանը կդիմանար չափազանց կարճ և վաղ թե ուշ կմիակցվեր Ռուսաստանին՝ ձախողման հնթարկելով անգլիական բոլոր դիտավորությունները։ Հայերին ինքնավարություն տրամադրող Լեյրդը փոքր-ինչ ուշ՝ 1878 թ. մայիսի 15-ին հեռագրում էր Սոլսբերիին, թե ինքնավարությունը Հայաստանի համար արտառոց է և հավանաբար՝ ռուսական սադրանք, որ ինքնավար Հայաստանը մի ամիս էլ չի դիմանա և ձեռք կմեկնի Ռուսաստանին։ Սոլսբերիին հղած մեկ այլ հեռագրում Լեյրդը տեղյակ էր պահում այն «դավերի» մասին, որոնց նպատակն է վերականգնել «հայկական ազգությունը»[34] (այսինքն՝ պետականությունը — Ն. Ս.)։

Գեղամյանը համառորեն, առանց որևէ տատանման, այն սնանկ տեսակետն էր պնդում, որ եթե չլինեին «հայոց աջակցությունները» ռուսներին և «բողոքներն առ Բեռլին», ապա կբացառվեին նաև 1890-ական թվականների հայկական կոտորածները։

[31] Նույն տեղում, էջ 402։
[32] Նույն տեղում, էջ 403։
[33] Տե՛ս նույն տեղում, էջ 363։
[34] Տե՛ս Положения армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896, стр. 57.

Հայերի ռուսական կողմնորոշումը և նրա հետևանքները նույն թուրքամետ և հակագիտական դիրքերից էր քննում Եղիշե քահանայի գործընկեր Սեդրակ Ավագյանը։ Հանդուրժող չափավորությամբ քննադատելով ցարիզմի ազգային-կրոնական քաղաքականությունը, նա ևս այդ «քննադատության» անվան տակ սևացնում էր հայ ազատագրական շարժումները։

Ռուս-մահմեդական վիճաբանությունների ժամանակ հայերը «կուրծքեն օգնել և աջակցել են» ռուսներին։ «Ահա թե ինչու, — գրում էր նա մեծ եղեռնի նախօրեին, — տասնյակ տարիներ տաճիկը մեզ հալածում, կոտորում և բնաջինջ է ուզում անել մեր հարազատ երկրում»[35]։

Հայ ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի ընթացքի և լուծման հեռանկարների մասին ուրույն վերաբերմունք ուներ հասարակական գործիչ, հրապարակախոս, պատմաբան ու բանաստեր Մաղաքիա Օրմանյանը (1841—1918)։ Օրմանյանը զերծ էր անցյալի ազգային-քաղաքական իրողություններին, դարասկզբի հետադեմ պահպանողականներին բնորոշ, կրքային ու հախուռն գնահատականներ տալուց։ Նա որպես պատմաբան, հետևողական դավանող և վերլուծող էր, ուներ երևույթներն ու անցքերը դիտելու և քննելու տրամաբանական մեթոդ և անաչառ եղանակ։ Նա չուներ նաև անցյալի հայ կղերական պատմիչների և ժամանակակից Գեղամյանների նախապաշարումներն ու նեղմտությունը։ Օրմանյանը խոհուն ու շրջահայաց էր հատկապես իրօրյա կացությունը գնահատելիս։ Հայոց պատմության մեջ նախօրինակը չունեցող 1896—1908 թվականների ժամանակ տարիներին (այս տարիներին նա Կ. Պոլսի Հայոց պատրիարքն էր), երբ Թուրքիայում առավել քան խաթարված էր հայերի ոչ միայն հանգիստը, այլև ֆիզիկական գոյությունը՝ «Ինծի կմնար, — գրում էր նա հետագայում — հարմար կերպարով, ճարտար դարձվածներով, հնարավոր միջոցներով, Համիտի հայերու դեմ ունեցած ատելությունը մեղմացնել, հալածանքները թեթևացնել, արգելքները նվազեցնել, ազգին կացությունը բարվոքել, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ քիչ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել։ Այդ ծրագիրը Համիտին ուզածը չէր և երբ ես անոր կհետևեի, Համիտին հետևող եղած չէի ըլլար...»[36]։ Այնուհետև՝ «Արքունաց հետ մտերմական հարաբերություններ պահելիս, — շարունակում է նա, — և ամեն գործի համար Եըլտըզ դիմելս հայտնի իրողություն մըն է, և հետևանք Համիտի բռնած քաղաքականության, որ

[35] Ս. Ավագյան, Ազատ Հայաստան Ռուսաստանի հովանավորության տակ, «Հովիտ», 1915, № 5, էջ 10։
[36] Մ. Օրմանյան, Խոհք և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 28—29։

նախարարությունները չեզոքացնելով՝ ամենայն ինչ պալատան մեջ ամփոփած էր, ուր զանազան ճյուղերու համար հատուկ հանձնարարականներ որոշած էին իբրև անպաշտոն նախարարություններ, և հայերու վերաբերյալ գործերը առաջին քարտուղար Թահսին բաշայի հանձնված էին, և ես ալ ստիպեալ էի անպատճառ անոր դիմել և անոր հետ բանակցել»[37]:

Օրմանյանի համար ամեն ինչից վեհը հայ ժողովրդի ինքնապահպանումն էր, որի համար պետք է աշխատեին բոլոր հայերը՝ հասարակ համալից մինչև «վեհ պատրիարքն ու կաթողիկոսը»: Նա հիմնականում իր աշխատությունները գրեց պատրիարքական աթոռը թողնելուց հետո, երիտթուրքերի սանձարձակ տիրապետության ժամանակաշրջանում: Անդրադառնալով այն հարցին, որ դեպի Անդրկովկաս ցարական զորքերի առաջխաղացման, 19-րդ դարի 20-ական թվականների համազգային ներշնչանքի այդ պահին՝ «Նիկողայոս Ա կայսրը յուր խոստումները առանձնապես ընդարձակեց, մինչև իսկ հայերուն աչքին ինքնուրույն իշխանության ակնկալությունը փալփլեցուց, և այդ խոստումները երաշխավորելու դիտմամբ, պահ մը Հայկական նահանգ անուն ալ տուավ նոր տիրապետած գավառներուն», Օրմանյանը օբյեկտիվորեն շարունակում էր, որ այդ «ամենը քաղաքագիտական ճարտարություններ եղան և տիրապետությունը դյուրացնելու առաջնորդեցին: Երբ որ տիրապետությունը լրացավ և հաստատուն ձև առավ, ռուսական կառավարությունը մինչև իսկ հայոց կրոնական կամ հոգևորական գործերուն վրա ալ ազդեցություն ունենալու ձեռք զարկավ»[38]:

Քննադատելով ցարական իշխանությունների ուխտադրժությունը, ռուսական տիրապետությունը իր ողջ էությամբ Օրմանյանը համարում էր ընդունելի: Նա ռեալիստորեն էր գնահատում պատմաքաղաքական անցումներն ու կանգառները: Քիչ չեն պատահել դեպքերը, գրում էր նա, երբ ռուսական տիրապետության ներքո սաստկացել են հայության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները, փակվել մշակութային հաստատություններն ու դպրոցները, բռնագրավել եկեղեցական գույքը, բայց այնուամենայնիվ հեղինակը գոհ էր ռուսական տիրապետությունից, որովհետև այն համատարած մեռելություն չէր սփռում և երբեք «երեք հարյուր հազարներու խողխողում», «մոլեռանդ խուժանի մը ձեռքով խաղաղ ապրող տարրին վրա հարձակում և ջարդ», «երեսուն հազար անմեղ կյանքերու անողորմ կոտորած» չէր ստեղծում[39]:

[37] Նույն տեղում, էջ 259—260:
[38] Մ. Օրմանյան, Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 119:
[39] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 5426:

Օրմանյանը ազատ չէր հայ կաթողիկոսներին և բարձրաստիճան հոգևորականներին մեծարելու անցյալի պատմագրության իդեալիստական արատներից, բայց ի տարբերություն նրանց, նա չէր նշավակում հայ ազատագրական շարժման գործիչներին և նրանց ռուսական կողմնորոշումը:

Օրմանյանը խիստ վնասաբեր էր դիտում արևմտահայերի հակասուլթանական ըմբոստությունները և մասնավորապես անարգում դրանք ղեկավարելու հավակնություն ունեցող հայ ազգային կուսակցությունների արկածախնդրությունը[40]: Կենսափորձով հարուստ Մ. Օրմանյանը, մահից մի քանի ամիս առաջ, 1918 թ. մայիսին, իմաստունության ծերունական բարձրակետից արժեքավորում էր Հայկական հարցի արծարծման ողջ գործընթացում եվրոպական դիվանագիտության անբարոյականությունը: «Քաղաքագիտություն ալ, դիվանագիտություն ալ, — գրում էր նա, — ո՛չ սիրտ ունին և ո՛չ խիղճ. գութ անոնց բառարանին մեջ չկա. իրավունք ըսածնին ալ շահն ու օգուտն է. քաղաքագիտության և դիվանագիտության ձեռնածուներ՝ եվրոպական մեծ տերություններ. և ներկա առիթին մեջ Անգղիա և Գաղղիա ոչ կապ մը ունին Հայաստանի կողմերը, և ոչ շահ մը կու հուսան անոր կացությունեն: Ռուսիա կրնար շահ մը ունենալ, բայց այն ալ քայքայվեցավ և եթե չքայքայվեր, միայն իրեն ավարաբաժինը ընդարձակել կխորհեր, և ոչ թե ուրիշը երջանկացնել: Ջեմ ուրանար, թե Կովկասահայը բավական լավ կյանք մը ուներ ռուսական կառավարության ներքև, սակայն այն կանոնավոր և զարգացման հետամուտ տերության մը ընթացքին հետևանքն էր, անկախաբար այս կամ այն տարրին օգտակար ըլլալու դիտումեն»[41]:

Հայկական հարցի միջազգայացման 40-ամյա ընթացքը հեղինակին բերել էր այն համոզման, որ եվրոպական տերությունների համար, որոնք «ո՛չ սիրտ ունին և ո՛չ խիղճ», գլխավորը «շահն ու օգուտն էր»: Առաջնորդվելով սեփական շահերով և չցանկանալով թույլ տալ մրցակիցների քաղաքական կամ տնտեսական գերազանցություն Օսմանյան կայսրությունում, տերություններից յուրաքանչյուրն իր ձգտումներով սկզբում քողարկվում էր կայսրության ամբողջականության պահպանման իմաստազուրկ սկզբունքով: Արդեն քառասուն տարի է, — գրում էր Օրմանյանը, — ինչ հայ ժողովրդի ծանր վիճակը օգտագործելով իբրև թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու և նրա գործե-

[40] Տե՛ս Գաբեգին վ. Հովսեփյան, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Թիֆլիս, 1909, էջ 25:
[41] Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 473:

րին միջամտելու պատրվակ, մեծ տերությունները ոչ միայն չեն նպաստել նրա դրության բարելավմանը, այլ ավելի են վատթարացրել այն: Հայկական հարցի պատմությունը Օրմանյանն ամենից առաջ դիտում էր իբրև դասեր առնելու գործընթաց, որպեսզի այդ գործընթացից հանի իր «լինե՞լ, թե՞ չլինել» հարցի պատասխանը: Իսկ լինելու համար Օրմանյանը խորհուրդ էր տալիս իրատես լինել և ճիշտ «որոնել ու որոշել, թե ով պիտի ըլլա հայուն բարօրության պատրաստողն ու գործադրողը: Հասարակաց ըմբռնումը յուր հավատքը հաստատած է եվրոպական տերությանց վրա, որոնք Պերլինի դաշնագիրը ստորագրեցին, և գլխավորապես երեքին վրա, Անգղիա և Գաղիա և Ռուսիա, որոնք անգամ մըն ալ գործադրել տալու համար մեջտեղ ելան, և վեց կուսակալությանց դրությունն ու բարեկարգությունը կազմակերպեցին: Արդ Բեռլինի դաշնագրեն քառասուն տարիներ անցած են, և 61-րդ հոդվածը մեոյալ տառ մնացած է բովանդակ այս երկարամյա միջոցին մեջ, մինչ ինչ որ ուրիշ հոդվածներով որոշված է, անմիջապես գործադրվեցան: Միթե՞ այս չափը չի բավեր հետևցնելու, թե ընելու միտք չունին: Գիտեմ ես որ անոնք Եվրոպիո մեջ գործող կուսակցությունները գրգռեցին իրենց առիթ մը պատրաստել, և երբոր անոնք միամտաբար խորհուրդին հետևեցան՝ հայուն վրա կոտորածներ հասան, և եվրոպական տերություններ անկարեկիր հանդիսատեսներ եղան: Ո՞վ մեզ կը վստահեցնե թե այս անգամ թելադրուած գրգռությունները և խոստացած պաշտպանությունները առաջիններեն տարբեր են. ո՞չ ապաքեն մէկ նշանակէ ալ շատ բաներ կրնան հետևիլ: Մինչև որ հայտնապես չցուցուի կամ չտեսնուի որ եվրոպական տերություններ Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը բարվոքելու մեջ իրենց օգուտ մը ունին, ո՛չ խոսքերուն հնար է հավատալ, և ո՛չ խոստումներուն վստահել:

Ահա իմ փորձառական հավատքի առաջին կետը»[42]:

Օրմանյանին մտահոգողը տերությունների հանցավոր քաղաքականությամբ փակուղի մտած Հայկական հարցն էր, եղեռնից հրաշքով փրկված մնացյալ հայության ապագան: Ջմոռանանք, որ Թուրքիայի կառավարման ղեկը վարող և պատերազմը տակավին շարունակող երիտթուրքերի գործունեության հիմքում ամուր նստած և իրացման գործընթացի մեջ էին թուրքիզմի և պանթուրքիզմի ծրագրերը:

Օրմանյանն իրեն հատուկ խորագիտությամբ կարողացավ ընկալել վերջիններիս վտանգը և գալիք սերունդներին ավանդել դրանցից զգուշանալու պատգամը:

[42] Նույն տեղում, էջ 474—475:

«Կարծողներ կան, — ասված է 1918 թ. մայիսյան նրա պատգամում, — որ հայուն ապագա բարօրության մեկ հավանական գործիչը օսմանցին կամ տաճիկը կրնա ըլլալ, և թե հայուն առջև միակ բաց ճամբան տաճիկին փարիլ ու տաճիկին յուսալն է: Արդ եթե տաճիկը յուր այսօրվան քաղաքական մտայնությամբ պիտի մնա, այդ ենթադրության հավանականությունը կը քիչանա. այժմյան քաղաքականությունը Թուրքիա ըսուած տերությունը ամբողջապես թուրքացնելն է, հայն ու քրիստոնյան բնաջինջ ընել կամ աննշանակ գոյության վերածել, որ խոսքի նյութ իսկ չկարենա ըլլալ: Մյուս կողմեն ոչ թուրք իսլամները հոգով ու սրտով, լեզվով ու կենցաղով թրքացնել, որպեսզի Թուրքիա միատարր ու միապաղաղ երկիր մը ու տերություն մը դառնա...»[43]:

Յուրաքանչյուր սերունդ իր ազգային հիշողությունից վերցնում, ժամանակի քննախույզ հայացքով գնահատում, վերագնահատում և ապագային է փոխանցում անուններն այն արժանահիշատակների, ովքեր անձնվեր ստեղծության համար վաստակում են ժողովրդի անանց հարգանքն ու սերը: Մեր ժողովրդի համար այդպիսի անուն է նաև Առաքել Բաբախանյանը՝ Լեոն (1860—1932):

Բավական է թերթել անցյալ դարավերջի և ընթացիկ հարյուրամյակի առաջին տասնամյակների կովկասահայ թերթերն ու ամսագրերը, Թուրքիկ հայացք նետել հայագիտական գրականության՝ համոզվելու, որ տակավին 18 տարեկանում, ռուսական նարոդնիկական շրջանակներում մեծ ժողովրդականություն վայելող գերմանական գրող Ֆրիդրիխ Շպիլհագենի նշանավոր վեպի («Մեկը դաշտում զինվոր չէ») հերոս Լեո անունը վերցրած Առաքել Բաբախանյանը, որպես գրող, գրական քննադատ, հրապարակախոս ու պատմաբան, ժամանակաշրջանի հանրաճանաչ դեմքերից էր: Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը բնութագրվում է բոլորանվեր ժողովրդասիրությամբ և իրապաշտությամբ, ժամանակի առաջադիմական գրական միտումների պաշտպանությամբ: Գրական հետադիմական հոսանքների դեմ նրա պայքարի արդյունքը մնայուն իր տեղն ունի հայ գրաքննադատական մտքի արժեքների հանրագումարի մեջ:

Լեոյի դիմադարձը գեղարվեստական գրականությունից և գրականագիտությունից դեպի հայ ժողովրդի հասարակական մտքի և քաղաքագիտական պատմության ուսումնասիրման ասպարեզ հիմնականում տեղի ունեցավ 19-րդ դարի 80-ական թվականների վերջերին: Ձկա մեր

[43] Նույն տեղում, էջ 476—477:

ժողովրդի պատմության մեջ մի հիմնահարց, որին մոտեցած և իր խոսքն ասած չլինի հայ պատմագրության երախտավոր այդ մշակը։ Հարթ ու անարգել նրա գրիչը հեղեղել է հայոց պատմության ամենատարբեր սահմանները։ Նրա թողած ժառանգությունը ոչ միայն իր ժամանակին կրթական ու հայրենասիրական վճռական դեր կատարեց, այլև այսօր էլ պահպանում է իր զգալի մասի անուրանալի արժեքը։ Լեոյի գիտական ուղղությունը ռեալիզմն էր, համոզմունքը կամ դավանանքը՝ լիբերալիզմը։ Նրա բոլոր մինչխորհրդային գրվածքները չէին խոտորվում այն սկզբունքներից, որոնց պաշտպանն էր Գր. Արծրունու «Մշակը»։

Լեոյի համար մարդկային հասարակության մեջ չկան հանկարծակի թռիչքներ, այլ ամեն ինչ, այդ թվում և ազգերը, բարձրանում, զարգանում են աստիճաններով։

Լեոն իր գործունեությունն սկսեց պատմական մի ժամանակաշրջանում, երբ սխոլաստիկայի հիմքով հասակ առած կղերապահպանողական պատմագրությունը նահանջել էր իր նախկին «ամուր» դիրքերից՝ տեղի տվել ազգային պահպանողական և լիբերալ բուրժուական ուղղություններին։ Ընտրելով վերջին ուղղությունը, նա կարողացավ զգալիորեն առաջ անցնել ոչ միայն Մ. Էմինից և Մ. Գարագաշյանից, Ք. Պատկանյանից և Գր. Խալաթյանից, հայագետ Մխիթարյաններից, այլև Ստ. Պալասանյանից և Ալ. Երիցյանից։

Չնայած Լեոյի գիտական բեմելի պահին հայ պատմագիտության ազգային-պահպանողական դպրոցը, կղերականների համեմատությամբ, նոր աստիճանի էր բարձրացրել պատմության ուսումնասիրությունը, բայց, այնուամենայնիվ, տառապում էր մեթոդաբանական և պատմա-իմաստասիրական սահմանափակ հայեցողությամբ և չէր կարողանում պատմությունը դուրս բերել մտածողության իդեալիստական շրջանակներից։ Տակավին 1880-ական թվականների վերջերին Լեոն դժգոհում էր, օրինակ, որ չկա ժողովրդի քաղաքացիական և սոցիալական հարաբերությունների պատմությունը, որ հայոց պատմությունն առավելապես դիտվում է արտաքին պատերազմների և ներարշավ դեպքերի կապակցության մեջ։ Նա համամիտ էր Բաֆֆու այն հարցադրմանը, թե «մեր պատմության մեջ գրեթե մոռացված է ամբոխը։ Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և զինվորներից Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ յուր կյանքն ուներ, որ յուր տոները, հանդեսներն ու ցնծություններն ուներ, և որի հոգեկան ու բարոյական հակումներն արտա-

հայտվում էին այս կամ այն հասարակական երևույթների մեջ։ Մեր պատմությունը լուռ է այդ բոլորի մասին»[44]։

Լեոն այնքան էր մարսում պատմական փաստաթղթերը, որ երբեմն չէր վկայակոչում դրանք, այլ պատմում էր իբրև գրող։ Այս առումով նա կարծես թե անմահ Բաֆֆու գաղափարակիցն էր, այն տարբերությամբ միայն, որ եթե Բաֆֆու մոտ դոմինանտը վիպականն էր, ապա Լեոյի մոտ իշխում էր պատմականը։ Պատմական փաստաթղթերի յուրացման գրողական ընկալումը և ժամանակագրական համապարփակ ընդգրկումը նրան հնարավորություն տվեցին հայոց պատմությունը դիտել որպես միասնական ամբողջություն։ Լեոն նման չէ այն պատմաբաններին, ովքեր պատմական անցքերը գնահատում են նեղ ժամանակագրական կտրվածքի անձուկ միջավայրում։ Նրա միտքը շատ ավելի խորն էր ակոսում ուսումնասիրվող երևույթի պատմական և հասարակական ենթահողը։ Ուսումնասիրության այդ մեթոդի կիրառմամբ նա միանգամից քննության առարկա դարձրեց ամբողջ հայոց պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև հայ-ռուսական հարաբերությունները, Հայկական հարցն ու արևմտաեվրոպական դիվանագիտությունը, միաժամանակ հետաքրքրություն հանդես բերելով ինչպես պատմական փաստերի, այնպես էլ դրանց շարժիչ գաղափարների նկատմամբ։ Հայ ժողովրդի հին, միջնադարյան և նոր պատմության ամենահրատապ ու կենսական խնդիրների, հարևան երկրների հետ զանազան առնչությունների, համաշխարհային տարբեր անցքերի, դեպի ռուս ժողովրդի հետ համագործակցություն տանող փոխհարաբերությունների Լեոյի խորատես գնահատականները մեծ նշանակություն ունեցան հայ պատմագրության զարգացման համար, հայտնի չափով ազդեցություն գործեցին հայ հասարակագիտության բոլոր մարզերի վրա։ Նա կարողացավ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցած անցյալի երեվույթները քննության ենթարկել՝ սերտորեն առնչելով ապրող սերունդներին հուզող ժամանակակից հիմնահարցերի հետ։

Թե՛ կենսագրական բնույթի և թե՛ պատմագիտական իր աշխատություններում Լեոն աշխատում էր վեր հանել հայ ազատագրական պայքարի վերջին դարերի մանրամասները։ Մինչխորհրդային շրջանի իր աշխատություններում («Մտեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Հայկական տպագրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» և այլն) Լեոն շատ բարձր էր գնահատում հայերի ռուսական կողմնորոշումը և Արևելյան

[44] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր ութերորդ, Երևան, 1986, էջ 6։

Հայաստանի միացումը Ռուսաստանին։ «Ռուսաց գենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն, — գրել է Լեոն, — այլ կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության միջև։ Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր և կուլտուրական առաջադիմությունից»[45]։ Դժվար չէ գտնել ծայրն այն կարմիր թելի, որ անցնում էր հայ լիբերալ-բուրժուական պատմագրության և հրապարակագրության բոլոր հյուսվածքների միջով՝ խաղաղ տնտեսական կյանք և կուլտուրական ոգորումն։

Հայ լիբերալների այս մտայնությունը մխրճվում էր այն իրադրության մեջ, որ ստեղծվել էր արևելահայ կյանքում ռուսական տիրապետության շնորհիվ։ Հայ բնակչության աճն Անդրկովկասում բարձրացրել էր հայերի տեսակարար կշիռը։ Հաստատված խաղաղությունը, կյանքի ու գույքի համար ստեղծված անվտանգությունը, ռազմական և վարչական նպատակներին ծառայող պետական շինարարությունները ու մատակարարումները բարձրացրել էին արևելահայ-կովկասահայ բուրժուազիայի եռանդուն գործունեությունը։ Հայ լիբերալներին ուրախացնում էր, թե ինչպես ազգայնորեն համակենտրոնացվող արևելահայությունը զարգացնում էր իր ազգային-մշակութային կյանքը, հասունանում բուրժուական զարգացման համապատասխան ազգային քաղաքական կյանքի և գիտակցության համար։ Ռուսաստանը, գրում էր Լեոն, վերջ տվեց Անդրկովկասում իշխած պարսկա-թուրքական անիշխանությանը, տեղական ժողովուրդներին ընձեռեց անձի, գույքի, տնտեսական և մշակութային զարգացման հնարավորություն, նորանվաճ երկրամասի հայկական շրջանները Ռուսաստանի հետ միացան կանոնավոր և անխափան ճանապարհներով։ Նոսր բնակչություն ունեցող, տնտեսապես հետամնաց, ավատատիրական նահապետական կենցաղի մեջ սուզված հայկական շրջանները ներգրավվեցին ապրանքաշրջանառության և հետզհետե զարգացող բուրժուական հարաբերությունների ոլորտի մեջ։ Ռուսական տիրապետությունը նախադրյալներ ստեղծեց արևելահայերի ազգային համախմբման համար։ Լեոյի համար հայ ժողովրդի վերջին դարերի պատմության ուսումնասիրությունը չուներ մի այլ վեհ կոչում, քան ժողովրդի ազգային ինքնագիտակցության կողմնորոշիչի դերը։ Ստ. Նազարյանի և Գր. Արծրունու նման Լեոն այն կարծիքն ուներ, որ ռուսական կուլտուրան բարերար ներգործություն է ունեցել հայերի ազգային կուլտուրական զարգացման վրա։ Այս առումով ուշագրավ է

[45] Լեո, Ստեփանոս Նազարյանց, հատոր առաջին, Թիֆլիս, 1902, էջ 3։

Գր. Արծրունուն նվիրած նրա տողերը. «Կովկասը, — գրում է Լեոն, — նրա (Գր. Արծրունու — Ն. Ս.) առչև նեռկայանում էր մի այսպիսի երևույթ։ Ռուսաց տիրապետությունը հաստատել է քաղաքական խաղաղություն, երկիրը այլևս պատերազմի դաշտ չէ և նրա մեջ ապրող ազգերը միայն մի նպատակ, մի ձգտում պիտի ունենան՝ գնալ առաջադիմող մարդկության հետևից, յուրացնել եվրոպական լուսավորությունը, ապրել քաղաքակիրթ ազգերի կյանքով»[46]։

Այն, ինչ Լեոն վերագրում էր Գր. Արծրունուն, վերաբերում էր և իրեն։ Վրաստանի՝ Ռուսաստանին միացման 100-ամյակի առթիվ գրած հոդվածում նա առավել երևան բերեց իր լիբերալիզմը։ Ըստ Լեոյի, Ռուսաստանը ոչ թե օգուտի կամ շահի համար մտավ Վրաստան, այլ հանուն վրաց ժողովրդի «արդար» պաշտպանության, քանզի ինքը՝ Ալեքսանդր Առաջինը «անարգար» բան էր «համարում ուրիշ երկիր յուրացնելը»[47]։ Նա մեծ գոհունակությամբ էր խոսում Ալեքսանդր Առաջին կայսրի 1801 թ. սեպտեմբերի 12-ի հրովարտակի մասին։ «Կովկասը շատ տիրապետողներ էր տեսել, — գրում էր հեղինակը Վրաստանի միացման 100-ամյակի առթիվ, — բայց նրանցից ոչ ոք այսպիսի խոսքեր չէր արտասանել։ Տասնյակ դարերի ընթացքում այստեղ հաստատված էր արյունի, հափշտակությունների իրականությունը։ Տասնյակ դարերի ընթացքում այստեղ Ասիան էր բռնացած։ Ռուսաց կայսրի այս խոսքերը բոլորովին նոր էին, դեռ չլսված այս դժբախտ ու արյունաքամ կողմերում... Եվ նրանք միանգամայն կերպարանափոխեցին ասիական խեղճ ու խավար միջավայրի հազարամյա ճակատագիրը... Եվ ազգաբնակչությանը մնում էր թոթափել հնության շղթաները, գնալ առաջադիմող ազգերի և հանրամարդկային իդեալների հետևից և այսպես գտնել իր երջանկությունը»[48]։ Հարկավ շատ ավելի լավ կլիներ, եթե իրականանային հայոց ազգային քաղաքական ակնկալությունները, բայց ստեղծված նոր կացության պայմաններում՝ «ազատվել պարսկական բարբարոս ռեժիմից առանց նույնիսկ պայմանների, — գրում էր նա, — այդ էլ հավասար չափով փափագելի էր հայերի համար»[49], քանզի Ռուսաստանը «հրավիրում էր իր նոր հպատակներին խաղաղ և հանգիստ պրպվել կրթության, առաջադիմության և բարոյական վերածնության նպաստող գործերով»[50]։

[46] Լեո, Գրիգոր Արծրունի, հատոր երկրորդ, Թիֆլիս, 1903, էջ 248—249։
[47] Տե՛ս «Մուրճ», 1901, № 2։
[48] Լեո, Ստեփանոս Նազարյանց, հտ. առաջին, Թիֆլիս, 1902, էջ 2—3։
[49] Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 88։
[50] «Մշակ», 1900, № 92։

Լեոն այնքան էր գունազարդում ռուսական տիրապետությունը և նրա առաջ բերած հետևանքները, որ Անդրկովկասը միացնելուց հետո այնտեղ ռուսական պետական օրենքներ մտցնելու և վարչություն կազմակերպելու ուղղությամբ ցարիզմի ձեռնարկած, հարկավ, առաջադիմական միջոցառումների կողքին, նույնքան կարևորություն էր տալիս Նիկոլայ Առաջինի շնորհած՝ 1836 թ. մարտի 11-ի «Հայ լուսավորչական հավատի հոգևոր գործերի կանոնադրությանը» («Պոլոժենիե»)։ Անդրկովկասում ցարիզմի բոլոր ձեռնարկները դրվատող Լեոն իր և ոչ մի աշխատության մեջ այնպես էլ չբացատրեց, թե ինչպե՞ս և ի՞նչ հարցում «Պոլոժենիեն» շրջեց մեր պատմության անիվը»[51]։ Դա, ըստ էության, մի փաստաթուղթ էր, որով ցարիզմը կամենում էր սահմանափակել պետականությունից զուրկ հայ ժողովրդի քաղաքական կյանքի հարցերի տնօրենն՝ եկեղեցու իրավունքները։

Եթե Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը պահանջում էր իր հետ ունենալ հայերի համակրանքը, ապա ներքին քաղաքականությունը խուսափում էր երկրի սահմաններում, թեկուզ և կրոնական, ուժեղ միավորումներ ստեղծելուց։ Այդ քաղաքականությունը հետամուտ էր մի նպատակի՝ մեծապետական սեղմումներով խեղել դպրոցական մշակութային ինքնավարությունները կամ «խաղաղ» պայմաններ հարդարել հրելու նրանց դեպի ռուսացում։

Հայ ժողովրդի կրոնական և մշակութային կրթական հաստատությունների նկատմամբ ցարիզմի հալածական քաղաքականությունը ավելի ցցուն դարձավ 1880-ական թվականներից սկսած և մակընթացություններով ու տեղատվություններով շարունակվեց գրեթե մինչև նրա տապալումը։ Ասում ենք «գրեթե», որովհետև ռուսական առաջին բուրժուական հեղափոխության հարվածների տակ այն փոքր-ինչ փոխեց իր թափը, ձևն ու ուղղությունը։

Մինչհոկտեմբերյան շրջանի իր աշխատություններում Լեոն չանդրադարձավ պատմության առջև ոչ մի արդարացում չունեցող ցարիզմի այդ քաղաքականությանը, մանավանդ որ լիբերալ պատմաբանը իր ուսուցիչներ Ստ. Նազարյանի և Գր. Արծրունու հետևությամբ, բազում առիթներով գրել էր, որ ռուսաց կայսրության սահմաններում դժվար թե գտնվեր մի ժողովուրդ, որն ավելի հավատարիմ լիներ դեպի ցարի գահը, որքան հայ ժողովուրդը։

Լեոն ուսումնասիրել է արևմտահայության ծանր կացության պատճառները, եվրոպական դիվանագիտության մտամարզանքների առարկա

[51] Տե՛ս Լեո, Ստեփանոս Նազարյանց, հտ. առաջին, Թիֆլիս, 1902, էջ 2—3։

Հայկական հարցը, կռահել Թուրքիան մեծ տերությունների կիսագաղութ դարձնելու մրցապայքարի արդյունքներով նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդներին սպասվելիք էլ ավելի ահավոր աղետները։ Ըստ Լեոյի, եթե ռուս-թուրքական պատերազմի վերջնագիծ Սան-Ստեֆանոն չլուծեց Հայկական հարցը, ապա Բեռլինի վեհաժողովը դիվանագիտական խարդավանքների ավազանում տարալուծեց այն։ Արևելյան ճգնաժամին և Հայկական հարցին նվիրված իր ուսումնասիրություններում Լեոն լուսաբանել է միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին ու արտաքին կացության հանգուցային հիմնահարցերը, այն հիմնական դեպքերի ընթացքն ու դեմքերի գործողությունները, որոնք առավել են առնչվել արևմտահայերի քաղաքական ճակատագրին, նրա շուրջը ծավալված դիվանագիտական գործողություններին։ Մեծ հետաքրքրությամբ են կարդացվում ներքին դրամատիզմով հագեցված նրա «Գլադստոն» (1899), «Հայոց հարցի վավերագրերը» (1915) աշխատությունները, բազմաթիվ հրապարակախոսական հոդվածները, որոնցում երևում է եվրոպական դիվանագիտության ամբողջական միտումը՝ բոլոր միջոցներով կանխել 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակների հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական, ռազմական և դիվանագիտական վերընթացը։ Մեծ տերություններն ամեն կերպ խոչընդոտեցին Ռուսաստանի գործուն մասնակցությամբ արևմտահայության քաղաքական կացության բարելավմանը։

Վավերագրերի և տրամաբանության լեզվով Լեոն այսօր էլ ընթերցողի առջև բացում է աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոտեմարտի բռնված տերությունների դիվանագիտական խարդավանքները Հայկական հարցում։ Ժամանակի քննությանն են դիմացել Լեոյի այն մտքերը, թե մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց է Օսմանյան կայսրության գլխին մտրակը ճոճելու, նրա ներքին գործերին միջամտելու համար։ Խոսուն փաստերով և կուռ տրամաբանությամբ Լեոն բարձրացնում էր վարագույրն այն խարդավանքների, որոնցով նույն այդ տերությունները 1894—1895 և 1915 թվականներին արևմտահայությանը ոչ միայն չպաշտպանեցին թուրքական բարբարոսներից, այլև իրենք անմիջական մասնակիցը դարձան 20-րդ դարի առաջին ցեղասպանության։

Հարկավ, Լեոն ևս ունեցել է եվրոպական դիվանագիտության հայանպաստ խոստումները դյուրահավատորեն ընկալելու՝ հայ հասարակական մտքի շատ ներկայացուցիչներին ուղեկցած թուլությունը։ Այսպես, օրինակ, նա ներբողներ է շռայլել անգլիական իմպերիալիզմի «հոչակ ստացած» լիբերալ գործիչ Գլադստոնին։

«Տասնիններորդ դարում, — գրել է Լեոն, — համաշխարհային հռչակ ստացան շատ պետական գործիչներ, բայց դրանց մեջ միայն Գլադստոնն է, որն իր գործունեությամբ և դավանած սկզբունքներով վաստակեց մարդկության բարեկամի մեծ անունը։ Նա ցույց տվեց ամբողջ աշխարհին, որ կարելի է լինել իր երկրի մարդ, իր կառավարության պաշտոնյա, նվիրվել իր երկրի բարօրության, և միևնույն ժամանակ մնալ մարդասեր, տանջվածների պաշտպան, ազգերի եղբայրության հզոր ախոյան։ Գլադստոնը հասավ փառքի գագաթնակետին, բայց միշտ մնաց ժողովրդական մարդ. քրիստոնեական գաղափարը ժամանակակից քաղաքական գործիչների շրջանում նրա պես անձնվեր գինվոր չի տվել»[52]։

Թե ի՞նչ արեց «տանջվածների պաշտպան» ու «ազգերի եղբայրության հզոր ախոյանը» սուլթանական Թուրքիայի ճիրաններում գալարվող արևմտահայ բազմաչարչար ժողովրդին, Լեոն լռում է։ Լռում է, որովհետև փաստեր չունի։ Ցավոք, Լեոն և 1890-ական թվականների նրա ժամանակակիցը սերունդը գիտեին միայն, որ Գլադստոնը եղել է Մեծ Բրիտանիայում հայանպաստ հանրային կարծիքի ստեղծման և անգլո-հայկական բնկերության (1882 թ.) կազմակերպման նախաձեռնողներից, և նրան է պատկանում «Ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը» թևավոր արտահայտությունը, բայց անգիտանում էին, որ անգլիական լիբերալիզմի պարագլուխը և 1868—1874, 1880—1885, 1886, 1892—1894 թվականներին Անգլիայի պրեմիեր մինիստրը միայն ու միայն պաշտոնաթողության ժամանակ, ընդդիմության մեջ գտնվելիս է հանդես եկել այսպես կոչված «հայանպաստ» հայտարարություններով։ Նա Հայկական հարցն օգտագործել է որպես պահպանողականների դեմ քաղաքական պայքարի միջոց, իսկ իշխանության գլուխ անցնելով շարունակել է նույն պահպանողականների ծավալապաշտական, գաղութային քաղաքականությունը։ Հատկանշական է, որ Հայկական հարցում Բիքոնսֆիլդի և Ռ. Սոլսբերիի պահպանողական կառավարությունների քաղաքականության քննադատությամբ հանդես եկող Հ. Գլադստոնը, 1892—1894 թվականներին կրկին պրեմիեր մինիստր դառնալով, ոչ մի լուրջ քայլ չի արել սուլթանական կառավարության վրա ներազդելու ուղղությամբ։ Անցողակի նշենք, որ Գլադստոնին կուռքացրել է նաև հայ լիբերալ պատմաբան Կ. Թումանյանը։ Վերջինս քիչ էր մնում Գլադստոնին հայ ժողովրդի փրկիչ դարձներ։ Նա

[52] Լեո, Գլադստոն, Թիֆլիս, 1899, էջ 5—6։

«այնքան համակիր էր հայոց, որ իր կենաց վերջին տեսնարանությունը Հայոց համար բրավ»[53]։

Բայց Լեոն, ի պատիվ իրեն, իր վաղ շրջանի կարծիքին ընդմիշտ դերի չմնաց։ Հետագայում նա գրեց, որ Գլադստոնը հույների «լեշերի վրայով էր քայլում դեպի Նեղոսի ափերը»[54], որ նրա քաղաքականությունը «բացարձակ թշնամական ու աղետաբեր էր հայ ժողովրդին»[55] և սխալ է Ա. Ամֆիտեատրովը, որը չկարողանալով թափանցել անգլիական դիվանագիտության մութ ծալքերը, գրել է, թե անգլիական քաղաքականությունը Հայկական հարցում կարելի է համարել «անշահախնդիր... անգլիական համակրանքը հայերի նկատմամբ չուներ հետին նպատակներ»[56]։ Ասել, թե այս տողերում պատմությունը կեղծված է, քիչ է։ Գաղտնիք չէ, որ 1895—1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ լռեցին անգլիական լիբերալների հայանպաստ ելույթները։ Գլադստոնը նույնիսկ հրաժարվեց Անգլո-հայկական ասոցիացիայի խնդրանքը կատարել՝ ելույթ ունենալ միտինգում և դատապարտել կոտորածները։ Գլադստոնը պահպանողականների կառավարությունից այլևս չի պահանջում ճնշում գործադրել սուլթանի վրա՝ հայերի վիճակը բարելավելու համար։

Լեոն «Հայոց հարցի վավերագրերում» Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի իր մեկնաբանությունում ցույց է տալիս, թե ինչպես «բարվոքումների և բարենորոգումների» անորոշ խոստումը հայ գործիչներն առաջին իսկ պահից ընդունեցին այն մտքով, թե Արևմտյան Հայաստանը այդ հոդվածով ստանում է նահանգական ինքնավարություն։ Տակավին Սան-Ստեֆանոյի դաշնագրության ամբողջությունը պաշտոնապես չհրապարակված, գրում է Լեոն, դեռ գերմանական լրագրերից մեկը միայն կարողացել էր դաշնագրի բովանդակությունը պատմել, այն էլ ոչ շատ մեծ հարազատությամբ, և ահա «Հայոց հարցի նշանավոր գործիչներից մեկը, Գրիգոր Արծրունին.... «Մշակի» առաջնորդողի մեջ ասում էր, թե հայերին խոստացվածը նահանգական ինքնավարություն է...»[57]։ Պահի տրամադրությամբ ձևավորված ինքնավարության միևնույն գաղափարն էր առաջնորդում նաև պոլսահայ գործիչներին։ Այդ է ցույց տալիս 1878 թ. մարտին պատրիարք Ն. Վարժապետյանի նախաձեռնությամբ արքեպիսկոպոս Մ. Խրիմյանի գլխավո-

[53] Կ. Թումայան, Պատմութիւն Արեւելեան Խնդրի և առաջնորդ Հայկական Հարցի, Լոնդոն, 1900, հ. Բ, էջ 596։

[54] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 125։

[55] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 39։

[56] Տե՛ս А. Амфитеатров, Армянский вопрос, СПб, 1906, стр. 14.

[57] Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 59—60։

րությամբ կազմված պատվիրակությունը, որը պատրիարքարանի մշակած «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանին» պետք է հանձներ մեծ տերությունների մասնակցությամբ Բեռլինում գումարվելիք կոնգրեսին: Թե Կ. Պոլսի պատրիարքարանի դիվանագիտական խոհանոցում ծնված այս փաստաթուղթը որքանով էր նպատակավրեպ, անիրական և հեռանկարում՝ ողբերգական, Լեոն ցույց էր տալիս այն դաժան իրողությամբ, որ արդեն մեծ տերությունների 1880 թվականի դիվանագիտական գրագրություններից հետո Հայկական հարցը դադարում է նույն այդ տերությունների գործնական ձեռնարկումների առարկա դառնալուց և «այս գրությունը շարունակվում է ամբողջ 15 տարի», մինչև հայկական հերթական ողբերգության՝ 1895 թվականը: Այս ժամանակաշրջանում Հայկական հարցը Թուրքիայի սահմաններում ստանում է քաղաքական ահավոր պայքարի տեսք: Թուրքական կառավարությունը, ըստ իր վաղեմի սովորության, չի բավականանում իր միջազգային պարտավորություններն ուրանալով, այլև դիմում է բռնության միջոցների՝ հայկական շարժումը և Հայկական հարցի մասին մտածողությունն արմատախիլ անելու համար: Արևմտահայությունը, հարկադրաբար և անհրաժեշտաբար, կառավարության այս ահաբեկիչ քաղաքականության հանդեպ, առաջ է բերում դիմադրական շարժման գործելակերպը[58]:

Միշտ չէ, սակայն, որ Լեոն հավատարիմ մնաց տակավին 1880-ական թվականներին իր իսկ կողմից առաջ քաշած այն նշանաբանին, թե պատմաբանը պետք է ճանաչի ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը[59]:

Խորհրդային ժամանակաշրջանում գրած իր մի շարք աշխատություններում պատմաբանը հավատարիմ չմնաց իր վերոհիշյալ նշանաբանին: Այլևայլ հարցերի թվում նա չկարողացավ օբյեկտիվորեն արտացոլել հայ ազատագրական պայքարի առանձին կողմերն ու առանձնահատկությունները: 1920-ական թվականներին խորհրդային պատմագրության ավագ սերնդի երևելի ներկայացուցիչ Մ. Պոկրովսկու դպրոցի որոշակի ազդեցության ներքո՝ Լեոյի մտածողության սահմանները, հատկապես հայ-ռուսական հարաբերությունների և հայ ազգային-ազատագրական շարժումների հետևանքների արժեքավորման հարցերում,

[58] Տե՛ս նույն տեղում, էջ 60—63:
[59] Տե՛ս «Փորձ», 1883, № 19, էջ 118:

երևույթների և իրողությունների գնահատման պատմականությունից հեռացան և ավելի մերձեցան սուբյեկտիվ պատմահայեցողությանը[60]:

Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի մասին Երևանի պետհամալսարանում կարդացած դասախոսություններում, «Անցյալից» (1925), «Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ» (1934), «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» (1934—1935) և այլ աշխատություններում Լեոն բացասական վերաբերմունք էր հանդես բերում դեպի հայերի ռուսական կողմնորոշումը, հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը և շարժման գործիչները: Արդարացում չունեցող ոչ մի պատճառաբանությամբ շրջանցելով 19-րդ դարի երկրորդ կեսին ծավալված արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման, սոցիալ-տնտեսական և քաղաքական հենքը, նա թուրքական բռնապետության դեմ արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարը որակեց «ողբերգություն», իսկ պայքարի գաղափարախոսներին՝ արկածախնդիրներ[61]:

Դոնելով, որ ցարական վարչակարգի պայմաններում «անկարելի էր պատշաճավոր խորությամբ ու խստությամբ քննադատորեն վերաբերվել դեպքերին ու գործիչներին», և որ միայն խորհրդային կարգերի ժամանակ է հնարավոր «անաչառ գիտական քննադատական վերլուծումների» ենթարկել պատմությունը և այդ ճանապարհով հասնել «իսկապես արդարև և ճշմարիտ խոսքի», Լեոն քննադատության տակ առավ ամենից առաջ Կ. Եղյանին, որն ըստ նրա խնամքով թաքցրել և ոսկեզօծել է «ցարական և հայ կղերական քաղաքականության մեղքերը»[62]:

Հարկավ, Լեոն արդարացի էր մերժում ցարիզմին «ազատագրական միսիա» վերագրող ռուս պաշտոնական պատմագրության (Պոտտո, Դուբրովին, Վինոգրադով և ուրիշներ) և վերջինիս կցան եղած Կ. Եղյանի բնաթացքը, մի բնաթացք, որը գերագնահատում էր քրիստոնյաներին մահմեդական լծից ազատագրելու ցարական խոստումների արժեքը, սքողում ցարական առաջխաղացման բուն նպատակը: Լեոն մեղադրում էր ցարիզմի ջատագովին այն բանի համար, որ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ մտավորականության հիմնահայացքների ստուգատեսի և քննադատական գրոհի պայմաններում նա չզգաց այն կսկիծն ու արցունքները, որ անցյալ դարի 20-ական թվականների վերջում ուղեկցում էին հայ

[60] Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982, էջ 262—264:
[61] Տե՛ս Նույն, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հատոր Ա, Փարիզ, 1934, էջ 21:
[62] Նույն, Հայոց պատմություն, նորագույն շրջան, Երևան, 1926, էջ 130:

պանգվածների խինդ ու ծիծաղին: Ճիշտ դիմակայելով Կ. Եզյանին, Լեոն սխալվում էր սակայն, երբ բացարձակ քար էր նետում Ռուսաստանին՝ չզատորոշելով Անդրկովկասը նվաճող ճորտատերերի և վաճառականության շահերի պաշտպան ցարիզմը՝ քրիստոնյա ստրկացված ժողովուրդներին արևելյան բռնատիրությունից ազատագրող Ռուսաստանի առաջադիմական դերից:

Հայ ազատագրական շարժման երախտավորներից մեկի՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մասին Կ. Եզյանի այն տողերը, թե «Նա հաստատեց յուր ամբողջ հոտի գիտակցության մեջ այն գաղափարը, թե հայ ազգի ուղիղ հասկացած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և նրա բարձր կոչմանն Արևելքում...»[63], Լեոն համարեց «ստրկային հպատակություն»[64]: Նա սխալմամբ կարծում էր, թե հայ ազատագրական շարժման անցանկալի հետևանքները պետք է որոնել այն բանում, որ ռուսական «խարդախ» քաղաքականությանը ընդառաջում էր հայ կղերական «ստրկամիտ» դիվանագիտությունը: «Դեռ հյուսիսի գործը չվերջացրած, — գրում էր Լեոն, — ռուսական իմպերիալիզմը երեսը դարձնում է դեպի հարավ, որպեսզի դեմ առ դեմ հանդիպի դեպի իրեն եկող հայ կղերական դիվանագիտության: Այս հանդիպումը մի պատահականություն չէր, անցողական մի երևույթ: Այս հաստատ հիմնավորված սկզբնավորություն էր դարավոր մի անփոփոխության, որ պիտի կլաներ հայ ժողովրդի կյանքն ամբողջովին, մինչև որ վերջանար 1915—1920-ի կատաստրոֆայով»[65]:

Եթե մինչխորհրդային շրջանի աշխատություններում նա բարձր էր գնահատում հայ ժողովրդի պատմական ճակատագրում Ռուսաստանի խաղացած առաջադիմական դերը, իսկ հաճախ Կ. Եզյանից էլ առավել իդեալականացնում ռուսական տիրապետությունը («Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլևս ոչ մի հոգս չէին կրող ունենալ, բացի մտավոր և կուլտուրական առաջադիմությունից: Ընդմիշտ վերջանում էին քաղաքական հարցերը»[66]), ապա խորհրդային ժամանակաշրջանի գործերում ռուս-պարսկական պատերազմներին հայերի մասնակցությունը համարեց «ավելորդ նահատակություն», Ներսես Աշտարակեցուն՝ «լրտեսապետ», «ռուսական քաղաքականության կույր գործիք»[67], Պուշկինին՝ ցարական նվաճողականության գաղափարախոս[68]:

Կյանքի վերջին շրջանում հայերի ռուսական կողմնորոշման և Հայկական հարցի վերաբերյալ Լեոյի հայտնած բացասական բոլոր արտահայտությունների էությունը կարելի է բանաձևել այսպես՝ ցարիզմը չհատարեց հայերին տված բազում իր խոստումները: Մերկացումների առարկան և հարվածների ենթական Լեոյի մոտ ամենից առաջ և բոլորից շատ ցարիզմն էր՝ վերջինիս երկդիմի քաղաքականությունը, սակայն Լեոն ավելի շատ մեղադրում է, քան բացատրում ու բացահայտում էր իր մեղադրանքների հիմքերն ու պատճառները: Նա հաճախ պատմական երևույթներն ու իրողությունները քննում էր ոչ թե այն կապակցությունների մեջ, որում դրանք տեղի էին ունեցել, այլ դրանց վրա մեխանիկորեն փոխադրում էր իրօրյա կառավարող մտածողության գնահատականներն ու կատեգորիաները: Նա անցյալի վերաբերյալ հաճախ գործածում էր այնպիսի դարձվածքներ ու տերմիններ, որոնք բնորոշ են պատմությունը մատերիալիզմի դիրքերից գտնհկացնող մոդեռնիստներին: Այսպես, օրինակ՝ «Հին Հռոմի բուրժուազիա», «Կարինի բուրժուազիա», «Հռոմեական գիշատիչ իմպերիալիզմ», «Պյոտրի ժամանակ սկսվում է ռուսական իմպերիալիզմի վերելքը», «Տիգրանի ժամանակ Հայաստանը գտնվում էր ծաղկուն իմպերիալիզմի շրջանում»[69] և այլն, և այլն: Գիտական հին «դոգմանների» վերանայմամբ հրապուրված՝ Լեոն այնքան խտացրեց առևտրական կապիտալի գույները Հայաստանում, որ փորձեց հայ հասարակական-քաղաքական կյանքում կատարված բոլոր երևույթները բացատրել առևտրական կապիտալի գրաված տեղով ու դերով: Նա առևտրական կապիտալի դերը համարում էր «այնքան մեծ, այնքան անգերակշռելի մի հասարակական ուժ, որ նրան է միայն վերապահվում իրենով լցնել հայոց պատմության ամբողջ նոր շրջանը»[70], որ դեռ «այդ ուժն էլ դառնում է այն առանցքը, որի շուրջը պտտվում է հայոց ամբողջ պատմությունը 16, 17, 18-րդ և 19-րդ դարերի ընթացքում»[71]:

«Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» և «Անցյալից» աշխատություններում Լեոն փորձել է հարուստ նյութերի հենքի

[63] «Լումայ», 1904, № 6, էջ 42:
[64] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, պրակ առաջին, Երևան, 1926, 162:
[65] Լեո, Ռուջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 218:
[66] Լեո, Մուհամմադ Նազարյանց, հտ. առաջին, Թիֆլիս, 1902, էջ 3:
[67] Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, պրակ առաջին, Երևան, 1926, էջ 200:
[68] Նույն տեղում, էջ 26:
[69] Նույն տեղում, էջ 17, 94, 323:
[70] Նույն տեղում, էջ 6:
[71] Նույն տեղում, էջ 56:

վրա բացահայտել Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուսական և գերմանական շահերը Մերձավոր Արևելքում, նրանց վարած քաղաքականությունը Հայկական հարցում: Անդրադառնալով պատերազմից առաջ Հայկական հարցի արծարծումներին, Լեոն շատ թունոտ խոսքերով է բնութագրում դաշնակցությանը և Ամենայն հայոց կաթողիկոսին, նրանց բռնած դիրքը կամավորական շարժման կազմակերպման և քաջալերման նկատմամբ: Լեոն առանց հիմքերի փորձում է հերքել Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի, ռուսական դեսպանության առաջին քարտուղար Մանդելշտամի, գերմանացի լրագրող Հարի Շտյուրմերի և հայ հեղինակների գրքերում տեղ գտած այն կարծիքը, պնդումը, թե հայկական ապստամբությունները թուրքական զորքերի թիկունքում չեն եղել, թե այդ առասպելը թուրքերն են հնարել հայկական կոտորածներն արդարացնելու համար: Վերոհիշյալ հեղինակները չժխտելով այն, որ հայերը զենք են վերցրել թուրքական իշխանությունների դեմ, այդ արարքը որակում են ոչ թե ապստամբություն, այլ զինված ինքնապաշտպանական դիմադրություն: Լեոն հանդգնամտորեն կանգ է առնում Վանի «ապստամբության» վրա և առարկում Ա. — Դոյի «ինքնապաշտպանության» արտահայտության դեմ և խիղճը կորցրածի նման ժխտում ինչպես Վանի, Մուշի, Բաղեշի, այնպես էլ Շապին-Գարահիսարի, Զեյթունի ինքնապաշտպանական կռիվները: Խիստ քննադատության ենթարկելով Հայկական հարցում Ռուսաստանի այդ ժամանակաշրջանի քաղաքականությունը, նա հատկապես կանգ է առնում Կովկասյան ճակատի հրամանատար Յուդենիչի՝ փոխարքա Վորոնցով-Դաշկովին հղած զեկուցագրի վրա, ուր առաջարկվում է պատերազմից հետո Ալաշկերտի, Դիադինի և Խայազետի հովիտներում բնակեցնել Դոնից և Կուբանից բերված կազակներին՝ ստեղծելու սահմանամերձ կազակություն: Լեոն շատ լավ գիտեր, որ իրագործությունից բխող նման առաջարկություններ եղել են նաև 1820-ական թվականների պատերազմներից հետո, բայց դրանք որևէ բացասական արդյունքների չեն հասցրել: Նման փաստերը չափազանցնելու իր նոր մեթոդով Լեոն քննադատության է ենթարկում նաև արևմտահայ ազգային-ազատագրական ողջ շարժումը՝ նրա կազմակերպիչներին համարելով արկածախնդիրներ և մարդասպաններ:

Գտնելով, որ արևմտահայ իրականության մեջ ազատագրական շարժումների համար իրական հող չի եղել, Լեոն իր վերջին աշխատություններում ընդհանրապես պատմականությունից բեկված մոտեցում էր դրսևորում Օսմանյան կայսրությունում հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, գտնում էր, որ արևմտահայերը չպետք է «ապստամբություն» բարձրացնեին, չէ՞ որ ասիական Թուրքիայում հա-

յերը կազմում էին բնակչության ամբողջ կազմի 38 տոկոսը, չէ՞ որ «38-ը երբ գնա 62-ի դեմ, միշտ կջարդվի»[72]:

19-րդ դարի երկրորդ կեսի հայկական շարժումը, ըստ Լեոյի, արհեստականորեն ստեղծել էր ռուսահայ մտավորականությունը նարոդնիկական իր գաղափարաբանությամբ՝ «ռուսական նարոդնիկական հեղափոխությունն էր, որ հայ ինտելիգենցիայի միջոցով սկիզբ դրեց թուրքահայ հեղափոխության»[73]: Մերժելով Հայկական հարցի լուծումը Ռուսաստանի հետ կապելու իր իսկ դավանած ճիշտ գաղափարը, ցավոք, մեծ պատմաբանը մայրամուտից առաջ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը՝ ռուսական զենքի և դիվանագիտության հաղթանակի արգասիքը, համարեց արևմտահայերի համար «չարիք ու ոճիր»: Ինչո՞ւ հարցին պատմաբանը պատասխանում էր՝ որովհետև «հայ ժողովուրդը... ...16-րդ հոդվածով ձեռք չէր բերում իր համար ոչինչ դրական, անվիճելի միջազգային իրավունք... այն մի ոճիր էր, որ բնաջնջող սրի տակ էր դնում ամբողջ հայ ժողովրդի կոկորդը... Ուրիշ անուն, բացի մեծագույն չարիքից ու ոճիրից, չի կարելի տալ հայերի ստացած 16-րդ հոդվածին»[74]:

Հարկավ, Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չէր ընձեռում արևմտահայերին բաղձալի առավելագույն ազատություն, բայց, այնուամենայնիվ, այդ հոդվածի կենսագործումով արևմտահայությունը ձեռք էր բերելու ներքին բարենորոգումներ, թուրքական լուծը պիտի թոթափեր և Ռուսաստանին միանար հայ հայրենիքի կենսական տարածքներ Կարսը, Արդահանն ու Բայազետը:

Անհրաժեշտ կարճացել էր Լեո պատմաբանի հիշողության երկարությունը: Նա մոռացել էր, որ Աբդուլ Համիդը ձգտում էր նույնիսկ աշխարհագրական քարտեզից ջնջել Հայաստան անունը և այն վոչնչացնել Քրդստան, որ Թուրքիայի մեծ վեզիր Քյամիլ փաշան հրապարակորեն հայտարարում և գրում էր՝ «պետք է ջարդել բոլոր այն ծնոտները, որոնք կարտասանեն Հայաստան բառը», որ այս ամենի հենքի վրա 16-րդ հոդվածը հայ ժողովրդի համար մեծ նվաճում էր:

Լեոն հեղհեղուկ, հակասական կարծիքներ է հայտնել նաև Հայկական հարցի ծագման պատմական տեղի վերաբերյալ: «Հայոց հարցի վավերագրերը» աշխատության մեջ նա գրում էր, որ «Հայոց հարցն ունի

[72] Տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. առաջին, Փարիզ, 1934, էջ 37:

[73] Նույն տեղում, էջ 27:

[74] Նույն տեղում, էջ 78:

25 դարի պատմություն», որ «Հայոց հարցը այնքան հին է, որքան հին է հայ ազգը»[75], մի այլ տեղ պնդում էր, թե «Հայոց հարցը առաջացել է 1862 թվականին, Զեյթունի ապստամբության ժամանակ»[76], իսկ «Անցյալից» հուշագրությունում՝ «Հայոց հարցը ծնվել է կես դար առաջ, այսինքն՝ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ»[77]։

Լեոյի հայտնած շատ տեսակետներ այնքան անլուրջ են, որ երբեմն տրամադրվում և հաստատ որոշում ես անպատասխան թողնել, բայց երբեմն էլ չես կարողանում անտարբերությամբ անցնել թույլ տված սխալի մասշտաբայնության կողքով։ Այսպես, տարվելով կամ հրապուրվելով ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականության այսպես կոչված «խիստ» քննադատությամբ, Լեոն գտնում էր, որ հայերը պետք է ընդունեին թուրք-գերմանական կողմնորոշում, որովհետև Բալկանյան «պատերազմից թուլացած Թուրքիան չէր կարող և չէր կամենում կռվել հայերի հետ արխիվից հանված 61-րդ հոդվածի պատճառով, և պատրաստակամություն էր հայտնում համաձայնության գալ նրանց հետ, առանց դրսի միջնորդների։

Բացի այս բոլորից, լինել Թուրքիայի հետ, նշանակում է լինել Գերմանիայի հետ, որի քաղաքականությունն էր՝ բարվոքել թուրքահայերի դրությունը»[78]։ Մեղմ ասած՝ սա Լեոյի կողմից պատմական իրականության, իր իսկ հրապարակած «Հայոց հարցի վավերագրերի» խեղաթյուրում էր։ Անշուշտ, մենք հետաքրքրված ենք Լեո պատմաբանի՝ հայրենանվեր գիտնականի սխրանքի համազոր վաստակը գնահատելիս, նրա վերջին սխալները բացարձակացնելու և թողած անանց ժառանգությանը հակադրելու միտումից։

Համոզված պնդում ենք, որ եթե նրա գործունեությունը ընդհատվեր նույնիսկ 1917 կամ 1920 թվականով, ապա, միևնույն է, այսօր պիտի արձանագրեինք, որ մինչհորհրդային շրջանի ոչ մի հայ հեղինակ այնքան ցայտուն ճշգրտությամբ չի բնութագրել մեծ տերությունների եղկելի դերը Հայկական հարցի, հայ ժողովրդի նկատմամբ, որքան Լեոն։ Մինչհորհրդային շրջանի իր ուսումնասիրություններում նա է համակողմանիորեն բացահայտել Արևմուտքի հակահայկական քաղաքակա-

75 Լեո, Հայոց ազգի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 1։

76 Լեո, Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, հ. Ա, էջ 32։

77 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 17։

78 Լեո, Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, հտ. Բ, Փարիզ, 1935, էջ 71։

նությունը և նրա ռազմավարական պատճառները։ Լեոն է Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի վերածվելը համարել համաշխարհային դիվանագիտության ննջող գործարքներից մեկը, որից հետո մեծ տերությունների մրցակցությունը, պատմաբանի արտահայտությամբ, այնպիսի կատաղի և անբարոյական կերպարանք ընդունեց, որ անհնարին դարձրեց նրանց «միջև համաձայնության կայացումը Թուրքիայի վերաբերյալ որևէ հարցում»։ Եթե մեկը սուլթանին վախեցնելու և նրանից շահավետ ձեռնարկներ կորզելու համար հայերին պաշտպան էր հանդիսանում, մյուսը գնում էր սուլթանին պաշտպանելու ընդդեմ այդ «հայասեր» դիմակավորված ախոյանի՝ իր այդ «պաշտպանությունը հնչուն դրամի վերածելու համար»։

Հայկական հարցի գիտական պատմության ստեղծման համար ուշագրավ որոշ էջեր կան Լեոյի նաև վերջին գործերում։ Այսպես, անդրադառնալով անգլիական կեղծ հայասիրությանը և վերանայելով 1890-ական թվականների իր «մոլորությունը», Լեոն գրում է. «1880-ական թվականների Գլադստոնի փորձը պետք է լավ խրատած լիներ հայկական երեխայությանը, պարզ ցույց տալով նրան, որ Անգլիան Անգլիա է և ոչ մի նշանակություն չունի, թե ով է այսօր նրա առաջին մարդը։ Գլադստոն, Սոլսբերի, Բիկոնսֆիլդ,— որոնք անուններ են փոփոխական... Անփոփոխն անգլիական արշինն է և նրա ծառաները, անգամ «մարդասերները», մեծ լինեն նրանք, թե փոքր — միևնույնն է»[79]։

Հայկական հարցի նկատմամբ անգլիական քաղաքականության ողջ դործընթացի վերաբերյալ Լեոն ընդհանրացրել է. «Բայց ոչինչ և ոչ մի բան չէր լուծվում։ Լոնդոնը Լոնդոն էր մնում՝ համաշխարհային գիշատիչ բանկ, իսկ Մուշի դաշտը լկկանքների, լացի ու աղետի դասական հայրենիք»[80]։

Լեոն ցասումնալից արտահայտություններով բնութագրեց նաև մյուս մեծ տերությունների հակահայկական քաղաքականությունը, մի քաղաքականություն, որի արդյունքն այն եղավ, որ «Այժմ Թուրքաց Հայաստան չկա։ Նա դարձել է մի վիթխարի գերեզման, որի վրա հավերժապես արձանագրված է. «Եվրոպայի գոհը»[81]։

Այսպիսով, չնայած Լեոյի աշխարհայացքը քաղաքական կողմնորոշումների դրսևորումների մեջ փոփոխական էր և հակասական, հա-

79 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 38։

80 Նույն տեղում, էջ 40։

81 Նույն տեղում, էջ 477։

ճախ էլ՝ ինքնամերժ, այնուհանդերձ, գիտնականի և քաղաքացու նրա միտքը բացառիկ զգայուն էր իր ժողովրդի ճակատագրի հետ առնչվող քաղաքական ամենատարբեր կացութիւնները գնահատելիս։

Լեոյի բոլոր աշխատութիւնների (անգամ սխալներով հանդերձ) հիմնական լեյտմոտիվը մեկն է՝ պատմութեան էջերում, անցյալի փորձի մեջ որոնել հայ ժողովրդի ազատագրութեան ուղիների բանալին։ Պատահական չէ, որ նա ինչքան էլ ակոսեր էկլեկտիկ մտածողութեան սահմանները և աչք փակեր պատմական իրողութիւնների առջև, խտացներ ցարիզմի «խարդախ» քաղաքականութեան գույները՝ հարկադրված էր խոստովանելու, որ «եսամոլ ու շահամոլ» ռուսական նվաճողականութիւնը այնուամենայնիվ «նման չէր նախընթացներին գեթ նրանով, որ անապատի ամայութիւն չէր բերում երկրներին և կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»։ Այս նշանակում է, որ Լեոն շարունակում էր ունենալ այն խոր գիտակցութիւնը, որ ձգտելով գրավել Մերձավոր Արևելքի որոշ տարածքներ և դրանց ենթարկել իր ցարական խիստ ռեժիմին, բայց նվաճած երկրները ակամա ներգրավում էր Ռուսաստանի հզոր շարժումների մեջ՝ հնարավորութիւն տալիս հաղորդակից դառնալու եվրոպական քաղաքակրթութեանն ու մշակույթին[82]։

Հայ ազգային-ազատագրական պայքարի, Հայկական հարցի լուծման որոնումների և քաղաքական կողմնորոշման խնդիրներում ուշադրութեան արժանի տեսակետներ ուներ գրող և հրապարակախոս, հասարակական և մշակութային ճանաչված գործիչ Արշակ Չոպանյանը (1872—1954)։ Նա 19-րդ դարի 90-ական թվականներին առաջադեմ արևմտահայ հասարակական մտքի այն ներկայացուցիչներից էր, որն իր ողջ գործունեութիւնը ստորադրեց թուրքական բռնատիրութենից հարազատ ժողովրդի ազատութեան նպատակին։ Հայ ժողովրդի պայքարը համարելով արդարացի, «ճիշտ և բնական», Չոպանյանը քննադատական խոսք է հղել բոլոր նրանց դեմ, ովքեր այդ պայքարը փորձել են տանել ոչ նպատակասլաց ճանապարհով։ «Ապշեցուցիչ բան մըն է, — գրել է Չոպանյանը «Պատասխանատուները» ուսումնասիրութեան մեջ, — որ քսան տարիե ի վեր, ոչ մեկ հայ գաղափարն ունեցած չէ մանրամասնաբար քննել Բեռլինի վեհաժողովի միջոցին հայոց ձեռնարկած գործունեութեան պատմութիւնը։ Եվ, սակայն, վիթխարի սխալներ գործած են այդ միջոցին և այդ սխալները երևան հանելը պետք էր

[82] Տե՛ս Լեո, Հայոց պատմութիւն, Նորագույն շրջան, պրակ առաջին, Երևան, 1926, էջ 162։

առաջինն ըլար մեր ջանքերուն»[83]։ Չոպանյանն այն կարծիքն ուներ, որ հայոց նախնիների փառքով համազգային ոգեկոչումը պետք է իրական աղերսներ ունենա գոյատևող ժողովրդի հիմնահարցերի անխոտոր լուծումների հետ, այլապես հերոսական անցյալով զգեստավորվելը ոչինչ չի տա հակառակորդից անպաշտպան ժողովրդին։ Ա. Չոպանյանը ազգային-ազատագրական պայքարի դրոշ պարզած ժողովրդի պատասխանատուներին խորհուրդ էր տալիս, նախ՝ նախապատրաստվել զինված ինքնապաշտպանութեան և երկրորդ՝ պարտադիր ունենալ աշխարհատարածքային հիմնահարցերի լուծմամբ շահագրգռված որևէ մեծ տերութեան հուսալի աջակցութիւնը։ Չոպանյանը 19-րդ դարի 90-ական թվականների արևմտահայ իրականութեան մեջ առաջիններից էր, որ ամուր կանգնեց ռուսական կողմնորոշման դիրքերում։ Նա դրվատում էր պատրիարք Ն. Վարժապետյանին այն բանի համար, որ վերջինս Սան-Ստեֆանոյի ժողովին հղած դիմումով «նոր թվական մը բացավ հայ ժողովրդին, կրոնական գոյութիւն ունեցող ազգը քաղաքական կըռվանի վրա մը դրավ, հայուն շահերուն եվրոպական հզոր պաշտպան մը գտավ, Ռուսը»[84]։ Ըստ Չոպանյանի, պատմաբանը չի կարող ոչ անտեսել ցարիզմի քաղաքականութեան գաղութային միտումները և ոչ էլ թերագնահատել դեպի հարավ Ռուսաստանի առաջխաղացման առաջադիմական իրողութիւնը։ «Ռուսն է, — գրում էր Չոպանյանը, — որ մեծ ու բարի պայքար է սկսել մահմեդական բռնապետութեան դեմ. ռուսի շնորհիվ է, որ փոքր ինչ եվրոպական կյանք է մտել Ասիայի մի ահագին մասի մեջ. Ռուսն է, որ Օսմանյան պետութեյան լծի տակ հեծող քրիստոնյա ազգութիւններին ազատութեյան նշան տվեց և նրանց ազատութեյան մեջ ամենից էական ճիգը կատարեց։ Ռուսը, անշուշտ, իր շահի համար էր այդպես վարվում (որևէ եվրոպական պետութիւն իր այս կամ այն շահի համար է, որ այդպիսի հարցերում զոհողութիւն է հանձն առնում), բայց ռուսի շահերը համաձայնում էին ընդհանուր քաղաքակրթութեյան շահերի հետ։ Ամբողջ աշխարհը օգտվել է Կովկասի՝ ռուսի ձեռք անցնելուց, ինչպես և Հունաստանի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Մակեդոնիայի ազատագրումից, ռուսական պատմութեյան պարծանք է այդ դերը, որ կատարել է ռուս ազգը, բարձր քաղաքակրթական մի դեր, որի հետ բաղդատելու համար արժանի չէ ավելի հզոր և ավելի ճոխ քաղաքակրթութիւն ներկայացնող Գերման ազգը։ Արդ, Անգլիան, միմիայն իր նյութական շահերի համար, սրգելից Ռու-

[83] «Անահիտ», 1898, թիվ 3, էջ 87։

[84] Նույն տեղում, էջ 89։

սին շարունակել այդ դերի կատարումը։ Անգլիան հռչակեց, թե թուրքը ավելի օգտակար է քաղաքակրթության համար, քան Ռուսը, և Ղրիմի պատերազմը սարքեց, ուր քրիստոնյա ազգերը թուրքի հետ ձեռք ձեռքի տված՝ Ռուսի դեմ պայքարեցին. 78-ին Անգլիան դարձյալ իրենից կախված ամեն ինչ կատարեց Ռուսին հեռացնելու Բալկաններից և Հայաստանից, ջանաց նույնիսկ Բուլղարիայի ազատագրումն արգելել, և հաջողացրեց Հայաստանը թուրքի տակ պահել»[85]։

Ճիշտ համարելով Ն. Վարժապետյանի առաջին և «միակ ուղիղ քայլը», այն է՝ Ռուսաստանին դիմելը, Չոպանյանը զայրույթով արձանագրում է նրա հետագա բոլոր խոտոր քայլերի ճակատագրական հետևանքները Հայկական հարցի լուծման ուղիներում։ Մասնավորապես նա սխալ էր համարում Ռուսաստանից հետո եվրոպական մյուս տերություններին դիմելը և այլն։

Երիտթուրքական հեղաշրջումից մեկ տարի առաջ Ա. Չոպանյանը, կրկին անդրադառնալով արևմտյան կողմնորոշմանն անցնելու հայ «պատասխանատուների» մոլոր ուղեգծին, գրում էր, որ «Ներսիսյան խումբը Անգլիո վրա չափազանց հույս դնելու սխալը գործած է։ Երբեք չեմ խորհած, թե հայը այդ պահուն ոչ մեկ կարևորություն ընծայելու չէին Անգլիային, անհրաժեշտ էր ի նկատի ունենալ այդ ահագին կշիռ ունեցող տարրը, բայց պետք էր ըմբռնել, թե անգլիական դիվանագիտությունը «թշնամի» է հայոց ներքին ամենեն սուրբ բաղձանքներուն, մինչ ռուսը իր շահերուն բերմամբ՝ դաշնակից էր հայուն»[86]։

Չոպանյանը անդրադառնում էր նաև քաղաքագիտական այն անգրագիտությանը, թե ինչպես էր Ն. Վարժապետյանի խումբը Բեռլինի վեհաժողովի հայոց համար սին որոշումները ժողովրդին ներկայացնում որպես հաղթանակ, ըստ էության, ապակողմնորոշելով նրան, և ինչպես էր գրում՝ տեսնելով, թե «Համիդը ինչ խղճմտությամբ էր կատարելագործության հասցնում այդ բարենորոգումները»։

Հիասթափություն ապրեցին նույնիսկ Գր. Օտյանն ու Սերվիչենը։

Չոպանյանը Ն. Վարժապետյանի խմբին համարում էր առաջին «պատասխանատուները», որոնց քաղաքականությունը հայ ժողովրդին դնում էր լիակատար անպաշտպան դրության մեջ և արագացնում թուրքական հալածանքների ծրագրի գործադրությունը։

Արևմտահայ գործիչների չոպանյանական քննադատությունը 20-րդ դարի սկզբին արդիական խորհուրդ ուներ այնքանով, որքանով

[85] Ա. Չոպանյան, Ռուսիա և հայերը, «Անահիտ», 1906, թիվ 3—4—5, էջ 41։

[86] «Անահիտ», 1907, թիվ 10—12, էջ 165։

հեղինակը նկատի ուներ ժամանակի կուսակցությունների տարանջատ գործողությունների սխալ հետևանքները, կուսակցություններ, որոնք հաշվի չէին նստում ոչ արևմտահայության ներքին և ոչ էլ միջազգային հնարավորությունների հետ, որոնք չէին ուսումնասիրում, համեմատում, խորհրդածում, այլ «Ոտքի ելեք» կը գոչեին, և այսչափ։ Ինչո՞ւ, ո՞ւր, ի՞նչ հույսով, ինչի վրա կրթնելով, ի՞նչի հանգելու համար։ Ասոնք ավելորդ հարցումներ էին»[87]։

Չոպանյանը քննադատում էր տարանջատ ելույթների մարտավարությունը, քանզի դրանք չլատում էին ժողովրդի ուժերը, մանավանդ որ մեծ մասամբ լինում էին չնախապատրաստված։ Նա սխալ և արկածախնդիր էր համարում Գում Գափուի և Բաբ Ալիի (սուլթանի պալատի մոտ) ցույցերը...[88]։ Չոպանյանը 19-րդ դարավերջյան ինքնապաշտպանության հերոսապատումի մեջ շատ խոհեմ էր համարում 1895 թ. Զեյթունի ինքնապաշտպանությունը, որը, ըստ պատմաբանի, այլ վայրերում «սարքված» դեպքերի նման հայերին արյունաթափ անելու չտարան։ Տեսնելով, որ «տաճիկը իր վրա կուգար», զեյթունցին որոշեց զենքը ձեռքին պաշտպանվել և վեց ամիս դիմադրեց։ Հենց այստեղ է, որ պետք է համերաշխ ու համատեղ գործեին ազգային ուժերը՝ կուսակցությունները։ Մինչդեռ «երբեք հայ հեղափոխության վարիչներուն ընթացքը այնքան ապիտար, այնքան բացարձականորեն, աններելիորեն ոճրագործ չեղավ,, որքան այս դեպքին»[89]։ Ս. Դ. Հնչակյան կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեկը բավարարվում էր պարծենալով, թե այդ ապստամբությունն ինքն է կազմակերպել, իսկ ՀՀ Դաշնակցությունը դործը համարում է հնչակյան և ոչ մի օգնություն չի ձեռնարկում[90]։ Դաշնակցությունը, որը նախանձով էր նայում հնչակյանների «հաջողություններին», որոշում է աղմուկ հանող մի բան էլ ինքն անել և գրավում է «Բանկ Օտտոմանը», որպեսզի Եվրոպան Թուրքիայում իր շահերը վտանգված տեսներ և նպաստեր հայկական բարենորոգումների կայացմանը։

Չոպանյանը դարատկզբին պաշտպանում ու քաջալերում էր բոլոր նրանց, ովքեր ջանում էին նոր սերնդի մեջ վերականգնել այն ճշմարտությունը, որ Հայկական հարցի հիմնաքարը 1870-ական թվականներին դրել է Ռուսաստանը։ Ավելին, Հայկական հարցը չլուծվեց ոչ թե

[87] «Անահիտ», Ա տարի, թիվ 3, էջ 93։

[88] Տե՛ս Կ. Դալլաքյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 120։

[89] «Անահիտ», 1899, թիվ 3, էջ 97։

[90] Տե՛ս Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 122։

այն պատճառով, որ արտաքին պայմաններն աննպաստ էին, այլև որ «մենք խակ էինք, գեշ պատրաստված էինք մեր գործին, անիրագործելի, տարտամ ու հակասական ծրագիր մը ունեինք (եթե կարելի է ծրագիր մը անվանել զայն) ...ճնշված ժողովուրդներեն դատը կը լուծվի երկու պայմանով, նախ երբ այդ դատը որոշապես գծված է... երկրորդ՝ երբ այդ ժողովուրդը իր դատը շահելու համար չէ թէ մարտիրոսի արյուն, այլ հերոսի արյուն կը թափե և կը ցուցանե, թե տերն է այն հողին, ուր ազատ ապրել կուզե»[91]: Նա բազմիցս շեշտել է, որ ինքը դատապարտում է հայ ազգային կուսակցությունների «այն անբարոյական մեթոդը, որով գործիչներ գողունի կը մտնեն Վան կամ որևէ քաղաք մը, դեպք մը կբռնկցնեն, ու կը փախչին, թողով, որ ժողովուրդը ջարդվի և կարծելով, թե այդ ջարդը եվրոպական միջամտություն առաջ պիտի բերե»[92]:

Հայկական կուսակցությունների գործելակերպի վերաբերյալ Զոպանյանի քննադատական դիտողությունները միանշանակ գնահատականի չարժանացան: Զոպանյանի մտածողության այդ կերպը 1900 թ. մայիսի 12-ի իր նամակում բարձր էր գնահատում Վահան Թեքեյանը, իսկ ութ տարի անց Զոպանյանին հղած Լեոյի մի գրության մեջ մասնավորապես կարևոր են հետևյալ տողերը. «Էջմիածնի դիվանատանը ես գտա փոշիների մեջ... կարևոր քաղաքական դոքյումաններ, որոնք վերաբերում են հայոց հարցի ծագման ժամանակներին: Ապացուցվում է Ձեր հայացքի ճշմարտությունը, որ ռուսները ամեն կերպ աշխատում էին Հայկական հարցն էլ իրենց ձեռքն առնել, բայց հայերը խուսափում էին ռուսներից»[93]: Եղան նաև ընդդիմադիր մտմուլի կշտամբանքներ:

Անանց արժեք ունեն միջազգային հարաբերությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի հետագա ուղիների վերաբերյալ Զոպանյանի գնահատականները: Երկու դարերի սահմանագծում, թափանցելով քաղաքական անցուդարձերի խորքը և գուշակելով մոտալուտ համաշխարհային պատերազմը, Զոպանյանը գտնում էր, որ հայ ժողովուրդը միայն իր ուժերով չի կարող թոթափել թուրքական սիրապետությունը և պարտավոր է դաշնակիցներ գտնել: Ըստ նրա, հայը դաշնակիցներ պետք է փնտրեր չորս հզոր տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի մեջ, խնդիրն այն է, թե դրանցից որի՞ն տալ

[91] «Անահիտ», 1899, թիվ 7, էջ 225:

[92] Նույն տեղում:

[93] ԳԱԹ, Ա. Զոպանյանի ֆոնդ, 1 բաժին, № 2835:

գերապատվություն: Առաջինի վերաբերյալ Զոպանյանի կարծիքը մնում էր անփոփոխ. Անգլիան Անգլիա է՝ միշտ խարդախ ու շահամոլ:

Վիլհելմյան Գերմանիայի արևելյան քաղաքականությունը Զոպանյանը անվանում էր «գագաթնակետին հասած թուրքամոլություն»:

«Պատմությունը պիտի չմոռանա, — գրում է նա, — որ Գերմանիա կայսրը գուրգուրանքով ու հիացումով դիտեց իր բարեկամ սուլթանին հիմարական քանդումին գործն ի Հայաստան, ի Կրետե և ի Հունաստան և, թե փլատակներու վրա կոխելով, ան գնաց սեղմիլ արյունաթաթախ ձեռքերը մեծ մարդասպանին, անոնցմե ընդունելու համար իր մեղսակից լռության փոխարժեքը: Եվ որքան ալ գերման ժողովուրդը անպատասխանատու ըլլա իր դիվանագետներուն գործած հանցանքին, այդ ամենը անջինջ պիտի մնա Գերմանիոյ ճակատին»[94]:

Զոպանյանը ի վերջո եկել է այն համոզման, որ ավելորդ է նաև Ֆրանսիայի հետ հույսեր կապելը, քանզի նա ևս «քաղաքական շահերի» հետամուտ իմպերիալիստական գիշատիչ է: Զոպանյանի կարծիքով Հայկական հարցի լուծմամբ առավել շահագրգռված է Ռուսաստանը և նրա նկատմամբ քաղաքական կողմնորոշման անհրաժեշտությունը նա հիմնավորում էր և պատմականորեն, և ընթացիկ պահի անհրաժեշտությամբ: Ընդդիմանալով իրօրյա տարածված այն կարծիքին, թե Ռուսաստանը Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու փոխարեն մտադիր է պարզապես նվաճել այն, Զոպանյանը, տառացիորեն Գր. Արծրունու խոսքերի կրկնությամբ, պատասխանում էր՝ նույնիսկ այդպիսի լուծումը նախընտրելի է: Ինչո՞ւ հարցի պատասխանը նա հիմնավորում էր Արևելյան Հայաստանի իրողությամբ, ուր ռուսահպատակ հայերն օգտվում են ռուսական քաղաքացիության բոլոր իրավունքներից և հաղորդակից են եվրոպական քաղաքակրթությանն ու մշակույթին:

«Ռուսիա և հայերը» ուսումնասիրության մեջ Ա. Զոպանյանը բարձր է գնահատում ռուս ժողովրդի «խանդավառ, գաղափարապաշտ, մարդասեր հոգին», «ռուսական զորության կատարած անուրանալիորեն գեղեցիկ ու մարդօգուտ դերը՝ մահմեդականությանը զսպելու և Թուրքիային դերի ազգությունների ազատմանը նպաստելը», «բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր տված է ռուս տարրը՝ ազատության գաղափարի համար և վերջապես «ռուս» ըսելով ես միշտ կը հիշեմ բարիքը, զոր Մեծն Պետրոսի ցեղը ըրած է՝ անցյալին մեջ՝ հայության և կը տեսնեմ օգուտը, զոր իմ ազգս կարող է ապագային մեջ քաղել ռուս զորություններեն»[95]:

[94] «Անահիտ», 1898, թիվ 2, էջ 82:

[95] «Անահիտ», 1906, թիվ 3—5, էջ 70:

Չպետք է մոռանալ, որ այս տողերը գրվում էին ռուսական առաջին հեղափոխության տարիներին և բնականաբար Չոպանյանը պիտի հաշվի առներ նոր իրողությունները։ Եթե միապետական Ռուսաստանը գալիք պատերազմում մանի Թուրքիա, ապա նրա ներկա հակահայկական քաղաքականությունից ելնելով, հայությունը պիտի չեզոք մնա։ Իսկ եթե բարեշրջության հետևանքով ցարականին փոխարինելու գա «ազատական Ռուսաստանը», ապա Թուրքիայի դեմ իր պայքարում հայ ժողովուրդը ուժերի ներածին չափով պետք է օգնի նոր Ռուսաստանին, քանզի դրանով նա կօժանդակի ազատականության պայքարին ընդդեմ բռնության, քանզի բռնության շղթաները թոթափած Ռուսաստանում «որքան էլ մեզի համար հատուկ տուն մը շինելու հույսը գոյություն չունենա, գեթ մեծ, առողջ ու հզոր տան մը մեջ ապահով ու հանգիստ սենյակ մը ունեցած ըլլանք մեր գոյությունը պատրաստելու և զարգացնելու համար»[96]։

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը Ա. Չոպանյանը բնութագրեց որպես Թուրքական բուրժուազիայի և միապետության միջև դաշինքի արտահայտություն, հանգամանք, որ չհատկացավ ազգային-ազատագրական պայքարի ղեկավարության մեծամասնությունը։ Տակավին դարասկզբին հայ մտավորականության շրջաններում սթափության կոչող ձայներ էին հնչում, որոնց հեղինակները պահանջում էին հայկական կազմակերպություններից՝ չհավատալ երիտթուրքերին և չդաշնակցել նրանց հետ։

Երվանդ Երուխանը (Սերմաքեշխանլյան), օրինակ, Վառնայում հրատարակվող իր խմբագրած «Շավիղ» (1901) հանդեսում գրում էր, որ երիտթուրքերի ղեկավար դեմքերից Ահմեդ Ռիզան և իր նմանները նախանձելի մրցակիցներ պիտի լինեն Կ. Պոլսի փողոցներում երբեմնի արյունակզակ շահատակների։ 1902 թ. փետրվարին երիտթուրքերը Փարիզում գումարում են «Օսմանցի ազատականների» համագումարը, որին մասնակցելու հրավերն ընդունում են դաշնակցականները և Վերակազմյալ հնչակյանները։ Լինելով անկուսակցական, Ա. Չոպանյանը ընդունում է Վերակազմյալների առաջարկությունը և անդամակցում նրանց պատվիրակությանը։ Այդ համագումարում հայկական երկու պատվիրակություններն էլ թողնում են նիստերի սրահը, որովհետև երիտթուրքերը մերժում են «Տաճկաստանը դաշնակցային (ֆեդերալ)» կառուցվածքով վերաձևելու նրանց առաջարկությունը և համառում են «ձուլման» իրենց պահանջի վրա։ Այդ համագումարից հետո Ա. Չոպանյանը պայքար է ծավալում երիտթուրքերի հետ հայկական կուսակցությունների բոլոր շփումների և գործակցության դեմ։ Բայց շատ երկար չանցած տեղի է ունենում ան-

[96] «Անահիտ», 1905, թիվ 10—11, էջ 225։

հավատալին՝ երիտթուրքերի հետ ՀՀԴ-ի դաշինքը։ Չոպանյանն այդ դաշինքը Հայկական հարցը գերեզմանել որակեց։ Նա սկզբնական շրջանում այդ գործարքը հետևանք էր համարում դաշնակցության ոչ ճշգրիտ քաղաքական կողմնորոշման, բայց Ադանայից հետո, բազում կշտամբանքների առկայությամբ, բացահայտված սխալի մեջ համառելը, Չոպանյանը բնորոշեց որպես կուսակցական թուլակամություն և համազգային շահերին դավաճանություն։ Համագործակցություն կոչված այդ գործարքը համարյա նույն գնահատականին արժանացավ Լեոյի կողմից։ «Անցյալից» հուշագրություններում անդրադառնալով երիտթուրք-դաշնակցություն համագործակցության նկատմամբ անփոփոխ իր դիրքորոշմանը և կարծես տարիների բարձրակետից արձագանքելով Ա. Չոպանյանին, Լեոն գրել է. «Ինքս իմ խղճի և համոզմունքի առջև բավարարված չեմ համարում և վկա եմ կանչում իմ բոլոր գրությունները «Հորիզոնի» մեջ. սկզբից ևեթ ես քննադատական դիրք բռնեցի դաշնակցության դեմ։ Ես էի, որ դատապարտեցի դաշնակցականների համաձայնությունը երիտթուրքերի հետ և Ադանայի աղետը ծախու հանելը լոկ կուսակցական եսամոլության շահերի համար»[97]։

Ուշագրավ է, որ ազգային-ազատագրական պայքարի ձախողման պատճառների գնահատման շատ հարցադրումների պատասխաններ Լեոյի և Չոպանյանի մոտ միակերպվում էին։ Ընդհանրապես մեծ մարդիկ միայնակ չեն մնում։ Երկու մեծերի կարծիքով էլ օտար բռնատիրությունների դեմ հայ ազգային-ազատագրական պայքարի ուղին ճիշտ ու բնական էր, նրանց քննադատությունն ուղղված էր ոչ թե զինված պայքարի էության, այլ ղեկավարման ռազմավարության ու իրականացման մարտավարության դեմ։ Լեոն և Չոպանյանը այն տեսակետի համոզված հետևնակներն էին, ովքեր հայ ազգային-ազատագրական շարժումը համարում էին անծրագիր և վատ նախապատրաստված։ Ա. Չոպանյանի կարծիքով Սան-Ստեֆանոյում Ռուսաստանի հովանավորությանը դիմողները ճիշտ ուղու վրա էին, բայց հետագայում թույլ է տրվում սխալների մի ամբողջ շարք՝ կապված արևմտաեվրոպական կողմնորոշման և տերությունների հակառուսական քաղաքականության հետ։ Չոպանյանը քննադատում էր եվրոպական պետությունների ուշադրությունը գրավելու միտումով դարավերջի տարանջատ ելույթները, որոնք առիթ դարձնելով սուլթանն էլ ավելի էր սաստկացնում նախօրոք ծրագրված արևմտահայության զանգվածային ջարդերը։

Հայ ազատագրական մտքի պատմության լավագիտությամբ երկուսն

[97] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 233։

էլ համոզված էին, որ ստեղծված կացության մեջ հայ ժողովուրդը միայն իր ուժերով չէր կարող թոթափել թուրքական բռնատիրությունը և բնական դաշնակից էր որոնում։ Երկուսն էլ ռուսական կողմնորոշման ջերմ կողմնակիցներ էին. գտնում էին, որ Ռուսաստանն իր շահերի բերմամբ Հայկական հարցի լուծման բնական դաշնակիցն է՝ տեսակետ՝ պատմության քննությամբ դիմացած և արդիական։

Այս նույն հիմնահարցերն ու խնդիրները հակագիտական ծայրակետից էին մեկնաբանում ՀՀԴ-ի պատմագրության ներկայացուցիչներ Էդուարդ Ակնունին (1863—1916) և Միքայել Վարանդյանը (1870—1934)։ Հասարակական առաջադիմության մասին սխալ և միակողմանի հայացքը թույլ չտվին նրանց՝ տեսնելու սուլթանական Թուրքիայի և մեծ տերությունների փոխհարաբերությունների ընդերքում հասունացող այն ուժերը, որոնց հետ հույսեր կապելը կործանարար էր և առավել կործանարար պիտի լիներ հայ ժողովրդի և Հայկական հարցի լուծման համար։ Ակնունին դաշնակցության նշանավոր գործիչներից էր, սկզբում՝ Գր. Արծրունու, իսկ հետագայում Քր. Միքայելյանի գաղափարակիցը։ Գրել է բազմաթիվ գրքեր և հոդվածներ ռուս-կովկասյան և ռուս-հայկական հարաբերությունների, Հայկական հարցի մասին։ Եռանդուն մասնակցություն է ունեցել դաշնակցության Վիեննայի 1907 թ. 4-րդ Ընդհանուր ժողովին, որից հետո նրա ջանքերով և մասնակցությամբ Փարիզում գումարվել է Օսմանյան կայսրության բոլոր ընդդիմադիր կազմակերպությունների խորհրդաժողովը, որը և նախապատրաստել է երիտթուրքերի սահմանադրության հռչակումը։ Գործունեության հենց սկզբից որդեգրել է ընդգծված հակառուսական կողմնորոշում։ Նրա հեղինակած «Կովկասյան վերքեր» (1903) գրքում Ռուսաստանը նույնպիսի և նույնքան գիշատիչ է, որքան Անգլիան։ Էդ. Ակնունուն խոր կսկիծ ու ցավ էր պատճառում, որ «Կովկասն ու Անդրկովկասը... խաղաղացված էին, կամ ավելի ճիշտ՝ հպատակեցրած վերջնականապես։ Թուրքիայի կողմից ռուսական տիրապետության վտանգ չէր սպառնում, սուլթանները շատ ցավեր ունեին, ցավեր՝ ավելի խոր և ավելի վտանգավոր։ Պարսկաստանը՝ ջարդված, ոչ միայն վտանգավոր թշնամի չէր, այլև «հավատարիմ» հարևան։ Ներսը — Կովկասի բոլոր կողմերում՝ մարած էին ապստամբության բոլոր նշանները, ազատության կրակը հանգած նույնիսկ լեռների ծերպերին։ Վերջինը Շամիլն էր, նա էլ արդեն քավում էր իր ազգասեր մեղքերը հեռո՞ւ, շատ հեռու իր պաշտած լեռներից։ Սակայն այդ բոլոր ներքին «հաջողությունների» հետ միասին դեռ գոյություն ուներ մի այլ խնդիր, քաղաքական մի կարևոր ծրագիր — դա Թուրքաց Հայաստանի և դրա հետ միասին Փոքր Ասիայի ծանոթ ծրագիրն էր։

Ազեռային պալատում դեռ մինչև այսօր կանգուն է սլավ վեհապետության այն կտակը, թե ռուսաց միապետության է պատկանում Ստամբուլը՝ իր ս. Սոֆիայի գմբեթով, և Պարսից ծոցը՝ օվկիանոսի նման լայն քաղաքական շահերով։ Իսկ Հայաստանը մի բանալի է, անխուսափելի շավիղ դեպի վերջինը, դեպի այդ կարևոր ծրագրի իրականացումը»[98]։

Նախ՝ Կովկասը «խաղաղացնելու» և «ազատասեր» Շամիլի մասին մի փոքր մանրամասն։ «Պատմությունը իմաստուն ուսուցիչ է», — ասում էր էդ. Ակնունին։ Համաձայն ենք։ Այդ դեպքում պատմության դասերի հետ առաջին հերթին պարտավոր են խորհրդի նստել հանգամանքների բերումով ազգի ճակատագրի տնօրինմանը հավակնող կուսակցությունների առաջատար գործիչները։ Ակնունու օրինակով համոզվում ենք, որ, տարաբախտաբար, միշտ չէ, որ ազգային առաջընթացին «անձնվեր» զինվորագրված գործիչները կարողանում են օգտվել պատմության մատակարարած փաստերի և իրենց ժամանակաշրջանի առաջադրած խնդիրների համադրման և հակադրման արվեստը սեփական ժողովրդին ծառայեցնելու՝ պատմաճանաչողական հայտնի մեթոդից։ Ի՞նչ էր իրենից ներկայացնում Ռուսաստանի «հպատակեցրած» լեռնականների շարժումը և ո՞վ էր «ազատասեր» Շամիլը, որ այնքան վիշտ ու կսկիծ էր պատճառում համազգային հոգսերով տառապող էդ. Ակնունուն։

Հայտնի է, որ թաթար-մոնղոլական դարավոր տիրապետությունը խորտակելուց հետո էլ ռուսական հզորացող պետականությունը չհրաժարվեց նվաճողների նկատմամբ անհանդուրժողության իներցիան միակցելու զինական գերազանցության հետ և մեկը մյուսի հետևից նվաճեց Օսմանյան Թուրքիայի ենթակայության կամ վերջինից կախվածության մեջ գտնվող մուսուլմանական ցեղերով ու ժողովուրդներով բնակեցված տարածքները՝ ինքնաբերաբար կամ ակամա Ռուսաստանի ներկայի ու ապագայի համար իսլամը դարձնելով համապետական ներքին հիմնահարց։

Իրողություն էր, որ մուսուլմանական ցեղերի միավորումը Ռուսաստանին, անկախ ցարիզմի գաղութային քաղաքականությունից, հսկայական առաջադիմական դեր էր խաղացել դրանց տնտեսական և մշակութային առաջընթացի գործում, բայց գաղտնիք չէ նաև, որ Թուրքիային հաջողվում էր այդ ցեղերի վերնախավերի վրա կրոնական և ներգործության այլևայլ միջոցներով նրանց հրահրել Ռուսաստանի դեմ։ Մասնավորապես դա բացահայտ դարձավ 19-րդ դարի առաջին երեսնամյակի

[98] Էդ. Ակնունի, Կովկասյան վերքեր, առաջին հատոր, Ժնև, 1903, էջ 145։

ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների արդյունքներով, երբ Պարսկաստանը Ռուսաստանի հետ հակամարտության մեջ իրեն վերջնականապես պարտված ճանաչելուց հետո, փաստորեն, պատմության հրապարակի վրա, որպես մուսուլմանության «պաշտպան և հովանավորող» էր թողնում Թուրքիային, իսկ վերջինս ելնելով կատարվածը միայն ռազմական գերակայությամբ ետ վերցնելու անհեռանկարայնությունից, որոշեց շարժման մեջ դնել Ռուսաստանի նորագրավ երկրամասերում կառավարման քրիստոնեական կարգ ու կանոնից դժգոհ իր հավատակիցներին: Այդ տեսակետից Ռուսաստանին ընդդիմադիր ուժերի մեջ առավել համառ ու երկարատև էր այն պայքարը, որ Կովկասի լեռնականները մղեցին 1810-ական թվականներից մինչև 1860-ական թվականների կեսերը: Շարժումը, որ սկզբում տարերային էր, հետագայում ընկավ Չեչնիայում և Դաղստանում (մուսուլման բնակչության շրջանում) լայն տարածում գտած մյուրիդիզմի (մյուրիդականություն) ազդեցության ներքո:

Մյուրիդիզմը (արաբերեն՝ ձգտող, տենչացող) սուֆիզմի կրոնամիստիկական ուսմունքին տիրապետելու «ձգտողների» շարժում էր, որին բնորոշ էր սեփական «ես»-ից հրաժարվելը, գիտակներին (արիֆ) կուրորեն հնազանդվելը: Մյուրիդները զազավաթի (կրոնական պատերազմ) միջոցով նպաստում էին Ռուսաստանի դեմ կովկասյան լեռնականների պայքարի ուժեղացմանը: Կովկասյան իր դրսևորմամբ մյուրիդիզմը «հըղմարտության որոնող» էր և այն մյուրիդ աստծուն ճարող էր մերձենալ միայն այն դեպքում, երբ հետևողականորեն կենսագործեր զազավաթի՝ անհավատների դեմ սրբազան պատերազմի պատվիրանները: «Բոլոր մուսուլմանների հավասարության» և «սրբազան պատերազմի» կարգախոսները, որ առաջադրում էին մյուրիդիզմի առաջնորդները, լեռնային գյուղացիության կողմից ընկալվում էին որպես սոցիալական արդարության կարգախոսներ: Ցարական նորեկ բյուրոկրատիայի որոշ ներկայացուցիչների ինքնաբավ պահվածքը ևս նպաստում էին մյուրիդիզմի կողմնակիցների շարքերի համախմբմանը, որից օգտվում էին թուրքական գործակալները և լեռնականների վերնախավը՝ շարժումը բացարձակապես հակառուսական հուն մղելու համար: Մյուրիդիզմի տեսությունն ու գործունեությունը հանգեցնում էր լեռնականների մեկուսացմանն ու առանձնացմանը Կովկասի և Ռուսաստանի քրիստոնյա ժողովուրդներից, նրանց ներքաշում Ռուսաստանի ոխերիմ թշնամի Թուրքիայի և Արևմտյան տերությունների գաղութային քաղաքականությանը գործիք դառնալուն:

1820-ական թվականներին շարժումը ծնունդ տվեց մի կազմակեր-

պության, որը վերաճեց թեոկրատական-ավատատիրական պետության: Ստեղծվեց իմամաթը (հոգևոր իշխանապետություն): 1831 թ. իմամ Ղազի Մուհամեդի, իսկ 1832 թ.՝ իմամ Բեկ Համզաթի սպանություններից հետո, 1834 թ. երրորդ իմամ հռչակվեց Շամիլը:

Տակավին վերջերս չեչեն անջատվողականների առաջնորդ Ջ. Դուդաևը Շամիլին համարում էր իր «մեծ նախորդը»: Իսկ ո՞վ էր Շամիլը:

Կարծում ենք էդ. Ակնունուն սպառիչ պատասխան կարող է լինել հայ մեծ գրող Մ. Նալբանդյանի՝ Շամիլին տված գնահատականը: Մ. Նալբանդյանի «Կոմս Էմմանուել» կեղծանունով տպագրված «Հիշատակարանը» (1858—1860) «Հյուսիսափայլի» յուրահատուկ երգիծական բաժինն էր, որը հայ հրապարակագրության մեջ նույն դերն է խաղացել, ինչ որ «Սովրեմեննիկի» հավելվածը՝ Դոբրոլյուբովի «Սվիստոկը» ռուսականում:

Թուրքական, իսկ Ղրիմի պատերազմի ժամանակ նաև անգլիական գործակալ, Ռուսաստանի և Անդրկովկասի քրիստոնյաների թշնամի, 19-րդ դարի 30—50-ական թվականների մյուրիդիզմի պարագլուխ իմամ Շամիլի անունը Նալբանդյանն օգտագործել է քննադատելու համար ժամանակի հայ առաջադիմական մտքի կաշկանդիչ, խավարամոլ եպիսկոպոս Գաբրիել Այվազովսկուն: Գեղարվեստական փայլուն օրինակների միջոցով Նալբանդյանն առաջադրել է Շամիլի գնահատման իր տեսակետը: Նա Շամիլի մեջ տեսնում էր կատաղած բռնակալին և Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների ազատության մոլեռանդ թշնամուն:

Համաշխարհային գրականությունից բազում փաստեր են հայտնի, թե ինչպես հրեաները (հատկապես հրեա սիոնիստները) իրենց առաջադիր նպատակին հասնելու համար հաճախ են դիմել կրոնափոխության[99]: Հայ Նալբանդյանագիտության աչքից տարաբախտաբար վրիպել է Շամիլի հավատափոխության վերաբերյալ պատմագիտական վավերագրի արժեք ունեցող Կոմս Էմմանուելի «Հիշատակարանում» նկարագրված հայ գերու հետ զրույցի ժամանակ իր իսկ Շամիլի խոստովանությունը և Շամիլի հրեական ծագման մասին խոսակցությանը մասնակից ծեր նահիրներից մեկի վկայությունը:

«Ես ծնած էի սուննաթ, — գերված հային մահմեդականության առավելությունը քրիստոնեական կրոնի նկատմամբ հաստատելու համար պատմում է Շամիլը, — բայց երեխայությունից դաստիարակվելով չիմթների մոտ, սրտի վկայությամբ ընդունել էի այդ վարդապետությու-

[99] *Տե՛ս* **Дуглас Рид**, Спор о Сионе (2500 лет Еврейского вопроса), перевод с английского, Краснодар, 1991, стр. 42—44.

նը։ Ինձ թվում էր այն ժամանակ, թե դորանից ճշմարիտ, դորանից ուղիղ կրոն չկա աշխարհի երեսին։ Որքա՜ն վեճ ունեցել եմ, որքա՜ն բան գրել եմ այդ առարկայի վերա, բայց երբ... (քեզ հարկավոր չէ իմանալ այդ բանի մանրամասն հանգամանքը) վերստին ընդունեցի սուննաթի դավանությունը, արդեն առ նմին հասկացա, որ սխալված էի շիաթների կրոնը պաշտպանելով։ Այս միջոցին նայիբներից առավել ծերունին ասաց յուր ընկերին ցած ձայնով, որ ես, թեպետ մոտ էի կանգնած, բայց հազիվ լսեցի, թե, «Սորան նայի՛ր, ինչպես է խոսում, անծանոթ մարդ է գտել, քամիներ է փչում։ Դա ոչ մի ժամանակ որդի չէ մուսուլման ծնողների, դա հրեի տղա է, և բախտի բերելով ընկել է մեր կրոնի մեջ։ Շիաթների դավանությունը ուրացավ ոչ այն պատճառով, որ ճանաչեց նորա մոլորականությունը, այլ պաշտելով այդ կրոնը, երբեք կարողանալու չէր տիրապետել այդ գահին, որի վրա նստել էին երբեմն մեծ մարգարեի հավատարիմք։

Այս պատվելու կրոնափոխությունը հետևանք է քաղաքական գաղափարների, և ոչ բուն կրոնական խորհուրդով։ Որի՞ն է խաբում սա»[100]։

Մ. Նալբանդյանի մոտ Շամիլը սուտասան է, անբարոյական, պատրաստ մինչև «կյանքի վերջը փորձել աշխարհի երեսի բոլոր կրոնքը և դավանությունքը»։ Նա ատում է Շամիլին «որպես մի բռնակալ և թշնամի Ռուսիայի, որի խաղաղ քաղաքացիներից մինը լինել վաղուց վիճակել էր իրեն նախախնամությունը»[101]։

Շամիլը Նալբանդյանի համար «խայտառակության դրոշմը ճակատին ավազակ» է, որն իր գործողություններով «խռովում էր դրացի ազգերի խաղաղությունը»[102]։

Որ ռուսական կայսրության մեջ մտնող ժողովուրդների ազգային-ազատագրությունը հզոր և միասնական Ռուսաստանի վերածնության հետ կապող Նալբանդյանը պետք է դատապարտեր Թուրքիայի գործակալ իմամ Շամիլի կողմից գլխավորվող լեռնականների շարժումը, այն անվանելով հետադիմություն և խավարամոլություն, ինքնին հասկանալի է։ Ուշագրավ է, որ Շամիլին և մյուրիդիզմը բացասական են գնահատել նաև Պ. Պռոշյանը, Ռ. Պատկանյանը և Րաֆֆին։

Պռոշյանը ատելությամբ էր լցված բոլոր նրանց դեմ, ովքեր փորձ կանեին խանգարել ժողովուրդների խաղաղությունը։ Գրողը հակակրանքով էր խոսում նաև եվրոպական դիվանագիտության դավադրական գործելակերպի մասին։ «Շամիլը Թելավումը, Թիֆլիսից մի օրվա ճանապարհի վրա, վաղն այստեղ կլինի, — ահաբեկված ասում է Պռոշյանի վեպի հերոսը, — շփոթն ընկավ քաղաքի մեջ. Մախաթի սարի վրա լեզգու ձիավորներ են երևում, քաղաքը լրտեսում են, դողալով պատմում են միմյանց ամեն ոք։

...Եվ արդարև ի՞նչ պետք է անենք, եթե այդ անպիտան Շամիլի երևիլն ստույգ լինի և մի օր էլ Թիֆլիսը պաշարի, 500 ձիավոր Թիֆլիսի դիմին Աղա Մահմադ խանի փորձանքը կբերի...

Շամիլը երևի դրդված եվրոպական դաշնակցությունից շատ հանդրգնեցավ և ուղղակի Ալազան գետն այս կողմն անցավ և հարձակվեց Ծիանանդալի վրա... Շամիլը բավականացավ ճավճավաձենների գյուղն ավարտալով, նա յուր կողոպուտն ու գերիներին առած Ալազանն անցկացավ...»[103]։

Ռ. Պատկանյանը «Մի ճանապարհորդության» հետաքրքիր ուղեգրության մեջ նկարագրում է, թե ինչպես Շամիլի «առեքները» փախցնում են Հյուսիսային Կովկասի գեղեցիկ հայ աղջիկներին, ստիպում են «հավատը փոխել» և մտցնում են «Շամիլի կանանոցն»[104]։

Րաֆֆին իր «Խեներ» վեպում Շամիլին համարում է «ռուսաց հին սխերիմ», իսկ նրա որդի «գեներալ լեյտենանտ Շամիլը» 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ «նորեն մեծության սուլթանի սվիտայի համհարզն էր»[105], որի բազմաթիվ հավակնոտ նամակները Բայազետի բերդի անհապաղ հանձնելու վերաբերյալ մերժվել են պարետ Շտիկովիչի կողմից։

ՀՀԴ-ի պատմաբան և հրապարակախոս Էդ. Ակնունին հարկադրում է կրկնել հռետորական հարցը՝ ո՞վ էր Շամիլը։ Նա, ով իր շուրջը համախմբեց Չեչնիայի և Դաղստանի ավազակաբարո ավատատերերի մեծ մասին՝ կազմակերպելով նայիբների դասը, այն միջնախավը, որը սոցիալական հենարան պիտի դառնար իմամաթի համար։ Նա, որ 1840—1850-ական թվականներին ռուսական զորամիավորումների մի շարք համարձակ գործողություններից հետո, գիտակցելով հանդերձ, որ Կովկասյան պատերազմը իր օգտին չի վերջանալու և իմամաթի վախճանն անխուսափելի է, շարունակեց իր չատագործություններն ու արյունահեղությունները[106]։

100 Մ. Նալբանդյան, երկեր, Երևան, 1985, էջ 330։
101 Նույն տեղում։
102 Նույն տեղում, էջ 334։
103 Պ. Պռոշյան, Շահեն, Թիֆլիս, 1883, էջ 235—242։
104 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1968, էջ 35։
105 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. չորրորդ, Երևան, 1984, էջ 156։
106 Տե՛ս Герои и деятели русско-турецкой войны 1877—1878 гг., СПб, стр. 313.

Կովկասյան պատերազմում ռուսական բանակների մարտական գործողությունների ակտիվ մասնակից, բանաստեղծ, գեներալ Գրիգոլ Օրբելիանիի մասին պատմավավերագրական գրքի հեղինակ, այսօրվա Վրաստանի ճանաչված գրող Էլգուջա Մագարաձեն գրում է, որ 1854 թ. ամռանը թուրքերի հարձակումը Բիֆլիսի ուղղությամբ նոր հույսեր ներշնչեց Շամիլին: Նա ներխուժեց Կախեթ, գրավեց Ծինանդալին, սակայն փորձառու հայ գեներալ Բարսեղ Մադաթովի հարվածներից հետ շպրտվեց լեռները[107]:

Վրաց հեղինակը դրվատանքի ջերմ խոսքեր է նվիրել նաև հայազգի մեկ այլ փառաբանված գեներալի՝ Մովսես Երկայնաբազուկ Արղությանի հասցեին, որի գլխավորությամբ ռուսական զորամիավորումները տարիներ շարունակ անձնուրաց, հերոսական մարտեր են մղել Շամիլի հրոսակների դեմ[108]: Այս մասին շատ ավելի հանգամանորեն է պատմում ռազմական գործողությունների մասնակից, հետագայում համառուսական ճանաչում ստացած հրապարակախոս և գրող Ռոստիսլավ Ֆադեևը[109]: 1854—1855 թթ. Կովկասյան պատերազմում ռուսական զորքերի փայլուն հաջողությունները և հատկապես 1855 թ. նոյեմբերին Կարսում թուրքերի չախչախումը վերջնականապես ցրեցին արտաքին օգնություն ստանալու Շամիլի հույսերը (Ռուսաստանն անդամահատելու Անգլիայի պալմերստոնյան ծրագիրը ձախողվել էր): Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանը հնարավորություն ունեցավ լեռնականների դեմ կենտրոնացնել հսկայական ռազմական ուժեր: Կովկասյան կորպուսը վերածվեց բանակի և անձնակազմը հասցվեց 200 հազարի: Շարունակվեց սեղմվել պաշարման օղակը, 1859 թ. ընկավ Շամիլի նստավայր Վեդենո աուլը և Շամիլը անձնատուր եղավ: Անձնատուր եղան նաև մյուս զինված հրոսակախմբերը: Հետագայում Շամիլը իր ընտանիքով ուխտագնացության մեկնեց Մեքքա և 1871 թ. վախճանվեց Մեդինայում:

Կովկասյան պատերազմն ավարտվեց, բայց երկրամասի թուրքալեզու ժողովուրդների շրջանում Ռուսաստանի դեմ թուրքական քարոզչությունը չդադարեց: Գիտենք նաև, թե Թուրքիան ինչպես իր դռները լայնորեն բացեց լեռնականների առջև և ամեն ինչ արեց, որպեսզի նրանք բնակություն հաստատեն կայսրության քրիստոնեադավանաբնակ տարածքներում, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի վիլայեթներում:

[107] Տե՛ս Эл. Магарадзе, Григол Орбелиани, М., 1980, стр. 200.
[108] Տե՛ս նույն տեղում, էջ 119:
[109] Տե՛ս Р. Фадеев, Соб. соч., т. I, 60 лет Кавказской войны, СПб, 1889, стр. 103—104.

Այս հարցի վրա մենք երկար կանգ առանք ոչ թե մեր գիտելիքները «Կովկասյան վերքեր» գրքի հեղինակին բաժին հանելու գայթակղությունից դրդված, այլ մեր զարմանքը հայտնելու, թե ինչպես հայ ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիր կուսակցության առաջնորդներից մեկը կարող էր հրոսակապետ ավազակին կոչել «ազատասեր» և ոդքալ նրա պարտությունը: Էդ. Ակնունին անտարբերությամբ անցավ իրօրյա թուրքական ռազմատենչ բուրժուազիայի պանթուրքական գաղափարախոսության կողքով, մի գաղափարախոսություն, որը կայսրության ներսում գաղափարական պայքարի ոչնչացնող զենք էր հպատակ քրիստոնյա ժողովուրդների դեմ, իսկ կայսրությունից դուրս Ռուսաստանի դեմ, ուր ապրում էին ալահի մեծ փոխանորդի հայրենիքից օտարված թուրքալեզու բազմամիլիոն հավատակիցները: Ինչպես տեսնում ենք, երիտթուրքերի և դաշնակցության համագործակցության ճարտարապետներից մեկի՝ Ակնունու համար տակավին 1903 թվականին շատ ավելի վտանգավորը ոչ թե թուրքիզմն ու պանթուրքիզմն էր, այլ Ձմեռային պալատից սպառնացող վտանգը՝ «Սլավ վեհապետության... կտակը, թե ռուսաց միապետությանն է պատկանում Ստամբոլը...»: Հիպերբոլիկ չափազանցություններ իր մեթոդին հավատարիմ՝ Ակնունին Ռուսաստանին մեղադրում է արևելահայերին տված քաղաքական խոստումները դրժելու մեջ: Նա չի խոսում փաստերի լեզվով, ուստի և նրա մտքերի շարադրանքը դառնում է անտրամաբանական և զուրկ պատմագիտական արժեքից: Այսպես, նկարագրելով Բեռլինի կոնգրեսից հետո հայ բոլոր հասարակախավերում առաջ եկած ուժգին թշնամությունը դեպի Անգլիան և բարեկամական զգացմունքները դեպի Ռուսաստանը, Ակնունին իր հետագա շարադրանքում լուտանքներ է թափում 1890-ական թվականների քաղաքականության վրա՝ չբացահայտելով այդ քաղաքականության գլխավոր պատճառները: Միթե՞ «մայիսյան բարեներոգումների» գործադրման խնդրում Եվրոպան այնքան «միակամ» էր, և խանգարում էր միայն Ռուսաստանը, միթե՞ անգլիական նենգ քաղաքականությունը իր հակառուսական ընթացքով չէր նախապատրաստել այդ ամենը, կամ միթե՞ Գերմանիայի բռնած դիրքը ավելի քիչ էր քաջալերում Աբդուլ Համիդին հրաժարվելու բարենորոգումների ներդրումից, քան ինչ որ մինչ այդ Ռուսաստանում «մոխրի տակ ծածկված... հակահայկական տեսակետները»[110]:

Անշուշտ, Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը վարողները շատ լավ գիտեին, որ Հայկական հարցի լուծման ձախողումը կանխորոշ-

[110] Տե՛ս Էդ. Ակնունի, Կովկասյան վերքեր, Ժնև, 1903, էջ 275—277:

ված էր եվրոպական մայրաքաղաքներում։ Փոխանակ բացատրելու, թե ինչո՞ւ, հակառակ իր ավանդական, դարավոր հակաթուրքական քաղաքականությանը, Ռուսաստանը 1890-ական թվականներին պաշտպանում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը՝ այստեղից բխող բազում այլ (այդ թվում հակահայկական) հետևանքներով, փոխանակ ցույց տալու, որ դրա հիմնական պատճառը դարձյալ Ռուսաստանի դեմ ուղղված Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականությունն էր և մյուսների աջակցությունն ու չեզոքությունը, որ ստեղծված նոր իրադրության պայմաններում Ռուսաստանը ստիպված իրեն «բարեկամ» էր ձևացնում Թուրքիային, Ակնունին միակողմանի խտացնում էր ցարիզմի հակահայկական քաղաքականության գույները։ Բավարար չափով մեծ տերությունների քաղաքական շահախնդրությունների խորքերը չուսումնասիրելու, Ռուսաստանին միակողմանի մեղադրելու միտումով մերձավոր անցյալի պատմությունը և ներկա քաղաքականությունը ծուռ հայելու մեջ ներկայացնելու հակառուսական մի կեցվածք էր սա, որից, տարաբախտաբար, և՛ դարաշեմին, և՛ հետագայում չկարողացան ազատագրվել հայ հասարակական մտքի և պատմագրության շատ ներկայացուցիչներ (Մ. Վարանդյան, Ս. Վրացյան, Կ. Սասունի և ուրիշներ)։

Դաշնակցության գաղափարախոս և պատմաբան Միքայել Վարանդյանի աշխատություններում («Դաշնակցությունը և նրա հակառակորդները» (1906), «Հայրենիքի գաղափարը» (1904), «Վերածնվող հայրենիքը և մեր դերը» (1910), «Հայկական շարժման նախապատմությունը», հտ. 1—2 (1911, 1913), «ՀՅ Դաշնակցության պատմությունը», հ. 1—2 (1932—1950), տեսական ընդհանրացումներն ու հետևությունները հաճախ չեն ստեղծվում և ամբողջանում իր իսկ քննարկած պատմական փաստերից, հայ ազգային-ազատագրական շարժումների և Հայկական հարցի առաջ բերած հասարակական-քաղաքական վերլուծական հետևությունների արդյունքներից։

Վարանդյանը գտնում էր, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը պետք է հասցնի միասնական և անկախ Հայաստանի ստեղծմանը, չկարողանալով հստակ պատասխան տալ դեպի նպատակը տանող «ինչպե՞ս» հարցին։ Նա ոչ մի առիթ բաց չէր թողնում իր հակակրանքը հայտնելու Ռուսաստանի հայկական քաղաքականության նկատմամբ, երբեմն՝ ծածուկ, երբեմն՝ անսքող իր հակակրանքն էր արտահայտում հայերի ռուսական կողմնորոշմանը։

Պատմական ճշմարտության դեմ մարտնչող հակագիտական մտա-

կառույց էր իր կուսակցության կամայական գործելակերպը բնութագրող Միք. Վարանդյանի այն տողերը, թե «Դաշնակցականները չէին անտեսեր և այն պարագան, որ Կիլիկիո մեջ չկար քաղաքական շահերու ուժեղ մրցում, հակամարտություն, — կբացակայեր այդ վայրերեն հայոց արյունարբու ոսոխը՝ ցարական Ռուսաստանը (ընդգծումը մերն է — Ն. Ս.), որ բուռն կերպով շահագրգռված էր Մեծ Հայաստանով և կվիժեցներ արևմտյան պետություններու բոլոր փորձերը լուծելու Հայկական հարցը»[111]։

Հարկավ, տարբեր կարող են լինել մտածող անհատների, այդ թվում և պատմաբանների, քաղաքական գործիչների գաղափարական աշխարհայացքային դիրքորոշումները, քաղաքական կողմնորոշումների ըմբռնումները, բայց գոյություն ունեն համընդհանուր բարոյական նորմեր, որոնք պարտադիր են բոլորին։ Երբ Միք. Վարանդյանը գրում էր պոռնիկին կույս ներկայացնող այս տողերը, աշխարհին արդեն հայտնի էին իրոք «Հայկական հարցը լուծելու» պատրաստ Բիքոնսֆիլդի, Սոլսբերիի, Լայդի և մյուս մեծ տերությունների «մեծ» դիվանագետների ջանքերը։ Շատ տարիներ անց, անդրադառնալով մեծ տերությունների և առաջին հերթին Անգլիայի հակահայկական մեծածավալ գործողությունների սկզբնաղբյուր Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածին, Լլոյդ Ջորջը խոստովանում էր. «Այդ որոշումը մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակ, նրա թելադրած պատվավոր խաղաղություն։ Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին»[112]։ «Նկատի ունենալով, — շարունակում է Լ. Ջորջը, — որ հատկապես մենք ենք թուրքերին հնարավորություն տվել կատարելու այդ հանցագործությունները, մեզ վրա բարոյական պարտք է ընկած՝ օգտագործել առաջին հնարավոր պարագան, որպեսզի շտկենք մեր կողմից թույլ տված սխալը և, ինչքանով դա կախված կլինի մեր ուժերից, թույլ չտալ կրկնելու այն սխալները, որոնց համար պատմությունը մեզ վրա պետք է դնի մեղքը»[113]։

Նույնիսկ հետագայում, դաշնակցության գաղափարախոսներն ու

[111] Միք. Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 459։
[112] Լլոյդ Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, стр. 390.
[113] Նույն տեղում։

պատմաբանները խիզախություն չունեցան բարձրանալու Լլոյդ Ջորջի «հայապաշտպանության» մակարդակին։

Միք. Վարանդյանը այն հավատավորներից էր, որի գործուն մասնակցությամբ էր կայացել դաշնակցության և երիտթուրքերի համագործակցությունը։ Հետագարձ հայացքով, թերևս, կարելի էր մեղադրանքի խոսք ասել դաշնակցությանը երիտթուրքերի ազատության ու եղբայրության կեղծ ու պատիր խոստումներին հավատալու համար։ Մինչդեռ Վարանդյանը «հիմնավորում» և շատ «չքմեղ» տողերով է սերունդներին թողնում դաշնակցության գործունեությունն արդարացնող իր խոսքը. «Կասկածը մտեր էր մեր շարքերուն մեջ Իթթիհատի քաղաքականութեան հանդեպ, բայց այդ ահավոր օրերուն, իսլամի փոթորկահույզ ծովին մէջ, ուր բուռ մը հայութիւնը, ամէն կողմէ պաշարուած ու վտանգուած, կատուբերեր տաշեղի պէս, փրկութեան միակ խարիսխը դարձեալ նա էր, Իթթիհատը։ Չէ՞ որ այդ կազմակերպութիւնն ևս արիւն թափեր էր ազատութեան համար և կո՛ւզէր Թուրքիոյ խաղաղ բարգաւաճումը սահմանադրական կարգերու մէջ։ Կար կորիզ մը թուրք յեղափոխականներու շարքերում — անկեղծորէն ազատասէր և սահմանադրական... Թեպէտ և շրջապատուած, տարաբախտաբար, ամէն տեսակ կասկածելի տարրերով։ «Կորիզ»էն էր ինքը Իթթիհատի մտաւորական պարագլուխը։ Ահմէտ Ռիզա զոր կը ճանչնայինք հին օրերէն, մոլեռանդ թուրք, այո՛, թրքական գերակայութեան ու բացարձակ կեդրոնացման ախոյան, հակառակորդ ինքնավար Հայաստանի, բայց և Սահմանադրութեան ու խաղաղ հառաջադիմութեան համոզուած պաշտպան։ Այդպէս խորհեցան Դաշնակցութեան ղեկավարները։ Եւ իրենց սիրտը կարծրացնելով Կիլիկիոյ սարսափներուն ու կառաւարութեան նենգութիւններուն առջև, մերոնք որոշեցին նորէն ժպտերես դիմաւորել երիտասարդ թուրքերը... շարունակել բարեկամական հարաբերութիւնները Իթթիհատ կուսակցութեան հետ, որ նորէն տէր էր կացութեան և նոյնպէս կփնտռէր Դաշնակցութեան բարեկամութիւնը»[114]։

Դաշնակցության համար այնքան նվիրական Հայկական հարցը այլևս փակված էր, 61-րդ հոդվածի մասին խոսելն առավել քան ավելորդ էր, որովհետև օսմանյան սահմանադրությունը «բերկրանքով» ընդունած կուսակցությունը չուներ «ոչ մի անջատական ձգտում, ոչ մի խոսք եվրոպական միջամտության, 61-րդ հոդվածի մասին։ Դադարեցրինք Բրո-Արմենիան և եվրոպական պրոպագանդը, լծվելով մեր իսլամ դրացիներու

[114] Միխայէլ Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 434—435։

հետ, ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրության առաջադիմության և բարօրության»[115]։

Հայկական հարցի լուծման ուղիների և քաղաքական կողմնորոշումների անհեռանկարայնությունն էին քննադատում սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կուսակցության («սպեցիֆիկներ») ղեկավարներից Դավիթ Անանունը (1879—1942) և Բախշի Իշխանյանը (1879—1921)։

«Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր աշխատության մեջ և բազմաթիվ այլ հրապարակումներում Դ. Անանունը փորձել է վերլուծել ժողովրդի (դերազանցապես՝ արևելահայ) քաղաքական և մշակութային զարգացման օրինաչափությունները, առաջ քաշել հայ ազգային համախմբման անհրաժեշտության գաղափարը։ Անանունը գտնում էր, որ հայ բուրժուազիան երբեք չի արտահայտել ազգային շահեր, որ այդ շահերի կրողը եղել է գյուղացիությունը։ Չնայած իր փոքրաքանակությանը, բանվորությունը հանդիսանում էր այն սոցիալական ուժը, որն ազգայնորեն ընկալում է հասարակական շահը, ճիշտ է կողմնորոշվում քաղաքական իրադրության մեջ և կարող է լինել հայ ժողովրդի միասնական հզորության հիմքը։

Հայ ազգային ազատագրական շարժման խնդիրների, Հայկական հարցի լուծման ուղիների շուրջն ունեցած իր տեսակետներում նա բանավեճի մեջ էր դաշնակցության և բոլշևիկների հետ։ Դաշնակցությանը թվում էր, գրում է Անանունը, թե իրեն կհաջողվի փշրել բոլոր կարգի քաղաքական արգելքները, արգելակիչ խութ ու խոոռչները։ Հատկապես Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին և պատերազմի ընթացքում հայկական ազգաշինությունն ընթացավ շեղ ուղիով։ Այն անվերապահորեն նեռվեց դաշնակից պետությունների քաղաքականության գիրկը, հաշվի չառնելով հակառակորդի ուժն ու հաջողությունները, նա շոշափելի ոչինչ չտվեց հայ ժողովրդին։ Ավելին, իր քաղաքական իդեալների մտահոգությունից «երկդիմի դիրք բռնելով Ռուսաստանի նկատմամբ՝ նա վստահություն չնվաճեց և ոչ մի կողմից, այլ ընդհակառակը վաստակեց ատելություն և թշնամություն... Ինքնորեն Հայաստանի փոխարեն ստացվել էր «անհետացող Հայաստան»։ ... Չհաշտերելով ռուսական իմպերիալիզմին և կյանք, և գույք, դարձի ուղի չունենալով՝ հայությունը մոռացել էր, թե ինչ հոխորտանքով ու հուսացումներով էր մտել պատերազմ և այժմ (պատերազմի չորրորդ տարեմուտին) նա գլխիկոր կանգնած էր նույն ռուսական կառավարության շեմքին և նրա աքացի-

[115] Միխայէլ Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հտ. Բ, Գահիրե, 1950, էջ 9։

ներն էր ընդունում իրրև գերագույն շնորհներ։ Այդպես էր մեր վիճակը Նիկոլայ Նիկոլաևիչի փոխարքայության օրով։

Հայկական հարց չկա, ինչպես որ չկա Յակուտական հարց, — ասել էր սատրապը։ Եվ այս բոլորն ինչո՞ւ համար։ Որովհետև հայ երևելիները, դաշնակցական քաղաքագետները հաշվի չէին առել հայության հավաքական զորությունը, չէին նախատեսել սպառնացող արհավիրքի չափը։ Դխակորուս մեզ մղել էին գազանների կրկեսը, ուր հայկական գառն անպայման պետք է ճխլվեր ոտքի տակ։

Հայությունը 1914 թվականից այս կողմ մի ուրախ օր չտեսավ, որ դատ ու դատաստան տեսնե իր կործանարար առաջնորդների հետ»[116]։ Դ. Անանունը ճիշտ էր գրում, թե 1917 թվականի ամռանն արդեն ակներև էր, որ Ռուսաստանը նեցուկ չէ այլևս Անտանտի իր դաշնակիցներին։ Ամենատարբեր գործոնների ազդեցության ներքո նրա բարոյալքվող բանակը պետք է թողներ գրաված դիրքերը, Ռուսաստանը պետք է լքեր դաշնակիցներին։ Իրերի այս կացությունը ծանր վիճակ էր ստեղծում նույնիսկ արևելահայության համար, բայց տակավին չէր խորտակում բաղձանքները։ Հայկական հարցի ծանրության կենտրոնը կտրուկ փոխադրվում էր Ռուսաստան և նրա լուծումը կապվում կայսրության ներքին վերանորոգման հետ։

Պատահական չէ, որ Ալ. Ջիվելեգովի նման լուրջ մտավորականն ու գիտնականը ողջունեց Փետրվարյան հեղափոխությունը։ Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանը հրաժարվում է ցարական ժառանգությունից, որն, ըստ Դ. Անանունի, Հայաստանի դատարկում և նույնիսկ Անդրկովկասի հայկական գավառների վտանգում էր նշանակում, որովհետև մանկամտություն կլիներ ապասել, թե Թուրքիան չէր օգտվի իրերի նոր կացությունից և չէր ներխուժի Անդրկովկաս։ Այստեղ նա վերջնականապես կջլատեր հայկական ուժը, որպեսզի սա երկար ժամանակ մոռանար իր ժառանգության իրավունքը Արևմտյան Հայաստանի նկատմամբ։ Այստեղ էլ նա սերտ հարաբերությունների մեջ պիտի մտներ Ադրբեջանի Թուրքության հետ, ամրապնդեր վերջինիս ազգային ձգտումների կռվանները և դարձներ որոշակի խոչընդոտ Ռուսաստանի ապագա առաջխաղացման դեմ։ Թուրքիայից ապասվող նոր վտանգը հայերին պետք է դարձներ կենտրոնաձիգ և դարձյալ Ռուսաստանի հետ կապեր փրկությունը՝ ապավինել ռուսական պետականության սկզբունքին ու նրանով վանել թշնամուն[117]։

[116] Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը*, հտ. երրորդ, Վենետիկ, 1926, էջ 595—596։

[117] Տե՛ս նույն տեղում, էջ 601—602։

Ընդհանուր առմամբ, 19-րդ դարում հայ ժողովրդի հասարակական զարգացման, ազատագրական շարժումների և Հայկական հարցի վերաբերյալ Դ. Անանունի հայտնած բազում ճիշտ և արժեքավոր դիտողությունների կողքին, մենք նրա մոտ հանդիպում ենք նաև մի շարք խոտորումների, որոնք հանգում են հետևյալին։

Առաջին՝ իրեն մատերիալիստ համարող Դ. Անանունը ընկնում էր ոլյունտարիզմի ոստայնը, երբ հայկական իշխանական տների և պետական մտածողության անկման պատճառները բացատրում էր «զարգացած և ուժեղ քաղաքների» բացակայությամբ[118]։

Երկրորդ՝ անտեսում էր 19-րդ դարի հայ ժողովրդի պայքարի պատմությունը, երբ գրում էր, թե լուսավորյալ Ռուսաստանի և մահմեդական Թուրքիայի բախման ճանապարհին հայությունը «գլխակորուս հոտ էր և նրան փրկում էին»[119]։

Երրորդ՝ Դ. Անանունը «...ողբալով հայի բախտը... մոլորված ու տարակուսած լինելով հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, այնուամենայնիվ, հավատարիմ լինելով մանր ազգերի իղեոլոգների տրադիցիային... աշխատում է ամենից առաջ հավատացնել, որ հայ ազգը սեպարատիստական ձգտումներ չունի, որ նա՝ հանձինս իր բոլոր հասարակական-քաղաքական հոսանքների միանգամայն լոյալ ու հավատարիմ է եղել միշտ ռուս պետության վերաբերմամբ»[120]։

Չորրորդ՝ շեշտը դնելով «Հայության հավաքման» գործընթացի ուսումնասիրման վրա, հեղինակը տրամադիր էր շրջանցելու դարասկզբի դասակարգային և ազգային-քաղաքական արտաքին կողմնորոշումների հակամարտության այն գործընթացները, որոնք բուռն ընթացք էին ստանում հայության երկու հատվածներում և ազդեցության կնիք դնում Հայկական հարցի գործելակերպի վրա։

«Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան» (1907) և «Թուրքիայի ապագան» (1906) աշխատություններում Հայկական հարցի վերաբերյալ իր տեսակետներն է շարադրել Բ. Իշխանյանը։ Սպեցիֆիկների գաղափարախոսը գտնում էր, որ սխալ է Հայկական հարցի լուծումը Ռուսաստանի ազատագրական առաքելության հետ կապելը, ելնելով նրանից, որ վերջինիս արտաքին քաղաքականության շահերն իրրև թե հակառակ են դրան։ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի կոնգրեսում մերժվելուց հետո, փաստորեն ժխտվեց Փորր Ասիա-

[118] Տե՛ս Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը*, հտ. 1, Բաքու, 1916, էջ 10։

[119] Նույն տեղում, էջ 2։

[120] Ստ. Շահումյան, *Երկեր*, հտ. 2, Երևան, 1957, էջ 376։

յում նվաճումներ իրականացնելու ռուսական ծրագիրը։ Դրանից հետո Ռուսաստանն էր, որ թիկունք կանգնեց Թուրքիային և, ըստ Իշխանյանի թյուր կարծիքի, թուրքական կառավարությունը կկորցներ այն ուժն ու հենարանը, որոնց աջակցությամբ կոտորում էր հայերին (sic!)։ Իսկ դաշնակցության գործիչները, ասում էր Իշխանյանը, միշտ մեղադրել են բոլոր նրանց, ովքեր փորձ են արել ընդհանրապես քննադատաբար վերաբերվել դեպի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը, ովքեր կասկածել են այդ «գորդյան հանգույցի» բարեհաջող լուծման նկատմամբ մինչև նրա անխուսափելի վախճանը, ովքեր փոքր-ինչ շեղ դիրք են բռնել գնահատման իրենց եղանակից ու մեթոդից, իսկ այդ եղանակն ու մեթոդը համաձայն դաշնակցության հիմնադիր պարագլուխ Քր. Միքայելյանի՝ կազմակերպված և ուժով կռվելու, Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դեմ բողոքելու, «վեց պետությունների երաշխավորված միջամտությամբ այդ կարգերը դեպի լավը փոխելու»[121] մեթոդն էր։ Եթե ռուսական դիվանագիտության բացասական ուղղության նկատմամբ դաշնակցության գաղափարախոսները հրապարակ եկան իրենց ուշացած և գործնական արժեքից զուրկ խոստովանությամբ, ապա Անգլիայի դիվանագիտության մասին նրանք բացեիբաց հանդես բերեցին քաղաքագիտական մի անծայր մոլորություն։ Բ. Իշխանյանին «վիշտ» էր պատճառում, որ «մեծ» մարդասեր «Գլադստոնի ազատ հայրենիքը դաշնակցականները դարձրին հայ ազատագրական ձգտումների և հուսավառ տենչերի մեծամեծ զորավիգն ու փրկարարը, այն Անգլիայի, որ Բեռլինի 61-րդ հոդվածով հայկական բարենորոգումների խնդիրը դարձրեց միջազգային «հոգացողության» առարկա, ուր որոտում էին փարիսեցի Գլադստոնի «հայասիրական» բարձրագոչ և կրակոտ ճառերը, ուր «մայիսյան բարենորոգումների» մեծամեծ նախաձեռնողը դարձյալ Անգլիան էր. չէ՞ որ նույնիսկ պահպանողական կուսակցության պարագլուխ լորդ Սոլսբերին 1896 թ. սպառնալից վերջնագիր էր հղել սուլթանին՝ ի նպաստ հայերի։ Ուրեմն ինչպե՞ս չոգևորվել, հետևաբար շարունակում է Իշխանյանը, հույսերի ու ակնկալությունների շենքեր չկառուցել, երախտագիտության բուռն զգացմունքներ չարտահայտել դեպի այդ «ասպետ» ժողովրդի «մարդասեր» քաղաքագետները, ինչպես չպնդել և չհամոզվել, որ 1896 թ. Անգլիան «անկեղծ կերպով կամեցել է փրկել խողխողվող հայ ժողովուրդը»[122]։

[121] Քր. Միքայելյան, Հեղափոխականի մտքերը, Երևան, 1990, էջ 53։
[122] Տե՛ս «Հառաջ», 1906, № 25։

Դաշնակցական գործիչները երբեք չկարողացան թափանցել ամպերից վեր սավառնող իրենց գաղտղությունների էության մեջ, Անգլիայի նկատմամբ սրտաբուխ իրենց զգացմունքներում գեթ մի անգամ հարց չէին տալիս, թե Անգլիան սեփական ազգային պետական շահեր ունի՞ Փոքր Ասիայում տեսնելու ազատ կամ ինքնավար Հայաստան, կամ գոնե իրականացած բարենորոգումները վայելող խաղաղ ու անվրդով արևմտահայություն։ Եթե այո՝ ինչպե՞ս, եթե ոչ՝ ինչո՞ւ։ Դաշնակցականները ուշացումով անգամ չկարողացան ըմբռնել, որ Անգլիայի «հայասեր» դիվանագիտության իսկական աղբյուրը և առաջին առաջմղիչ ուժը սկսած Բեռլինից եղել է այն պատմական կատաղի հակամարտությունը, որ ունի Անգլիան Փոքր Ասիայում և առհասարակ Թուրքիայում՝ ընդդեմ Ռուսաստանի։ Անգլիական դիվանագիտության ամեն մի «հայանպաստ» քայլը, արտահայտված լինի դա վերջնագրերով թե պառլամենտական ճառերով, եղել է շեշտակի հարված Ռուսաստանի դեմ։ Որքան Ռուսաստանը ձգտում էր առաջ շարժվել Մերձավոր Արևելքում իր արտաքին շահերի ծրագրած ուղիով, նույնքան էլ Անգլիան իր գաղութատիրական «նպատակների ճակատագրական անխուսափելիությամբ», որպես արբուն սահմանապահ, հսկում էր նրա քայլերը և խոչընդոտներ հարուցում նրա առաջ։ Կասկած չկա, որ ընդհանուր եվրոպական իմպերիալիստական տնտեսական շահերն ու քաղաքական ձգտումները թելադրում էին նաև Ֆրանսիային ու Գերմանիային, Ավստրո-Հունգարիային, հետագայում նաև ԱՄՆ-ին, ըստ հնարավորության արգելքների ու խոչընդոտների պարիսպ քաշել Ռուսաստանի առաջ՝ Բոսֆորի ափերից մինչև Փոքր Ասիայի անդրկովկասյան մերձավոր տարածքները։ Հակառուսական կերպարանք ստացած այդ միտումների արտահայտության և ծրագրերի պաշտպանության ու կենսագործման մենաշնորհը 20-րդ դարի առաջին զույգ տասնամյակում ստանձնել էր Անգլիան։

Վերլուծելով մեծ տերությունների իրական շահերի և ձգտումների նկատմամբ դաշնակցության դիրքորոշումը, Բ. Իշխանյանը գալիս է այն եզրակացության, որ այդ կուսակցության ղեկավարությունը չհասկացավ գլխավորը, այն է՝ տերություններից և ոչ մեկը չուներ իրական որևէ շահագրգռություն նպաստելու Հայկական հարցի լուծմանը՝ թեկուզ նվազագույն բարենորոգումների իրագործման տարբերակով։ Եվ «քանի իրերն ու երևույթները, — գրել է Բ. Իշխանյանը, — հասկանալու և գնահատելու համար դաշնակցությունը քննադատական ելակետ ընդունեց

բարոյական սկզբունքը* և իդեալիստական տենդենցը, այնքան էլ անըմբռնելի կմնա նրա համար եվրոպական պետությունների իրական քաղաքականության պատմական տենդենցիան Թուրքիայում։ Եվ քանի կշռոտնակե երկրորդ հանգամանքը, այնքան էլ ընդմիշտ սխալ ու ապարդյուն կլինի հայ հեղափոխական կազմակերպությունների գործունեության տակտիկը Տաճկաստանում և այնքան էլ «Հայկական հարցը» մի անորաշ մութ ու մշուշապատ ապագա կներկայացնե նրանց համար»[123]։

Բայց քննադատելով Հայկական հարցի լուծման դաշնակցական գործչակերպը, Բ. Իշխանյանը, Դ. Անանունի նման, չկարողացավ գտնել հաջողության հասնելու ուղին։ Նա այն կարծիքին էր, որ արևմտահայության ազգային-ազատագրական գործուն պայքարը դաշնակցության ղեկավարությամբ զուրկ է հաջողության հեռանկարից և ուժերի զուր վատնում է։ Ըստ նրա, արևմտահայերը պետք է ընդունեին և ընտրեին պայքարի պասիվ ձևեր, կազմակերպվեին, համատարած դարձնեին ազատագրության գաղափարը, համերաշխեին շրջապատող ժողովուրդների հետ, իրենց ապագան տեսնեին համաթուրքական հեղափոխական շարժման հաջողություններում։ Դյուրին է նկատել, որ դա ևս իրական կյանքից բխող և հարցը փակուղուց հանող պատասխան չէր, այլ, թերևս անիրագործելի մի տեսակետ, որ ավելի շատ աղերսներ ուներ ազգային հարցի լուծման բոլշևիկյան մտակառույցների հետ։

Մինչհոկտեմբերյան շրջանում լույս տեսան նաև շատ աշխատություններ, որոնց նպատակն էր ժողովրդի շրջանում հանրամատչելի դարձնել Հայկական հարցի էությունը, ցույց տալ նրա ընթացքի շրջափուլերը և յուրաքանչյուր շրջափուլի դառնաղետ դասերը։ Այս բնույթի աշխատանքներից իր գիտականությամբ և մատչելիությամբ առանձնանում է խոշոր լեզվաբան Հրաչյա Աճառյանի «Տաճկահայ հարցի պատմությունը»։ Աճառյանը նպատակ է ունեցել ցույց տալ Հայկական հարցի ծագումն ու արծարծումների հետագա ընթացքը, մեծ տերությունների քաղաքականության փոխակերպումների դրսևորումները։ Այստեղ չկան պատմական դեպքերի մանրամասն նկարագրություններ ու «հայասեր» դեմքերի ներբողներ։ Հարցի էությունը ժողովրդի լայն զանգվածներին մատչելի դարձնելու համար ուշագրավ են ռուս անգլիական հակասությունները Թուրքիայի կողմից իր օգտին ծառայեցնելու վերաբերյալ Աճառյանի գիտական պարզ շեշտադրումները։

«1876 թվականից, — գրում է Աճառյանը, — տաճկաց պետությունը ապրել է Ռուսաստանի և Անգլիայի փոխադարձ թշնամության շնորհիվ. ամեն մի քայլ, որ Ռուսաստանը անում էր հօգուտ Տաճկաստանում տառապող քրիստոնյա ժողովուրդների՝ համարվում էր Անգլիայի կողմից իբրև աշխարհակալական ձգտում և արգելքի էր հանդիպում, և փոխադարձաբար։ Հայկական հարցի այնքան ձգձգվելու և հայկական այնքան ահռելի կոտորածների միակ պատճառը ռուս-անգլիական թշնամությունն էր։

Ռևելի տեսակցությունը եկավ ոչնչացնելու այդ պատճառները։ Տաճիկները զգացին իրենց փափուկ դրությունը. զգացին, որ այլևս իրենց օրերը հաշված են. պետք էր փրկել պետությունը և այդ փրկությունը ներքին բարեկարգությունն էր՝ բոլոր ժողովուրդների միահամուռ ուժերով»[124]։

Այնուհետև Աճառյանը կարևորում է մի ժամանակ բարեշրջական երազներով տարված երիտթուրքերի «մի ոստյունով» հեղափոխության մեջ ընդգրկվելը, թե ինչպես «Ահմեդ Ռիզան անձամբ գնաց Ծնև, խրնդրելու համար դաշնակցականների գործակցությունը» և վերջիններիս «նախաձեռնությամբ» Փարիզում տեղի ունեցած օսմանյան երկրորդ համաժողովի իրողությունը[125]։ Աճառյանը չեզոք դիրքորոշում ունի, նա չի մեկնաբանում կատարվածը։

Հայկական հարցի պարբերացման առաջին փորձը կատարել է Հր. Աճառյանը։ Նա Տաճկահայոց հարցի պատմությունը ամփոփում է հետևյալ ձևով.

«Ա շրջան. — Տաճկաստանի ձեռքին տառապող հայերը՝ որոշ քաղաքական հասունության հասնելուց հետո՝ դիմում են **Օսմանյան կառավարության** և նրա ձեռքով հույս ունեին բարեկարգելու իրենց երկիրը (1870)։

Բ շրջան. — Օսմանյան կառավարությունը խաբում է հայերին և նրանք դիմում են Ռուսաստանի օգնության. տրվում է նրանց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը (1878)։

Գ շրջան. — Անգլիո դավով ջնջվում է այս դաշնագրությունը և Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածով հայերը անցնում են եվրոպական տերությունների, հատկապես Անգլիո պաշտպանության տակ (1878)։

---

* Բ. Իշխանյանը նկատի ուներ Քր. Միքայելյանի հետևյալ բանաձևումը՝ «Թո՛ղ դրշմեն ուրեմն պատմությունը ժամանակակից եվրոպայի ճակատին հրեշավոր դատաճանության հավիտենական արատը, որից սակայն միշտ ազատ կմնա հայ երիտասարդության այն փոքրամասնությունը, որ բնտրեց կռվի փշոտ դաշտը...» (Քր. Միքայելյան, Ամբոխային տրամաբանություն, Երևան, 1990, էջ 75)։

123 Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 99—100։

124 Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր-Նախիջևան, 1915, էջ 54։

125 Տե՛ս նույն տեղում։

Դ շրջան. — Եվրոպական դիվանագիտությունից ոչինչ չստանալով՝ հայերը դիմում են **ապստամբության.** ստացվում է Մայիսյան ծրագիրը *(1895)*, որը խեղդվում է ընդհանուր հայկական կոտորածների մեջ։

Ե շրջան. — Տեսնելով, որ ապստամբությունն էլ չհաջողվեց, հայերը նորից դիմում են Տաճկաց և հույս դնում **Օսմանյան Սահմանադրական** կառավարության վրա *(1908)*։

Զ շրջան. — Սահմանադրական Թուրքիան էլ է խաբում հայերին և սրանք երկրորդ անգամ դիմում են Ռուսաստանին՝ որի պաշտպանությամբ ստանում են **Համաձայնագիրը** *(1914)*։

Է շրջան. — Համաշխարհային պատերազմից օգուտ քաղելով Տաճկաց կառավարությունը ջնջում է **Համաձայնագիրը.** հայերը հարում են Եոյակ Համաձայնության և նոցա հետ միասին կռվելով՝ պիտի ստանան վերջապես այն, որի համար աշխատում և արյուն են թափում **Քառասուն և հինգ** տարի ի վեր՝ Տաճկահայաստանի ինքնավարությունը»[126]։

Իր թերի կողմերով հանդերձ, լեզվաբան Աճառյանի կողմից Հայկական հարցի պատմության 1915 թ. այս պարբերացումն այսօր որոշ պատմաբանների համար օրինակ կարող է ծառայել։

Հայկական հարցի լուծման իր առաջադրած հայցադրումներով ու հայրենասերի մտորումներով, համառուսաստանյան միջավայրում հարցի շուրջը հայանպաստ քարոզչության կազմակերպման ուղղությամբ 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ հասարակական մտքի ու պատմագրության մեջ անանց տեղ ունի Ալեքսեյ Ջիվելեգովը *(1875—1952)*։ Լայն ընդգրկումների գիտնական լինելով, նա կարողացավ երբեք մեջքով չշրջվել դեպի քաղաքականությունը և շրջանցել հրատապ, այդ թվում առաջին հերթին հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված կենսական հարցերը։ Իր գրչով ու կազմակերպական տաղանդով նա հայ ժողովրդի համար ամենածանր, ամենապատասխանատու պահին ծառայեց նրա կարիքներին ու վշտերի հնարավոր մեղմացմանը, հանուն իր ժողովրդի, հանուն ճշմարտության բացահայտման, հանուն արդար գործի հաղթանակի, Ռուսաստանի ազնիվ մարդկանց հետ կանգնեց միևնույն շարքում։ Նա վառ ու կրակոտ հրապարակախոսի իր ձիրքը ի սպաս դրեց Հայկական հարցի շուրջը նպաստավոր հասարակական կարծիքի մշակման ուղղությամբ։ Ջիվելեգովը պատկանում էր սակավաթիվ այն հայ քաղաքագետների, հրապարակախոսների ու պատմաբանների թվին, ով մշտապես, առանց ընդհատումների, ուսումնասիրում էր երիտթուրքերի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, խորապես թափանցում հայ ժողովրդի նկատմամբ մարդատյաց այդ քաղաքականության էության մեջ, ուշի ուշով հետևում էր Հայկական հարցում թուրքական պետականության գլխավոր ուղենիշներին՝ սկսած աբդուլհամիդյան «զուլումի» քաղաքականության ժամանակներից մինչև քեմալիզմը։

1906 թ. Մոսկվայի «Տրուդ ի վոլյա» հրատարակչությունը լույս ընծայեց Ալ. Ջիվելեգովի «Հայերը Ռուսաստանում» ճանաչողական նշանակություն ունեցող գիրքը, որը նրա քաղաքագիտական հայագիտության առաջին հրապարակումն էր։ Ինչպես նշում է հեղինակն ինքը, գիրքը գրվել է 1905 թվականի հոկտեմբերին, առաջին ռուսական հեղափոխության դաժան իրադարձությունների օրերին։ Այդ գրքում Ջիվելեգովը ռուս ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի նորադարյան պատմությանը, ռուս ժողովրդի հետ նրա ունեցած պատմական կապերին։

Անդրկովկասում, ազգային հարցի արման պայմաններում, երբ Ջիվելեգովի արտահայտությամբ, ցարական իշխանությունները հրահրում էին ազգամիջյան ջարդեր, ինքը չէր կարող մնալ անտարբեր։ Պատմական փաստերով նա ցույց էր տալիս հետադիմության սատրապներին, որ ռուս-թուրքական բոլոր պատերազմներում հայերն օժանդակել են ռուսներին և վերջիններս այն գնահատել են ըստ արժանվույն։ Ռուս-թուրքական 19-րդ դարի վերջին պատերազմում ևս հայերը ռուսներին դիմավորեցին եկեղեցական զոհաբերություններով, աղ ու հացով։ Նրանք համոզված էին, որ ահա թուրքական տիրապետությունը վերջանում է, և իրենք շուտով դառնում են ռուսահպատակներ։

Ջիվելեգովը ընթերցողին հիշեցնում էր Բեռլինի կոնգրեսի, Բիքոնսֆիլդի ու Բիսմարկի խաղացած ատար ու հանցագործ դերի մասին, նաև այն մասին, որ սուլթանը սկսել էր վրեժ լուծել հայերից՝ ռուսներին ցույց տված աջակցության համար, կազմակերպելով նոր ջարդեր և 1894—1895 թթ. հայերի զանգվածային կոտորածը[127]։

1907 թ. Պետերբուրգում հրատարակվում է Գր. Ջանշիևի «Մեծ բարեփոխումների ժամանակաշրջանը» գիրքը։ Ալ. Ջիվելեգովն է դրել այդ*

[126] Նույն տեղում, էջ 79։

[127] Տե՛ս А. Дживелегов, Армяне в России, М., 1906, стр. 89.

* Գր. Ջանշյան—Ջանշիևը *(1851—1900)* ավարտել էր Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը 1874 թվականին։ 1860-ական թվականների բարեփոխումների ջերմ կողմնակից էր։ Սասունի 1894 թ. կոտորածների ժամանակ Ջանշյանը հանդես եկավ կոտորածներից փրկվածներին օգնություն կազմակերպելու նախաձեռնությամբ

արժեքավոր գրքի առաջաբանը, ուր հատկապես բարձր է գնահատել արևմտահայության իրավունքների պաշտպանության գործում Զանշյան գիտնականի ծառայությունը։

1915 թ. լույս է տեսնում Ալ. Ջիվելեգովի «Թուրքական Հայաստանի ապագան» մենագրությունը։ Դա Հայկական հարցի դիվանագիտական պատմության մասին բազմահմուտ հեղինակի կողմից գրված մի հանգամանալից ակնարկ էր։ Գրքի շարադրանքը սկսվում է Բեռլինի կոնգրեսում Մ. Խրիմյանի գործունեությամբ, ուր ցույց է տրվում արևմտյան դիվանագիտության հանդեպ «արցունքի լեզվի» անզորությունը։ Ուշագրավ է գիտնականի այն դիտարկումը, թե երբ Բեռլինի կոնգրեսում Բիքոնսֆիլդը Ռուսաստանից ետ խլեց Բայազետն ու Ալաշկերտի հովիտը, որը Թուրքիան զիջել էր Սան-Ստեֆանոյով, բացահայտ էր դառնում, որ Հայաստանը վերածվում էր քաղաքական մեծ խաղի իսկական օբյեկտի։ Այնուհետև Ջիվելեգովը գտնում էր, որ անհնար է վերջ տալ թուրքական վայրագություններին՝ հուսալով պաշտոնական Եվրոպայի համակրանքն ու աջակցությունը։ Չէ՞ որ սուլթանը շատ լավ գիտեր, գրում է Ջիվելեգովը, որ Առաջավոր Ասիայի լեռներում ցանուցիր, մի բուռ հայ ժողովրդին կարեկցելու համար Եվրոպան իրեն տհաճությունները չի պատճառի, քանզի ոչ թե «նուիրագավան քրիստոնյա ժողովրդի հանդեպ կարեկցությունն է որոշում Եվրոպայի վերաբերմունքը դեպի հայերը, այլ կապիտալը, շահը»[128]։

Ալ. Ջիվելեգովը մի պահ ավելորդ լավատեսությամբ համոզված էր, թե Առաջին աշխարհամարտի արդյունքներով կլուծվեն բոլոր այն հարցերը, որոնք տեղ են գտել 1914 թվականի հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի մեջ։ Նրա լավատեսությունը խարսխվում էր այն խաբուսիկ կամ չարաբաստիկ իրատեսության վրա, թե Թուրքիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պարտությունից և հաղթողների ողորմածությանը հանձնվելուց հետո, Օսմանյան կայսրության տարածքի վրա ստեղծվելիք ինքնավար մյուս կազմավորումների շարքում արժանի իր տեղը կունենա նաև Հայաստանի ինքնավարությունը։ Կյանքը ցույց

և դարձավ այդ գործի անմիջական կազմակերպիչը։ 1897—1898 թթ. նա կազմել և խմբագրել է «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն։ Ավելի քան քսան տարի եղել է «Ռուսկիե վեդոմոստի» թերթի աշխատակիցն ու խմբագրական կոլեգիայի անդամը։ Նրա հոդվածները տպագրվել են «Ռուսկայա միսլ», «Վեստնիկ Եվրոպի», «Ռուսկայա ստարինա», «Ռուսկոե բոգատստվո», «Յուրիդիչեսկիե օրոգրեննիե» ամսագրերում։ Նրա գրչին են պատկանում «Հայկական հարցը Թուրքիայում», «Դատական բարենորոգումների հիմունքները» և այլ ուսումնասիրություններ։

[128] А. Дживелегов, Будущее Армении, М., 1911, стр. 10.

տվեց, սակայն, որ Ջիվելեգովը և իր նման լավատեսները չկարողացան նշմարել գալիքի տխուր հեռապատկերները։

Ջիվելեգովը, Մեծ եղեռնից հետո, ի դեմս Ռուսաստանի, տեսնում էր արյունաքամ հայ ժողովրդի պաշտպանին։ Նա 1916 թ. «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթի կազմակերպիչներից էր, ապա՝ խմբագիրը։ Իր մեծ հեղինակությամբ և եռանդով նա շաբաթաթերթի շուրջն էր համախմբել ռուս մտավորականության լավագույն ներկայացուցիչներին, որոնք հանդես էին գալիս հայ ժողովրդի շահերի, Հայկական հարցի լուծման պաշտպանությամբ։

1916 թ. գրած «Հայաստանի ճակատագիրը» հոդվածում Ջիվելեգովը դատապարտում էր երիտթուրքերի քաղաքականությունը, տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում, թուրքահայերի փրկությունը տեսնում թուրք-գերմանական խմբակցության պարտության մեջ։ Նա Արևմտյան Հայաստանի ինքնավարության ջերմ պաշտպան էր։

1916 թ. «Արմյանսկի վեստնիկի» սեպտեմբերյան առաջնորդներից մեկում նա գրում էր, որ ոչ մի սպառնալից ակնարկ և ոչ մի քաղաքական անբարեհնպաստ վիճակ մեզ չեն կարող ստիպել հրաժարվելու այն մտքից, որպեսզի հայ ժողովրդի ապագա ճակատագրի միակ ճիշտ որոշումը համարենք ինքնավարությունը[129]։

Այսօր էլ շատ արդիական է Ջիվելեգովի «Նեոթուրանիզմը և Հայաստանը» հոդվածը։ «Նեոթուրանիզմը որպես քաղաքական գաղափար, — գրել է նա, — իր առջև նպատակ ունի սերտ դաշինք ստեղծել բոլոր թուրքական ցեղերի միջև՝ առանց հավատի և լեզվի տարբերության, իսկ որպես ազգային գաղափար պետք է ձգտի թուրանական ծագման բոլոր թուրքական ցեղերի ազգային-մշակութային սերտ միավորման։ Դա կհանդիսանա առաջին պայմանը քաղաքական միավորման այս կամ այն ձևի մեջ»։ Պանթուրանիզմի ծրագրի ուսումնասիրությունը նրան բերել է այն համոզման, որ Բարձր Դռան բոլոր հարաբերությունները հայ ժողովրդի հետ, նրա բոլոր միջոցառումները Փոքր Ասիայի հայկական երկրամասերում 19-րդ դարի սկզբից մինչև ներկա ժամանակները հանգել են մի նպատակի՝ մեթոդաբար կյանքում իրագործել հայ ժողովրդի ոչնչացման կանխորոշված նախագիծը, մի «անհանգիստ ժողովուրդ», որն իր գոյությամբ քաղաքական մղձավանջ է դարձել «քաղաքակրթվող» թուրք կառավարողների համար։ Որովհետև Հայաստանն ու Կիլիկիան իրենց

[129] Տե՛ս **А. Дживелегов**, Неотуранизм и Армения, «Армянский вестник», 1916, № 41, стр. 2—3.

աշխարհագրական դիրքով խիստ տարանջատում էին Թուրքական Անատոլիան մուսուլմանական Միջագետքից և Իրանից...[130]։

Հոդվածագրի այս ընդհանրացնող եզրակացությունը համահունչ էր 1890-ական թվականներին Թուրքիայում Ֆրանսիայի դեսպանի Փարիզ ուղարկած հեռագրից Ջիվելեգովի մեջ բերած հետևյալ խոսքերի հետ. «Թուրքիան նպատակ ունի բնաջնջել Հայաստանը Կիլիկիայի հետ, որը սուր կերպով սեպի նման խրվել է մուսուլմանական Արևելքի հենց սրտում»[131]։

Ֆրանսիական դեսպանի և հայ գիտնականի խոսքերն առավել քան այժմեական են այսօր, երբ ամեն ինչ արվում է ժխտելու ցեղասպանությունը և նրա նախապես մշակված ծրագիրը։ «Վերջապես եկավ վաղուց սպասված հեղափոխությունը... Ռուսաստանն այս օրերին ապրում է առանց ցարի, ազատ և ուրախ շնչում է ազատության օդը և կռում է իր ապագան», — այսպիսի խոսքերով Ջիվելեգովը դիմավորեց Փետրվարյան հեղափոխությունը։ Նա հույս ուներ, որ «նորագ» Ռուսաստանում պետք է թագավորի ազատությունն ու հավասարությունը բոլոր ժողովուրդների համար, հեղափոխության հետ կապելով նաև Հայկական հարցի լուծումը։ Հայ ժողովուրդը ողջունում է հեղափոխությունը և հույս ունի, որ Թուրքական Հայաստանը պետք է քաղաքական ինքնորոշման իրավունք ստանա։ Հայաստանի ինքնավարության պահանջը մաքուր պահանջ է, ինչպես ձյունը Մասիսի գագաթներին։ Ազատ Ռուսաստանը պետք է մաքրի գարշելի ղրպարտության, անբարյացակամ չարակամության, շովինիստական նախապաշարումների կուտակված կեղտերը և ճանաչի հայ ժողովրդի ինքնավարությունը Թուրքիայում։ Այդ նպատակի իրագործման համար գիտնականն անհրաժեշտ էր համարում առաջին հերթին հանել բոլոր այն սահմանափակումները, որոնք դժվարացնում էին թուրքահայ գաղթականների վերադարձը ռուսական զորքերի կողմից ազատագրված իրենց հայրենիքը։ Նա առաջնահերթ խնդիր էր համարում «Թուրքահպատակ հայերի հետապնդումները, որոնք դեռ մինչև պատերազմը հաստատվել էին Ռուսաստանում»։ Իր «Ռուսական հեղափոխությունը և Հայաստանը» հոդվածը Ջիվելեգովը վերջացնում է հետևյալ տողերով. «Կեցցե՛ նոր հզոր Ռուսաստանը, և թող նրանում հաստատվի ազգային արդարության թագավորությունը»[132]։

[130] *Տե՛ս նույն տեղում։*
[131] *Նույն տեղում։*
[132] **А. Дживелегов**, Русская революция и Армения, «Армянский вестник», 1917, № 10—11, стр. 3.

1917 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի Հանրապետության խորհրդում ունեցած իր ճառում Ջիվելեգովը քննադատում էր ժամանակավոր կառավարության և նրա արտաքին գործերի նախարարության «տարօրինակ տատանումները» Հայկական հարցում, որը նա կապում էր ցարական արտաքին գործերի նախարար Սազոնովի «պատշաճ ուղի» չդրտնելու հակահայկական քաղաքականության հետ։

«Դեմոկրատական Ռուսաստանից — ասում էր նա, — հայերը սպասում են այլ վերաբերմունք, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայերը դեմոկրատական Ռուսաստանից այլ քաղաքականություն են սպասում»։ Նշելով, որ դեմոկրատական Ռուսաստանը լուծել է «լեհական հարցը», Ջիվելեգովը գտնում էր, որ ռուս ժողովրդի պարտքը և ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայաբար պահանջում են, որպեսզի Հայաստանի հարցը դառնա Ռուսաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ուշադրության առարկան[133], այն չթողնվի բախտի քմահաճույքին։

Ջիվելեգովը իրավունք ուներ հարցին այդպես մոտենալու, որովհետև տակավին 1916 թ. փետրվարին «Ա. Տրեպովի հայտարարության առիթով» իր հոդվածում պատերազմում հաղթող տերություններից պահանջում էր Թուրքիայից անջատել Միջագետքը, Արաբիան, Սիրիան, Հայաստանը, Կիլիկիան, Լազիստանը և փոքրասիական ծովեզրի արևմտյան ափը։ Որովհետև եվրոպական հաղթող պետություններին հազիվ թե հաջողվի Թուրքիան ենթարկել այնպիսի բաժանման, որ նա դադարի որպես պետություն գոյություն ունենալուց, ուստի վերոհիշյալ կոմբինացիան էլ Ջիվելեգովին հարմար էր թվում գալիք Հայաստանի համար, քանի որ դրանից հետո Արևմտյան Անատոլիայում 7—8 միլիոն թուրքերով բնակեցված Թուրքիան վտանգ չի ներկայացնի հարևանների համար և այժմ, և ապագայում[134]։

Ինչպիսի՞ն էր պատկերացնում Ջիվելեգովը ինքնավար Հայաստանի քաղաքական կարգավիճակը 1917 թ. վերջի աշնանը։ Նա այն համոզմունքն ուներ, որ Թուրքական Հայաստանի լիակատար ինքնավարությունը Հայկական հարցի միակ իրական և հնարավոր լուծումն է։ Նրա կարծիքով ինքնավար Հայաստանը պետք է զբաղեցներ հայկական վեց վիլայեթները։ Միաժամանակ այդ վեց վիլայեթներից պետք է անջատվեին այն ծայրամասերը, որոնք ռուս-թուրքական նախավերջին պատերազմից հե-

[133] *Տե՛ս* **А. Дживелегов**, Речь в Совете Республики 20 октября 1917 г., «Армянский вестник», 1917, № 43—44, стр. 4—5.
[134] *Տե՛ս* Заявление Трепова и армянский вопрос, «Армянский вестник», 1916, № 44, стр. 1—2.

տո միակցվել էին նրանց՝ նպատակ ունենալով հօգուտ թուրքերի փոխել ազգարնակչական հարաբերակցությունը։ Ջիվելեգովը Հայաստանի ինքնավարության ստեղծման և գոյատևման իրական միակ երաշխիքը տեսնում էր Ռուսաստանի Հանրապետության հովանավորության ներքո։ Նա գտնում էր, որ ինքնավար Հայաստանի մանդատը պետք է հանձնվի Ռուսաստանին[135]։

Ջիվելեգովի ցանկություններն ու ջանքերն ապարդյուն անցան։ Պատմությունը հակառակ գնաց գիտնականի կանխատեսումներին։ Հայ ժողովրդի հայրենասեր զավակի շատ չափավոր պահանջն անգամ այդպես էլ մնաց անիրագործելի երազ։

Հայկական հարցի մասին մինչխորհրդային պատմագիտական գրականության մեջ անանց արժեք ունեն Նիկողայոս Ադոնցի (1871—1942) «Հայկական հարցի պատմական հիմքը և Թուրքիայի անկումը», «Թուրքիայի նոտան և Տաճկահայաստանը», «Հայկական հարցը և գերմանական պլանները» (ռուսերեն, 1918) ծավալուն հոդվածները։ Անհերքելի փաստերով և գիտական խոր վերլուծումներով, հայրենասերի, բանավիճողի կրքոտությամբ ջախջախիչ քննադատության ենթարկելով բոլոր նրանց այն վերապահումները, որոնք հավասարապես օգտագործում էին և թուրքական կառավարող շրջանները, և մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչները Արևմտյան Հայաստանում հայերի թվաքանակի և տոկոսային հարաբերակցության մասին ավյալները կեղծելու համար, Ադոնցը հիմնավորեց, որ Արևմտյան Հայաստանը պետք է հայերինը լինի, որ անգամ Մեծ եղեռնից հետո հայերն այնքան նշանակալի թիվ են կազմում աշխարհում, որ կարող են զբաղեցնել իրենց հայրենիքի՝ թուրքերի ավերակած բոլոր տարածքները և ապահովել երկրի կենսագործունեությունը։ Միջնադարյան Հայաստանի և Բյուզանդիայի պատմության խոշոր մասնագետը իր այս աշխատություններով մեր առջև հառնում է իբրև մի անաչառ հայրենասեր, որը գիտական օբյեկտիվությամբ հիմնավորեց հայ ժողովրդի արդար դատը, որ շարունակում էր մնալ քաղաքակիրթ աշխարհի ճակատին դրոշմված մի խարան։ Այսօր էլ արդիական են հնչում քաղաքացի գիտնականի խոսքերը, երբ նա, ըստ էության, գնահատում է հայ ժողովրդի նկատմամբ դարեր շարունակ թուրքական վանդալիզմի ողջ էությունը։ «Անմարդկային դաժանություններն ու կոտորածները, որ գործեցին թուրքերը հայերի նկատմամբ այս պատերազմի ընթացքում, — գրում էր Ադոնցը, — տեղի էին ունենում նաև նախորդ պատերազմների ընթացքում, թեև ավելի փոքր մասշտա-

[135] Տե՛ս «Армянский вестник», 1917, № 43—44, стр. 4—5.

ներով... Երբ պահը գա մաքրելու հաշիվները Թուրքիայի հետ և բարձրացվի Հայաստանի անկախության հարցը, միայն պարզ արդարություն կլինի թույլատրել հայերին լինելու իրենց և իրենց երկրի տերը, առանց հաշվի առնելու այն ամենը, որ ձեռք են բերել թուրքերը երկրի էթնիկական բնույթը բռնի կերպով փոխելու գործում»[136]։

Միաժամանակ Ադոնցը հերքեց Եվրոպայում տարածված այն կարծիքը, ըստ որի Հայկական հարցը հանդիսանում է Ռուսաստանի դիվանագիտական դավ, ցույց տվեց, որ Հայկական հարցի ծագումը պայմանավորված էր Օսմանյան կայսրության մեջ հայերի տնտեսական և քաղաքական անիրավական վիճակով, թուրքական լծից ազատագրվելու նրանց ձգտումով։ Գիտնականը կուռ տրամաբանությամբ հիմնավորեց, որ եվրոպական տերությունները հենց դրանից էլ օգտվել են իրենց կամքը Թուրքիային թելադրելու համար։

Մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության բոլոր շատ թե քիչ երևելի դեմքերը հանգել են ճշմարիտ այն գաղափարին, որ անցյալի ուսումնասիրությունը պետք է նպաստի ժողովրդի արդի զարգացման կարիքներին ու խնդիրներին, որ հանուն ներկայի ճիշտ գործելակերպի հարկավոր է անշեղ գնահատել պատմական դեպքերն ու երևույթները։

Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման, Հայկական հարցի ու ցեղասպանության փոխկապակցված եռմիասնության իրենց աշխատություններում այս ելակետից էին քննում Հ. Առաքելյանը «Թիֆլիսից-Դիլման։ Տաճկական Հայաստան. ուղեգրություն Թուրքաց Հայաստանում» (Թիֆլիս, 1915), Արամ Անտոնյանը «Այն սև օրերուն» (Բոստոն, 1919), Հ. Թերզյանը «Կիլիկիո աղետը» (Կ. Պոլիս, 1912), Եդ. Թոփչյանը «Երիտասարդ Թուրքիան և հայերը» (մասն առաջին, Թիֆլիս, 1909), Սապահ Գյուլյանը «Պատասխանատուները» (Փրավիտենս, 1916), Դր. Չալխուշյանը «Հայկական խնդիրը և հայկական կոտորածները Ռուսաստանում» (ռուսերեն, Թիֆլիս, 1905), Գ. Մելիք-Կարակոզովը «Դերմանիայի գործունեությունը Թուրքիայում 1895—1897 թվականների մեծ կոտորածներից հետո» (ռուսերեն, Թիֆլիս, 1915), Ա.—Դոն «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» (Երևան, 1912), «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին» (Երևան, 1917) և ուրիշներ։ Կարելի է հիշատակել շատ այլ անուններ, բայց մենք գա չենք անում դիտմամբ, նախ՝ ավելորդ չծանրաբեռնելու ընթերցողի հիշողությունը և, երկրորդ,

[136] **Նիկողայոս Ադոնց**, Հայկական հարցի լուծման շուրջ, (անգլերենից թարգմանեց, հրատարակման պատրաստեց և առաջաբանը գրեց պրոֆ. Վ. Դիլոյանը), Երևան, 1989, էջ 104—105։

որ ավելի կարևոր է՝ նրանցից շատերն անցել, սահել են իրադարձությունների և երևույթների վրայով, հայտնել վաղուց կրկնված դատողություններ և պարզունակ, հաճախ՝ ինքնաբուխ, հոսոսական մտքեր, չեն կարողացել թափանցել Հայկական հարցի լուծմանը համակիր ու հակառակորդ ուժերի հակամարտի բարդ ու հակասական աշխարհը։

Հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքների ու վայրէջքների կողքով երբեք անտարբեր չի անցել մեր հասարակական-քաղաքական մտքի ամենազգայուն կրողը՝ գրականությունը։ 19-րդ դարի վերջերին սուլթանական կառավարության և եվրոպական տերությունների փոխշահավետ համագործակցությամբ փակուղի մտած Հայկական հարցը պատմաքննական մտորումների առարկա դարձավ դարաշրջանի հայ գրականության կողմից, դարաշրջան, որի առաջին տասնամյակը կովկասահայ առաջադեմ մտավորականության համախմբման տարիներ եղան։ Հենց այդ ժամանակաշրջանում ստեղծվեց և գործեց «Վերնատուն» գրական խմբակը՝ Թիֆլիսի հայկական հոգևոր կյանքի կենտրոնը, որի «վառվռուն բուխարիկի» շուրջը մեծն Թումանյանի գլխավորությամբ հավաքվում էին Ղ. Աղայանը և Պ. Պռոշյանը, Լ. Շանթն ու Ավ. Ահարոնյանը, Վր. Փափազյանն ու Շիրվանզադեն, Դ. Դեմիրճյանն ու Լեոն, Վ. Տերյանն ու Ավ. Իսահակյանը և ուրիշներ։ Ճանաչված հայ գրողները, որոնք կարևոր մասնակցություն էին բերել հայ կրթամշակութային կյանքի վրա ցարական գրոհները ևս մղելուն, հաշիվ ունեին, որ աստիճանաբար ճանապարհ հարթող առաջադիմության ու դեմոկրատիայի ալիքը կհասնի նաև Արևմտյան Հայաստան և կանցկացվեն սահմանադրական վերափոխումներ, որ եվրոպան թերևս այս անգամ կպարտադրի Թուրքիային ճանաչելու և գործադրելու հայկական ինքնավարությունը կամ բարեփոխումները։

1908 թ. հուլիսի 10-ին, երբ Օսմանյան կայսրությունը թևակոխեց իր պատմության անկյունադարձային շրջափուլերից մեկը, երբ Իթթիհատը Թուրքիան սահմանադրական պետություն հռչակեց՝ «ազատություն» և «իրավահավասարություն» շնորհելով երկրում ապրող բոլոր ազգերին, ժամանակի հայ գրականության մեծերից Գր. Զոհրապը «վառվռուն բուխարիկից» հեռու՝ Փարիզից անմիջապես Կ. Պոլիս վերադարձավ և լծվեց ազգային ուժերի միավորման օգտին ծառայելու սուրբ գործին։ Տակավին չգիտեր, որ միապետության մայրամուտը արյունոտ հրացոլքով պիտի լուսավորի այն ուղին, որով պիտի անցնեին իր «բարեկամ» երիտթուրք սահմանադրականները։ Համիդյան վարչակարգը մերկացնողը և երիտթուրքերի սահմանադրությամբ ոգևորվողը Ադանայի արյունահեղությունից հետո համոզվեց, որ «Օսմանյան սահմանադրության հռչակումով երևան եկած հեղափոխությունը կատարյալ գործ մը ըլլալն հեռի է»[147]։

Գր. Զոհրապը ծաղրի էր ենթարկում երիտթուրքերի կողմից ոչ թուրք ժողովուրդներին թուրքացնելու որդեգրած քաղաքականությունը, մերկացնում էր նրանց շովինիստական քաղաքականության անհեռանկարայնությունը։ Նա Կ. Պոլսի ռուսական դեսպանության աշխատողներին պարզ հայտնում էր արևմտահայությանն սպասվող վերահաս ագետի մասին, իսկ դեսպան Մ. Գիրսին 1912 թ. նոյեմբերին ուղղակի ասում էր. «Հայ ժողովուրդը այժմ չի տեսնում այլ ելք, բացի Ռուսաստանին դիմելուց, որը միայն կարող է փրկել նրան սարսափելի կացությունից», որ «հայ ժողովուրդը իրականում կորցրել է իր հավատը թուրքական բարենորոգումների հանդեպ. անգամ եթե այն լինի եվրոպական վերահսկողության տակ», որ «հայ ժողովուրդը կարող է փրկվել ավելի արմատական միջոցառումով, այն է՝ հայկական նահանգների ռուսական օկուպացումով, բնդ որում ոչ թե ժամանակավոր, այլ մշտական օկուպացումով»[138]։

Եվրոպայի հասարակայնությանը Հայկական հարցին ավելի հանգամանորեն ծանոթացնելու նպատակով, Գր. Զոհրապը 1913 թ. Փարիզում ֆրանսերեն լույս ընծայեց «Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ» վերտառությամբ գիրքը։ Ար. Զոպանյանին տված նամակում Զոհրապը խնդրում էր, որ այն հրատարակվի խիստ գաղտնի և ֆրանսիացու ազգանունով։ Ար. Զոպանյանը կատարում է գրողի խնդրանքը և գիրքը լույս է տեսնում Մարսել Լևարթ հեղինակային անվամբ։ Զոհրապի այս աշխատությունը միայն 1973 թ. հայերեն թարգմանվեց և հրատարակվեց Բեյրութում։ Հետագայում Ար. Զոպանյանը բացելով սուլթանական կառավարության դեմ Գր. Զոհրապի գաղտնի գործունեության վարագույրը, գրել է, որ գիրքը տպագրվելուց հետո ազգային պատվիրակությունն այն ուղարկեց ամբողջ եվրոպական և ամերիկյան մամուլին։ Իր փաստացի, համոզիչ և հստակ պարունակությամբ և առաջադրած գրույթի ճշմարտացիությունը պայծառ կերպով ապացուցող փաստաթղթերով այդ գիրքը ոչ միայն Հայկական հարցի լուծման անվիճելի պահանջն է դնում, այլև ցույց է տալիս, որ այդ հարցի լուծումը Թուրքիայի շահերից է բխում...Ոչ ոք չի մոռացել, որ գրքի հեղինակը Զոհրապն է, շարունակում է Զոպանյանը, նույնիսկ Պողոս Նուբար փաշան։ «Չեմ կարծեր, սակայն, որ թուրքերը դիտցած ըլլան այդ գրքույկին հեղինակը Զոհրապն ըլլալը, ինչպես և որևէ տեղեկություն ունեցած ըլլան բարենորոգման հարցին

[147] «Սուրհանդակ», Կ. Պոլիս, 1908, էջ 56։

[138] Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М. Г. Нерсисяна, Е., 1966, стр. 214.

համար հայկական գործունեության մեջ անոր ունեցած մասնակցության վրա, դիտեին, որ ան «լավ հայ» է, կկասկածեին անկից, բայց անոր անհայտ արարքներուն անծանոթ էին»[139]։

Լինելով ռուսական դեսպանատան իրավագետ խորհրդատու, Գր. Զոհրապը ռուս դիվանագետներին մեծ օգնություն է ցույց տվել բարենորոգումների գործին հաջող ընթացք տալու համար, բարեկամական հարաբերությունների մեջ էր դեսպանության բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես առաջին թարգման Մանդկլյուտի հետ։

Զոհրապի վերջին նամակներից մեկում առավել բնորոշ ձևակերպում է ստացել ռուսական կողմնորոշման նկատմամբ իր և Զոպանյանի վերաբերմունքը։

«Մեկ ուժ մը միայն, — գրել է Զոհրապը, — որուն ես գոնե անձնապես և դուն ալ ինծի հետ, փարած էի սկզբեն ի վեր... ուժ մը, զոր, երբ անդին բոլոր հայերը կը հարվածեին, կը նախատեին, մենք կը փայփայինք ուժ մը, զոր հայթողեցանք հայոց պաշտպան դարձնելու... այդ ուժը ըսելու պետք կա՞ միթե, ռուսական պետությունն է»[140]։

Զոհրապի համար ռուս-թուրքական համաձայնագիրը անհեռանկար, ժամանակավոր, անցողիկ միջադեպում էր։ Հայկական հարցի վերջնական լուծումը նա կապում էր Ռուսաստանի հետ։

Զոհրապի «Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ» գիրքը «Հայկական հարցին վրա հայերու կողմե գրված գործերուն լավագույններեն մինն է», այն լայն տարածում գտավ Փարիզում և Եվրոպայում, գործեց լավագույն տպավորություն, որպես ակնառու հաստատում է Ար. Զոպանյանը։

Զոհրապի գազանային սպանությամբ երիտթուրքերը նաև հետամուտ էին արևմտահայության մեջ արմատախիլ անել ռուսական կողմնորոշումը։

Այսպիսով, Գր. Զոհրապի կյանքն ու գործը, «Վերնատան» գոյությունը հաստատում է, որ հայ ազատագրական շարժման կողքին էր նաև նրա գրականությունը։

Իրողություն է, որ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ գրականության դասականներից շատերը ջանացին գծագրել գալիք Հայաստանի ճակատագիրը, ապրել հանուն հայրենիքի ազատագրման վեհ գաղափարով և գաղափարի կենսագործման համար, ստեղծեցին, տառապեցին, հաղթանակեցին և պարտվեցին, երազեցին ու հավատացին,

139 Ա. Զոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 766—767։
140 «Անահիտ», 1930, թիվ 3, էջ 12։

նոր շունչ հաղորդեցին գալիք պայքարի գաղափարաբանության ու մարտական դիտակցությանը... «Ողբի ու որբի», «զարկված ու զրկված» հայրենիքի վշտերով, ժողովրդի տանջանքներով ու ակնկալություններով իր ողջ կյանքն ապրեց Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը (1869—1923), նա, որ գլուխ էր խոնարհում այն «լավերի» առաջ, որոնք «կռվեցին ու մեռան» հանուն հույսի, լույսի, նոր ու հզոր հայրենիքի։

Հայկական բնօրրանում կատարված արյան հեղեղների մասին պատմության մատակարարած հարուստ նյութերը, մասնավորապես Հայկական հարցի պատմությունը և շարունակվող հայկական կոտորածները թույլ էին տալիս Մեծ եղեռնի նախօրյակին, 1912 թ. տպագրված «Երեկվան պատմությունը և այսօրվա իրականությունը» հոդվածում ասելու, որ ռուսական տիրապետությունը փրկարար ազդեցություն ունեցավ Հայաստանի մի մասի վրա։ «Մենք հավատում ենք, — գրել է մեծ բանաստեղծը, — որ այժմ էլ, երբ վաղվում է Անատոլիայի անմար դժոխքը, չի մարած ռուս մարդու լայն սրտի մեջ էդ ազնիվ ու վեհ զգացմունքը, որով նա պետք է պարծենա աշխարհքի առաջ. մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ միլիոնավոր մարդիկ կոտորածի առաջ սարսափահար կարեկցություն ու պաշտպանություն են աղերսում, ռուսական մեծ պետությունը չի հրաժարվիլ Արևելքի մորթվող ժողովուրդներին պաշտպանելու... և հիմնվելով միջազգային դաշնագրերով իր ունեցած իրավունքների ու պարտավորությունների վրա՝ կարտասանի իր հսկայական «Не бойтесь»-ը. մենք կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտորածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհքի էս անվերջ խայտառակությանը»[141]։

Իսկ մեկ տարի անց, 1913 թ. տպագրված «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում Թումանյանը մոլորություն էր համարում այն մտայնությունը, թե իբր Անգլիան ու Ֆրանսիան եղել են Հայկական հարցի դրական լուծման համակիրներ։ Նրա կարծիքով, այդ կարգի մոլորության ակունքները անհրաժեշտ է փնտրել «Գլադստոնի, Դիլլոնի, Բերաի, Պրեսանսեի նման լավ մարդկանց» ճառերի մեջ «ի պաշտպանություն հայ ժողովրդի, ընդդեմ Թուրքիայի վատթար կառավարության», ճառեր, որոնք իրական օգնության ոչ մի երաշխիք չէին պարունակում, քանզի «իրենց պետությունները... միշտ էլ դեմ են եղել Հայկական հարցին»[142]։

141 Հովհ. Թումանյան, Երեկվան պատմությունը և այսօրվա իրականությունը, «Հորիզոն», 1912, № 196։

Հիշենք, որ այս տողերը գրվում էին 1913-ին, բարենորոգումների ներդրման համար պայքարի շրջանում, պատերազմը կարծես թե այնքան էլ մոտ չէր, բայց բանաստեղծը տեսնում էր նրա սև ուրվականը և այն դժոխք երկիրը, ուր «դարձյալ կոտորածի սարսափի տակ ալեկոծվում է հայ ժողովուրդը»[143]:

Հանգամանորեն կանգ առնելով Հայկական հարցի ծագման, անցած ուղու և լուծման իրօրյա հեռանկարներին, Թումանյանի պատմաքննական հայացքի ներքո եվրոպական մեծ տերությունները ներկայանում են որպես Հայկական հարցի թշնամիներ, որոնք միշտ էլ ելնելով իրենց գծած շահերից, պաշտպանել են թուրքական դահիճներին ընդդեմ ռուսների և արգելափակել կարգավորման նրա ճանապարհը: Ավելին, Թումանյանը հայկական բոլոր ջարդերի ու կոտորածների մեջ հատկապես մեղավոր է ճանաչում մեծ տերություններին:

«Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է: Նա գերազանցապես ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին և հայկական սարսափներին: Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան և մարդկության պատմության առաջ»[144]:

Սիրողական մակարդակով պատմությունն ուսումնասիրողներին խորհուրդ կտայինք իրարից սահմանազատել Հայկական հարցը և Օսմանյան կայսրության բռնապետական լուծը թոթափելու համար հայ ժողովրդի դարավոր պայքարը: Եթե առաջինը, որպես միջազգային դիվանագիտության օբյեկտ, առաջացավ ռուս-թուրքական 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ և հետևանքով, ապա երկրորդը, որպես հայ ժողովրդի (ամբողջական ժողովրդի) ազատության խնդիր գոյություն ուներ իրոք պետականության կորստից ի վեր: Հաճախ են մեջ բերում Հ. Թումանյանի խոսքերը՝ ճիշտ չմեկնաբանելով դրանց էությունը: Երբ բանաստեղծն ասում է, թե Հայկական հարցը շատ հին է, այն վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, ապա նկատի ունի Թուրքիայում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության վտանգվածությունը, այդ կացությունից դուրս գալու նրա ջանքերն ու պայքարը, որը, ցավոք, բաղում ներքին ու արտաքին գործոնների ընորհիվ չհասավ իր հանգրվանին մինչև Հայկական հարցի միջազգայնացումը: Թումանյանի համար ֆիզիկական ոչնչացման վտանգից փրկվելու առումով չկար արևելահայ խնդիր, որովհետև լավ թե վատ, այդ խնդիրը լուծված էր: Հայ հայրենիքի կովկասյան հատվածում, հայը ֆիզիկապես ապահով փրկված էր, այստեղ չկար «հավելյալ արյան» հարց: Ռուսաստանը կես դար առաջ (1828թ.) կանխել էր հանուն գոյատևման արևելահայության պայքարի միջազգայնացումը:

Հայ ազատագրական մտքի լավագույն ավանդներին հավատարիմ բանաստեղծը, խոհեմ պատմաբանին ներհատուկ գիտական բարեխղճությամբ, բարձր գնահատելով Ռուսաստանի առաջադիմական դերը, բնավ չէր անտեսում նաև այն նողկալի ծառայությունը, որ ազգամիջյան ընդհարումների և ժողովուրդներին առաջադիմական շարժումներից ու գաղափարներից հեռու պահելու գործում կատարում էր ցարիզմը: Նա կարողացավ տեսնել ինչպես 19-րդ դարի 80—90-ական թվականների ցարական կառավարության հակահայկական քաղաքականության բացահայտ ընթացքը, այնպես էլ 1905 թ. հայ-թաթարական անդրկովկասյան ջարդերի կազմակերպման գործում նույն կառավարության ստոր խաղը: Դրա համար էլ Հովհ. Թումանյանը 1917 թ. գրեց «Հսկայի ազատությունը», իսկ 1918 թ.՝ «Բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն» հոդվածները[145]: Առաջինում բանաստեղծը անկեղծորեն ցանկանում էր, որ «Ռուսաստանի ամեն մի քաղաքացի... իր ուժերի ներածին չափ նեցուկ դառնա ռուսական նոր ոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի», իսկ երկրորդում՝ ցավով հայտնում. «Մի՞թե այն նոր երրորդ Հռոմի փլուզումը ցավալի արձագանք չի գտնում նրա որդիների սրտերում, և միթե՞ մեծ հայրենիքը պաշտպանություն չի գտնի բաղում գնդերից, և չի առաջանա մի նոր հզոր շարժում Ռուսաստանի վեհության, ազատության և պատվի պաշտպանության համար»[146]:

Ռուսաստանն, իհարկե, չփլուզվեց, նա վերականգնվեց Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Միության տեսքով: Բայց դեղատոպանության ողբերգությունը լիակատար ապրած բանաստեղծի հայացքը շատ ավելի հեռուն էր միտում, քան իդեալի իրագործման իրական հնարավորությունն էր:

142 Հովհ. Թումանյան, Հայկական հարցն ու իր լուծումը, «Հորիզոն», 1913, № 7—14: Տե՛ս նաև՝ Հովհ. Թումանյան, երկեր, Երևան, 1978, էջ 437:
143 Նույն տեղում, էջ 442:
144 Հովհ. Թումանյան, երկեր, Երևան, 1978, էջ 437:
145 Նույն տեղում, էջ 487:
146 Նույն տեղում:

Ապագա հզոր Ռուսաստանի միջոցով Հայկական հարցի լուծման նրա հույսերը չարդարացան։ Ոչ միայն չարդարացան, այլև հնարավոր դարձան հայ հայրենիքի ռուսաստանյան տարածքների որոշ վիրահատումներ՝ այդ տարածքների «ավագ» ու «կրտսեր» բաժնետերեր դարձնելով քեմալական Թուրքիային և համաշխարհային հեղափոխության շահերով խորհրդայնացած «եղբայրական» Ադրբեջանին։

Արևմտահայության պատմական ճակատագրի խնդիրը, Հայկական հարցի լուծման որոնումները կարևոր տեղ են գրավել Վահան Տերյանի (1885—1920) ստեղծագործության և հասարակական գործունեության մեջ։ Տակավին մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, Տերյանը Արևմտյան Հայաստանի ազատագրումը Թուրքական բռնատիրությունից կապում էր գալիք սոցիալ-քաղաքական փոփոխությունների հետ։ Ելնելով հատկապես 1910-ական թվականների նախապատերազմյան տագնապալից, աշխարհի վերաբաժանման համար ստեղծված ահասարսուռ ռազմաքաղաքական իրողությունից, Տերյանը լավագույն ելքը համարում էր առաջիկա պատերազմում արևմտահայկական նահանգների ազատագրումը ռուսական բանակների կողմից, հայրենիքի երկու մասերի միավորումը և նրա զարգացումը ապագա դեմոկրատական Ռուսաստանի հետ սերտ դաշինքի մեջ։ 1914 թ. ապրիլի 14-ին Թիֆլիսի երաժշտական ընկերության դահլիճում կարդացած «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ Տերյանը գրել է. «Ես Տաճկահայկական հարցի լուծմանը Թուրքիայի սահմաններում չեմ հավատում։ Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների։ Այս դեպքում գուշակողի դեր չեմ ուզում ստանձնել, կարող է պատահել, որ այդ հարցը (որ մեր ժողովրդի համար մի ահագին դժբախտություն է դարձել) այլ կերպ լուծվի։ Սակայն լավագույն լուծումը այդ հարցի ես համարում եմ ռուսական տիրապետությունը։ Եթե դա հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի երկու հատվածների միացումով ավելի ևս կզորեզանա այն կուլտուրական հոսանքը, որ փափագելի է ինձ համար, եթե չլինի այդ, ապագայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման։ Տաճկաստանի վերածնության ես չեմ հավատում, իսկ Ռուսաստանի ապագան ինձ համար աներկբայելի է։ Եվ կապելով իմ լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»[147]։

[147] Վ. Տերյան, *Երկեր*, Երևան, 1989, էջ 327։

Վ. Տերյանը վերոհիշյալ մտքերը պաշտպանել և զարգացրել է նաև համաշխարհային պատերազմի շրջանում գրած իր մի շարք հոդվածներում («Մեր պարտքը», «Նամակներ Հյուսիսից», «Ռուսաստան և Կովկաս» և այլն)։ Վ. Տերյանին այդպիսի վճռականության էր մղում այն խորին համոզմունքը, թե «քանի դեռ Եվրոպայում իշխանությունը գտնվում է իմպերիալիստների ձեռքին, հայերը չեն կարող... բարենպաստ վերաբերմունք հուսալ եվրոպական տերությունների կողմից»[148]։

Գրված լինելով տասնամյակներ առաջ, Հայկական հարցի լուծման և հայկական հոգևոր արժեքների պահպանման տերյանական խոր ու ծանրակշիռ հարցադրումները այսօր էլ արդիական նշանակություն ունեցող պատգամներ են հիշեցնում։

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության և իրօրյա առաջադրած խնդիրների, Հայկական հարցի լուծման վերաբերյալ անանց արժեք ունեն հայ մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանի պատմագիտական հայացքները, նրա տեսակետներն ու մտքերը։ Ըստ Իսահակյանի, դարը ճակատագրի բերումով բռնատիրությունների հարվածներին ենթակա և դրանց դեմ պայքարի անհավասար մարտերով 20-րդ դար թևակոխած հայ ժողովրդի գոյատևման հիմնական գաղտնիքներից մեկն այն է, որ ի զորու եղավ պահպանել և գալիք սերունդներին պատգամել իր հոգու և մտքի գանձերը։

Ժողովուրդների կյանքում կատարված և կատարվող հասարակական-քաղաքական երևույթների և գործընթացների ճշմարիտ գնահատականը կարելի է տալ միայն այն ժամանակ, երբ դրանք դիտարկվում են պատմական ընթացքից չբեկված կապակցությունների ամբողջական շղթայում։

Մեծ բանաստեղծի հասարակական հայացքներում հատուկտուն տեղ է զբաղեցնում պատմական իրադարձությունների պատճառական կապերի օրինաչափության բացահայտման իմաստասիրական միտվածությունը։ Ազատագրական պատերազմների բնույթը և, անկախ ելքից, ընթացքը նույնպես կատարվում է պատմական անհրաժեշտության, ազգերի ու ժողովուրդների կյանքի հիմնարար փոփոխությունների թելադրանքով։

Պատմագրությունը երբեք չի կարող կյանքի ընթացքը շարժող գործողությունները, բոլոր կարգի իրողություններն ու անցքերը, ազգերի ու նրա մեծ անհատների պատմական գործունեությունը տալ այն հավատիությամբ, ինչպես կատարվել է։ Պատմությունն ունի ոչ ոքի կամ-

[148] Նույն տեղում, էջ 397։

քից ու ցանկությունից կախում չունեցող մի օրինաչափություն. դա այն է, որ յուրաքանչյուր նոր սերնդի իմացության գործընթացում պատմությունն ստանում է իր որոշակի բեկումը, բայց այդ բեկումը երբեք հակառակ չի գնում ժողովրդի առաջընթացի միտումներին կամ աղճատված ներկայացնում ազգային ոգու էությունը։ Ավ. Իսահակյանը դրա լավագույն օրինակ է համարում հայոց պայքարի դյուցազնավեպը, ուր ժողովուրդը իր անանձնական երևակայությամբ ձգտում է խորտակել բռնության շղթաները։ Այսօր խորը գիտական ու արդիական են հնչում հայ ազգային-պահպանողականներին Ավ. Իսահակյանի տված այն գնահատականը, թե վերջիններս «պայքարում էին հայ ժողովրդի անաղարտ գոյության համար, քարոզում էին պահպանել հայոց ազգային սովորությունները, հնադարյան ավանդները, նահապետական կենցաղը։ Այդ ճանքով պաշտպանել հայ ազգությունը այլասերումից, ուրիշ ժողովուրդների հետ ձուլումից, ասիմիլյացիայից»[149]։ Ավ. Իսահակյանն այդ ամենը կռվով, պայքարով պահպանելու կողմնակից էր։ Նա մտածողության այս բարձրակետից ընկալեց 19-րդ դարի առաջին կեսի քաղաքական բարդ կացության, հայ ազգային ակնկալությունների, Ռուսաստանի առաջադիմական դերի և ցարիզմի քաղաքականության աբովյանական դիրքորոշումը։

«Մեր ժողովուրդը, — գրել է Իսահակյանը, — կուտակել էր իր սրտում դարերի մեջ բռնակալներից կրած հալածանքների, կեղեքումների, ոճիրների ցասումը, իր ազատության տենչերը, իր անդրդվելի հավատը լավագույն ապագայի հանդեպ, մի խոսքով՝ այն բոլոր հոգեկան տարրերը, որոնք անհրաժեշտ են մի ժողովրդի ինքնության ու հարատևության և ազգ դառնալու համար, և սակայն լուռ էր, համր էր նա, և երբ վերստին նրա գլխին փայլատակեցին պարսկական թրերը... բացվեց նրա լեզուն, խոսեց հրեղեն լեզուն, — «էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում...»։ Այդ լեզուն «Վերք Հայաստանին» էր, «Ողբ հայրենասերին»[150], ուր Խ. Աբովյանը, Ավ. Իսահակյանի մեկնաբանությամբ, կարողացավ ոչ միայն պատկերել բռնապետական մահմեդական Արևելքի անօրինության միջավայրում հայերի թշվառությունը, այլև ներկայի ու անցյալի հակադրության մեթոդով ցույց տալ ցարիզմին, որ ի դեմս 1820-ական թվականների հայ կտրիճների, երևան են եկել նոր մարդիկ, որոնք պայքարով ու կռվով պիտի համոզեն հին ու նոր բռնակալներին, որ իրենք այլևս վաղեմի ստրուկները չեն։

Ավ. Իսահակյանը մտածողության նույն անկյունադարձից էր մո-

149 Ավ. Իսահակյան, Երկեր, հա. չորրորդ, Երևան, 1959, էջ 50։
150 Նույն տեղում։

տենում «Վերքի» հերոս Աղասու խիզախների սերնդից տասնամյակներ հետո ծնունդ առած ֆիդայական շարժումն արժեքավորելիս, շարժում, որ հայ իրականության մեջ սկիզբ առավ 1890-ականներին, երբ ազատամարտի նոր փուլ թևակոխած ժողովրդի լավագույն զավակները համախմբվելով իր նոր Աղասիների շուրջը, որոշեցին զենքով պաշտպանել արևմտահայության ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլև մինչև վերջ պայքարել հանուն Հայկական հարցի արդարացի լուծման։

Անցյալ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ հայրենիքի թշվառ վիճակը, ժողովրդի օրհասական ապրումները բանաստեղծին ստիպում էին ոչ միայն սրտակեղեք երգերի վերածելու «հայրենիքից հեռացած» պանդուխտների «տխուր-տրտում» կյանքը, այլև զովերգելու հանուն գոյապահպանման՝ բռնատիրության դեմ մաքառման ելած հայ հայդուկների առասպելական արարքները։ Հայ ժողովրդի անցյալի մաքառումի խոր իմացության և ուժի դիրքերից նրան ահաբեկելու և հոշոտելու իրօրյա հզորների քաղաքականության ընթացքն ու արդյունքները ճշմարտապատում իմաստավորելու մշտամնա արտահայտություն էր պատկանյանական ոգով գրված Իսահակյանի «Քաջերին» հայդուկային երգը.

Վա՜ռ, կարմի՛ր հագիր, դո՛ւ հայ-ժողովուրդ,
Եվ սուրդ շարժե՛, քեզ ճանապարհ բաց.
Այս աշխարհի մեջ սուրն է միշտ կտրող —
Կարի՛ր և տիրի՛ր — անհա՛ղթ, հզո՛ր կաց։

.....

Անհողդողդ գնա՛ դեպի լույսն— արև,
Եվ ազգերն ամեն, հարգանքի նշան,
Հետ-հետ գնալով և տալով բարև
Ազա՛տ, անարգե՛լ քեզ ճամբա կտան...

Լեոյին նվիրած իր հուշերում Ավ. Իսահակյանը նկարագրում է այն ողբերգությունը, որ վերապրել է մեծ պատմաբանը հետագայում հայ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման բնագավառում իր և իր գաղափարակիցների թույլ տված սխալների համար։ «Մեծ պատերազմում հայ ժողովրդի կրած սարսափներն ու աղետները, — գրել է Իսահակյանը, — դառնությամբ լցրել էին նրա հոգին։ Այդ անհնարին վշտի ծանրության տակ փշրվել էր նա։

— Հայության վիշտը ես միայն գերեզմանի մեջ կմոռանամ։ Բայց ո՞վ է մեղավորը, — ասում էր նա ինձ, — մենք ենք մեղավորը, մենք՝ մտավորականներս, գործիչներս, դու, ես, և բոլոր նրանք։ Մեր ժողովուրդը մեղավոր չէ։ Այլ մենք, որ այնպես հիմար եղանք, տգետ, որ

հավատացինք շահամոլ, դրամատիրական-բուրժուական Եվրոպային, որի համար գաղութների ոչխարների կյանքը ավելի արժեք ունեին, քան հայերը, քան փոքր ճնշված ազգերը: Մենք, որ երեխաների պես հավատացինք լուսավոր մարդկության խղճմտանքին, մարդկությանը, վաճառվող միջազգային մամուլին — բորենի, շնական դիպլոմատներին... ևս կատաղում էր և բառ չէր գտնում որակելու...»[151]:

Ավ. Իսահակյանը չի առարկում Լեոյին, քանզի ինքն էլ ժամանակին ոմանց նման մոլորված էր, կարծում էր, թե երիտթուրքերի տիրապետության պայմաններում, պանթուրքական վտանգը կարելի էր կանխել միայն Թուրքիայի բարեկամ կայզերական Գերմանիայի միջոցով: Սխալ այդ ելակետից էր թելադրված նրա գործուն մասնակցությամբ հայ-գերմանական ընկերության հիմնումը, որի նպատակով նա 1914 թ. մարտին Ժնևից փոխադրվեց Բեռլին: Նորաստեղծ ընկերության նախագահն էր հայ ժողովրդի բարեկամ, գերմանացի գիտնական Յոհաննես Լեփսիուսը, փոխնախագահներ էին պատմաբան Պաուլ Ռոհրբախը և ծագումով հայ, անգլիական իրավաբան Ջեյմս Գրինֆիլդը, քարտուղարը՝ Ավ. Իսահակյանը, որը միաժամանակ ընկերության տպագիր պարբերականի՝ «Մեսրոպ» ամսագրի խմբագիրն էր, որը լույս տեսավ ընդամենը մեկ համար: Ընկերության ծրագրի և նպատակների մասին Ավ. Իսահակյանը 1914 թ. մայիսի 31-ին Ալ. Ծատուրյանին ուղարկած նամակում գրել է. «Հայկական հարցի վերազարթոնքի օրից Բեռլինում հիմնվեց մի հայկական կոմիտե, որ, շնորհիվ Գերմանիայում ունեցած իր նշանավոր անձանց կապերի, կարող եղավ գերման դիվանագիտության հակառակությունը՝ ռուսական հայանպաստ ձեռնարկների դեմ՝ այնքան մեղմել, որ վերջ ի վերջո հաջողվեց ռեֆորմների շուրջ համաձայնություն ստեղծել Հայաստանով շահագրգռված այդ երկու պետությունների միջև:

...Հայ-գերմանական ընկերությունը... կարող պիտի լինի գերման հասարակության ամենալայն խավերը մոտեցնել և հետաքրքրել մեր ազգի վիճակով: Ավելորդ չլինի ասելը, որ թե ընկերությունը, և թե հանդեսը կուսակցականապես և քաղաքականապես չեզոք հողի վրա են կանգնած, և Բեռլինի ռուս դեսպանի հաճությունը ընդունած»[152]:

Բայց կարճատև եղավ ինչպես ընկերության, այնպես էլ նրա պարբերականի նկատմամբ Իսահակյանի փայփայած հույսերի կյանքը: Վրա հասած համաշխարհային պատերազմը տակնուվրա արեց բանաստեղծի ծրագրերն ու ծպտումները: Իսահակյանը ամենայն ահագնությամբ զգաց մեծ տերությունների քաղաքական նենգությունն ու դիվանագիտական անբարոյականությունը: Ի չիք դարձավ 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը: Թուրքիան ներգրավվեց պատերազմի մեջ որպես Գերմանիայի դաշնակից և, օգտվելով ռազմական իրավիճակից, անցավ իր երազանքի իրագործմանը՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջմանը: Գերմանիան քաջալերում էր Թուրքիայի հայացինջ ծրագիրը՝ համարելով հայերին Ռուսաստանի «բնական դաշնակից» և Մերձավոր Արևելքում երկուսի առաջադիմությանը խոչընդոտող ուժ: Նրանց պետք էր Արևմտյան Հայաստանն առանց հայերի: Եվ իրագործվեց այն:

Ահա ինչ էր գրում Ավ. Իսահակյանը Գարեգին Լևոնյանին 1916 թ. ապրիլի 2-ին: «Նզովված, հազար անգամ նզովված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց, օ՜, ի՜նչ սարսափելի օրեր եմ անցրել և անցնում եմ. այս ի՜նչ արյունոտ խելագարություն է. — սպանություն, սպանություն, արյո՜ւն, արյո՜ւն, արյո՜ւն. Հայաստան այլևս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան. ե՜րբ պիտի նույն օրին ընկնի գազան Գերմանիան, որ մարդկությունը ազատվի մարդակեր Վիլհելմից, Հոհենցոլերների տան ձեռքից, սրիկա, բորենի Կրոնպրինցից: ...Ամբողջ հոգով ու սրտով ռուս քաջ զինվորների հետ եմ հայոց լեռներում, նրանք մեր վրեժը լուծում են. դարերի ընթացքում ռուսն է թուրքի գլուխը ջարդել և ազգեր ազատել — Հունաստան, Ռումինիա, Սերբիա, Բուլգարիա, այսօր հերթը հայերիս հասավ»[153]:

Հայոց ցեղասպանությունը բանաստեղծին պարզ դարձրեց մի ճշմարտություն. հայ ժողովրդի ապրող հատվածի փրկությունը Ռուսաստանի հետ միավորումն է, միայն Ռուսաստանի ներկայությունը կարող է կասեցնել թուրք ենիչերիների և նրանց գերմանացի հովանավորողների հայացինջ ծրագրի վերջնական իրագործումը: Անհիմն չէր բանաստեղծի տագնապը Առաջին հանրապետության ապագայի վերաբերյալ: 1918 թ. դեկտեմբերի 13-ին Ա. Ջոպանյանին հղած նամակում Իսահակյանը գրում է. «Շա՜տ եմ վախենում, և հիմք ունիմ վախենալու, թե մի գուցե Հայաստանի մոտակա ազատությունը ծագի մեր ժողովրդի համատարած գերեզմանոցի վրա»[154]:

Ավ. Իսահակյանը առավել հիմնավոր շարադրել է իր համոզմունքը 1921 թ. հուլիսի 1-ին Հովհ. Թումանյանին գրած նամակում, ուր մասնավորապես ասված է. «Ես ինքս ազգային բացարձակ անկախության

[151] Նույն տեղում, էջ 159:
[152] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հտ. 6, Երևան, 1979, էջ 151—152:
[153] Նույն տեղում, էջ 151:
[154] Նույն տեղում, էջ 173:

ոչ կուսակից էի, ոչ հավատացող, և ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. Եվրոպան ոչ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով. սրան համոզված եմ փաստերի վրա, ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցին, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն, դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այդ ավազակներից և մոտենալ Ռուսաստանին... ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել։ Մնացածը հիմարությունից վեր մի բան է»[155]։

Հովհ. Թումանյանի նման Ավ. Իսահակյանն էլ ողջունեց Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը՝ հույսեր կապելով ազատության բուրժուական հայտնի կարգախոսների հետ։ 1917 թ. մարտի 28-ին Գաոռեգին Լևոնյանին Իսահակյանը գրում է. «Անսահման, անսահման ուրախ եմ ռուսական հեղափոխության հաղթանակով. նոր դարագլուխ, և վերջապես փրկվեց հայությունը։ Այժմ ընդմիշտ ապահով է հայ ժողովրդի ապագան, — մի 30—40 տարուց հետո մենք կունենանք ամուր, ուժեղ, հարուստ, մեծաքանակ հայություն. Ռուսիան պիտի հավաքողը լինի հայկական հողերի և հայը ինքը ազատագրողը այդ նվիրական հողերի. մեր ներկա սերնդի և ապագա բոլոր սերունդների միսիան պիտի լինի Հայաստանը դարձնել Հայաստան»[156]։

Այսպիսով, մինչխորհրդային հայ հասարակական և պատմագիտական միտքը լիովին չկարողացավ հաղթահարել Հայկական հարցի լուծման ճանապարհի համապարփակ բարդությունը։ Նրա ներկայացուցիչներից շատերը միապես չէին ընկալում ազատագրական պայքարի համազգային խնդիրները և տերությունների մրցակցային պայքարում հայ ժողովրդի հավաքական ուժի վճռորոշ դերը։ Հաճախ նրանց մեկնաբանությունները ոչ միայն տարբեր էին, այլև՝ ուղղակի հակադիր։ Ոմանք կարողացան ազատագրվել արևմտյան տերություններից հույսեր կապելու կորստաբեր մոլորությունից և որդեգրել իրատեսական կողմնորոշում։ Ցույց ենք տվել, որ նրանց մեջ կան հեղինակներ, որոնց տեսակետները պատմագրության համար մնում են որպես անանց արժեքներ։

Կարծում ենք, Հայկական հարցի գիտական պատմագրության ստեղծման ճանապարհին այս ուսումնասիրությունը կունենա համեստ իր տեղը։

[155] Նույն տեղում, էջ 180—181։
[156] Ավ. Իսահակյան, Երկեր, Երևան, 1987, էջ 813—814։

ՎԵՐՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովրդի պատմություն նախ և առաջ գործուն հիշողություն է, որի ամեն մի պատմական հիշարժան շրջափուլ ունենում է դրսևորման ուրույն կերպն ու առաջադիր պահանջները։ Սակայն ունենալ պատմական հիշողություն, բնավ չի նշանակում ընդունել, թե անցյալի իրադարձությունների և անցքերի մասին պատմության մատակարարած նույնիսկ ամենահեղինակավոր գնահատականները բոլոր ժամանակների համար մնում են մշտակայուն կամ անփոփոխ։ Այդ առումով հիշել անցյալը, ամենից շատ նշանակում է գնահատել այն իրօրյա բարձրակետից, դիալեկտիկական հայացքի տակ դնել անցյալի դասերը և դրանք ենթարկել արդիականության կարիքներին։

Խորհրդահայ պատմագրությունը, ցավոք, իր սկզբնավորման առաջին իսկ շրջանից, անցյալի ժառանգության յուրացման ասպարեզում կրևան բերեց ոչ համապարփակ և անկողմնակալ մոտեցում։ Կողմնորոշվելով ամենից առաջ և առավել շատ դեպի սոցիալ-տնտեսական խընդիրները, 1920—1930-ական թվականներին նա իր էջերից իսպառ կամ համարյա բացառեց ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերը։ Ավելին, վերոհիշյալ տասնամյակներին այդ պատմագրությունը մեծ մասամբ տարվեց հայ ժողովրդի միայն մի հատվածի՝ արևելահայության սոցիալ-հասարակական տեղային և ներռուսաստանյան առնչություններով, ավելի կոնկրետ՝ ուսումնասիրության առարկա դարձրեց Արևելյան Հայաստանի ժողովրդի ապրելու կերպն ու կապերը՝ ռուսահայրական և հակացարական հակումներով։

Եթե չհաշվենք միջազգային հարաբերությունների հենքի վրա հայ ժողովրդի նորդարյա պատմության մի շարք կնճռոտ հարցերի լուսաբանման, փաստական հարուստ նյութերի վերլուծությամբ Հայկական հարցում միջազգային դիվանագիտության նենգ դերի բացահայտման ուղղությամբ օբյեկտիվ դիրքերից գրված և հետագայում բազմիցս «մերժված» Բագրատ Բորյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» 1928—1929 թվականներին Մոսկվայում, ռուսերեն, լույս տեսած երկհատոր աշխատությունը, ապա փաստորեն մինչև

1950-ական թվականների կեսերը խորհրդահայ պատմական գրականությունից խորթացել էր հայ ժողովրդի առավել մեծ հատվածի՝ արևմտահայության պատմական ճակատագրի համազգային արծարծման հարցը։

Նացիոնալիզմի մեջ մեղադրվելը ամենուրեք և ամեն ինչում ինքնին տագնապահարույց վախ ու դող էր ներշնչում։ Տևական պատմաշրջան ընդգրկող անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի հայ պատմագիտական և գրականագիտական վախվորած միտքը, գռեհիկ սոցիոլոգիզմի հետ դաշնակցած, «անխնա մերկացնում» և «դատապարտում» էր այն ամենը, ինչն առնչվում էր ազգային-ազատագրական պայքարի հարցերի հետ, թեկուզ դա ուղղված լիներ օսմանյան ջարդարարների, սրանց հովանավոր մեծ տերությունների քաղաքականության դեմ։ Բանը նույնիսկ հասել էր այնտեղ, որ հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության երկու հսկաների՝ Րաֆֆու և Ռ. Պատկանյանի ժառանգության արժեքավորման հարցում միջնադարյան ինկվիզիցիա հիշեցնող մի վայրենի գրոհ կատարվեց բազմաթիվ պատմաբանների և գրականագետների կողմից։

Քամահարելով պատմականության սկզբունքը, գռեհիկ սոցիոլոգիզմն ու նիհիլիզմը տեղայնացնող ազդարարները փորձեցին Րաֆֆուն ու Պատկանյանին սահմանազատել մեր դեմոկրատական մտքի ընդհանուր երթից և ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մարտակոչող նրանց հայրենասիրությունը նույնացնել հատկապես տիրապետող մեծ ազգերի բուրժուական նացիոնալիզմի հետ։

Շուրջ քառորդդարյա ընդարձակ ամայության մեջ նշմարելի բարձունք էր Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870-ական թվականներին» մենագրությունը։ Այդ համարձակ, քաղաքացիական շնչով գրված աշխատությունը, որ որպես դոկտորական դիսերտացիա պաշտպանվեց 1946 թ. և ոչ քիչ արգելքներ հաղթահարելուց հետո լույս տեսավ միայն 1955 թ., նոր շունչ ներարկեց հետստալինյան հայ պատմագիտական մտքին և խորհրդածությունների ու մտորումների նոր լիցք տվեց պատմաբանների միջին ու նոր սերնդին։ Պատմաբանը իր այս աշխատության մեջ առատ նյութերի հենքի վրա հանգամանորեն բացահայտեց արևմտահայության թշվառ կացությունը, վեր հանեց նրա մաքառումը և ազատագրական շարժման ընթացքը, բացահայտեց այդ շարժման աղերսները հարևան ժողովուրդների հակասուլթանական ընդվզումների հետ, ճշգրտեց հայ ազատագրական պայքարի սոցիալ-դասակարգային բովանդակությունը և շարժման առաջատար ուժերի ծրագրային նպատակները,

արևմտյան տերությունների հետադիմական, հակահայկական ընթացքը և այլ հարցեր։

Ուշագրավ հիմնահարցերով հարուստ այս աշխատության մեջ Մ. Ներսիսյանը կարողացավ իրեն մեկուսացնել գռեհիկ սոցիոլոգիզմի ջատագով «օրթոդոքս առաքյալների» ազդեցությունից, համակողմանի ներկայացրեց արևմտահայ շարժման բնականոն և արդարացված համազգային բնույթը, ազատագրական շարժման գաղափարախոսության ժողովրդադեմոկրատական էությունը։ Հայ ազգային-ազատագրական շարժման բազում ելակետային դիրքերի հետ առնչված Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Գր. Արծրունու, Գ. Սրվանձտյանի և այլոց անանց ծառայությունների իր բնութագրումներով գիտնականն ինքնին դյուրացրեց ապազաղափարականացնող տխրահռչակ «միասնական հոսանքի» դեմ պայքարի աշխատանքը։

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման գիտական ուսումնասիրության գործին ոգեկոչող արժեքավոր այս աշխատությունից բացի, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը նույն թվականին ՀԳՍ «Տեղեկագրում» տպագրեց միջնակարգ դպրոցների համար պատրաստվող հայ ժողովրդի պատմության ձեռնարկի երկրորդ հատորի՝ «Հայ ժողովրդի պատմություն, 1900—1917 թթ.» բաժինը, ուր առաջին անգամ խորհրդահայ դպրոցի աշակերտը պետք է ընդհանուր պատկերացում կազմեր Հայկական հարցի, Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատի մարտական գործողություններին հայերի մասնակցության, 1915—1916 թթ. Արևմտյան Հայաստանում և թուրքական կայսրության մյուս շրջաններում հայերի ցեղասպանության և ինքնապաշտպանական կռիվների մասին... 1960-ական թթ. գիտնականը հոդվածներ գրեց Զեյթունի 1862 թ. ապստամբության, հայկական կոտորածների, հայ ազատագրական պայքարի ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանի և հարակից այլ և այլ հարցերի շուրջ։

Մեծ եղեռնի 50-ամյակի սգո արարողությունից (1965 թ.) ընդամենը մեկ տարի հետո, 1966-ին, Մ. Ներսիսյանի առաջաբանով և խմբագրությամբ լույս տեսավ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (ռուսերեն) փաստաթղթերի և նյութերի ծավալուն ժողովածուն, ուր համակողմանի ներկայացվում է սուլթան Աբդուլ Համիդի և երիտասարդ թուրքերի կազմակերպած զանգվածային կոտորածների արյունռուշտ քաղաքականության էությունը։ Գերազանցապես արխիվային փաստաթղթեր և կարևոր այլ նյութեր պարունակող այս ժողովածուն ոչ միայն ժամանակին վիթխարի դեր կատարեց ազգային զարթոնքին նպաստելու գործում, այլև այսօր էլ մնայուն, արժեքավոր պատ-

մական տարեգրություն է Թուրք ցեղասպանների աննախադեպ ոճրագործությունների մասին։

Հայ ժողովրդի ազգային-քաղաքական կողմնորոշման, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության գիտական լուսաբանման անշեղ ուղեդիծը իր անանց հետքն է թողել նաև տասնամյակներ շարունակ նրա խմբագրած «Պատմա-բանասիրական հանդեսի» հրապարակումների վրա։

Իր թարմ խոսքով ու խորունկ մոտեցմամբ 1960-ական թվականներին հրապարակ իջավ պատմաբանների մի նոր սերունդ։ Հրատարակվեցին ընդգրկուն ժողովածուներ և մենագրություններ։ 1962 թ. լույս տեսավ Ե. Սարգսյանի «Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին» (ռուսերեն) մենագրությունը։

Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը, իր ընդարձակ առաջաբանով, Ռ. Սահակյանի հետ, կազմեց և խմբագրեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. 1828—1923 թթ.» ժողովածուն, որը լույս տեսավ 1972 թ.։ Կյանքի վերջին շուրջ քառորդ դարում Կիրակոսյանը մեկը մյուսի հետևից հրապարակեց մի շարք մենագրություններ. «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.)» (Երևան, 1965), «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (առաջին գիրք, 1982, երկրորդ գիրք, 1983), որոնցում նա վերլուծաբար բացահայտեց հայ ժողովրդի նկատմամբ մեծ տերությունների վարած երկդիմի, ըստ էության հանցավոր քաղաքականությունը։

Հայկական հարցի և հայոց ցեղասպանության վերաբերյալ 1960—1970-ական թթ. լույս տեսան Ե. Սարգսյանի և Ռ. Սահակյանի «Հայ ժողովրդի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» (Երևան, 1963), Ե. Սարգսյանի «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918 թթ.» (Երևան, 1964, նույնը ռուսերեն՝ 1965), Ա. Մնացականյանի «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ» (Երևան, 1965), Մ. Արզումանյանի «Հայաստան։ 1914—1917» (Երևան, 1969), «Նանսենը և Հայաստանը» (Երևան, 1977), «Արհավիրքից վերածնունդ» (Երևան, 1973), Ստ. Հակոբյանի «Արևմտյան Հայաստանը իմպերիալիստական պետությունների պլաններում Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում» (Երևան, 1967), Ստ. Ստեփանյանի «Հայաստանը իմպերիալիստական Գերմանիայի պլաններում» (Երևան, 1975), Յու. Պետրոսյանի «Երիտթուրքական շարժումը» (Մոսկվա, 1971, ռուսերեն), Ա. Համբարյանի «Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» (Երևան, 1979), «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին» (Երևան, 1990), Հովհ. Ինճիկյանի «Օսմանյան կայսրության բուրժուազիան» (Երևան, 1977, ռուսերեն) և ուրիշ աշխատությունները։

Հայկական հարցի և հայոց ցեղասպանության փոխկապակցված հիմնահարցը բացահայտելու և այն ընթերցող լայն զանգվածներին մատչելի դարձնելու համար անուրանալի տեղ ունեն Ա. Փափազյանի առաջաբանով, թարգմանությամբ և ծանոթագրմամբ տպագրված «Հայերի ցեղասպանությունը ըստ թուրքական դատավարության փաստաթղթերի» ժողովածուն (Երևան, 1988), Հ. Պողոսյանի «Սասունի պատմություն (1750—1918)» (Երևան, 1985), Ռ. Սաֆրաստյանի «Օսմանիզմի դոկտրինան Օսմանյան կայսրության կյանքում» (Երևան, 1985, ռուսերեն), Հր. Սիմոնյանի «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (Երևան, 1986), «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (Երևան, 1991), Ս. Պողոսյանի «Քրդերը և Հայկական հարցը» (Երևան, 1991), Վ. Բայբուրդյանի «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում ԺԹ դարում և Ի դարի սկզբին» (Երևան, 1989), Մ. Կարապետյանի «Հայոց մեծ եղեռնը պատմագրության մեջ» (Երևան, 1993), Մ. Քոչարի «Հայ-թուրքական հասարակական-քաղաքական հարաբերությունները և Հայկական հարցը 19-րդ դարի սկզբին» (Երևան, 1988, ռուսերեն), Յու. Դարոնյանի «Սերգեյ Դորոդեցկին և Հայաստանը» (Երևան, 1985, ռուսերեն), Գ. Ղարիբջանյանի «Հայերի ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը» (Երևան, 1989), Ս. Ստեփանյանի, Ն. Բաղդասարյանի կազմած «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» ժողովածուն (Երևան, 1991, ռուսերեն), Վ. Միքայելյանի կազմած և նրա ընդարձակ առաջաբանով հրատարակած «Հայկական հարցը և ցեղասպանությունը Թուրքիայում (1913—1919)» ժողովածուն (Երեվան, 1995, ռուսերեն), որն ընդգրկում է կայզերական Գերմանիայի ԱԳՆ քաղաքական արխիվի նյութերը, Ռ. Սահակյանի «Ցեղասպանության պատմությունից» (Երևան, 1990), Ա. Կիրակոսյանի «Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը (19-րդ դ. 90-ական թթ.)» (Երևան, 1990) և այլն։

Վերջին տասնամյակներում տպագրված աշխատություններում գիտական պատմագրության բարձրակետից լուսաբանվում են Թուրքիայի ներքին կացության ամենատարբեր կողմերը, թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսության ծագման ու զարգացման ընթացքը, թուրք զինվորականության գործած ավերածությունների համակողմանի

պատմությունը։ Այդ աշխատություններում բացահայտված են թուրքական ազգային բուրժուազիայի գաղափարաբանության հիմնական կոնցեպցիաները՝ օսմանիզմն ու նոր օսմանիզմը, թուրքիզմն ու պանթուրքիզմը։ Հայկական հարցն ու ցեղասպանությունը քննվում են Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին կացության և միջազգային դիվանագիտության հանգույցների հետ շաղկապված, հերքվում է թուրք պատմագրության այն սուտը, թե իբր հայերը մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ապրել են հանգիստ ու խաղաղ կյանքով, թուրքական կառավարության ու մուսուլման բնակչության կողմից հալածանքների ու խտրականության չեն ենթարկվել, որ իբր հայերի անդորրը խանգարել է Ռուսաստանը, որը ձգտելով նվաճել թուրքական տարածքները, հայերին ոտքի է հանել թուրքական իշխանությունների դեմ՝ ի վերջո պատճառ դարձել կոտորածների։

Հայ պատմագրությունը գիտականորեն հերքեց նաև թուրք կառավարող շրջանների և պատմագրության այն հերյուրանքները, թե իբր Առաջին աշխարհամարտի հենց սկզբից հայերը պատրաստվում էին թուրքական բանակի թիկունքում ապստամբել հօգուտ Ռուսաստանի, որի համար երիտթուրքերի կառավարությունը հարկադրված էր նրանց տեղահանել կայսրության խորքերը։ Հայ պատմագրության կողմից հիմնավորապես հերքվել են նաև թուրք պատմաբան-կեղծարարների մյուս թեզերը (հայերն են կոտորել թուրքերին, որ թուրքական կառավարությունը արևմտահայերին բռնի գաղթեցման (դեպորտացիա) է ենթարկել իբր միայն ինքնապաշտպանական նպատակով և այլն)։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության՝ խորհրդահայ հետազոտողների գործերում տեղ գտած անճշտությունների և սխալ տեսակետների սրբագրման անհրաժեշտությունը պարտադրում է նշել, որ 1960-ական և մասամբ էլ 1970-ական թվականներին, հայ ազգային կուսակցությունների և կամավորական շարժման դերը գնահատելիս, որոշ հեղինակներ, ցավոք, չկարողացան ազատագրվել անցյալի մտածողության ծանր բեռից[1]։ «Կարճամիտ», «անհեռատես» որակումներով չբավարարվելով, նրանցից ոմանք հայկական կուսակցությունների գործելակերպում տեսան նաև «հակաժողովրդական» քաղաքականություն։ Քաղաքական, դիվանագիտական և ռազմական տեսանկյուններից գնահատելով կամավորական շարժումը, 1960—70-ական թվականներին տպագրված մի շարք աշխատություններում այն դիտվեց որպես «անհեռատես քաղաքականության արդյունք»։ Ավելին։ Տալով շարժման քաղաքական գնահատականը, որոշ պատմաբաններ շարժումը դիտեցին որպես չկշռադատված, անկազմակերպ մի մարտահրավեր, որն «անխուսափելիորեն միայն վնաս էր հասցնելու հայ ժողովրդին»[2]։

Իսկ ոմանք էլ ստիպված էին անպայման տարբերություն տեսնել կամավորական շարժման քաղաքական կազմակերպիչների և այդ շարժման տասնյակ ու հարյուրավոր շարքային խիզախ մարտիկների ու զոհրահրամանատարների միջև։ Երևույթն այնպես էր պատկերվում, որ կամավորները մարտի դաշտ էին մեկնում ազնիվ միտումներով, արևմտահայ իրենց եղբայրներին թուրքական բանտից ազատելու նվիրական առաքելությամբ, իսկ շարժման գաղափարաքաղաքական գործիչները հետամուտ ու հակված էին արկածախնդրությունների։ Որոշ հեղինակներ էլ այն տեսությունն էին զարգացնում, թե իբր ռուս-թուրքական նախորդ պատերազմների ժամանակ կամավորական շարժումներն առաջադիմական էին, իսկ իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում՝ հետադիմական[3]։

Գռեհիկ գաղափարականացման թերությունները վերջին տարիներին աստիճանաբար հաղթահարվում էին։ Խորհրդահայ պատմագիտության զարգացման միտումը վերջին տասնամյակում հնարավոր էր դարձել ըստ ամենայնի վեր հանել դարերից եկող հայ ազատագրական պայքարի մաքառումները, լուսաբանել Հայկական հարցի ծագման ու նրա գործընթացի էվոլյուցիան, արևմտահայերի զանգվածային ոչնչացման թուրքական պետական քաղաքականությունը, բացահայտել մեծ տերությունների քաղաքականության զիգզագները Հայկական հարցում և հայոց ցեղասպանության գործում, մերկացնել պատմության կեղծարարներին։

Կարծում ենք, այդ միտումը պետք է շարունակվի և առավել խորանա անկախ պետականության պայմաններում։

[1] Տակավին 1920—30-ական թթ. հայկական կամավորական շարժմանը տրվել է խիստ բացասական գնահատական (Վահ. Արտ. Կարինյան, Բ. Բորյան), այն դիտվել է որպես ՀՀԴ արկածախնդրություններից մեկը։ Ջծխելով հայ կամավորական շարժման հայրենասիրական լիցքը, որոշ պատմաբաններ (Ջ. Կիրակոսյան, Վ. Պապսամյան, Մ. Արզումանյան և ուրիշներ), տուրք տալով իշխող կարծիքին, շարժումը համարում էին «անհեռատես»։

[2] Տե՛ս Բ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, Երևան, 1974, տե՛ս նաև՝ Բ. Օհանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, Երևան, 1980։

[3] Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան։ 1914—1917, Երևան, 1969, էջ 183—196։

САРУХАНЯН Н. Б.

АРМЯНСКИЙ ВОПРОС В ДОСОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ И ИСТОРИОГРАФИИ

РЕЗЮМЕ

Многоплановая проблема истории Армянского вопроса и геноцид армян вызвала к жизни громадную историческую литературу: исследования, публикации документов и материалов, мемуары. Проблемой занимались и ныне занимаются не только армянские историки, но и русские исследователи, ученые европейских стран, США, стран Ближнего Востока. Свою интерпретацию событий выдвигает турецкая историография, всячески стремящаяся оправдать преступные действия правящих кругов Турции, их антиармянскую политику.

Имеющаяся литература разнится не только по времени своего создания, но и по методологическим подходам, степени достоверности и объективности в рассмотрении исторического материала, что обусловлено как принадлежностью исследователей к различным методологическим школам, так и теми задачами — не только сугубо научными, но и конъюнктурно-политическими, — которые ставились авторами разных течений.

Армянский вопрос, ставший следствием справедливой борьбы армянского народа за свое существование, национальную консолидацию, восстановление государственности на своей родине, превратились в объект суждений и размышлений не только современников событий, но и представителей самых различных течений общественно-политической мысли и историографии последующего времени. Начиная с 70-х гг. XIX века более или менее видных исследователей армянской общественной мысли и историографии, прежде всего интересовали многообразные проблемы, относящиеся к постановкам Армянского вопроса, политике турецких правящих кругов в отношении западных армян, национально-освободительной борьбе армянского народа.

Досоветская армянская историко-общественная мысль оставила обширную литературу, значительное количество монографий, в которых события рассматриваются в экономическом, политическом, дипломатическом и прочих аспектах. Благодаря введенному в научный оборот громадную достоверному фактическому материалу, эта литература не утеряла своего значения поныне.

На протяжении всей своей творческой жизни пытливо искал ответы на проблемы, выдвигавшиеся Армянским вопросом и национально-освободительным движением, писатель и публицист Раффи (Мелик-Акопян Акоп, 1835—1888). В своих многочисленных статьях, путевых заметках («Путешествие от Тифлиса до Агулиса», 1878), анализируя реальные обстоятельства освободительного движения и, признавая абсолютно бесперспективными упавания на европейскую дипломатию в разрешении Армянского вопроса, выдвигал идею национально-освободительной борьбы и считал главной задачей «неустанную и непрерывную подготовку» западных армян к восприятию этой идеи. Раффи разоблачал корни турецкой политики, последовательно раскрывал иллюзорность надежд на превращение Турции в цивилизованное государство. В условиях, когда на Берлинском конгрессе 1878 г. западные державы сумели противостоять усилению России и отвергли требования западных армян, Раффи призывал направлять в западную Армению революционных пропагандистов, которые должны были обучить народ науке национального борения, высечь те идейные искры, из которых должно было возгореться пламя всенародной борьбы. В то время, как армянские политические круги до Берлинского конгресса и после него нередко проявляли непоследовательность и шатания, Раффи продолжал не верить европейской дипломатии и уповал на освободительную миссию России, одновременно выдвигая смелую программу освобождения Армении силой оружия и ценою крови. Он вновь и вновь призывал готовить народ к великому дню, когда настанет время борьбы. Именно эта идеология и программа действия были взяты на вооружение армянского национально-освободительной борьбы 80—90-х гг. XIX века, когда в основу решения Армянского вопроса, избавления от ненавистного ига турецкого деспотизма упорно ставился фактор России, возможность спасения с помощью русского государства. Однако, когда стала очевидной отрицательная позиция царизма к решению Армянского вопроса, когда царизм стал осуществлять политику преследования самоуправления армян в вопросах школы и церкви, Раффи изменил свое отношение к официальной России. Он выражал недовольство тем, что Россия была непоследовательна в решении Армянского вопроса и что царские сатрапы не оценили проявлявшееся на протяжении почти целого века самопожертвования армянского народа ради победы русского оружия.

Этой своей концепцией Раффи пытался воздействовать на Григора Арцруни (1845—1892), который постоянно приспосабливался к политике царского правительства. Видный общественный деятель и публицист Г. Арцруни был, разумеется, прав, когда не доверял

искренности восточной политики европейских держав, но впадал в заблуждение, когда считал, что при помощи другого завоевателя — царской России — возможно освободить порабощенных Турцией западных армян.

В условиях, когда Армянский вопрос стал для европейских держав предметом дипломатических торгов, Г. Арцруни, задумываясь над судьбой Армении, считал, что было бы лучше, чтобы западная Армения присоединилась к России: если же события примут иной оборот и желания западных армян не сбудятся, то в этом случае предпочтительнее предоставить Армении самоуправление, чем возвратить ее под варварское владычество Турции.

Г. Арцруни считал, что Россия должна быть заинтересована в том, чтобы иметь соседом маленькую независимую Армению, а не коварного, постоянно враждебного соседа.

С 80-х гг. XIX века идеология освободительного движения армянского народа вступила в новую фазу своего развития. Армянские общественно-политические силы делали первые шаги в направлении создания групп, организаций, ставящих своей целью поиск путей освобождения западных армян.

Общественное настроение было таковым, что освобождение Западной Армении признавалось как освобождение всей армянской нации.

В досоветской армянской историографии этот период, как и другие этапы развития Армянского вопроса, получил свое наиболее полное освещение в трудах историка, публициста и писателя Лео (Аракел Бабаханян, 1860—1932). В работах, посвященных Восточному кризису и Армянскому вопросу, Лео осветил узловые проблемы международного положения, внутреннего и внешнего положения Турции, ход основных событий и деятельность политических фигур, относящиеся к политической судьбе западных армян, дипломатическим маневрам вокруг Армянского вопроса. В сборнике «Документы Армянского вопроса» (1515 г.) охвачен период со времени Берлинского конгресса 1878 г. и до начала Первой Мировой войны 1914—1918 гг., показано, как великие европейские державы стремились всеми средствами ограничить политический и дипломатический успех России, одержавшей победу в русско-турецкой войне 1877—1878 гг.

Выдержала испытание временем мысль Лео о том, что Армянский вопрос был для великих держав лишь средством вмешательства во внутренние дела Османской империи. Эти же державы, как показывает Лео, в дальнейшем не только не защитили западных армян от турецких варваров, но и сами прямо или косвенно стали соучастниками совершенного в отношении армян злодеяния.

В ряде трудов советского периода «Из прошлого» (1925 г.), «Идеология революции турецких армян» (т. 1—2, 1934, 1935 гг.),

«История Армении» (новейший период, 1927 г.) и другие, Лео проявил отрицательное отношение к армянскому освободительному движению и его деятелям, считал, что причиной нежелательных последствий армянского освободительного движения явилась нечестная политика России. Историк пришел к выводу, что царизм не выполнил своих многочисленных обещаний, данных армянскому народу. Обвиняя царизм в двуличной политике и непоследовательности, Лео вместе с тем не раскрывал основы и причины подобной политики самодержавия. Критикуя царизм за его империалистическую политику, Лео тем не менее признавал, что вследствие проникновения России на Ближний Восток страны этого региона вовлекались в сферу общественного развития России, получали возможность приобщиться к европейской культуре.

К проблеме истории Армянского вопроса в начале XX века обращались и другие представители армянской общественно-политической мысли и историографии. Историк Егише Гегамян (1840—1920 гг.) в ряде трудов — «Исторические фрагменты» (вып. 1—10, 1909—1915 гг.), «Уроки истории» (1915 г.), «Армянские освободительные движения в XIX в.» (1915 г.) и другие — считал неверным призыв Раффи и Хримяна решить Армянский вопрос вооруженной борьбой народа, признавал подобный подход заблуждением и причиной всех тяжких последствий. Согласно Гегамяну, спокойствие армян в мусульманском мире было нарушено их русской ориентацией и восточной политикой России. Он утверждал, что до того, как Петр I обратил свой взор на Восток, христиане-армяне Турции в целом спокойно и хорошо чувствовали себя под покровительством османского престола.

Всеобщая резня, разграбление и разрушение городов и сел, умыкание женщин, депортация и другие подобные бедствия не существовали в Турции до тех пор, пока османское правительство не имело никаких сомнений в отношении благонадежности турецких армян, считал Гегамян. С таких же позиций оценивал русскую ориентацию армян и ее последствия Седрак Авакян, считавший, что во время русско-мусульманских войн «армяне слепо помогали и содействовали русским». Именно этому обстоятельству он приписывал стремление турок уничтожить армян на их же родине. Подобная односторонняя точка зрения не утвердилась в армянской историографии.

В трудный для армянского народа период конца XIX — начала XX вв., когда в Турции оказалось под угрозой не только спокойствие, но и само существование армян, один из представителей армянского консерватизма Магакия Орманян (1841—1918), критикуя вероломство царских властей, тем не менее считал приемлемым для армян владычество России. Трезво оценивая положение восточных и западных армян, Орманян указывал, что русское владычество,

при всей изменчивости своей политики в отношении армян, не организует погромов, жертвами которых становятся сотни тысяч людей, как это происходит в Турции.

Трезвую и ввещенную оценку армянской национально-освободительной борьбе дал в своих трудах Аршак Чопанян (1872—1954). Он считал, что неправы те армянские политики, которые «предпочитают турка русскому», указывал, что русские уже доказали, что на небольшой территории Восточной Армении они не угрожают чести, жизни и имуществу армян. Осуждал также тех деятелей, которые хотели приобрести самоуправление Армении «благодаря Англии и даже с одобрения турок». Чопанян был убежден в том, что физическое уничтожение армян является программой правителей Османской Турции и осуществление этой программы зависит от времени, благоприятных региональных и международных условий. Считал ошибочным мнение о том, что ускорение осуществления этой чудовищной программы было сопряжено с авантюризмом армян (добровольцы, политические партии). Чопанян одним из первых в западноармянской действительности с 90-х гг. XIX века прочно придерживался русской ориентации. В своих трудах и статьях досоветского периода («Россия и армяне», «Армения под турецким игом» и др.) он признавал за Россией решающую роль в национальном освобождении армянского народа и гневно обличал европейскую дипломатию, выступавшую в роли безразличного зрителя. Чопанян считал, что внешнеполитические интересы России часто совпадали с чаяниями армянского народа.

В трудах Алексея Живелегова (1875—1952) разоблачен ярый национализм и шовинизм султана Абдул Гамида II и младотурок, раскрыта сущность коварной политики великих держав в Армянском вопросе. Можно сказать, что почти все видные представители армянской историографии и общественной мысли досоветского периода пришли к верному выводу, что прошлое и его верная правильная оценка должны содействовать пониманию нужд и задач современного развития народа. Накопив документальный и фактический материал по исследуемой проблеме, досоветская армянская историография предпринимала иногда смелые попытки осмыслить и обобщить его, выдвинула различные концепции и точки зрения, отражавшие интересы определенных течений армянской общественно-политической мысли второй половины XIX и начала XX веков. Многие труды обладают непреходящим значением, а вся досоветская армянская историография Армянского вопроса заложила основы научного исследования проблемы.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարան

ա) Ձեռագիր թիվ 4177, 8817

բ) Կաթողիկոսական դիվանի ֆոնդ, թղթ. 17, վավ. 57, թղթ. 18, վավ. 16, թղթ. 55, վավ. 210, թղթ. 71, վավ. 276, թղթ. 167, վավ. 56

գ) Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 70, 107, թղթ. 152, վավ 265

դ) Մ. Աղաբեկյանի արխիվ, «Ուսումն հայոց պատմութեան», Գիրք Գ, հ. 2, թղթ. 184

ե) Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 171—172, 581, 589։

ՀՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀՀ ԿՊՊԱ)

Քաղվածքների ֆոնդ, ֆոնդ 102, գ. 40, թղթ. 56, ֆոնդ 33, թղթ. 18, Կ. Եպյանի ֆոնդ, ֆոնդ 222, ց.1, գործ 17, թղթ. 71։

ՌԴ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՌԴ ԿՊՊԱ)

Ֆոնդ 1281, ց. 6, գործ 59, ց. 7, գ. 52, ֆ. 1396, ց. 1, գ. 34։

Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (ՌԱՔԱ)

Ֆոնդ «Քաղարխիվ V—Ա», 1879 թ., գ. 1099, 1881 թ., գործ 1625, թղթ. 12, 1912 թ., գ. 3727, թղթ. 59։

ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա.—Դո, *Ազատագրական շարժումը Ռուսաստանում և Դաշնան առաջին օրից, Երևան, 1908։*

Ա.—Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912։*

Ա.—Դո, *Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914—1915 թթ., Երևան, 1917։*

«Ազգ», *Կ. Պոլիս, 1908, մայիսի 9։*

Ալպոյաճյան Աբշ., *Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1909։*

Ալպոյաճյան Աբշ., *Մինաս Չերազ՝ Իր կյանքը և գործը, իր 60-ամյա հոբելյանի առթիվ, Գահիրե, 1927։*

Ալպոյաճյան Աբշ., *Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), Կ. Պոլիս, 1919։*

Ակնունի Էդ., *Կովկասյան վերքեր, Ժնև, 1903։*

Ակնունի Էդ., Դևպի կովկ, Հայկական վշտագրության մի էջ, ՀՀԴ, 1904 (տ. ա.)։
Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989։
Աղայան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976։
«Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, № 34։
Աղաբեկյան Մ., Ազգային հիշատակարան։ Կերպ դաշնագրության ի մէջ երկուց ազգաց՝ ռուսաց և հայոց։ «Միլն Ավարայրի», 1966, № 2։
Աղաբեկյան Մ., Ուսումն հայոց պատմության, Մաշտոցի անվան Մատենադարան, Մ. Աղաբեկյանի արխիվ (ձեռագիր)։
«Անահիտ», Փարիզ, 1898, № 3, 1907, № 6—9, 1908, № 1—4։
Անանուն Դ., Մոտիկ անցյալից, Վարդան Գոլոշյան և իր շրջանը Աշ. Հովհաննիսյանի «երկու խոսքով», «Նորք», 4-րդ գիրք, Երևան, 1924։
Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր առաջին, Բաքու, 1916, հատոր երրորդ, Վենետիկ, 1926։
Անանուն Դ., Սարգիս Կովունյանցի հինավուրց նամակները, «Ջիթենի», գրական ժողովածու, Թիֆլիս, 1915։
Անանուն Դ., Անդրկովկասի վարչական բաժանումը, «Գործ», 1917, № 5—6։
Աղանյանց Գյուտ, Դիվան հայոց պատմության, Գիրք ԺԹ («Հարստահարություններ Տաճկահայաստանում»), վավերագրեր, Թիֆլիս, 1915։
Աղասյան Բ., Ազգի փրկության մեծ խնդիրը, Ս. Պետերբուրգ, 1908։
«Աշխատանք», Իզմիր, 1912, հունիսի 16։
Անանիկյան Բ., Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, Երևան, 1974։
Ավետիսյան Հ., Երիտասարդ Թուրքերի և մուսավաթի գործակցությունը և հակահայկական ոճրագործությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 1—2։
Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, բ. դպրոց, 1997։
Ավագյան Ս., Ազատ Հայաստան Ռուսաստանի հովանավորության տակ, «Հովիտ», 1915, № 10։
Ավագյան Ս., Ավերակների աշխարհից, «Հովիտ», 1916, № 8։
Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976։
Արզումանյան Մ., Հայաստան, 1914—1917, Երևան, 1969։
Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973։
Արծրունի Գր., Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894։
Արծրունի Գր., Աշխատություններ, Թիֆլիս, 1904։
Անանյան Հր., Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր-Նախիջևան, 1915։
«Արձագանք», 1883, № 37, 40, 1887, № 36, 1888, № 11, 1892, № 80։
Արմեն Գառո, Ապրած օրեր, Պոսթըն, 1948։
«Արմենիա», Մարսել, 1886, № 6, 1887, № 2, 29, 1888, № 23, 25, 1889, № 14, 71։
Արամյանց Հմ., Վերածննդի երկունքը, հտ. Ա, Կ. Պոլիս, 1918։
Արփիարյան Արփիար, Երկեր, Երևան, 1987։
Արփիարյան Արփ., Բաֆֆին և հայ պատմավիպասանությունը, «Մասիս», 1884, № 3737, 2789, 3810, 3811։
Ատոմ, Օսմանյան կայսրության անկման պատմությունը, Կ. Պոլիս, 1913։
«Արևելյան մամուլ», 1872, № 1, 1876, № 3։
«Արևելք», 1885 թ. հունվարի 14, 1910 թ. հունվարի 22։

Բերբերյան Ռ., Պատրանքների շրջանից, «Վեմ», ԻԱ, Փարիզ, 1938։
Բյուրատ Սմբատ, Արևելյան խնդիրը և հայկական հարցը, Կ. Պոլիս, 1919։
Գաբիկյան Ե., Հայկական հարցը, Պեյրութ, 1962։
Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978։
Գեղամյան Եղ., Պատմական քաղվածքներ, պրակ 7, Բաքու, 1909։
Գեղամյան Եղ., Հայ ազատագրական շարժումները ԺԲ դարում, Բաքու, 1915։
Գեղամյան Եղ., Մտորումներ, «Հովիտ», 1906, № 39։
Գեղամյան Եղ., Իսրայել Օրին և իր քաղաքական ծրագիրը, Բաքու, 1914։
Գեղամյան Եղ., Պատմության դասերը, Բաքու, 1915։
Գեղամյան Եղ., Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում կամ Հայկական հարցի յոթերորդ շրջանը, Բաքու, 1916։
Գեղամյան Եղ., Պատմական զրույցներ, Բաքու, 1917։
Գեղամյան Եղ., Ռուս բյուրոկրատիան և հայերը, Բաքու, 1917։
Գաբրիելյան Մ., Հայկական հզնաժամը և վերածնություն, Բոստոն, 1905։
Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ (1890—1910), Պեյրութ, Լիբանան, 1973։
Գյոզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Բեյրութ, 1954։
Գյոզալյան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Հ. Դաշնակցությունը, Փարիզ, 1927։
Գալլաֆյան Կ., Արշակ Չոպանյան, Երևան, 1987։
Գարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947։
Դիվան Հ. Հ. Դաշնակցության, հտ. 1, Բոստոն, 1915։
«Երոշակ», 1907, № 5, 1909, № 1, 1914, № 4։
Օզյան Կ., Էջմիածնի մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը, Թիֆլիս, 1904։
Եսայան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. 1, 2, Ալեքսանդրիա, 1929։
Երիցյան Ալ., Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրությունը, «Փորձ», 1877, № 3—4։
Երիցյան Ալ., Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ, «Փորձ», 1877—1878, № 1—2։
Երիցյան Ալ., Մտեփանոս Նազարյանց և նորա գրական գործունեությունը, «Փորձ», 1879, № 11, 1880, № 1։
Երիցյան Ալ., Ռուսաց հայոց վիճակը, «Փորձ», 1881, № 3։
Երիցյան Ալ., Դարձյալ Մտեփանոս Նազարյանցի գրական ժառանգության մասին, «Փորձ», 1881, № 5—6։
Երիցյան Ալ., Թե ինչպիսի՞ հարգանքներ է ցույց տվել ռուսաց տերությունը հայոց կաթողիկոսներին, «Արձագանք», 1885, № 20։
Երիցյան Ալ., Ռուսիայի մասնակցությունը ս. էջմիածնի կաթողիկոսների ընտրության խնդրում, «Արձագանք», 1884, № 19։
Երիցյան Ալ., Գրիգոր Արծրունու և նրա քսանհինգ տարվա գործունեության առթիվ (1865—1890), Թիֆլիս, 1890։
Երիցյան Ալ., Նորընտիր կաթողիկոսների ուղևորությունները դեպի էջմիածին և ռուսաց տերության մատուցած հարգանքները, «Արձագանք», 1893, № 69, 70։

Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք ԺԹ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, մասն Բ, Թիֆլիս, 1895։
Երիցյան Ալ., Թիֆլիզեցվոց աղետը 100 տարի առաջ, «Արձագանք», 1897, № 6։
Երիցյան Ալ., Ռուսաց օգոստափառ կայսրների ցույց տված ընդունելությունը ամենայն հայոց կաթողիկոսներին, «Արձագանք», 1895, № 65, 68, 88։
Նայյան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965։
Նվրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին, Ժնև, 1907։
«Երկրի ձայները», Թիֆլիս, 1907, № 24, 25։
Ղավեճ արհեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս, վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947։
Ջոճրապ Գր., Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, Կ. Պոլիս, 1910։
Ջոճրապ Գր., Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Բեյրութ, 1973։
«Թատրոն», Կ. Պոլիս, 1876, 4 դեկտեմբերի։
Թառոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, Երևան, 1980։
Թարոսյան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալյանը, Նյու-Յորք, 1919։
Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրի և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1900։
Թումանյան Հովհ., Երեկվան պատմությունը և այսօրվա իրականությունը, «Հորիզոն», 1912, № 196։
Թումանյան Հովհ., Հայկական հարցը և իր լուծումը, «Հորիզոն» 1913, № 7—14։
Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, Երևան, 1978։
Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտներ, Թիֆլիս, 1882։
Թոփչյան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, Թիֆլիս, 1909։
Ինճիկյան Հովհ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1989։
Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907։
Իշխանյան Բ., Թուրքիայի ապագան (քննական էտյուդ), Թիֆլիս, 1908։
Խաճակյան Ավ., Երկեր, հտ. չորրորդ, Երևան, 1959։
Խաճակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. վեցերորդ, Երևան, 1979։
Լեո, Գլադստոն, Թիֆլիս, 1899։
Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Երևան, 1914։
Լեո, Հայոց հարցը, Թիֆլիս, 1906։
Լեո, Ստեփանոս Նազարյանց, հտ. առաջին, Թիֆլիս, 1902։
Լեո, Վրաստանի միացումը Ռուսաստանին, «Մուրճ», 1901, № 2։
Լեո, Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902։
Լեո, Գրիգոր Արծրունի, հտ. առաջին, Թիֆլիս, 1902, հտ. երկրորդ, Թիֆլիս, 1903, հտ. երրորդ, Թիֆլիս, 1905։
Լեո, Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, 1904։
Լեո, Հայացք դեպի հեռավոր անցյալը,. «Հուշարար», 1908, № 15—16։
Լեո, Հայ հայրենիքը, Թիֆլիս, 1916։
Լեո, Սխալված չենք, «Համբավաբեր», 1917, № 23։
Լեո, Հայոց պատմություն։ Նորագույն շրջան։ Դասախոսություններ կարդացված Երևանի համալսարանում 1924—1925 ԹԹ. ուս. տարում (մեքենագիր-ապակետիպ), մասն 1—2։

Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925։
Լեո, Փոխարկվող մշակույթներ (Երևանի դրամման 100-ամյակի առթիվ), «Խորհրդային Հայաստան», 1927, № 224։
Լեո, Նոր նյութեր 19-րդ դարի պատմության համար, «Նոր ուղի», 1932, № 1։
Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934։
Լեո, Հայոց պատմություն, հտ. երրորդ, Երևան, 1969։
Լեո, Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, հտ. 1, Փարիզ, 1934, հտ. 2, Փարիզ, 1935։
«Լումա», 1904, № 6։
Խանազատ Ռ., Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908։
Խառատյան Ալ., Հակոբ Պարոնյանի պարբերականները, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2։
Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977։
Կարինեան Գառ., Ազգային հերոս Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, Փարիզ,1953։
Կարինյան Աբ., Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Երևան, 1924։
Կյուրճյան Մ., Ամբողջական երկեր, Փարիզ, 1931։
Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական ԹԹ.), Երևան, 1978։
Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական ԹԹ.), Երևան, 1980։
Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հտ. 1—2, Երևան, 1982—1983։
Կոստանդյան Էմմա, Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979։
«Հայաստան», Լոնդոն, 1891, № 15։
«Հայաստան», Թիֆլիս, 1917, 16 ապրիլի, 27 հոկտեմբերի։
«Հայրենիք», 1922, № 2։
Համբարյան Ա., Ալ. Երիցյան («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1)։
Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965։
Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում (1908—1914 ԹԹ.), Երևան, 1979։
Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990։
«Հառաջ», 1906, № 25։
«Հորիզոն», 1913, № 65։
«Հնչակ», 1888, № 4, 1889, № 3, 1897, № 10։
Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ և առաջաբանով, Երևան, 1972։
ՀՀ Գրականության թանգարան, Ռ. Պատկանյանի արխիվ, ԹՊ. 270։
Հիսամյակ — Սոց. դեմ. հնչակյան կուսակցության, Փրովիդենս, ԱՄՆ, 1938։
«Հովիտ», 1906, № 39, 1916, № 5, 6։

Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, գիրք երկրորդ, Երևան, 1956։
Հովհաննիսյան Աշ., Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության ակունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1։
Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965։
Հովսեփյան Գ., Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Թիֆլիս, 1909։
Ղարաջյան Գ. (Արկոմեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անգրկովկասում, Թիֆլիս, 1927։
Ղարաջյան Գ. (Արկոմեդ), Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918։
Ղարիբջանյան Գ., Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971։
«Մասիս», 1863, № 1։
Մելոյան Հ., Թուրքահայ հին վաճառականություն ու վաճառականք, Կ. Պոլիս, 1908։
Մամուրյան Մ., Անգղիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881։
Մամուրյան Մ., Սև լեռին մարդը, Աթենք, 1932։
Մարմարեան Ա., Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920։
Մելիքյան Վ., Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917 թ., «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2։
Մերվան զադե Ռիֆաթ, Օսմանյան կայսրության մութ ծալքերը, Բեյրութ, 1938։
«Մեղու Հայաստանի», 1878, № 26, 1881, № 182։
Միխայելյան Ք., Հեղափոխականի մտքերը, Երևան, 1990։
Մխիթարյան Մ., 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976։
Մուշեղ արհեպիսկոպոս, Մանչեստրի հայ գաղութը, Բոստոն, 1911։
«Մշակ», 1872, № 22, 1875, № 19, 1876, № 25, 27, 1877, № 26, 33, 56, 59, 1878, № 37, 51, 64, 141, 1879, № 125, 126, 209, 1888, № 6, 1900, № 92, 1912, № 196, 1914, № 28, 289։
Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, Մոսկվա, 1935։
Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985։
Ներսիսյան Մ., Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940։
Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955։
Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982։
Ներսիսյան Մ., Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության մի քանի հարցերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես» 1994, № 1—2։
Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, № 1։
Ներսիսյան Մ., Արևմտահայերի 1915—1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, № 2։
Նյութեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Ա հատ., Բեյրութ (թ. ա.)։
«Նեցուկ», Շուշի, 1917, 16 հուլիսի, 28 սեպտեմբերի։
«Նոր կյանք», 1898, № 4։
Շահազիզ Ս., Մբռնած Շահազիզի կենսագրությունը, Երևան, 1944։

Շահազիզ Ս., Երկեր, Երևան, 1980։
Շահազիզյան Ս., Հրապարակախոսի ձայն, Մոսկվա, 1881։
Շահումյան Ստ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, Երևան, 1948։
Շահումյան Ստ., Երկեր, հտ. 2, Երևան, 1957։
Շահումյան Ստ., Ընտ, հտ. 2, Երևան, 1976։
Չերազ Մ., Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1878։
Չորուրյան Էդ., Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920։
Չոպանյան Ա., Հայոց նոր գրականությունը և հայկական խնդիրը, «Նոր կյանք», Լոնդոն, 1898, № 14։
Չոպանյան Ա., Ռուսիա և հայերը, «Անահիտ», 1906, № 3—5։
Չոպանյան Ա., Հայաստանը Թուրք լուծին տակ, Բոստոն, 1918։
Չոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1924։
Չոռմիսյան Լ., Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, հտ. Ա, Բեյրութ, 1972։
Պալասանյան Ստ., Տասնիններորդ դարու նշանաբանը, «Փորձ», 1876, № 2։
Պալասանյան Ստ., Հունաստանի անկախությունը, «Փորձ», 1877—1878, № 4։
Պալասանյան Ստ., Պատմություն հայոց, Թիֆլիս, 1895։
«Պայքար», Բոստոն, 1923, մայիսի 12։
Պռոշյան Պ., Շահէն, Թիֆլիս, 1883։
Պատկանյան Ռ., Երկերի ժողովածու, Երևան, 1968։
Պատկանյան Ռ., Երկեր, Երևան, 1990։
Պարոնյան Հ., Երկեր, Երևան, 1979։
Պարոնյան Հ., Երկեր, հատ. 2, Երևան, 1962։
Պարսամյան Վ., Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը, Երևան, 1946։
Սապահ-Գյուլյան Ս., Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908։
Սապահ-Գյուլյան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրե (առանց թվականի)։
Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Փրովիդենս, 1916։
Սասունի Կ., Պատմություն Տարոն աշխարհի, Բեյրութ, 1957։
Սասունի Կ., Թուրքահայաստանը և աշխարհամարտի ընթացքին (1914—1918), Բեյրութ, 1966։
Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927։
Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937։
Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948։
Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք երկրորդ, Երևան, 1989։
Սարուխան, Ազգային խնդիրն ու սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1901։
Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 1971։
Սարուխանյան Ն., Հայերի ցեղասպանությամբ մինչխորհրդային հայ պատմագրության մեջ, «Պայքար», 1996, թիվ 3—4։
Սարուխանյան Ն., Ռուսաստանի պետական դուման հանդես եկող հայոց ցեղասպանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, № 2։
Սարուխանյան Ն., Մեծ եղեռնի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, № 2։

Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986։
Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991։
Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996։
Սիմոնյան Պ., Մեր խոստովանությունք, «Հովիվ», 1909, № 44, 45։
Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպական սիստեմը և կանոնադրությունը, 1905, (տ. ա.)։
Սրվանձտյանց Գ., Մանանայ, Կ. Պոլիս, 1876։
Սրվանձտյանց Գ., Որոս աղբար Հայաստանի համբորդ, մասն Ա, Կ. Պոլիս, 1879, մասն Բ, Կ. Պոլիս, 1884։
«Սուրճանդակ», Կ. Պոլիս, 1908, № 56։
Վարանդյան Մ., Հ. Հ. Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, հ. 2, Կահիրե, 1950։
Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմությունը, հ. 1, 2, Ժնև, 1912, 1913։
Վարանդյան Մ., Հ. Հ. Դաշնակցության պատմություն, Երևան, 1992։
Վարանդյան Մ., Վերածնված հայրենիքը և մեր դերը, Ժնև, 1919։
«Վաճառական», 1866, № 24։
«Վերածնունդ», 1903, № 6։
Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմության համար, էջ 120։
Վրացյան Ս., Պատմական հարյուրամյակը, «Հայրենիք», 1928, № 1։
Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958։
Տեր-Միհեսյան Ե., Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս-Անջելոս-Կալիֆորնիա, 1952։
Տերյան Վ., Երկեր, Երևան, 1989։
Բաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1895։
Բաֆֆի, Երկեր, հտ. 4, Երևան, 1956։
Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1984։
Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 8, Երևան, 1986։
Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 9, Երևան, 1987։
Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 10, Երևան, 1991։
Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 11, Երևան, 1991։
«Փորձ», 1877—1878, № 1—2, 1879, № 1, 2, 7, 8, 9, 1880, № 6—7, 1881, № 5, 6, 1883, № 19։
Փարամազ (Մատթեոս Սարգսյան), Կյանքն ու գործունեությունը, Բրովիդենս, 1954։
Օտյան Եր., Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1962։
Օտյան Գր., Սահմանադրական խոսքեր և ճառեր, դամբանականներ, Կ. Պոլիս, 1910։
Օրմանյան Մ., Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911։
Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. 2, Երուսաղեմ, 1927։
Օրմանյան Մ., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929։
Ֆուաղ փաշայի կտակը, «Արօր», Ա տարի, 1910, № 6։

ՆՈՒՍԵՐՆ

Адамов Е., К вопросу об исторических перспективах развития восточного вопроса, сборник, «Колониальный восток», М., 1924.
Аверьянов П., Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, СПб, 1912.
А-До, Как турки истребили армян, «Армянский вестник», 1916, № 10.
Арцруни Гр., Восточный вопрос, Тифлис, 1876.
Арцруни Гр., Экономическое положение турецких армян. Публичная лекция, прочитанная в Тифлисском ремесленном клубе 11 мая 1879 г., М., 1880.
Алимов А., Революция 1908 г. в Турции в сборнике «Пробуждение Азии», М., 1935.
Ананов И., Судьба Армении, М., 1918.
Аракелян А., Статистика армянского населения Малой Азии, Тифлис, 1914.
Армянская пресса по поводу речи П. Н. Милюкова в Государственной думе, «Армянский вестник», 1916, № 10.
Арутюнянц Е., Отставка С. Д. Сазонова и армянский вопрос, «Армянский вестник», 1916, № 26.
Берберян М., Война и армянский вопрос, «Кавказское слово», 1914, № 18.
Бисмарк О., Мысли и воспоминания, т. III, М., 1941.
Бекгулянц Р., По Турецкой Армении. Ростов-на-Дону, 1914.
Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, т. 1, 2, М. — Л., 1928, 1929.
«Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897.
Брюсов В., Поэзия Армении, М., 1916.
Бутаев И., Проблемы Турции, Л., 1925.
Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, М., 1911.
Вильгельм Гогенцоллерн, Мемуары 1878—1918, Петроград, 1923.
Виноградов В., Дизраели, Гладстон и Шувалов в канун русско-турецкой войны 1877—1878 гг., «Новая и Новейшая история», 1978, № 3.
Водовозов В., Старый режим в Турции, СПб, 1901.
Воронцов-Дашков об армянском вопросе, «Армяне и война», 1917, №№ 11-12.
Герои и деятели русско-турецкой войны 1877—1878 гг., СПб, 1880.
Голобродко И., Старая и новая Турция, М., 1908.
Гирс А., Россия и Ближний Восток, СПб, 1906.
Грин Фр., Армянский кризис и владычество турок, Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896.
Геноцид армян в Османской империи, под ред. проф. Нерсисяна М. Г., Ереван, 1966.
Германские источники о геноциде армян, под ред. С. С. Степаняна, Ереван, 1991.
«Голос», 1877, 24 декабря.
Дживелегов Ал., Армяне в России, М., 1906.
Дживелегов Ал., Будущее Турецкой Армении, М., 1911.
Дживелегов Ал., Судьба Армении, «Армянский вестник», 1916, № 1.

Дживелегов Ал., Армянский вопрос в Государственной думе, «Армянский вестник», 1916, № 4.

Дживелегов Ал., Англия и армяне, «Армянский вестник», 1916, № 15.

Дживелегов Ал., Русские победы и армянский народ, «Армянский вестник», 1916, № 20.

Дживелегов Ал., Спор об автономной Армении, «Армянский вестник», 1916, № 34.

Дживелегов Ал., Автономия Армении и русская интеллигенция, «Армянский вестник», 1916, №№ 37—38.

Дживелегов Ал., Неотуранизм и Армения, «Армянский вестник», 1916, № 41.

Дживелегов Ал., Заявление Трепова и армянский вопрос, «Армянский вестник», 1916, № 44.

Дживелегов Ал., Русская революция и Армения, «Армянский вестник», 1917, №№ 10—11.

Дживелегов Ал., О временном управлении в завоеванной у Турции Армении, «Армянский вестник», 1917, № 16.

Дживелегов Ал., Советский декрет о Турецкой Армении, «Армянский вестник», 1918, № 3.

Диллон Эм., Положение дел в Турецкой Армении, «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896.

Диев А., Армянский вопрос в Турции, М., 1893.

Джордж Ллойд, Правда о мирных договорах, т. 2, М., 1957.

Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. IV, СПб, 1877—1888.

Дуглас Рид, Спор о Сионе (2500 лет Еврейского вопроса), перевод с английского, Краснодар, 1991.

Ерицов А., Опыт Статистического очерка Народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.

Ерицян А., Материалы для описания Турецкой Армении, Эрзерумский вилайет, Тифлис, 1884.

Инджикян О., Буржуазия Османской империи, Ереван, 1977.

История дипломатии, т. II, автор тома В. М. Хвостов, М., 1963.

Карцев Ю., За кулисами дипломатии, СПб, 1908.

К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, М., 1961.

Керри Г., Политико-экономические письма к президенту Американских Соединенных Штатов, М., 1860.

Киракосян А., Великобритания и армянский вопрос (90-е годы XIX века), Ер., 1990.

Киракосян Дж., Мигранян А., Киракосян А., Трагедия армян в Османской империи 1915—1916 гг. в освещении буржуазной историографии, «Вопросы истории», 1986, № 5.

Кишмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884.

Колюбакин А., Материалы для военно-исторического обозрения Азиатской Турции, Тифлис, 1888.

Конференция в Лондоне по Восточному вопросу, «Тифлисский листок», 1896, № 63.

Кравченко Н., Очерки по истории международных отношений конца XIX и начала XX вв. Берлинский конгресс 1878 г., Саратов, 1925.

Кузнецов Л., Из далекого прошлого, Сборник, «Народовольцы после 1-го марта 1881 года», М., 1928.

Майский В., Германия и Ближний Восток, «Русские записки», 1916, № 1.

Мак-Коль М., Султан и державы, СПб, 1897.

Мнацаканян Г., Разрешение армянского вопроса, М., 1914.

Магарадзе Эл., Григол Орбелиани, М., 1980.

Милюков П., Воспоминания, М., 1991.

Мелик-Каракозов Г., Выступление Германии в Турции после великих армянских погромов 1895—1897 гг., Тифлис, 1915.

Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 4, М.—Л., 1934.

Нарочницкий А., Балканский кризис 1875—1878 гг. и великие державы, «Вопросы истории», 1976, № 11.

Новичев А., Турция. Краткая история, М., 1965.

Оруджев М., Из истории проникновения германского империализма в Турции, Баку, 1961.

Ошеровский Л., Трагедия армян-беженцев, СПб, 1916.

Петросян Ю., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958.

Петросян Ю., Младотурецкое движение (вторая половина XIX — начало XX вв.), М., 1971.

Покровский М., Русский империализм в прошлом и настоящем, «Внешняя политика», Сборник, 1919.

Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896.

Павлович М., (Вельтман), Революционная Турция. Величие и падение Оттоманской империи (Старая Турция), М., 1921.

Раздел Азиатской Турции, По секретным документам МИД-а, под ред. Адамова Е. А., М., 1924.

«Рассвет», 1907, № 31, 1908, № 6.

Ролен-Жакмен М., Армения, армяне и трактаты в сборнике «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896.

Ротштейн А., Международные отношения в конце XIX века, М.—Л., 1960.

«Речь», 1912, 14 декабря.

«Русское слово», 1912, 10 ноября.

«Русские ведомости», 1917, 22 июля.

Саркисян Е., Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начала XX вв., Ереван, 1973.

Степанян С., Армения в политике империалистической Германии, Е., 1975.

Степанян С., Германские источники о геноциде армян: сборник документов и материалов, Ереван, 1991.

Силин А., Из истории политики Бисмарка в Восточном вопросе в 1870—

1880 годах. В кн.: Вопросы истории внешней политики СССР и международных отношений, М., 1976.

Тер-Арутюнов А., Политические партии в современной Турции, «Русская мысль», 1908, № 9.

Тыркова Ариадна, Старая Турция и младотурки, год в Константинополе, Петр., 1916.

Хвостов В., История дипломатии, т. II, М., 1963.

Чалхушян Гр., Армянский вопрос в России, Ростов, 1905.

Чихачев П., Великие державы и восточный вопрос, Сборник составил В. В. Цибульский, М., 1970.

Фадеев Р., Собрание сочинений, т I, 60 лет Кавказской войне, СПб, 1889.

Անգլերեն

Ahmed Emin, Turkey in the World War, Oxford, 1930.

Aslan Kevork, Armenia and the Armenians, New York, 1920.

«British Documents on the Origins of the War», London.

Dillon E., The Condition of Armenia, London, 1985.

Bixton, Travel and Politics in Armenia, London, 1976.

Gladstone W., The Armenian Question, London, 1895.

Maccol Malcolm, The Sultan and the Powers, London, 1896.

Morgan J., The History of the Armenian Peoples. From the Remotest to the Present Day, New York, 1949.

Sarkissian H., History of the Armenian Questions of 1885, Urbana, 1938.

Papazian B., Tragedy of Armenia, Bostan-Chicago, 1918.

Sevasly M., Armenia in and before 1878. Boston, 1906.

Anderson M., The Great Powers and the Near East 1874—1923. Documents of modern history, London, 1970.

Seton-Watson R., Disraeli, Gladstone and the Eastern question. A study in Diplomacy and party politics, London, 1935.

Tyler M., European powers and the Near East, 1875—1908. Minneapolis, 1925.

Wittlin Al., Abdul Hamid. The shadow of God, Kondon, 1940.

Feror Ahmad, The Young Turks. The committee of union and progress in Turkish politics in 1908—1914. Oxford, 1969.

Richard Hovannisian, Armenia an the Road to Independence, Los Angeles, 1969.

Richard Hovannisian, The Republic of Armenia, volume I, Los Angeles, 1974.

Hacobian A., Armenia and the war: An Armenians point of view with an appeal to Britain and the coming peace Conference. With a preface by the Rt. Hon. London, 1917.

Morgenthau Henry, The tragety of Armenia, London, 1918.

Papadopoulos G., England and the wear East, 1896—1898, Thesalonuka, 1969.

Աբաշիձե Կ. — 145
Աբելյան Ա. — 139
Աբդուլ Ազիզ — 21
Աբդուլ Համիդ — 11, 21—22, 31, 37, 73, 76, 103, 161, 175, 193, 198, 211, 246, 255
Ադամով Ե. — 264
Ա.-Դո — 229, 256, 264
Աբովյան Խ. — 69, 95, 138
Ադոնց Ն. — 228—229, 257
Աթաբեկյան Լ. — 153
Ալեքսանդր I — 161, 167—168
Ալեքսանդր II — 33
Ալիմով Ա. — 111, 264
Ալիսագով Յ. — 30
Ալպոյաճյան Ա. — 23—24, 256
Ախվերդյան Գ. — 158
Ակնունի Էդ. (Մալումյան Խ.). — 87, 108, 133, 204—205, 207, 209, 211—212, 256—257
Ահարոնյան Ա. — 230
Ահմեդ Է. — 267
Աղայան Ղ. — 230
Աղայան Ծ. — 257
Աղբալյան Ն. — 139
Աղաբեկյան Մ. — 60, 158, 256—257
Աղաթոն — 28, 46
Աղանյան Գ. — 27, 257
Աղասարյան Բ. — 257
Ամատյան Հ. — 220—221, 257
Ամիրյան Խ. — 141
Ամֆիտեատրով Ա. — 187
Այվազովսկի Գ. — 166, 207
Անանիկյան Բ. — 250, 257
Անանով Ս. — 264
Անանուն Գ. — 88, 126, 143, 153, 215—217, 220, 257
Անդերսոն Մ. — 267
Անդրանիկ — 109, 139—141, 148, 153—154
Անտոնյան Ա. — 229
Աշտարակեցի Ն. — 141, 162, 168, 170, 190, 256
Առաքելյան Հ. — 61, 137, 139, 141, 129, 264
Ասլան Գ. — 267
Ասլանյան Ստ. — 34
Ավագյան Ս. — 175, 254, 257
Ավետիսյան Հ. — 257
Ավետիսյան Վ. — 92, 257
Ավերյանով Պ. — 146, 150, 264
Աստմ (Շահրիկյան Հ.) — 108, 257
Արամյանց Հմ. — 102
Արզումանյան Մ. — 217, 249, 250, 257
Արղության Հ. — 139, 190
Արղության Մ. — 210
Արշարունի — 119
Արծրունի Գր. — 9, 51—56, 64—65, 71, 87—88, 98, 171, 180, 182—184, 187, 201, 204, 246, 252—253, 257, 264
Արմեն Գարո (Փաստրմաջյան Գ.) — 108, 133, 140, 257
Արփիարյան Արփ. — 33, 63, 77, 99, 257
Բաքստոն Ն. — 126, 267
Բեկգուլյանց Ի. — 264
Բեկ Համզաթ — 207
Բեյբուրդյան Վ. — 248
Բերբերյան Ի. — 95, 97—98, 258
Բերար — 233
Բիամարկ Օ. — 37, 223, 264
Բյուրատ Ս. — 257
Բոյաջյան Հ. (Մուրադ) — 98
Բորյան Բ. — 244, 249, 264
Բրայս Ջ. — 105, 126
Բրյուսով Վ. — 264
Բուտան Ի. — 264
Գարիկյան Խ. — 32, 257
Գարրիելյան Մ. — 257
Գլադստոն Ու. — 67, 185—187, 195, 218, 233, 267
Գալիկյան Գ. — 149, 169, 171
Գալոյան Գ. — 157
Գալֆայան Խ. (Նար-Պեյ) — 42
Գանգրունի Հ. — 117, 257

Դարագաշյան Մ. — 180
Դեղամյան Ե. — 135, 169—174, 254, 257
Դիզո Ֆ. — 70
Դիրա Ա. — 117, 119—121, 231, 264
Գյոզալյան Գ. — 257
Գյուլյան Ս. — 103, 129, 262
Գոլոբորոդկո Ի. — 10, 264
Գորշակով Ա. — 32
Գրեյ է. — 125—126, 128
Գրին Ֆ. — 105
Գրինֆիլդ Ջ. — 240
Գուլկևիչ Կ. — 130—132
Գալլաքյան Կ. — 199, 257
Գարոնյան Յու. — 248
Գարբինյան Ա. — 138, 149, 257
Գևիրճյան Գ. — 230
Դիզրաելի (Բիքոնսֆիլդ) — 32, 50, 186, 195, 213, 223—224
Դիլլոն է. — 7, 105, 233, 264, 267
Դորոշյուրով Ն. — 207
Դրո (Դրաստամատ Կանայան) — 140—141
Դուբրովին Ն. — 164, 189, 264
Դուգաս Ռ. — 207, 264
Դուդան Ջ. — 207
Երամյան Հ.—28, 74, 257
Եզյան Կ. — 49, 163—166, 189—190, 256—257
Եսայան Ա. — 257
Էրիցյան Ալ. — 15, 156—158, 160—163, 166, 180, 256—257, 264
Երուխան Եր. (Սերմաքեշխանլյան) — 202
Զավարյան Ս. — 94
Զավրիև Հ. — 120, 139, 150
Զաքարյան Բ. — 98
Զոհրապ Գր. — 44, 230—232, 257
Զորյան Ստ. (Ռոստոմ) — 94
Էմին Մ. — 180
Էնգելս Ֆ. — 18
Թադևորյան Ս. — 77
Թալեաթ փ. — 129, 135—136
Թառոյան Կ. — 157
Թեհլերյան Ս. — 140
Թերզիբաշյան Ա. — 149
Թերզյան Հ. — 129
Թեքեյան Վ. — 144, 200
Թիերի Օ. — 70
Թոխմախյան Ա. — 257
Թորգոմ (Թումյանց Թուման). — 140
Թորոսյան Պ. — 90, 257
Թոփչյան Ե. — 229, 257
Թումայան Կ. — 186—187, 257
Թումանյան Հ. — 139—140, 230, 233—234, 242, 257
Ժաբոտինսկի Վլ. — 21
Ժեկմեն Ռ. — 12, 105
Ժորդանիա Ն. — 147
Իգնատև Ի. — 31, 34
Իզմիրլյան Մ. — 45
Ինճիկյան Հ. — 11, 22, 257, 264
Իշխանյան Բ. — 142, 215, 217—220, 257
Իսրայել Օրի — 170
Իսահակյան Ավ. — 230, 237—241, 257
Իփեքճյան Հ. — 165
Լազարև Հ. — 30
Լայբրդ Հ. — 31, 33, 174, 213
Լեո — 6, 7, 14, 94, 112, 132, 139, 179—184, 186—187, 189—196, 200, 203, 230, 239—240, 249, 253, 259—260
Լեփսիուս Յ. — 240
Լիման ֆոն Զանդերս — 128
Լլոյդ Ջ. — 37, 213, 264
Լոռիս-Մելիքով Մ. — 30
Լոֆտուս Ա. — 32
Լուի-Ֆիլիպ — 23
Լևոնյան Գ. — 241—242
Խաժակ (Զագալյան Գ.) — 108
Խալաթյան Գր. — 180
Խանզադյան Ռ. — 87, 99, 260
Խառատյան Ա. — 78, 260
Խաղամով Վ. — 145
Խառիսյան Ա. — 139
Խվոստով Վ. — 267
Խրիմյան Մ. — 27—28, 34, 42, 44, 74, 84, 99, 168, 171, 187, 224, 254
Խուրշուդյան Լ. — 260
Ծատուրյան Ալ. — 240
Ծերենց — 14, 69—74, 107, 168
Կամսարական Կ. — 74
Կառնեգի Դ. — 124
Կարապետյան Մ. — 248
Կարինեան Գ. — 110, 260
Կարցև Յու. — 264
Կարինյան Աբ. — 249, 260
Կաֆյան Գ. (Շմավոն) — 98
Կիրակոսյան Ա. — 248, 264
Կիրակոսյան Ջ. — 247—249, 260, 264
Կլիֆորդ Լ. — 5
Կյուլպենկյան Գ. — 121
Կյուրճյան Մ. — 260
Կոբոյան Հ. — 140
Կոլյուբակին Ա. — 265
Կոմարովսկի — 105
Կոստանդյան է. — 81, 260
Կոստանյան Կ. — 166
Կրավչենկո Ն. — 266
Կուզնեցով Լ. — 266
Հակոբյան Կ. — 89
Հակոբյան Ս. — 247
Համամչյան Ս. — 31
Համազասպ — 140—141
Համբարյան Ա. — 13, 44, 104, 114, 157, 247, 260
Համբարձումյան Կ. — 150
Հասունյան Ա. — 71
Հարությունյանց Ե. — 264
Հերցլ Թ. — 22
Հովհաննիսյան Աբ. — 50, 65
Հովհաննիսյան Աշ. — 24—25, 27, 47—48, 61, 68—69, 77, 261
Հովհաննիսյան Ռ. — 34, 261
Ղազի Մուհամեդ — 207
Մագաբյան է. — 210, 266
Մադաթով Բ. — 210
Մամուրյան Մ. — 48, 80—83, 261
Մայսկի Մ. — 266
Մակ-կոլ Մ. — 105, 266—267
Մանդելշտամ Ա. — 127, 192, 232
Մանուկյան Ա. — 140
Մարմարյան Ա. — 48, 80—83, 261
Մարքս Կ. — 18, 264
Մելիք-Կարակոզով Գ. — 229, 266
Մելիքյան Վ. — 146, 261
Մերվան դադ Իբֆաթ — 117, 260
Միլյուկով Պ. — 124—127, 154, 266
Միհշատ փաշա — 107, 159—160
Մխիթարյան Մ. — 48, 166, 261
Միշաևսկի Ա. — 140
Միշլե Ժ. —70
Մինաս Չերազ — 42, 96, 262
Միրզոյան Գ. — 87
Միքայելյան Վ. — 248
Միքայելյան Քր. — 48, 94, 104—105, 218, 220, 261
Մյասնիկյան Ալ. — 133
Մնացականյան Ա. — 247
Մնացականյան Գ. — 138, 266
Մորգան Ջ. — 267
Մրմրյան Հ. — 25, 261
Մուշեղ արքեպիսկոպոս — 89, 261
Մուստաֆա Քեմալ — 266
Մուհամեդ Ալի — 18
Յագով — 128
Յուդենիչ — 192
Նազարբեկյան Ավ. — 94, 97, 101
Նալբանդյան Մ. — 64, 75, 78, 81—82, 95—96, 159, 207—208, 261
Նազարյան Ս. — 95, 166, 182—184, 190
Նազըմ — 11, 115
Նարբնիգկի Ա. — 266
Նելիդով Ա. — 31
Ներսիսյան Մ. — 53, 60, 67, 87, 188, 231, 245—246, 261
Նիկոլայ 1-ին — 184
Նիկոլայ 2-րդ — 132
Նշկյան Հ. — 28
Նովիչև Ա. — 266
Նորատունկյան Գ. — 144
Նուրյան Հ. — 34
Շահազիզ Ս. — 75—76, 261—262
Շահազիզյան Մ. (Կոռան) — 94
Շահխաթունի Ա. — 153
Շահնազարյանց Կ. — 158
Շահումյան Ս. — 106, 143, 217, 262
Շամիլ — 11, 204—205, 207—210
Շանթ Լ. — 230
Շանշյան Պ. — 158
Շելկովնիկով Բ. — 30
Շիրվանզադե — 230
Շպիլհագեն Ֆ. — 179
Շուվալով Պ. — 32
Շտիկովիչ — 209
Չալխուշյան Գ. — 229, 267

Ջերիջևսկի Ն. — 61
Ջիխաչև Պ. — 4, 267
Ջխենկելի — 145
Ջորուբյան Է. — 101, 262
Ջորմիսյան Լ. — 262
Ջոպանյան Ա. — 108, 144, 153, 196—203, 231—232, 242, 255, 262
Պալյան Ն. — 28
Պալասանյան Ս. — 50, 74, 166—169, 180, 262
Պայկ — 149
Պավլովիչ Մ. — 266
Պատկանյան Գ. — 66, 158
Պատկանյան Ռ. — 65—70, 208—209, 245—246, 262
Պատկանյան Ք. — 180
Պաշտաջյան Մ. — 141, 145
Պարոնյան Հ. — 9, 14, 71, 74, 77—80
Պարսամյան Վ. — 249, 262
Պեշիկթաշլյան Մ. — 70, 77
Պետրոս Մեծ — 15, 118, 163, 173, 201, 254, 262
Պետրոսյան Յու. — 247, 266
Պոկրովսկի Մ. — 187, 266
Պողոսյան Հ. — 248
Պողոսյան Ս. — 248
Պողոս Նուբար — 119, 122, 129, 139, 144, 231
Պուշյան Պ. — 208, 230, 262
Պուտտո — 189
Պրեսանսե — 233
Պրուսալի — 93
Պուշկին Ա. — 190
Ջանշիև Գ. — 5, 223—224
Ջաֆարով Մ. — 145
Ջեմալ փաշա — 133
Ջիվելեգով (Ջիվելեգյան) Ալ. — 216, 222—228, 255, 264
Ջևիդ բեյ — 228
Ռիգա Ահմեդ — 106, 111, 202, 214, 221
Ռոլեն-Ժակմեն Մ. — 266
Ռոհրբախ Պ. — 240
Ռոտշտեյն Ա. — 266
Ռուսինյան Ն. — 28, 46
Ռուսճուգլյան — 34
Սաադուլա բեյ — 31
Սազոնով Ս. — 102, 119, 121, 129—131, 227
Սահակյան Ռ. — 247—248
Սասունի Կ. — 109—110, 135, 149, 212, 262
Սայիդ-Հալիմ փաշա — 130
Սապահէդդին — 102—103
Սարինյան Ս. — 59, 262
Սավֆեթ փաշա — 31
Սահեփանյան Ս. — 247—248, 266
Սարգսյան Ե. — 247, 266
Սարգսյան Ն. — 267
Սարուխան — 51, 262
Սարուխանյան Ն. — 163, 170, 262
Սաֆրաստյան Ռ. — 248
Սեթոն-Ուոթսոն Ռ. — 267
Սեպուհ — 140
Սերվիչեն — 24, 27—28, 46, 198
Սերոբյան Մ. — 98, 103, 109, 119, 262
Սիլին Ա. — 266
Սկոբելև — 154
Սիմոնյան Հր. — 109, 112, 140, 148—149, 248, 263
Սիմոնյան Պ. — 47, 49, 263
Սոլսբերի — 96, 174, 186, 195, 213, 218
Սվաճյան Հ. — 77
Սրվանձտյան Գ. — 6, 50, 80, 246, 263
Վանգենհայմ Հ. — 123
Վարանդյան Մ. — 107, 109, 204, 212—215, 263
Վարդգես — 133
Վարժապետյան Ն. — 24, 28, 33, 43—44, 53, 77—78, 104, 187, 197—198
Վարուժան Դ. — 7
Վեսելովսկի Յու. — 43, 264
Վերմիշյան Ք. — 153
Վեստենենկ — 130
Վինոգրադով Վ. — 189, 264
Վոլֆսոն Դ. — 23
Վոսկյան Ա. (Վարազ) — 135
Վրացյան Ս. — 140—141, 151, 153, 212, 263
Վորոնցով-Դաշկով Ի. — 118, 132, 139, 192, 264
Տամատյան Մ. — 144
Տատյան Ա. — 28
Տեր-Դուկասով Ա. — 30
Տեր-Զաքարյան Հ. — 149
Տերմեն — 150
Տեր-Հարությունով Ա. — 267
Տեր-Մինասյան Ռ. — 114, 263
Տերյան Վ. — 230, 236—237, 263
Տերոյենց (Զամուռճյան) Հ. — 45
Տրեպով Ա. — 227
Տրկովա Ա. — 267
Բաֆֆի — 9, 57, 59—64, 67, 69, 83, 87, 96, 171—172, 180—181, 208—209, 245, 252, 254, 263
Ուիթլին Ա. — 267
Փանոսյան Կ. — 80
Փաստրմաճյան Կ. — 110
Փարամազ (Սարգսյան Մատթ.) — 102, 263
Փափազյան Վ. — 267
Փափազյան Վ. (Կոմս) — 108, 149
Փափազյան Ստ. — 28, 34, 60
Փորթուգալյան Մ. — 89—97, 138
Քալանթար Ալ. — 137, 139
Քելեկյան Տ. — 121
Քեռի — 140
Քիշմիշև Ս. — 30, 264
Քյամիլ փաշա — 73, 193
Քոչար Մ. — 248
Օհանջանյան Բ. — 250, 263
Օշերովսկի Լ. — 117, 266
Օտյան Գր. — 24, 27—28, 46, 198, 263
Օտյան Եր. — 8, 133, 263
Օլբելիանի Գ. — 210
Օրմանյան Մ. — 45, 121, 175, 177—178, 254
Օրուջև Մ. — 266
Ֆադեև Ռ. — 210, 267
Ֆահրեդդին բեյ — 130
Ֆերոզ Ա. — 267
Ֆուադ փաշա — 21, 23, 263

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ առաջին Հայկական հարցը և 19-րդ դարի 70—80-ական թվականների հայ հասարակական միտքը 42

Գլուխ երկրորդ Հայկական հարցում կուսակցությունների դիրքորոշման և գործելակերպի գնահատականների շուրջ 86

Գլուխ երրորդ Հայկական հարցը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ 156

Վերջաբան 244

Մատենագիտություն 255

Անվանացանկ 267

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԲԱԳՐԱՏԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խմբագիր՝ ԱՍՐՅԱՆ Ա. Հ.
Նկարիչ՝ ՄԱՄՅԱՆ Հ. Ա.
Տեխ. խմբագիր՝ ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Պ.
Սրբագրիչ՝ ԴԱՆԻԵԼՅԱՆ Գ. Վ.

Պատվեր՝ 424 *Տպաքանակ՝ 1000*

«Ոսկան Երևանցի» տպագրատուն, Երևան, Մելիք-Ադամյան 1